

4861

24

9-47

1 OCT 2009

154-

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՄԱՐԿԻ ՆՈՒՆԱՅԻՆՈՒՄ

Ք Ա Ր Ո Ջ Գ Ի Ր Ք

Կ ա զ մ ե ց

Գ Լ Ս Ր Կ Ե Գ Ի Ս Կ Ո Պ Ո Ս



Ս. Էջմիածնի Տպարան
1918

24

154-

EROS . 80 . 81


9-47

ՀՐԱՑՈՐԵԿՈՒԹԻՒՆ ՎՈՃՈՒՐԿՈՆ ՍՈՐԳԻՍ ՀՈՒՆՈՋՐԵՆՆԵՐ

Ք Ա Ր Ո Ջ Գ Ի Ր Ք

Կ ա զ մ Ե ց

Գ Է Ո Ր Գ Ե Պ Ի Ս Կ Ո Պ Ո Ս



Ս. Էջմիածնի Տպարան
1917

Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Հոգևորականի պարտքն ու կոչումն է կեանքում ճշմարտութիւն որոնողներին խորհրդատու, բարեկամ և ուղեցոյց լինել: Այդպէս ըմբռնելով կոչումս՝ Նոր-Նախիջևանի փոխանորդութեան շրջանում (1913-1916) կազմել եմ սոյն քարոզները և տօն ու կիւրակէ օրերը բեմից խօսել, որ աւետարանական ճշմարտութիւններ որոնողները, ինչպէս նաև կեանքում յուսախաբեալներն ու տառապեալները մխիթարութիւն և նեցուկ գտնեն այնտեղ:

Բազմիցս շրջանի քահանաներից շատերի կողմից ցանկութիւն եմ լսել տպուած տեսնել այս քարոզները, սակայն միայն այսօր՝ երբ հնարաւորութիւն է ներկայանում, հաճութեամբ կատարում եմ նոցա այդ ցանկութիւնը՝ յուսալով թէ օգտակար կլինի այն եւ քարոզող քահանայական դասին եւ աւետարանական ճշմարտութիւնների մէջ հոգևոր մխիթարութիւն որոնող աշխարհիկներին:

Քարոզներս լոյս են տեսնում Ազգիս Վեհափառ Հայրապետի ցանկութեամբ, որ միշտ դերադաս է համարել աւետարական կենդանի խօսքը մեռած ձէսերից ու արարողութիւններից և խրախուսել Աստուծոյ բանի քարոզիչներին, ինչպէս նաև ցանկացել է սկսնակ քարոզիչների ձեռքը մի ուղեցոյց տալ:

Քարոզների հրատարակութեան ծախքը հոգացել է Ազուլիսի վաճառական՝ պ. Սարգիս Հախնազարեանը՝ տրամադրելի անելով Նորին Վեհափառութեանը մի գումար՝ եկեղեցական նշանաւոր տօների առթիւ խմբագրած քարոզգիրք լոյս ընծայելու համար, որպէս ուղեցոյց քահանայութեան և որպէս հոգևոր ընթերցանութեան գիրք՝ ժողովրդի ձեռին. իսկ Ն. Ս. Օծութիւնը բարեհաճեց խրախուսել մեզ՝ տնօրինելով տպագրութեան յանձնել մեր կազմած սոյն քարոզները:

Նորին Վեհափառութեան այս հայրական ուշադրութեան համար յատնում եմ խորին շնորհակալութիւնս՝ հայցելով Նորա օրհնութիւնը պատուարժան Ս. Հախնազարեանի և ընտանիքի վերայ, որ նորա ձեռքի գործը ծլի ու ծաղկի ևս առաւել օգտակար ու



85 82 56.

0722

մեծ ձևոնարկութիւններէ համար՝ յօգուտ և ՚ի շահ հայ ժողովրդի։ Աւարտելով խօսքս՝ ընթերցողներէ ուշադրութիւնը հրաւիրում եմ այն հանգամանքի վերայ, որ հնարաւոր չէ աւետարանը այնպէս քարոզել, որ յարմարի ամեն զարգացման և կրօնական համոզմունքի տէր մարդու։ Հանճարեղ քարոզիչներին է յատուկ այս պարագան, իսկ ես մխիթարուած կլինեմ, եթէ փոքր չափով անդամ ծառայեն նոքա վեհի և հրատարակչի նսլատակներին։

* * *

Սոյն քարոզները կազմելիս օգտուել եմ երբեմն մեծ և երբեմն փոքր չափով երոպացի քարոզիչներէ քարոզգրքերից։ շատ քիչ օգտուել եմ նաև հայ ազգատիկ գրականութիւնից։

Ա Ղ Բ Ի Ի Ր Ն Ե Ր

1. Bernhard Dörries: «Das Evangelium der Armen» 1911.
« Die Welt Gottes» 1911.
2. H. Hackman: «Am Strand der Zeit» 1909.
3. Gustav Freussen: «Dorfpredigten».
4. D. Paul Wurster: «In seinem Dienst» 1912.
5. D. O. Pank: «Das Zeitliche Leben im Lichte des ewigen Wortes» 1905.
6. D. Bernhard Rüling: «Abendglocken» 1897.
7. Fr. Naumann: «Gotteshilfe» 1897.
8. Karl Gerok: «Evangelien Predigten» erster Band.
9. Կարապետ Եպիսկոպոս—Արարատի կրօնականները։
10. Բենիկ վարդապետ—Քարոզչական Թոթովանքներ։

Գեորգ Եպիսկոպոս

16/VI 1917 թ.
Ս. Էջմիածին

«Տէր լոյս իմ և կեանք իմ ես յուժմէ կրկեայց, Տէր ապաւէն կենաց իմոց ես յուժմէ գողացայց» Սղմ. իզ 1:

Տարեվերջի գիշերն էր երէկ։ Կէս գիշերուայ խաւար ժամին լսուեցան զանգակների 12 հարուածները. նոքա չէին հնչում սովորական զանգի նման, այլ խորհրդաւոր և տխուր՝ նման մահազանգի, որ ճամբում է մեռեալին գերեզման։

Այդ զանգերը երէկ էլ տարին մի մեռեալ. հին տարին էր այդ մեռեալը, որ իջնում էր գերեզման՝ տանելով իւր հետ շատերի ցաւերն ու վշտերը, ինչպէս և այլոց ուրախութիւնը. շատերի փառքն ու պատիւը, ինչպէս և այլոց անարգանքը։ Սակայն այդ մեռեալը նման չէ սովորական մեռեալներին. նա մեռնում է յարութիւն առնելու համար՝ նման ցորենի հատիկի, որ ընկնելով հողի կրծի մէջ՝ մեռնում է նոր կեանքի ծնունդ տալու համար։ Այսպէս նաև մեռաւ հին տարին՝ ծնունդ տալով նոր տարուն։ Եւ ես յանուն աշխարհի տիրոջ, հայ ժողովուրդ, ողջունում եմ քո նորածին նոր տարին. բայց արդեօք իրաւունք ունիմ։ Նոր տարին երկու երես ունի. մէկը՝ դարձած է դէպի յետ՝ դէպի անցեալը, միւսը՝ դէպի առաջ, դէպի ապագան։ Ի՞նչ ենք տեսնում մենք անցեալում. խաղաղ կուլտուրական աշխատանք, որի վերայ կառուցւում է ազգերի բախան ու երջանկութիւնը, որին ձգտում է ամբողջ մարդկութիւնը և որի համար հաւատում ենք՝ թէ մարտնչում է այսօր Եւրոպան, թէ՞ միջնադարեան բարբարոսութիւններ՝ աւեր, թալան, կրակ և սուր. արդեօք

ազգերի տոճնն է շինուում թէ հիմնայատակ քանդուում-
 եղբայրներ, բաց աչքով նայենք փաստերին, դէն ձը-
 գենք գունաւոր ակնոցները և կտեսնենք, որ մեր ազգի
 կեանքի անցեալ տարին, որպէս հայելի՝ արտացոլացնում
 է իւր մէջ հայ պատմութեան անցեալ շատ տարիների
 փոքրիկ պատկերը: Փորձեցէք վերջիշեւ ժէ. դարը՝ զար-
 թնումի դարը, երբ հայի հոգին դեռ նոր էր եռում և նոր
 էր սկսել հոգևոր և նիւթական շինարար գործունէութիւն
 և ոսկէ յոյսեր խոստանում հայութեան, և ահա դալիս է
 Շահաբասի աւերածութեան շրջանը, որ ամբողջ Արա-
 բատեան դաշտը աւերի, թալանի, կրակի և սուրի է մատ-
 նում, իսկ կենդանի մնացած ժողովուրդը՝ յակամայից
 թողնելով տուն, աեղ, հարստութիւն և ամեն ինչ՝ կա-
 նանց, մանկանց և ծերոց սրտաճմլիկ աղաղակների և հեծ-
 կլտոցների ողբ-կցութեամբ՝ ծովանում է Արարատեան դաշ-
 տում և ալիքանման շարժում դէպի Պարսկաստան՝ դէպի
 օտար երկիր, օտար հող, օտար ջուր և օտար բնութիւն՝
 մասամբ արտակարգ գաղթի դժուարութիւններին և մա-
 սամբ էլ յորդահոս Արաքսի կատաղի ալիքներին զոճ լինե-
 լու համար, և նորա վշտոտ յուշերի վերայ նոր վշտոտ
 յուշեր դիզելու, որ այնպէս սիրուն պատկերացրել է Ռա-
 փայել Պատկանեանը իւր դարդոտ քնարի թելերից քաղած
 մեղամաղձոտ Մայր Արաքսի՝ երգի մէջ:

Ճիշտ այսպէս էլ անցեալ տարի հազիւ սկսեցինք
 խաղաղ քուլթուռական աշխատանք դպրոցական գործու-
 նէութեան շրջանում, որ մեր երկրին և մեր շրջապատին
 միայն բարիք կարող էր բերել՝ և ահա տաճկական կա-
 տաղի հրոսակախմբերը եկան հայ ժողովրդին անտեսա-
 պէս քայքայելու, նրա արիւնը խմելու և՛ եթէ հնար լինի,
 աշխարհի երեսից հայի անունը իսպառ ջնջելու ծրագրով:

Ահա մեր անցեալ տարին:

Դառնանք՝ և առաջ նայենք. ո՛ւր են մեր ոսկի երազ-
 ները, որով ապրում էինք մի ամիս առաջ, ո՛ւր են մեր

գեղեցիկ ծրագրները մեր ապագայ ինքնուրոյն կեանքի
 և մեր ոյժերի ազատ զարգացման վերաբերեալ. կան՝ ու
 մշուշի մէջ են, թէ իսպառ չկան: Կարծես ամեն ինչ
 տակն ու վրայ եղաւ և ամեն ինչ չքացաւ: Եւ ինչո՞ւ. նրա՞
 համար միայն, որ մի աղբ կամենում է ազատ ապրել ու
 ստեղծել և մարդկութեան համար օգտակար լինել:

Այս ինչ անէ՞ք է, Տէր, որ զրոշմել ես հայի ճակարկն,
 կարծես Կայէնի անէ՞քն է ծանրացել հայի բախտին. սա-
 կայն ո՞ր անիրաւութեան համար: Նրա՞ համար, որ հաւա-
 տարիմ ծառայում է իւր իշխողին. նրա՞ համար, որ իւր
 ինչքն ու կեանքը չի խնայում իւր հովանաւորին. թէ՞
 նրա՞ համար, որ քարոզում է Քո որդու աւետարանը՝ և
 գործով մարմնացնում նրա ճշմարտութիւնները:

Այս է փաստը:

Սակայն ի՞նչ պիտի լինի մեր նշանաբանը՝ յուսահա-
 տութիւն և մահ, թէ՞ հաւատ ու գործ, որի հետեանք և
 կեանք:

Երբ 450 տարի առաջ համարձակ, բայց երկիւղած
 ծովագնաց Քրիստափոր Կոլումբոսը երկար ճամբորդու-
 թիւնից յետոյ մի գեղեցիկ օր ցամաք ելաւ՝ առաջին գոր-
 ծը եղաւ խաչանիշ դրօշակ տնկել այնտեղ՝ կամենալով ա-
 սել, որ այս նոր երկիրը ո՛չ միայն պիտի պատկանի իւր
 երկրային միապետին՝ Սպանիայի թագաւորին, այլ նաև
 իւր երկնաւոր թագաւորին՝ Փրկչին:

Սիրելիք, մենք էլ այսօր մի նոր անձանօթ աշխարհ
 ենք ոտք կոխում. այդ անձանօթ աշխարհը նոր տարին է:
 Նա մեր առաջն է կանգնած անորոշ՝ առաւօտեան աղօտ
 այգալոյսի նման. նորա մէզի և մշուշի միջից երևում է
 միայն նրա սարերի անորոշ ստուերագիրը: Մենք չգիտենք՝
 թէ ի՞նչ կայ նրա լեռների և ձորերի մէջ. արդեօք վայելչա-
 գեղ պտղաբեր դաշտեր՝ թէ՞ անպտուղ անապատներ. ար-
 դեօք սիրոյ և խաղաղութեան տաղաւարներ, թէ՞ արեան
 և պատերազմի վայրեր. արդեօք կեանքի և բախտի ոսկե-

հանքեր, թէ մահու և դժբախտութեան գերեզմաններ:

Սակայն մենք էլ Կոլումբոսի նման նոր տարու անծանօթ հողի վերայ տնկենք մեր երկնաւոր հօր դրօշակը, որ տէր է և՛ անցեալի եւ ասպագայի, հաւատալով որ նրա հովանու և օրհնութեան տակ միայն՝ մեզ անծանօթ հողի վերայ, ուր մենք տատանուելով սոք ենք կոխում՝ կարող ենք մխիթարութիւն և կեանք գտնել:

Այլապէս ասած՝ Փրկիչը պիտի լինի մեր նշանաբանը նոր տարուայ մէջ: Սիրելի բարեկամներ, մենք սոք ենք կոխում նոր տարու շէմքը հին տարու կսկծոտ և արիւնահոս վէրքերով, բայց նորն էլ առանց ցաւերի և արտասուքի լինելու չէ: Սակայն մեր նշանաբանը մեր փրկիչը պիտի լինի. չէ՞ որ նա ինքն առաջինը անցաւ փորձութիւնների և ուխտադրժութեան վշտոտ ու ցաւոտ ճանաչապարհը՝ իւր թրփատութեան օրից, երբ առաջին ցաւն զգաց, մինչև կեանքի վախճանը, երբ խաչի վերայ իւր արիւնը թափեց յանուն ճշմարտութեան, տալով մեզ Քրիստոսական վշտակրութեան գերազոյն պատկերը: Միթէ մենք պիտի շեղուենք այդ ճամբից:

Եթէ մեր բախտը նոր տարում առաջնորդէ մեզ մութ ճանրաներով մենք կխոնարհինք. որովհետև մեր նշանաբանը Յիսուսն է, որ աշխարհի փշոտ ճամբով հասաւ իւր նպատակին:

Եթէ դառնութեան և վշտերի բաժակ վիճակուի մեզ ըմպել՝ մենք կճաշակենք, որովհետև Յիսուսն է մեր նշանաբանը, որ Գեթսեմանի պարտիզում մեծ դառնութեան բաժակը ըմպեց և այնպէս յաղթեց աշխարհին: Եթէ մեզ վիճակուի մարդկային ատելութիւնն ու աշխարհի ծագրն ու ծանակը կրել՝ չմոռնանք, որ Յիսուսն է մեր նշանաբանը. նորա աշակերտները իրաւունք չունին միայն վարդեր որոնելու երկրիս վրայ, ուր իրենց վարդապետը փշէ պսակ է կրել:

Եթէ մեզ չարիքներից և դժբախտութիւններից մե-

ծագոյնը հանդիպի, որ անկարող եմ գուշակել՝ յիշենք, որ Յիսուսն է մեր նշանաբանը, որ խոնարհեց իւր բախտի առաջ մինչև մահ:

Այսպէս ուրեմն Յիսուս պիտի լինի մեր նշանաբանը, բայց ոչ այն Յիսուսը, որ դուք էք պատկերացնում եղբայրներ, և որ հակապատկեր է աւետարանական ճշմարիտ Յիսուսին: Մեր նշանաբանը պիտի լինի մաքառող Յիսուս, որ մարդկային սրտի սրբութիւնը անարգող դպիրներին ու իշխաններին խարազանեց:

Վեհանձն ու աբհամարեհող Յիսուս, որի մի հայեացքը սպանեց ճշմարտութիւնը հեզնող Պիղատոսին և սարսուռ բերաւ նրա վերայ ու ստիպեց բացազանչել՝ «քաւեալ եմ յարենէ արդարոյն»:

Անվերջ աշխատող եւ սնող Յիսուս, որի անհանդրատութիւնը ուրիշների հոգու հանգստութիւնն էր, որի խօսքն ու զործը՝ շրջապատի փրկութիւնն էր:

Եւ երբ մեր նշանաբանը լինի մաքառող, վեհանձն ու միշտ աշխատող և տքնող Յիսուս՝ հաւատում եմ, որ մեր արևի շողը կպատուէ մեր ճամբի նշուշը և մենք կտեսնենք վերևում՝ կապուտակ երկինք, մեր առաջը՝ կանաչ դաշտ. մեր հոգին կհրճուի, մեր քայլերը հաստատ ու արագ կընթանան և կառաջնորդեն մեզ մեր տենչերի նաւահանգիստը. ամէն:

«Ամենայն ձորք լցցին և ամենայն լե-
րինք և բլուրք խոնարհեցին, և եղի-
ցին ամենայն դժուարինք 'ի դիւրինս
և առապարքն 'ի դաշտս: Եւ երևեացին
փառք Տեառն և տեսցէ ամենայն մար-
մին զփրկութիւն Աստուծոյ, զի Տէր
խօսեցաւ»: Եսայի ի 4.

Հայ ժողովուրդ, կար ժամանակ, երբ Աստուծոյ ըն-
տրեալ ժողովուրդն էլ քեզ նման ականատես եղաւ իւր
հայրենիքի փառաւոր ու շէն քաղաքների աւերման, վկայ
եղաւ հայրենի սրբութիւնների կործանման և սախալուե-
ցաւ թողնել իւր առնն ու տեղը՝ չուել օտար երկիր և
պանդխտութեան մէջ հոգեմաշ ապրել հայրենիքի կարօ-
տը սրտում:

Օտարութեան մէջ այդ տառապող ու վշտահար հրէայ
ժողովրդի ականջին է, որ մարգարէի մեղամաղձոտ քնարի
լարերը յուսոյ անուշ ձայնն են հնչեցնում. նրա ընկճուած
հոգու մէջ է, որ մարգարէի յուսատու խօսքերը հայրենի-
քի վերաշինութեան կենսատու հաւատն են հաստատում:

Ի՞նչպէս քաղցր պիտի հնչէր մահամերձ ազդի ական-
ջին վերականգանութեան ու փրկութեան այդ անոյշ ձայնէ,
եթէ այսօր էլ մի նոր մարգարէ հրապարակ դար և զի-
շիրային աւետաբեր զանգալները 12 հարուածների հետ,
որոնք աւետեցին աշխարհին հին տարուայ զլորումը և
նորի կանգնումը՝ հայի վերականգանութեան աւետիքը բե-
րէր յուսադրելով նրան, որ հին տարուայ հետ յաւիտեան
մայր պիտի մանի նրա վշտերի ու տառապանքների արևը՝
և նոր տաքու հետ պիտի ծագէ նրա երջանկութեան ու

բախտի դէպի Բեթղեհէմ ընթացող փրկութեան աւետաբեր
լուսաւոր աստղը:

Յոյս, ինչ մեծ ազդակ ես դու կեանքի. սակայն
դու նոցա համար չես, որոնք միշտ բազմած են աշխարհի
ձոխ սեղանի առաջ ու պարերի, երգերի և նուագների
քաղցր օրօրներով յափշտակուած՝ քամում են վայելքի
մրուրը:

Յոյսը նիւթական կեանքի ձոխութեամբ յափրացած-
ների համար չէ, այլ նրանց՝ որոնք փոքրիկ ու խոնաւ
խրճիթներում միշտ չոր հացի ընկեր, դռների ու պատու-
հանների ձեղքերից սուրող ցուրտ քամուց դողողալով ու
զրնզրնգալով կանթեղի աղօտ լոյսի առաջ չոգած՝ աղօթ-
քով ու արտասուքով աղերսում են Արարչին, որ թեթե-
ւութիւն շնորհէ իրենց չարատանջ կեանքին: Յոյսը այն
ազգերի համար չէ, որոնք՝ ապաւինած հարստութեան և
ոյժի՝ ազահ աչքերը յառած են օտարի ազատութեան և
երկրներին, այլ այն ազգերի, որոնց երկիրը սրի ու կրակի
ձարակ է դարձել, երիտասարդ սերունդը թաւալգոր ընկել:
Յոյսը հայ ժողովրդի համար է, որի հայրենիքը ամայա-
ցած, եղբայրները սրախողխող, քոյրերը առևանգուած ու
հարեմ քշուած, մանկուեք ողջակիզուած, իսկ մնացորդը՝
այսպէս կոչուած փրկութեան երկրում վտարանդի՝ որք,
անպատասպար ու հիւժուած, և մինչև իսկ, իբրև անարգ
որդ, արորուած:

Յուսով ներշնչուած՝ տարիներ շարունակ մենք շատ
դռներ բացեցինք. յանուն Քրիստոսի մի բաժակ պաղ
ջուր աղերսեցինք մեր վիրաւոր եղբայրների պապակած
լեզուն զօվացնելու համար՝ և սակայն ամենուստեք կո-
րագլուխ յետ դարձանք:

Քրիստոնեայ Եւրոպայից գթութիւն հայցեցինք, սա-
կայն նա՝ մարդասէր ձեացող այդ ետասէր Եւրոպան
պիւճանագիտութեան նաւին ապաւինած ու աչքերն անձ-
նական շահի փարոսին ուղղած՝ մեզ յետ մղեց ու

մեր դանիճների գիրկը նետեց, անտարբեր դիտելով թէ ինչպէս ենք խեղդուում արեան ու արտասուքի յորձանքի մէջ:

Եւ այժմ, երբ այդ ազգը յոգնած ու դալկացած ընկած է խշի բեռան տակ և նայում Գողգոթայի վրայից դէպի յետ, դիտելով իւր կեանքի այս աղէտալի շրջանն ու խաչահան բազմութիւնը՝ միթէ յուսահատութեան զգացումը պիտի համակէ նրան. ո՛չ երբեք:

Միթէ առաջին անգամն է, որ քարսիրտ մարդիկ վշէ պսակ են դնում հայ նահատակ ժողովրդի գլխին. միթէ առաջին անգամն է, որ հայի անմեղ արիւն է թափուում և նրա մինչև երկինք հասնող հեծկրտոցները աշխարհի վրայ անլսելի մնում: Միթէ այն ազգը, որ՝ փրկչին ապաւինած, դարեր շարունակ տառապանքի ովկիանի մէջ լողացել է ու կենդանի մնացել՝ գետի յորձանքներին պիտի զոհ երթայ. ո՛չ երբեք:

Չէ՞ որ կենդանի է նա, որ դաշտի մէջ ցրուած չոր ոսկորներին կենդանութիւն տուաւ և իւր հզօր բազուկը մեկնելով նոր ազգ՝ նոր իսրայէլ կազմեց. նա այսօր էլ հայ կեանքի անյուսուցեան անապատում իւր յուսատու և մխիթարիչ ձայնն է հնչեցնում՝ «ամենայն ձորք լցցին և ամենայն լերինք և բլուրք խոնարհեսցին...». նա այսօր էլ Մասիսի գլխին կանգնած և իւր բազուկները տարածած պահպանում է հայ երկիրը, օրհնում հայ ազգը և պատրաստ է իւր շունչը փչել ու նահատակ հայ ժողովրդի չոր ոսկորներին կենդանութիւն շնորհել, եթէ նա ականջ դնէ փրկչի յուսատու և մխիթարիչ ձայնին ու հաւատով ներշնչուած՝ անդուլ աշխատէ:

Տօներ են դալիս, թո՛ղ տօներն ընարեալ ազգերը, իսկ մենք՝ բնաջնջման ենթարկուած ու հալածական մի ժողովուրդ տօնելու փոխարէն՝ անդուլ աշխատելու պարտք ունինք, կատարենք այդ պարտքը մեր հարազատ եղբայրների հանդէպ: Աշխատենք հաստատել մեր երկրում զօրեղ

տարր, որ կարողանայ կենսունակ ոյժ հասցնել՝ և այն ժամանակ կացնին սրի, սովի և համաճարակի սև օրերն ու նրանց բացած վէրքերը կբուժուին, բայց եթէ թողնենք, որ ժողովուրդը արիւնաքամ լինի և՛ անօգնական մնալով, ընկճուի անընդհատ հարուածների տակ՝ վախնում թէ այլևս ոտքի ելնել չկարողանայ:

Ռուսահայ եղբայրներ, շատ ծանր ու պատասխանատու բաժին է ընկել մեզ՝ ժամանակակիցներին. հասկանանք, միմիանց ձեռք պարզենք ու անդադրում աշխատենք առանց լքման. խմբենք մեր ոյժերը, մեր ազգի բոլոր բարոյական և նիւթական միջոցները հրապարակ քաշենք վերածնելու, ինչ որ կորցրել ենք, վերաշինելու՝ ինչ որ աւերել են: Ամօթ և նախատինք կլինի մեզ, եթէ մեր տաճկահայ եղբայրների հոգեվարքին ականատես լինենք և չզգանք որ նրա արեան հետ՝ մեր իսկ արիւնն է կաթիլ կաթիլ ծորում, որ նրա վերջին շնչի հետ՝ մեր վերջին շունչն էլ պիտի ելնէ, և հայ ազգը աշխարհիս երեսից պիտի ջնջուի իւր բոլոր բարձր ձգտումներով ու սուրբ գաղափարներով և անտարբեր նստենք:

Այսօր քաղաքացիական տարու ծնունդն է, սակայն նրա հետ ծնունդ է առնում նաև կրօնական տարին. եթէ առաջինը բերում է յոյս դէպի մեր ապագայ վերաշինութիւնը, երկրորդը՝ հաւատ է ներշնչում և մեր ընթանալիք ուղին գծում:

Աստուծոյ որդին երկնքից երկիր իջնելով մտնում է աղքատութեան ու խոնահութեան մսուրքը՝ սովորցնելով թշուառութեան ու հալածանքի մէջ անկում չտեսնել. դուրսը՝ աշխարհի մեծերի մօտ հանգիստ ու փառք չորոնել, այլ՝ ի ներքուստ զօրանալ, հոգով և իմաստութեամբ գարգանալ և հաւատալ, որ այդ շնորհաց լուսով առկայծող պատրոյզը երբեք չի շիջանի, և՛ յիշելով փրկչի յուսատու խօսքերը, նրան ապաւինել՝ «եկայք առ իս ամենայն վաստակեալք և բեռնաւորք և ես հանգուցից զձեզ»:

Հայ ժողովուրդ, նոր տարու առթիւ քեզ ուրիշ բարեմաղթութիւն չունիմ անելու, բայց միայն ցանկալ, որ յոյսդ հաստատուն լինի քո ասպագայ վերաշինութեան նկատմամբ, որ հաւատդ կենդանի մնայ քո ազգային գոյութեան նկատմամբ, և յուսով ու հաւատով զօրացած՝ երդբայրութեան ձեռք մեկնես հայ եղբայրներիդ՝ սիրոյ գործեր կատարելու. և այն ժամանակ «շնորք և ողորմութիւն Տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի եղիցի ընդ ձեզ՝ ընդ ամենեսեանդ. ամէն»:



«Փառք ի բարձունս Աստուծոյ, և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն» Դուկ. Բ14:

Պատահել է ձեզ ցուրտ ձմրանը կանգնել պատուհանի առաջ և զիտել խաղաղ ու մեռած բնութիւնը. մերկ, տերևաթափ ծառեր, կոշտ ու սառած երկիր, պաղ օդ, լքեալ ու տխուր թփեր՝ զրկուած սիրունիկ թռչնիկների անուշ երգերից:

Այդ տեսարանը զիտելիս՝ մեր հոգին ակամայ պատկերացնում է գարնան գեղեցկութիւնը. մենք զգում ենք գարնան զով բամբին, որ խաղում է բաց պատուհանի ճերմակ վարագոյրների հետ, մենք տեսնում ենք նորածիլ, քնքոյշ ու կանաչ սաղարթ՝ ծառերի վրայ, մենք լսում ենք զեփիւտի մրմունջը՝ որ բերում է մեզ դաշտի հոտաւէտ ծաղիկների և թարմ խոտի անոյշ բոյրը:

Ճիշդ նոյնն է պատահում, երբ մենք յիշում ենք Փրկչի ծնունդը կամ կանգնում հանճարեղ նկարիչների՝ Կորրեջիոյի, Ռէմբրանտի և այլոց նրբաշարժ վրձինների ծնունդ՝ Փրկչի ծնունդը պատկերացնող հրաշագեղ նկարների առաջ:

Ահա մանուկը աղքատիկ մսուրի մէջ, խոտի և յարդի վրայ զրած, որից լուսոյ շողեր են ճառագայթում և լուսաւորում մութ գիշերին մուսյլ շրջապատը. որի առաջ հովիւներն ու արևելքի իմաստունները ծունր են իջնում. որին փառաբանում են երկնային զուարթնոց գնդերը բաղջրիկ երգերով ու նուագներով՝ և տալիս են աշխարհին նոր աւետիք. «Փառք ի բարձունս Աստուծոյ, և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

Ներկայ մարդկութեան սառած սրտերն և բիրտ բարքերը միթէ՞ ձրան չէն նմանում, և այրի միջի մանուկ Յիսուսից միթէ՞ դարնան չունչ չի՞ փշում:

Մանուկ Յիսուսը ներկայանում է մեզ որպէս խորհրդանշան մի մեծ և կարևոր յեղաշրջման. անպաշտպան և թոյլ մարդկային մի մատաղ կեանք է պատկերանում ի դէմս մանուկ Յիսուսի, որ տառապում է ոյժի և հարստանարութեան այս բիրտ աշխարհում: Սակայն մխիթարակնն այն է, որ այդ բիրտ և հարստահարիչ աշխարհը անկարող է այդ անպաշտպան նորածին և բնքոյշ կեանքը ընկճել, այլ ստիպուած է նրա ձեռքով ինքը կերպարանափոխ լինել:

Բեթղեհէմի այրից աշխարհի համար ծնունդ է առնում մի մեծ ոյժ, որ աւետարանը Աստուծոյ թագաւորութիւն է կոչում, որ ոչ այլ ինչ է, եթէ ոչ մարդկանց նոր միութիւն, որ նպատակ է դրել Աստուծոյ կամքը կատարել երկրի վերայ:

Բեթղեհէմի այրից ելնում է մարդու կատարելատիպը, որ մարմնացեալ սէր է՝ պատրաստ ուրիշի համար ապրելու և մեռնելու, ճիշդ հակապատկերը ներկայ մարդու, որ մարմնացած եսամոլութիւն է և անմարդասիրութիւն: Նրա հետ ծնում է նաև մի մեծ յոյս՝ թէ այս բիրտ ոյժի աշխարհը պիտի նորոգուի շնորհիւ Բեթղեհէմի մանուկ Յիսուսի, թէ բարին ու ճշմարիտը պիտի յաղթանակեն՝ ցաւի ու վշտի աշխարհը երանութեան վայր դարձնելով և ճշմարտելով աւետարանի խօսքը թէ՛ «Բանն մարմին եղև և բնակեաց ի մեզ»:

Այլ ևս թոյլ չի տրուի, որ անպաշտպան մանկան այտերի վրայով արասուքը վայր հոսի, իբրև հետևանք մարդկային բիրտ ու տմարդի վարմունքի: Այլ ևս պատերազմի դաշտերը չեն բողոքի մարդկային ձեռքով դործուած անասելի տանջանքների դէմ: Այլ ևս սուտը չի համարձակուի մերձենալ մեր շրթունքներին, որ մեր այտերը կար-

մրեն: Այլ ևս անարդարութիւնը չի յանդգնի մարդուն, որ Աստուծոյ պատկեր է կրում, ստորացնել և կենդանական վիճակի հասցնել՝ անարգ հաճոյքի և անպատկառ շահի համար: այլ ամեն տեղ կիշխէ կատարեալ մարդը՝ կամ որ նոյնն է Աստուած:

Ահա թէ սրպիտի խոհեր է յառաջ բերում և յոյսեր ծնում մեր մէջ Բեթղեհէմի մանուկը: Նա դարնան ուրախութեան և ամրան ջերմութեան պատկեր է. բայց ինչպէս սառն է մեր շուրջը. դեռ ձմեռ է, խստաշունչ ձմեռ և բնութիւնը մեռած:

19 ձիգ դարեր են սահել—անցել Փրկչի ծնունդից յետոյ. սակայն բերել են միայն մասնական բարիքներ՝ նման բնութեան երբեմնակի տաք շնչի, որ անցնում է ձմրան միջով և զարթեցնում այս ու այն թփերի կոկոնները. բայց ամբողջի յեղաշրջումը դեռ կատարուած չէ: Դեռ ևս Փրկչի ոգին չի իշխում ոչ պետութիւնների, ոչ ընտանիքների և ոչ անհատների սրտում. երբեմն—երբեմն ու տեղատեղ նշմարում ենք Նրա հետքը, բայց գալիս են ուժգին հովեր և սրբում ու անհետ տանում ամեն ինչ:

19 դարը երկար ժամանակ է, և Փրկչի ոգին պէտք է որ երկրի վրայ խոշոր հետքեր թողնէր, մեծ հաստատութիւններ յառաջ բերեր. բայց ուր են: Այո, ապրել են մարդիկ, որոնք թէև վաղուց արդէն աշխարհին հրաժեշտ են տուել, բայց նոցա սիրոյ և անձուիրութեան ոգին աշխարհը պահել է իբրև յիշատակ. մարդիկ, որոնք օտար էին նախաքրիստոնէական աշխարհին: Սակայն խօսքը բացառութիւնների մասին չէ: Ինչ ասենք, որ մարդկութեան մեծամասնութիւնը՝ հէնց այսօր իսկ տառապում է աղքատութեան, եսամոլութեան ու անմարդասիրութեան ճիրաններում:

Եթէ այսօր մի խումբ՝ հարստութեամբ կուրացած, հաւատ ու ներքին ամեն սրբութիւն մոռացած մեծատան

8582.56



զաւակներ՝ գեղազարդ տօնածառերի շուրջը խմբուած՝ պարում ու ցնծում են, մամոնայից՝ ոսկէ կուռքից և նրան երկրպագու ծնողներից սպասելով հարուստ նուէրներ՝ շուայտութեամբ ու զեղխութեամբ վատնելու համար, անդին հազարաւոր սովալլուկ, մերկանդամ ու բոկոտն մանուկներ՝ օր դատող և օր ուսող խեղճ բանուորի մռայլ կացարանների մէջ գեղնած ու հիւանդ՝ եկել խմբուել են լուսաւոր տաճարների անկիւններում՝ հրեշտակների քաղցրաձայն օրհներգը լսելու և Յիսուս մանուկից իրենց բախտ հայցելու:

Ո՛ւր է արդարութիւնը, ո՛ւր է քրիստոնէական սէրն ու անձնուիրութիւնը:

Ստում են թէ՛ աշխարհը բարոյապէս շատ է յառաջադիմել և նորա հետեանք է համարուում Եւրոպացու զգայուն խիղճն ու նրա արձագանք՝ հասարակական կարծիքը, որ իբր թէ, դատապարտում է ամեն անարդարութիւն: Սակայն ս՛վ է հաւատացողը:

Այդ Եւրոպական հասարակական կարծիքը չէ՞, որին վստահացել էին մանր ազգերը իրենց բախտը. ինչի՞ տիրացան, եթէ ոչ յուսախաբութեան:

Այդ Եւրոպական հասարակական կարծիքին չէ՞, որ կառչած է հայը տասնեակ տարիներ և սպասել, որ իւր դատը արդար վճիռ գտնէ. և ինչ է եղել հետեանքը. պատիր յոյսերով օրօրուել է ու նիրհել, և այսօր էլ զարթելով՝ տեսնում է իւր տունն ու տեղը աւերի ու ծովխի մէջ, իւր հարազատները արեան տաք ծովում, իւր ընտանիքը բարբարոս կրքի անարգանքի ենթակայ: Եւ դեռ մենք խօսում ենք քրիստոնէութեան անունով՝ ու պարծենում՝ որ քրիստոնէայ ենք:

Այո՛, քրիստոնէութիւնը շատ է տարածուած, բայց քիչ է խորացած. մեր շուրջը վառուած են շատ ճրագներ, բայց մեր սրտերը մարած են ու խաւար, անուշով քրիս-

տոնէայ ենք, բայց իրապէս երկրպագու այլ կուռքերի:

Այսօր աշխարհի ամեն կողմերում, հազար ու բիւր գանգակների զօղանջը Փրկչի հրաշալի գալուստն է մեզ աւետում.... բայց արդեօք նոյնքան բազմաթիւ են ուրախ երգերով նրան ընդառաջողները, կենդանի հաւատով նրան ընդունողները: Ո՛չ երբէք:

Ելէք Փրկչի անուան երկրպագու աշխարհի մեծ ու փոքր կենտրոնների փողոցներն ու հրապարակները, մտէք ակմբանոցները, թատրոններն ու այլ զուարճութեան տեղեր՝ և դուք կտեսնէք այսօր, դժգոհ ու յուսահատ դէմքեր: Գալիս-անցնում են անհոգ ու պարապ մարդիկ՝ վայելք ու զուարճութիւն որոնող. մարդիկ, որոնց մատչելի է կեանքը իր բոլոր յարմարութիւններով ու հաճոյքով՝ շնորհիւ փայլուն մետադի. մարդիկ, որոնք կեանքով յափրացած՝ հետամուտ են ծայրայեղութիւնների և արտակարգ եղանակներով փորձում են ծծել կեանքի քաղցրութեան բաժակը մինչև տակը, սակայն և այնպէս՝ անյագուրդ մնալով՝ դժգոհում են և երես շրջում կեանքից: Կայ այստեղ քրիստոնէութիւն:

Անցնում են և մտահոգ մարդիկ՝ կռիւ մղող անագորոյն բաղդի դէմ, որոնք յարում են իրենց բոլոր ոյժերը և ամեն ճիգ թափում աշխարհին տիրանալու և իրենց անյագ ցանկութիւններին հասնելու համար: Այսպիսի ձրգատումներ ունեցող և անյաջողութեան դէպքում յուսահատութեան հասնող անձանց համար բնական է և՛ ազարտ թղթախաղ և՛ արբեցութիւն և՛ շուայտութիւն և՛ ինչ որ կամենաս:

Բայց կեանքը այսպէս շարունակուել չի կարող, պէտք է յեղաշրջուի, և յեղաշրջման մէջ մեծ դեր ունի կատարելու այրի մէջ ծնած Յիսուս մանուկը, որի ծննդեան յիշատակն ենք տօնում այսօր՝ անուշով քրիստոնէաներս:

Եկէք, հայ եղբայրներ և քոյրեր, կեանքի մաքառման

մէջ հոգով ու մարմնով թալկացած էակներ, մտէք տաճար, որ ձեր հոգին ու մարմինը գոնէ առ ժամ մի հանգիստ առնէ: Այնտեղ միայն՝ առանձնացման ու կենտրոնացման ժամանակ՝ կարող էք բանալ ձեր սրբութիւն սրբոցը, տեսնել ձեր հոգու թանկագին գանձերը՝ ազնիւ ձգտումներ, մաքուր խիղճ և բարի կեանք, սակայն՝ փշայած աշխարհում՝ ժանգոտած:

Եկէք, որ կրակի և լուսոյ հնոցի մէջ մաքրուին ու գտուին՝ և՛ կազդուրուած ու նորացած, մտնեն աշխարհ՝ կեանքի ապականութեան դէմ մաքառելու համար:

Այստեղ, այս սիրոյ և լուսոյ տաճարի մէջ, գուցէ ձեք միտքը լուսաւորուի և կեանքի մշուշը պարզէ, գուցէ ձեք ալեկոծ սիրտը իր հանգիստը գտնէ և ձեր հաւատարակը շուրջ ինքն իր կողմէն կորցրած կեանքը ներգաշնակ ընթանայ՝ և անխորհուրդ կարծուած այս կեանքի մէջ՝ յաւիտենական խորհուրդ գտնէ:

Իսկ դու՝ Յիսուս մանուկ, որբերի և անպաշտպանների միակ տէրն ու խնամողը՝ եկ վերջապէս մեր աշխարհը, ժողովիր և պահիր ցիր ու ցան հօտիդ թշուառ մնացորդները, հրաշափառ յայտնութեանդ շնորհիւ զօրացուր նոցա և դարձուր Աստուծոյ որդիք, որ հոգով փառաբանեն քեզ երգելով «Փառք ի բարձունս Աստուծոյ, և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:



«Յերկիր խաղաղութիւն և ՚ի մարդիկ հաճութիւն»: Դուկ. բ. IV.

Հայրապետական սրբատառ Կոնդակը հայրական խնամքի և գորովագութ սիրոյ ծնունդ է, որ հրաւիրում է մեզ քրիստոնէական անձնուէր զոհաբերութեան և՛ նիւթական և՛ հոգևոր՝ հայի ստեղծող, նրա մարանչող և համբերող ողին կենդանի պահելու, ինչպէս նաև հայի ցրտից սառած, քաղցից մարած, հիւանդութիւնից հիւժուած և սրով յօշոտուող մարմինը սղատելու, փրկելու համար:

Ուրախ եմ ընդգծելու, որ տեղիս հայ համայնքը շնորհիւ իւր զգայուն սրտի, պարտաճանաչ ոգու և բարի կամքի յառաջել է Ազգիս Հայրապետի ցանկութեան և իւր առատ ու սրտալի նուիրաբերութեամբ ազգային մեծ ցաւը դարմանում է և կղարմանէ:

Սակայն մեր առաջ մեծ գործ կայ. մեզ պէտք է սարն ՚ի վեր մագլցել, լեռան զագաթը ելնել, իսկ մենք դեռ նրա ստորոտումն ենք միայն: Տոկուն ես դու՝ հայ ժողովուրդ, տանջական պատմութիւնդ մարդելու զիմացկուն է դարձրել քեզ, ես հաւատում եմ, որ դու լուծի կտանես համբերութեամբ և սիրով. ես հաւատում եմ, որ քեզ մի օր կտեսնեմ սարի գագաթին նոր արևի արշալոյսի շողքը երեսիդ:

1600 տարի առաջ այդ արևը ծագեց մեզ համար և նրա լոյսն ու ջերմութիւնը լուսաւորեց հայի ուղին՝ երկար պանդխտութեան ընթացքում պահպանելով նրա կեանքը մինչև այսօր: Այդ լոյսի ծնունդն է, որ տօնում ենք մենք այսօր, որի աւետիքը 1900 տարիներ առաջ

հրեշտակների խմբերը բերին հովիւներին, «ծնաւ ձեզ այսօր Փրկիչ» երգելով:

Թէ ո՞վ էր նորածին մանուկը, ի՞նչ պիտի լինէր նա աշխարհի համար՝ բացատրեցին մեզ նոյն երկնային թեաւոր հոգիները. սակայն ո՞ր մարդկային լեզուն կարող է լիովին պատկերացնել այն հարուստ գաղափարները, որոնք կապուած են այս տօնի հետ: Երկնաբնակների քնարները գեղեցկահնչիւն դաշնակները բաղմատեսակ են, որից միայն մէկը կընտրեմ ես և այն մասին կխօսեմ՝ «յերկիր խաղաղութիւն և ի մարդիկ հաճութիւն»:

Հազարաւոր տարիներ առաջ երկրին պատել էր մութ գիշեր, մարդկութիւնը քնոյ և անհանգիստ երազների մէջ էր. նիրհոզ մարդկութեան վրայ ծանրացել էր մղձաւանջ: Եւ ահա երկինքը բացում է իւր խաղաղութեան դռները և հրեշտակները երկիր են իջեցնում Յիսուս մանկան, որի ճակատին գրուած էր «խաղաղութեան իշխան»:

Այսպէս երկնային ձեռքերով խաղաղութեան առաջին սաղմը իջնում է երկիր, քնքոյշ և թոյլ կորիզը հողի մէջ թաղուած, որ պիտի աճէր. բողբոջէր, ու դառնար խաղաղութեան ծառ, որի ստերի տակ աշխարհի բոլոր վաստակեալներն ու բեռնաւորները հոգու հանգիստ և խաղաղութիւն պիտի գտնէին:

Մենք՝ որոնց ականջում երկար ժամանակ է արդէն հնչում է աւետարանի խաղաղութեան քարոզը. մենք՝ որ աստուածային մանկան մսուրքի մօտ տեսնում ենք մեզ համար մեռնողի արեան խաչը, մեզ համար յարութիւն առնողի բաց գերեզմանը. մենք՝ որոնց համար այսօր ծածկուած է սեղանը Փրկչի մարմնի և արեան խաղաղաբար ընծաներով՝ պէտք է որ աւելի լաւ ըմբռնէինք, քան բացօթեայ մակաղած հովիւները՝ հրեշտակների տուած խաղաղութեան աւետիքը և վայելուչ կլինէր, որ պարզամիտ հովիւների և երկիւղած մոզերի նման հոգով ծունկ

չոքէր աշխարհը նորածին Յիսուս մանկան առաջ, և այսօր երկրի վրայ տօնուէր խաղաղութեան տօն:

Սակայն ո՞ւր է հրեշտակների աւետած խաղաղութիւնը. նայեցէք մարտնչոյ քրիստոնեայ ազգերին, որոնք անխնայ յօշոտում են միմիանց. նայեցէք մարդկային հասարակութեան, ուր՝ իբր թշնամի բանակներ, կանգնած են դէմ առ դէմ հարուստն ու աղքատը, գիտունն ու ազէտը, աէրն ու սարուկը. նայեցէք ընտանիքներին, ուր կինը նոյն արժէքն ունի ինչ որ սարուկը և կանգնած է իւր ամուսնու դէմ, սպէս թշնամու:

Ո՞ւր է այն խաղաղութիւնը, որ Աստուած ծրագրել էր աշխարհի համար, իւր որդու ձեռքով. ո՞ւր է խաղաղութեան թագաւորութիւնը, որ Բեթղեհէմի բարի հովիւը երկրի վրայ հաստատելու եկաւ:

Այն, Բեթղեհէմի այրից ծնունդ առած խաղաղութիւնը հազարաւոր քաղցր վտակներով և կարկաչիւն առուակներով մուտք գործեց մարդկային կեանքի բոլոր խաւերում, թշնամի ազգեր միմեանց ձեռք մեկնեցին, սարուկների շղթաները ընկան, օրէնքները մեղմացան, բանտերը տանելի դարձան, խաղաղութեան հիւղեր ծնունդ առին՝ մանկանց և ձերոց պատասպարաններ, հիւանդանոցներ, անկեղանոցներ, որոնք բոլորը հրեշտակների գեղեցիկ մեղեդիների արձագանքն էին՝ «յերկիր խաղաղութիւն և ի մարդիկ հաճութիւն»: Բայց այսօր դեռ շատ վէճեր ու կռիւներ կան երկրի վրայ, արտասուքներ են հոսում հեղեղներով, արեան ծովերն ողողել են երկիրը. այսօր ցաւով նայում ենք պատերազմում թափուած ու թափուող արեան վրայ, որ բոլորի սիրտը խոցել է սրով:

Այսօր հազարաւոր մարդիկ իրենց վերջին շունչն են փչում աղքատութեան մէջ. հազարաւոր երեխաներ մերկ, բոկոտն և քաղցած իրենց վշտոտ ու մարած հայեացքը աշխարհի բախտաւորներին են ուղղել. քանի՛-քանի՛ եր-

կիրներ տառապում են նիւթական և հողերը աղքատութեան ու գերութեան մէջ. նոցա թւում և մեր՝ դարերի արհաւիրքներից ճողոպրած հայ ազգը արիւնաքամ ընկած է երիքովի ճանապարհին և իւր սրբոց ու օտարների օգնութեան սպասում, որ սամարացու նման խնամեն նրա վէրքերը:

Տեսնում է աշխարհը այս բոլորը, լսում է նոցա հառաչանքի ձայնը: Չէ, պէտք է վերածնութիւն և ներքին վերածնութիւն, որ յառաջ բերէ նաև արտաքին վերածնութիւն. այն ժամանակ միայն հրեշտակների աւետիքը «յերկիր խաղաղութիւն» յիրաւի կթագաւորէ աշխարհի մէջ:

Եկէք, եղբայրներ ու քոյրեր, միանանք և միասին հնչեցնենք մեր ձայնը. անհատի ձայնը մարում է խռովարար և ազմկայոյզ աշխարհի մէջ. խաղաղութիւն սիրող բոլոր սրտերից պէտք է խաղաղութեան ազօթք վերառաքել Բարձրեային. և այն ժանակ Աստուած կնայի մարդկանց վրայ հաճութեամբ և Յիսուս մանկան ծննդեան տօնը կլինի յիրաւի նաև վերածնութեան տօն աշխարհի խեղճերի ու տառապեալների համար:

Սակայն ազօթքը միայն բաւական չէ. նա արտաքին օգնութիւն է. պէտք է նաև ներքին աշխատանք: Եկէք ուրեմն եղբայրներ, զօրացնենք մեր կամքը և աշխատենք որ Յիսուս ծնուի ոչ միայն մեզ համար, այլ մեր մէջ, որ մեր սրտերը մտուրք դառնան, ուր ծնուի ասուածային կեանք, և նորածին կեանքը իւր սիրոյ ջերմութեամբ հալեցնէ մեր սրտերի եսականութեան սառոյցը, որ բազմատեսակ թշուառութիւնները գոյութիւն չունենան:

Տէր, մինչև էրբ պապակի հայի հոգին. նա ծարաւի է խաղաղութեան. ուղարկիր մի Ղազարոս, որ թրջէ իւր մատը խաղաղութեան ցօղով և մեր պապակած հոգուն խաղաղութիւն պարզէ. ամէն:

«Ահաւասիկ աւետարանեմ ձեզ ուրախութիւն մեծ . . . զի ծնաւ ձեզ այսօր Փրկիչ, որ է Յիսուս Տէր» Ղուկ. Բ 10-11.

Ուրախ ողջոյնի ձայն է, որ երբէմն հնչել է երկնքից. Փրկչի ծննդեան աւետիքն է, որ բերել է հրեշտակը մարդուն:

Այսօր էլ նոյն ուրախ ողջոյնի արձագանքն է, որ հրճուանքով լցնում է մեր սիրտը՝ հրաւիրելով մեզ աշխարհի մեծ բարերարի ծնունդը տօնելու: Մեծ մարդոց ծննդեան տարեդարձի օրը սովորութիւն է խօսել նոցա հոգու բարձր թռիչքների, լաւագոյն իղձերի ու ձգտումների և կատարած մեծ գործերի մասին, որով անմահացել են՝ իրենց փայլուն դէմքը յաւէտ դրոշմելով սերունդների յիշողութեան մէջ:

Թող ներուի ուրեմն նոյնը փորձել և ինձ աշխարհի մեծագոյն և կատարելագոյն էակի ծննդեան տարեդարձին, որ իմանանք՝ թէ ի՞նչ է եղել և ի՞նչ է արել մեզ համար նա, որի յիշատակը 1900 տարուց աւելի անմոռաց պահել ենք մեր մէջ:

Սակայն ո՞վ կարող է նրա նկարագիրը տալ. միթէ հնարաւոր է արևը մրով և արշալոյսը մատիտով նկարել: Ներքի ուրեմն իմ Փրկիչ, որ յանդգնում եմ թոյլ ձեռքովս լուսաւոր դէմքդ քաշել և թոթով լեզուովս անհաս հոգուդ նկարագրելը տալ: Թափիր վրաս օրհնութիւնդ, յուզիր հոգիս, բոցավառիր լեզուս, որ կարողանամ փառաբանել անբաւ մեծութիւնդ ու անչափ բարութիւնդ:

«Ծնաւ ձեզ այսօր Փրկիչ, որ է Յիսուս Տէր» ձայ-

նում է հրեշտակը: Մարգարէներէ զուշակած և հրէից ակնկալած Փրկիչը այն ծնաւ, բայց ոչ իբրև, ինչպէս երագում էին հրեանէրը թագաւոր՝, շքեղ պալատում, ծիրանիով պարուրուած, այլ որպէս աշխարհի աղքատիկ զաւակ՝ մսուրի մէջ, յարդէ անկողնում, խոտէ վերմակի տակ: Սակայն այդ արտաքին աղքատութիւնը և այդ թոյլ մարմինը գիտէք թէ՛ ինչ ներքին հարստութիւն և զօրութիւն էր պարունակում: Դանդաղ բացւող կողոնի նման, որ ի վերջոյ դառնում է աննման փարթամ ծաղիկ, զարգացաւ նա և երեսնամեայ հասակում հասաւ մի կատարելութեան, որ մարդու համար միշտ կմնայ անբացատրելի զաղանիք և կհամարուի աստուածային հրաշք: Նա այն դէմքերից չէ, որոնք ծնւում են երկրի ծոցից և կամ մարդկային ոյժերից, այլ երկնքի ու երկրի զրկախառնման արգասիք, յաւիտենականի և մարդկային հոգու միացման ծնունդ է Յիսուս՝ մարդկային կատարեալ կեանքի տիպարը:

Սակայն ինչու՞ն է նրա կատարելութիւնը:—Գաղտնիքը իմանալ կուզէք՝ լսեցէք: Նա տեսաւ, որ աշխարհը չի ձանաչում սիրոյ Աստծուն, որ իւր կեանքի աղբիւրն էր, իւր սրտի սիրոյ կրակը: Նա գտաւ աշխարհը խիստ ցամաք, խիստ եսական՝ և փորձեց այն դարձնել սիրոյ Աստուծոյ բնակարան, որպէսզի ժամանակակից եսական աշխարհը սիրոյ և եղբայրութեան թագաւորութիւն դառնար և կրէր իւր յաղթական դրօշի վերայ խաղաղութեան մշտադալար ձիթենին:

Ինչպէս. միթէ կարելի է շտեմնել բնութեան մէջ Աստուածային սիրոյ և հոգատարութեան անթիւ պատկերները. նայեցէք երկնքի թռչուններին, որոնք ոչ ցանում են և ոչ հնձում, բայց ապրում են. որովհետև Երկնաւորը կերակրում է նրանց:

Նայեցէք երկրի բոյսերին, որ տարէ ցտարի ծլում ու ծաղկում են առանց սեփական հոգսի ու խնամքի. որով-

հետև Երկնաւորը սնուցանում ու շերմացնում է և նոր կեանք շնորհում:

Նայեցէք դաշտի շուշանին, ինչպէս փարթամ է նա ու սիրուն, թէև ոչ մանում է և ոչ հիւսում որովհետև Տէրը զարդարում է նրան արքայական շուքով: Այն, բնութեան մէջ ամենուրեք երևում էր Տիրոջ քաղցր հայեացքը, խնամող աջը և գործով լի սիրտը. սակայն չկար այն հաւատը, որ տեսնէր բնութեան մէջ Աստուածային անհուն սէրը:

Այդ հաւատն էր, որ բերաւ Փրկիչը՝ առնելու մեր աչքերի կապիչները և ցուցնելու մեզ՝ Աստուածային անհուն սէրը գէպի բնութիւնը և մարդը:

Յիշում էք Փղչին՝ նաւի մէջ հանգիստ քնած կարծես ալեկոծ ծովի կատաղի ալիքները՝ իւր հօր հաւատարիմ բազուկները լինէին, որոնք՝ նաւակը օրորելով՝ քուն էին բերում նրա հոգնած աչքերին:

Յիշում էք նրա արձակած տիրական հրամանը կատարած բնութեանը թէ «գաղբիւր, խաղաղիւր. և դադարեց հոգմը ու խաղաղեց ծովը»:

Ինչպիսի խոր հաւատ կայ այդ խօսքերի մէջ. ան, եթէ մենք էլ ունենայինք Փրկչի հաւատը, եթէ մեր սրտի մէջ էլ նա խորը թաղուած լինէր՝ մենք էլ կտեսնէինք աշխարհի մէջ Աստուածային անհուն սէրը. և սրբան երջանիկ ու կենսուրախ կապրէինք այստեղ, մարդու համար այսօր դժոխք դարձած այս վայրում:

Սոր հաւատի հետ՝ խորունկ էլ սէր ունէր Յիսուս. տհա նա՝ մանուկների ճշմարիտ բարեկամը, ինչպէս սիրով և զուրգուրանքով զրկում է նոցա և օրհնութեան հեղեղներ թափում նոցա և նոցա, իրենց բազուկների մէջ սեզմ զրկած, մայրերի վերայ:

Ահա նա՝ աշխարհի թշուառների ու վշտակիրների, խեղճերի ու հիւանդների օգնականն ու մխիթարիչը, որ

տալիս է խուլին՝ ականջ, կաղին՝ ոտք, գօսացեալին՝ ձեռք
և մեռեալին՝ կեանք:

Ահա նա՛ մեղաւորների, բարոյապէս ընկածների ու
արհամարուածների կարեկիցն և ճշմարիտ բարեկամը: Նա-
յեցէք, նա մանուկ է մի անուանարկեալ մարդու՝ մեղաւոր
Զակքէոսի տունը՝ արհամարհելով այլոց արտունջը և փրկ-
կութիւն բերում այդ տանը: Ահա Զակքէոսը շանթահար
կանգնած է Տիրոջ առաջ, դողում է ամբողջ մարմնով,
Փրկչի ահաւոր տեսիլը շարժել է նրա անմաքուր խիղճը,
ալեկոծել նրա հոգին ու կատարելապէս յեղաշրջել. ահա
լսում ենք նրա խոստովանութիւնը՝ ու զղումն. Տէր, հա-
րստութեանս կէսը կտամ աղքատներին, և եթէ մէկին
զրկել եմ՝ քառապատիկը կհատուցանեմ՝ միայն թէ խղճիս
հանդիստ ու հոգուս փրկութիւն տուր:

Այսպէս ուրեմն հաւատ և սէր, ահա Փրկչի կատարե-
լութեան աղբիւրը, որ պիտի լինի նաև մեր կատարելու-
թեան պատուանդանը:

Տարիները գլորում են և մենք անտարբեր տօնում
ենք Փրկչի ծնունդը, առանց հոգ տանելու, որ նա իրապէս
ծնուի մեր հոգու մէջ՝ հաւատ ու սէր սերմելով այնտեղ:

Մենք պահում ենք լոկ մի աւանդական կարգ, մենք
կատարում ենք մի արտաքին ծէս. ծէս, որից՝ մանաւանդ
մտաւորականներս, իբր թէ փորձում ենք խուսափել. ինչ
ամօթ և նախատինք է մարդու՝ Աստուածային հոգու
սլատկեր էակի համար: Փրկիչը ինքնին մի հոգևոր գոհա-
րէ. սակայն ինչ օգուտ այս գոհարից, երբ չի զարգարում
մեր հոգին, երբ նա չի դառնում մեր հոգու սեփականու-
թիւնը:

Հայ աշխարհը ամեն տարի տօնում է նրա ծնունդը,
սակայն ինչ օգուտ, ենք նա իբրև հաւատոյ և սիրոյ մար-
մնացում չի ծնում մեր մէջ, չի դառնում մեր հոգու
սեփականութիւն:

Եւ սակայն ո՞վ աւելի, քան եթէ մենք այսօր կարօ-
տում ենք կարօտեալ հաւատի և ճշմարիտ սիրոյ:

Հայի տառապանքների հողմերը աւելի կատաղի, քան
այսօր, երբէք փչած չեն, հայկական կեանքի ալեկոծ ծովը
աւելի կատաղի և ահարկու ալիքներ, քան այսօր երբէք
տուած չէ. սակայն ո՞ւր է Փրկչի կենդանի հաւատը, որ
դադրեցնէ քամին և խաղաղէ ծովը:

Հայ որբ մանուկները ճշմարիտ բարեկամի աւելի քան
այսօր երբէք կարօտած չեն, որ զգուէր նոցա, որ զրկէր
նոցա, որ օհնէր նոցա. սակայն ո՞ւր է Փրկչի սէրը, որ
զուրգուրանքով զրկէ նրան և սիրով խնամէ:

Հայ աշխարհը աւելի մեծ թշուառութիւն, քան այսօր
երբէք տեսած չէ. սակայն ո՞ւր է Փրկչի սէրը, որ յուզէ
մեր սիրտը՝ դարձնելով մեզ այդ խեղճերի ու թշուառների
բարեկամն ու մխիթարիչը:

Մեղաւորների, բարոյապէս ընկածների ու արհամա-
րուածների աւելի մեծ վոհմակ, քան այսօր աշխարհը եր-
բէք տեսած չէ. սակայն ո՞ւր է Փրկչի սէրը, որ մեզ նրա
կարեկիցն ու ճշմարիտ բարեկամը դարձնէ:

Նայեցէք ձեր շուրջը, և շատ Զակքէոսներ կտեսնէք.
սակայն չկայ Փրկչի ահաւոր տեսիլը, որ շանթահարէ և նո-
ցա անմաքուր խիղճը ալեկոծէ, նոցա հոգին յեղաշրջէ:

Գրկենք ուրեմն նորածին Յիսուս մանկանը, առնենք
մեր ներսը նրա հաւատն ու սէրը, որ աշխարհի մէջ յաւի-
տենական ճշմարտութիւններ և աստուածային սիրոյ ան-
թիւ անհամար պատկերներ տեսնենք և լինենք նրա կա-
տարեալ երկրպագուն. որպէսզի իրաւունք ունենանք
հրեշտակների հետ Փրկչի ծնունդը միմեանց աւետելու.
«ահաւասիկ աւետարանեմ ձեզ ուրախութիւն մեծ . . .
զի ծնաւ ձեզ այսօր Փրկիչ, որ է Օծեալ Տէր»։ Ամէն:



6

«Հոգին է կենդանարար, մարմին ինչ
նչ օգնէ». Յովն. 2. 64.

Բարիկենդանի շաբաթն է, ուրախութեան շաբաթ ըստ
աշխարհի. բայց մեր եկեղեցին տխուր յիշատակների տո-
նակատարութեանց է նուիրած:

Երեքշաբթի տօնեցինք ս. Ղևոնդեանց յիշատակը՝ մի
խումբ քահանաների, որոնք համարձակութիւն ունեցան
կանգնելու Բարձրեալի աթոռի առաջ՝ ժողովրդի վիշտն ու
աղերսը մատուցանելու, կենդանի խօսքով վառելու մարդ-
կանց սրտերը հայրենիքի և եկեղեցու սիրով, դէպի վեր,
դէպի բարին ուղղելու նրանց մտքերը, և . . . մարտիրո-
սական անթառամ պսակ առնելու:

Այսօր ժողովուած ենք կատարելու ս. Վարդանանց
նահատակաց յիշատակը՝ մի խումբ քաջերի, որոնք հոգու
արիութիւն ունեցան մոռանալու իրենց անձը, արհամար-
հելու ընտանիքի հանգիստը և յանուն խղճի ազատութեան
ու յանուն հայրենիքի՝ բողոքելու ծրագրուած անարդա-
րութեան դէմ, կռիւ մղելու կատարուած բռնակալութեան
դէմ. բռնակալութիւն, որ մարմնի գերութեան հետ՝ հո-
գու գերութեան էր ձգտում, և՛ յանուն գաղափարի ու ի
սէր հայրենիքի՝ մահու բաժակ ըմպելու:

Ո՛րքան իմաստուն է հայ եկեղեցու այս կարգաւո-
րութիւնը. առաջներս պահոց օրեր են, անհատական ինք-
նաքննութեան օրեր, երբ մեզնից իւրաքանչիւրը՝ իբրև
քրիստոնեայ մարդ՝ պարտականութիւն պիտի զգայ իւր
կեանքի անցած ուղին դիտելու, քննելու՝ և իւր ապագայ
ընթացքը գիտակցօրէն որոշելու և այդ ինքնաքննութեան

նախօրեկին նշանակուած են համայնական ինքնաքննու-
թիւն, ազային ինքնաքննութեան տօներ, որ ազգը լուրջ
հաշուատեսութեամբ քննէ իւր անցեալը, և ըստ այնմ կամ
շարունակէ և կամ փոխէ իւր ընթացքը՝ նոր հորիզոն և
նոր հեռանկարներ որոնելով:

Իբրև անհատ նայում ենք մեր գործը և տխրում է
մեր հոգին, որովհետև երկնային արդարութիւնը չենք
տեսնում, որ հուշակում է թէ՛ «կենսատու արևը ծագում է
բոլորի վրայ, զովարար անձրևը թափում է բոլորի համար»:
Փոխարէնը տանում ենք երկնային անարդարութիւն. շա-
տերի արևը ամպերի տակին, շատերի կեանքը զուրկ անձ-
րևի զովարար և թարմացուցիչ ազդեցութիւնից՝ ու են-
թակայ անապատի ամեն ինչ այրող և հեղձուցիչ շնչի:

Իբրև ազգ դիտում ենք մեր շուրջն ու հեռուն և
նոյն անարդարութիւն ենք տեսնում. մեր հոգին սուղ-
ւում է կեանքի անարդարութեան ալիքների մէջ և յուզ-
ւում ու ալեկոծւում, տեսնելով որ բախտը իւր ժպիտը
մասնադրել է ազգերին ոչ արդար: Ազգեր կան, որոնք
կանգնած են ոսկէ պատուանդանների վերայ՝ յենուած
իշխանական գայիստնի, ազգեր էլ կան, որոնք զինուած
են զիտութեան ու այլ հոգեկան հարստութեամբ. իսկ մենք
խեղճերի շարքումն ենք, նահատակների ապաւինած, ան-
ցեալ հերոսների յիշատակներով յուսազրուած:

Բայց հոգ չէ. եթէ մենք ըմբռնենք այդ նահատակ-
ների ոգին, եթէ հասկանանք անխօս գերեզմանների լե-
զուն՝ մենք կելնենք դժբաղդ ազգերի շարքից և կանցնենք
երջանիկների դասը:

Անցեալի յիշատակները ոգևորութեան անսպառ աղ-
բիւրներ են սրտի և գաղափարի տէր մարդոց համար. ա-
մեն ոք կարող է իւր հերոսը որոնել այնտեղ, նրանով
ոգևորուել, նրանով ներշնչուել և բարձրագոյն նպատակի
ձգտելու խթան ստանալ:

Հայ եկեղեցին ստիպում է մեզ այսօր մտքով սլանալ դէպի անցեալը դէպի, Ե. դար, հայ պատմութեան այն շրջանը, երբ հայ մարդու համբերութեան բաժակը լցուած էր Պարսից անարդարութեան երեսից. բողոքող ուժերն ձայն էր պէտք, հերոսական սգի էր պէտք, մաքառող ոյժ էր պէտք, արդարութեան ձանր հնչեցնող և նրա դրօշակը բաձր պահող էր պէտք: Եւ ահա արձանանում է մեր առաջ Վարդանը հաւատով լցուած, քրիստոնէութեամբ դաստիարակուած, բարձր նպատակների գոհուելու ընդունակ:

Վարդանը իւր անմահ ընկերներով Ե. դարու ոգու մարմնացումն է: Նոյն այդ ոգին ապրում էր հայ կեանքի բոլոր խաւերում. քրիստոնէութեան արդարութեան և անձնուիրութեան գաղափարներով դաստիարակուած հայ մարդը՝ ով էլ որ լինէր, ընդունակ էր ամեն գոհողութեան՝ յանուն վեհ գաղափարների. ուստի և իրաւամբ հիացմունքով է խօսում ոսկեծղի Եղիշէն մեր անցեալ կեանքի մասին և ոգևորուած դրուատում հայ մարդու քրիստոնէական այդ առաքինութիւնները:

Եւ միթէ կարող էր չհիանալ այդ մեծ հայրենասէրը՝ տեսնելով հայ ժողովրդի անձնուէր ոգին, որ ազադակում էր՝ Թո՛ղ մեր արիւնը թափուի մարտիրոսների արեան նման, միայն թէ մեր եկեղեցին չնկնի հեթանոսների ձեռքը:

Միթէ կարող էր չզմայլել՝ տեսնելով հայ հոգևորականների ու իշխանների անկաշառ և անշահասէր ճշմարտասիրութիւնը, որ բիւրեղանման պարզութեամբ արտաշայտուեցաւ Արտաշատի ժողովում՝ «յայտ հաւատոյ զմեզ ո՛չ ոք կարէ խախտել, ո՛չ հրեշտակք և ո՛չ մարդիկ, ո՛չ սուր և ո՛չ հուր, ո՛չ ջուր և ո՛չ ամենայն զինչ և են դառն հարուածք»:

Միթէ կարելի էր չոգևորուել տեսնելով երիտասարդների կտրճութիւնը, որոնք ՚ի սէր ճշմարտութեան գերա-

դասում էին յաղթական մահը, քան անարգ կեանքը ճիւղախելով և ի գէնս ընթանալով՝ զմահ քան զկեանս ընտրէին»:

Կամ ի՞նչ քարտիրոս պիտի լինէր, որ չյուզուէր տեսնելով կանանց և օրիորդների ինքնամոռացութիւնը՝ յանուն հայրենիքի և խղճի ազատութեան:

Հայոց աշխարհի փափկասուն տիկնայք, որոնք մետաքսէ խշխշուն շորերի և ոսկեղէն փայլուն զարդերի էին սովոր՝ բոկոտն գնում էին աղօթատուն համբերութիւն աղերսելու նեղութեան օրերին: Նրանք, որ երէնների քաղցրահամ մսի էին սովոր՝ բանջարը հաճութեամբ էին ճաշակում:

Նաժիշաներով մեծցած, ծառայելու անսովոր, քրնջոյշ ու փարթամ կեանքի սովոր, օշնանով և անուշահոտ իւզերով իրենց կաշին քնքշացնող նախարարների նազելի կանայք զոհեցին իրենց հանգիստը՝ իրենց աղախինների հետ հաւասար՝ ցերեկը ծառայական պաշտօն էին կատարում փոշոտելով և արևակէզ լինելով, իսկ գիշերը գետնատարած չոր խոտին էին յանձնում իրենց գլուխը՝ մարմիններին հանգիստ տալու համար:

Նոցա մխիթարութիւն էր սաղմոսներ մրմնջալ, մարգարէութիւններ կարդալ և քրիստոնէական հաւատով զօրացած՝ իրենց անձը հայրենիքի նահատակ ամուսիններին զոհել, նրանց հաւատարիմ մնալ մինչև իրենց մահը: Շատ ձմեռներ եկան անցան, սառնամանիք հալեցան, շատ գարուններ դարձան և բերին նորից ծիծռունք, բայց աւանդ նրանց իզձը՝ տեսնել իրենց հերոս ամուսիններին, իրենց հետ գերեզման իջաւ: Նրանց անուանը արժանի արձաններ կանգնեցին, բայց յաւիտենական արձանը կանգնած պիտի լինի ձեր մսեղէն սրտերում հայ տիկնայք և օրիորդներ:

Այսպէս էին ահա մեր նախնիքը. —

Իւրաքանչիւր մարդ, իւրաքանչիւր ազգ պիտի ունե-

նայ կեանքի կենտրոն, առաջնորդող գաղափար, և ինչպէս տեսնում էք մեր նախնիքը ունեցել են՝ հայրենիքն ու եկեղեցին է եղել նրանց կեանքի կենտրոնը:

Ես հարցնում եմ ձեզ՝ ներկայի հայերիս, ո՞րն է մեր առաջնորդող գաղափարը. փոխուել է կեանքը, գուցէ պէտք է փոխել նաև առաջնորդող գաղափարը. գուցէ հնացել են մեր նախնեաց իդէալները, եկէք ուրեմն փոխենք և մեր կեանքի նոր յենարաններ, նոր կենտրոններ ընտրենք այս ամեն ինչ կլանող աշխարհին կուլ չերթալու և մինչև ծուծը անբարոյականացած կեանքին զոհ չլինելու համար:

Ամեն օր լսում ենք՝ թէ կեանքի նպատակը առաջադիմութիւնն է: ասացէք խնդրեմ, ինչ ենք անում մենք հայերս, գոնէ մեր ազգային կեանքի յառաջադիմութեան համար: Ամեն օր գոչում ենք, թէ ներկայի բարոյական գաղափարները անբաւարար են. ինչ ենք անում մենք բարձրացնելու և առողջացնելու համար գոնէ մեր բարոյական կեանքը:

Կուզէք իմանալ, լսեցէք. անցեալում մենք նահատակուեցանք այն գաղափարների և հաստատութիւնների համար, որոնք մեր կեանքի, մեր գոյութեան հիմունքներին էին, իսկ այսօր՝ մենք ենք նահատակում մեր կեանքի աղբիւրները—Միթէ նահատակ չես դու հայ եկեղեցի, քանի որ քեզնով օր ու արև տեսած գաւակներդ՝ այսօր վատ երախտամոռութեամբ երես են դարձնում քեզնից՝ որպէս ծերացած մօրից և մինչև իսկ մահը են ցանկանում:

Միթէ նահատակ չես դու հայ դպրոց, որ աղքատի տոպրակը շալկած շրջում ես մուրացիկի նման՝ օրական հացով ապրում ու պատսպարում քո աղքատիկ գաւակներին:

Միթի նահատակ չես դու հայ ընտանիք՝ քանի որ անդամներդ երես են դարձնում հարազատներից և գրկաբաց ընդունում օտարներին՝ մեռցնելով ամեն ազգային

աւանդութիւններ ու սովորութիւններ, առանց որի կարող չէ մի ազգ, այն էլ մեզ նման փոքրիկ, ցրուած հպատակ ազգ ինքնուրոյն ապրել:

Միթէ նահատակ չես դու հայ անուշիկ լեզու, շատ ընտանիքներից հալածուած ու վտարուած մայրենի բարբառ: Ո՞վ այսօր քեզնից երես չի դարձնում—դպրոցի աշակերտունին՝ թէ՛ աշակիրտը, հայ օրինորդ՝ թէ՛ երիտասարդը, թէ՛ հայ ծնողը—ամենքն էլ երես են շրջում քեզնից: Մէկին ատելի ես, որովհետև անիծեալ մամոնայ ձեռք բերելու չես նպաստում, միւսին, որովհետև տարփածուի լեզուն այլ է, երրորդին որովհետև մեղկ է և ծոյլ, իսկ դու այն փոքրիկ թղթի կտորը զլանում ես տալ դիւրութեամբ, որ բացէ անում առաջդ համալսարանի դռները ապագայ հանգիստ կեանքի համար:—Ահա մեր պատկերը:—Ասացէք խնդրեմ, միթէ հնացած էք համարում մեր նախնեաց պաշտած հայրենիքի և եկեղեցու գաղափարները. եթէ նոքա հնացել են, միթէ հնացել է նաև անձնութիւնութեան փաղափարը, որ վեհ սրտերի հարազատ ծնունդ է և կմնայ. առանց որի ոչ կեանք կայ և ոչ յառաջադիմութիւն, ո՞ր միայն ընդունակ է մարդուն աշխարհից վերացնել և պաշտամունքի առարկայ դարձնել:

Գիտեմ չէք բողոքի դրա դէմ, և այդ ոգին է որ ձեզ ժողովել է այտեղ. բայց սրտեղից սպասենք այդ ոգին՝ հայկական անձնուէր ոգին, քանի որ յարմարութիւնների գերի ոսկու սպասաւոր արդի հայը իւր բոլոր խաւերով՝ փախչում է հայ գրականութիւնից և հայ դպրոցից՝ հայ ոգու երկու մեծ ջերմոցներից: ոչ հայ քահանայի, ոչ հայ ուսուցչի, ոչ հայ բժշկի, ոչ հայ փաստաբանի, ոչ հայ հարուստի, ոչ հայ գործակատարի և ոչ էլ հայ գիւղացու որդին է յաճախում հայ դպրոց. հայ դպրոցը յաճախում է միայն հայ աղքատը, այն էլ աղքատութիւնից ստիպուած:

Այս չէ ուղին կեանքի ու փառքի. եթէ ապրել կու-

զէք և պատուով ապրել՝ եկէք եղբայրներ, գլուխ խոնարհենք մեր նախնեաց հերոս սրտի և անձնուէր ոգու առաջ-թոյ նոցա հոգիները բարեխօս լինեն Բարձրեալի առաջ զօրացնելու մեր կամքը՝ դէպի ազնիւը դէպի վեհը, դէպի յաւիտենականը: Որովհետև այժմ՝ երբ հայը շնորհիւ Մեծ Ռուսաստանի ստանում է կեանքի և գոյքի ապահովութիւն և խաղաղ զարգանալու իրաւունք՝ շատ աւելի կարևոր է անձնուէր ոգի, որպէսզի կարողանանք իբրև ազգ ապրել և մարդկային մեծ ընտանիքին օգտակար անդամ դառնալ՝ մխիթարելով և պարգեբես անելով մեր պաշտպան բարեկամներին և ամօթահար՝ մեր թշնամիներին. ամէն:



«Միմօքն Յովհնանու, սիրես զիս առաւել քան զգոսա: Ասէց նա. այժմ Տէր, և դու զիտես զի սիրեմ զքեզ» (Յով. ԻԱ. 15):

Յիսուս իւր յարութիւնից յետոյ՝ Գեննեսարէթի գեղատեսիլ ծովակի ափին երևեցաւ իւր որբ մնացած աշակերտներին, իւր ներկայութեամբ նոցա ընկճուած հոգին զօրացնելու և մի անգամ էլ ու վերջին անգամ յիշեցնելու իրենց սրբազան ուխտը՝ սիրել մեծ Վարդապետին, որ կեանք է, որ յոյս է, որ ճշմարտութիւն է և եթէ պէտք լինի՝ մեռնել իսկ նրա համար:

Նոր էր անցել Յիսուսի փոթորկալից կեանքի վերջին շաբաթը՝ տանջանաց շաբաթը, միանգամայն նաև բոլորի համար փորձութեանց շաբաթը. մարդկային հոգու թուլութեան ու փոփոխականութեան որքան հարուստ ելևէջներ է պարունակում նա: Ահա հրեայ ժողովուրդը, որի պաշտամունքի առարկան էր, որի թագաւորն էր երէկ Յիսուս. իսկ այսօր նա երես է շրջել իւր կուռքից և ծաղրում ու անպատկառ աղաղակում՝ «ի խաչ, 'ի խաչ»: Ահա Յուզան՝ երկոտասանից մէկը, որ վայելել էր իւր վարդապետի սէրն ու խնամքը և փոխարէնը բազմիցս քաղցր ժպիտներ բաշխել նրան. այսօր երկրային մամոնայի սիրուն, զնգացող ու փայլուն մետաղի համար կեղծ համբոյրով մատնում է նրան: Ահա Պետրոսը՝ Յիսուսի անզուսպ աշակերտը, որ միշտ առաջին էր գոչում՝ «դու ես Քրիստոսն»՝ Որտի Աստուծոյ կենդանւոյ», որ հաւատարմութիւն էր ուխտել մինչև 'ի մահ՝ «թէպէտ և ամենեքեան. գայ-

Թակղեսցին, այլ ես՝ ոչ... եթէ մեռանել իսկ հասանիցէ ընդ քեզ, զքեզ ոչ ուրացայց»։ Նոյն այդ Պետրոսը առաջինը հրաժարուեց իւր վարդապետից, և այդ՝ քահանայապետի խղճուկ աղախնի առաջ՝ «ոչ գիտեմ զնայ, կին գու» ասելով։

Սակայն այդ մարդկային հոգու թուլութեան ու փոփոխականութեան հակապատկեր կանգնել է մեր առաջ Յիսուս՝ մարդու որդիներից մեծագոյնն ու աննմանը. միակ հաւատարիմը իւր ուխին, միակ ծառան իւր գաղափարին, եզակի օրինակը ճշմարտասիրութեան, որի բերնում միայն կվայլէին անշուշտ «եթէ մեռանել իսկ հասանիցէ ընդ քեզ, զքեզ ոչ ուրացայց» խօսքերը։ Մերձաւոր անցեալի փորձութեանց բովից անցած՝ կամեցաւ Յիսուս միանգամ էլ, ու վերջին անգամ յիշեցնել իւր աշակերտներին իրենց ուխտն ու անհաւատարմութիւնը՝ նրանց հոգու մէջ մշտական հսկիչ զնելով խղճի խայթը։

«Միմովն Յովհնանու սիրե՛ս զիս»։ այդ պարզ հարց չէր Փրկչի հայեացքը նրանց աչքերի միջով թափանցում էր վերյիշել իրենց հոգու փոթորկալից անցեալը, ցուցադրել ներքնապէս իրենց հոգու թուլութիւնն ու փոփոխականութիւնը. նա ստիպում էր յիշել՝ «եթէ մեռանել իսկ հասանիցէ ընդ քեզ, զքեզ ոչ ուրացայց» ու սրա հանդէպ՝ հաււի խօսելն ու Պետրոսի՝ երիցս ուրացութիւնը. և ահա թէ ինչու «Տրամեցաւ Պետրոս՝ զի ասաց ցնա երիցս, թէ սիրես զիս»։

Առաքեալների փոխարէն կանգնած է այսօր հայ ժողովուրդը իւր հոգու փոփոխական ելևէջներով. իսկ անփոփոխ Յիսուսի փոխարէն՝ Հայ եկեղեցին, որ տօնում է այսօր ս. Վարդանանց յիշատակը, կրօնի ու հայրենի եկեղեցու սիրու համար. նա յիշեցնում է մեզ մեր պապերի ուխտը՝ սիրել հայրենիքը, կրօնն ու եկեղեցին և՛ եթէ հարկ լինի, նահատակուել։

Եւ միթէ հնարաւորէ չըսիրել հայրենիքը, չէ՞ որ նա

է, որ կապում ու միացնում է անհատներին՝ դարձնելով նրանց մի ժողովուրդ, մի մեծ ընտանիք, որոնց երակներում միևնոյն արիւնն է հոսում, որոնց բերնում միևնոյն մայրենի բառբառն է հնչում։

Միթէ հնարաւոր է չսիրել հայրենիքը, որ կապում է և օղակում մեզ մեր նախնեաց հետ և՛ արեամբ և՛ գիտութեամբ և՛ գեղարուեստով։

Միթէ հնարաւոր է չսիրել հայրենիքը, որ տալիս է մեզ հարուստ ժառանգութիւն և՛ նութական և՛ մտաւոր և՛ հոգեկան։

Միթէ հնարաւոր է չսիրել կրօնը, որ մեր հոգու բարձր թռիչքների հաւաքածոյ է, որ մեր սրտի սրբութիւն սրբոցն է, որ յաւիտենական ճշմարտութիւնների պահապան է, որոնց քարոզիչն եղաւ Յիսուս, որոնցով ապրեցաւ և որոնց համար նահատակուեցաւ։

Միթէ հնարաւոր է չսիրել հայրենի եկեղեցին, որ բերան է յիշատակած ճշմարտութիւնների, որ կենդանի քարոզ է հայրենիքի ու ազգի գոյութեան գաղափարի, որ ուսուցանում է ապրել ու մեռնել ճշմարտութեան համար։

Սակայն այսօր, հայ եղբայրներ և քոյրեր, եթէ Փրկիչը բռնէ մեր ձեռքից և մեր աչքի մէջ ձգէ իւր պայծառ ու խորաթափանց հայեացքը ու իւր հովուական ձայնով հարցնէ, թէ հայ մարդ, հաւատարիմ ես ուխտիդ՝ սիրումես հայրենիքդ, կրօնդ ու եկեղեցիդ, չշտապես պատասխանել, վախենամ, թէ Պետրոսի նման ամօթով մնաս։ Վախենամ թէ ուխտի նահատակների հոգիները, որոնց յիշատակը յարգելու ենք եկել այսօր, դժգոհեն մեր դէմ՝ տեսնելով մեր թոյլ սէրը դէպի հայրենիքը, կրօնն ու եկեղեցին. վախենամ, թէ մեր նախնեաց հոգին, որ ունէր յարատե ու հաստատուն սէր դէպի հայրենիքը, կրօնն ու եկեղեցին՝ բողոքէ մեր երերուն կամքի դէմ, որ զիտէ տատանուել ու յուսահատուել դժբախտութեան ժամերին

և ամբանալ ու ոգևորուել բախտի ըրպէսներին:

Այն, սիրելիք, թէթև մի նայէք ձեր ուխտին, որ արել էք զէպի հայրենիքը, կրօնն ու եկեղեցին, որ Պետրոսի նման չարամիք: Այլ հաստատուն կացէք ձեր ուխտին, միշտ ծառայ մնացէք ճշմարտութեան, որ ձեր նախնեաց նման՝ նահատակութեամբ փառաց պսակ ժառանգէք. ամէն:



8

«Արդ՝ եղերուք դուք կատարեալք, որպէս և հայրն և ձեր երկնաւոր կատարեալ է» (Մտթ. Ե. 48):

Բարեկենդանի աղմկալից օրերին յաջորդում են մեծ պատի լուսութեան և սուսունքի օրեր: Մարդկային կեանքը՝ հասնելով զուարճութեան գագաթնակետին, եկեղեցու կոչով հրաւիրուում է սթափուելու, ներքնապէս ամփոփուելու և իրենից հաշիւ պահանջելու իւր արարքների համար, առաջնորդուելով այն սկզբունքով, որ սուել է մեզ Փրկիչը, մեր կեանքի առաջնորդը:

Եկեղեցու կոչը Փրկչի քարոզն է, որի թանգագին ժողովածուներն են կազմում յատկապէս մեծ պատի կիրակիների՝ ճաշու առակներով հարուստ՝ աւետարանները, որոնք քրիստոնեայ մարդու համար զարթուցիչ կոչնակի դէր են կատարում:

Երկրորդ կիրակուայ աւետարանի վերջաբանն է, որ այսօրուայ քարոզիս նիւթ պիտի դառնայ, և որ միանգամայն պիտի ծառայէ կանգուն՝ մեր արարքները չափելու, դառնալով մեր ներքին աշխարհի բարոյական ըմբռնումների դատախազը և որ հնչումէ «Արդ եղերուք դուք կատարեալք, որպէս և հայրն ձեր երկնաւոր կատարեալ է»:

Ո՞վ մեզնից ներքին ամփոփման և կենսարոնացման ըրպէսներ ունեցած չէ և ցանկացած չէ իմանալու՝ թէ ի՞նչ է ընդհանրապէս կեանքի նպատակը:

Ո՞վ մեզնից երբևիցէ հետաքրքրուած չէ պարզելու իրեն՝ թէ ի՞նչ է մասնաւորապէս մարդու կեանքի նպատակը:

Արար աշխարհին հետաքրքրող այս վերջին հարցին է, որ պատասխանում է Փրկիչը՝ մարդու կեանքի նպատակը համարելով կատարելութիւնը:

Բայց ի՞նչ հասկանանք կատարելութիւն ասելով, և ինչպէ՞ս է հասկացել Փրկիչը կատարելութիւն խօսքը: Երբ տեսնում ենք մի ծառ՝ ազատ ու անարգել աճած, բունը հաստ, բոյը բարձր, կանգնած հպարտ ու պերճ, գարնանը տերևալից ու ծաղկազարդ, իսկ ամառը պտղալից՝ մենք համարում ենք նրան կատարեալ: Բայց և կատարեալ է դաշտի հացահատիկների ցօղունը, որ հազիւ մի երկու ոտնաչափ բարձր է գեանից, որին քամու թոյլ շունչն անդամ իւր քամահաճոյքով ընդունակ է տարուբերելու:

Կատարեալ է նաև դաշտի աննշան խոտն էլ անգամ, որ յաջորդ բուսելին կարող է անցորդի ոտին կոխան լինել և ոչնչանալ:

Կատարեալ է նաև ցօղի կաթիլը, որ, առաւօտեան արևի ճառագայթների ազդեցութեան ներքոյ, թանգազին ադամանդի խաղ է ստանում՝ և նրա ազդեցութեան ներքոյ էլ գոլորշիանում ու անհետանում:

Բնութեան մէջ կատարեալ է ամէն արարած իւր տեսակի մէջ, որ գոյութիւն է ստացել և ապրում է Արարչի կամքով, լինի հսկայատեսիլ մի սար, որի կատարը ամպերից բարձր է խոյացած, թէ մի ծաղիկ՝ մացառի մէջ թաքուն լուսած ՚ի փառաբանութիւն իւր Արարչի: Կատարեալը Արարչի կամքն է, որին հպատակելով միայն դառնում է նաև արարածը կատարեալ:

Այսպէս է նաև մարդը. նա կատարեալ է, երբ ձգտում է հասնել Արարչի կանխորոշ նպատակին, երբ նրա հոգին Աստուածային պատկեր է կրում՝ ճշմարտելով Արարչի խօսերը թէ՛ «արասցուք մարդ ըստ պատկերի մերում և ըստ նմանութեանդ»:

Բայց ո՞րն է նախասահմանութեան որոշուած նպատա-

կը մարդու համար, և ի՞նչ է նշանակում Աստուծոյ պատկեր լինել կամ որ նոյնն է՝ կատարեալ լինել:

Արդ պարզում է մեզ ս. Գիրը:

Ստեղծագործութեան պատմութիւնը մարդու վերայ պարտականութիւն է դնում աշխատելու և աշխատանքի միջոցով բնութեան տիրանալու, որ նշանակում է կեանքը աստիճանաբար փոփոխել կատարելագործելով, կեանքը զարգացնել:

Եւ յիրաւի մարդու կեանքի պատմութիւնը ցոյց է տալիս, որ մտաւոր և ֆիզիքական աշխատանքի շնորհիւ է, որ բնութիւնը ենթարկուել է մարդուն, և արտաքին աշխարհը կատարելագործուել:

Մենք այսօր ունենք հաղորդակցութեան բզամատեսակ ճանապարհներ՝ շոգեհաւ, երկաթուղիներ, խճուղի-կայն, որոնք կատարեալ են նախկին բնականի համեմատութեամբ և զնալով կատարելագործում են. ինչի՞ ծնունդ է, եթէ ոչ մարդու մտաւոր և ֆիզիքական աշխատանքի:

Մենք ունենք յարմարաւոր բնակարաններ, ելեքտրական լուսաւորութիւն և այլ կենսական յարմարութիւններ. ինչի՞ շնորհիւ, եթէ ոչ մարդու աշխատանքի: Մենք վայելում ենք և՛ նիւթական և՛ հոգեկան ճոխ կերակուր. ինչի՞ հետևանք է, եթէ ոչ մարդու աշխատանքի:

Անապատները դարձրել ենք բուրաստան, երկիրն էլ ենք սկսել արդէն շահագործել. ի՞նչի շնորհիւ, եթէ ոչ մարդու ստեղծագործող մտքի և աշխատաւոր ձեռքի: Եւ այսպէս, եթէ շարունակենք շարելով մարդու աշխատանքի ծնունդ՝ նրա ստեղծագործած մարգարիտների շարանը՝ կրհաւաստիանանք, որ յիրաւի կեանքը կատարելագործում է շնորհիւ մարդու անդուլ աշխատանքի: Եւ ճշմարտում է ս. Գրքի արարչական պատուէրը, թէ՛ մարդու նպատակն է աշխատանքը որով հարթում է կատարելութեան ուղին:

Արտաքին աշխարհի կատարելութեան հետ պէտք է նաև մեր ներքին աշխարհի կատարելութիւնը, որ կեանքը կանոնաւոր ընթանայ և մարդկութիւնը երջանիկ լինի. և ահա ս. Գիրքը այդ կատարելութիւնն է, որ անուանում է Աստուծոյ պատկեր լինել:

Ո՞վ կարող է մեզ աւելի լաւ լուսաբանել մարդու բարոյական կատարելութեան գաղափարը, եթէ ոչ ինքը Յիսուս, մեր մեծ վարդապետը՝ ամենակատարեալ մարդու պատկերը:

Նրանից ենք սովորում թէ մարդու կրօնը սրբախի ազնիւ սիրտ է զրուած, որ գործում է հաւատարմութեամբ և համբերութեամբ, որ բաբախում է անձնուիրութեամբ և սիրով իւր նմանների համար: Նրանով ենք ճանաչում թէ մարդուն սրբախի ոգի է շնորհուած, որ ընդունակ է հերոսական գործերի, դառնալով իւր նմանների պաշտամունքի առարկան: Մարդու սրտի և ոգու այս առաքինութիւնները Յիսուսի անձնաւորութեամբ ճանաչեցին մարդիկ առաջին անգամ, ուստի և իրաւամբ կոչեցին նրան մարդկային ցեղի թագաւոր:

Բայց գիտէ՞ք ուր է թաղնուած Յիսուսի սրտի և ոգու կատարելութեան գաղափարը. միայն ու միայն Աստուծոյ կամքի հպատակութեան մէջ:

Դեռ ևս 12 տարեկան պատանի էր Յիսուս, երբ ծնողների հետ Երուսաղէմ ուխտ է գնում. բայց ընկերների խաղը չէ նրան գրաւողը, կամ ուխտատեղու գուարճութիւնները, այլ տաճարի քարոզը, Աստուծոյ խօսքը: «Ոչ գիտէիք եթէ ՚ի տան հօր իմոյ պարտէ ինձ լինել»: Նա մեծանում է և դառնում հրապարակային գործիչ. բայց նրան միշտ առաջնորդ է եղել Երկնաւոր Հօր կամքը— «Հայր իմ գործէ և ես գործեմ»՝ ահա նրա նշանաբանը, ահա նրա պատասխանը շաբաթ օրուայ կատարուած բժշկութեան առթիւ զայրացած մոլեռանդ հրեաներին:

Ժամանակը մօտենում է աշխարհին հրաժեշտ տալու. Յիսուս Գեթսեմանի պարտիզումն է, անմիջական յարաբերութեան մէջ իւր Հօր հետ. նա տեսնում է իւր մահուան բաժակը, որ մատուցանում են ըմպելու. և թէև նրա մարդկային մարմինը թուլանում է, բայց խնդրի լուծումը թողնում է կրկին իւր Հօրը՝ «Հայր, եթէ կամիս, անցն դաժակս գայս յինէն, բայց ոչ իմ կամք, այլ քոյդ լիցին» իսկ թէ ո՞րն է Հօր կամքը՝ այդ ցոյց է տալիս Փրկչի կեանքն ու գործութիւնը, որի նկարագիրը մեզ տալիս են աւետարանիչները: Նկարագիր, որ այնքան հարուստ է սիրոյ բազմատեսակ ելևէջներով և արտայայտութիւններով:

Ահա տեսնում է ուրախութիւն, որ անկատար պիտի մնայ, շտապում է օգնութեան. ջուրը գինի է դարձնում: Անդին անդամալոյժ՝ պրօպատիկէ աւագանի մօտ տասնեակ տարիներ նստած և ջրերի յուզման սպասող մարմնացած դժբախտութիւն, կարեկցում ու բժշկում է: Ահա սգի մէջ թաղուած և յուսահատութեան ծայրը հասած մի մայր, որ թաղում է իւր միակ զաւակը, միակ մխիթարութիւնը և յարութիւն է տալիս: Եւ այսպէս անթիւ, անհամար օրինակներ շարում են մեր առաջ աւետարանիչները նրա կեանքից, որոնք միայն ու միայն վկայում են, որ նրա անհուն սէրը ուղղում է այս աշխարհը, ուր իսպառ ցամքած է սիրոյ զգացումը և մոռցուած Տիրոջ պատուէրը: Այդ սիրոյ գերազոյն արտայայտութիւնն է նրա մահը: Այս այն անձնաւորութիւնն է վերջապէս, որից պահանջում են հրաժարուել իւր քարոզից, հրաժարուել խեղճ ժողովրդին առաջնորդելուց և հովանաւորելուց, և թողնել նրան յափշտակող գայլերի ճիրաններում շնչասպառ լինելու՝ խոստանալով փոխարէնը մահից ազատել. բայց նա գերազասում է պատուով մեռնել՝ հաւատարիմ մնալով իւր կոչման, իւր խղճին ու Աստծուն: Սա է ահա

մեր կատարելատիպը. սա է որին մենք միշտ առաջնորդ
 ուրիշ ունենանք, մանաւանդ այս ապաշխարութեան օրե-
 րին: Ո՛հ, եթէ նրա հոգին իւր բոլոր ոյժով և սիրով,
 ճշմարտասիրութեան և ազատասիրութեան, վեհանձնու-
 թեան և վեհութեան մուտք գործէր մարդկային սրտի
 մէջ և տիրանար մարդու կեանքին, այն ժամանակ միայն
 մենք կունենայինք կատարեալ աշխարհ, կատարեալ մարդ-
 կութիւն:

Եկէ՛ք ուրեմն, ապաշխարող եղբայրներ և քոյրեր,
 զարթենք թմրութիւնից և մեր ոյժերը աշխատանքի հրա-
 շիրենք. ուղղենք մեր սիրտն ու զգացմունքը դէպի մեր
 Արարիչը՝ նորա կամքը մեզ առաջնորդ ընտրենք. որով-
 հետև աշխատանքն ու Աստուծոյ կամքի հպատակութիւնն է
 միայն աշխարհի և մարդու կատարելութեան ճանապարհը:

Իսկ դու՛ մեր Տէրն ու Վարդապետը, դու որ կեան-
 քի խիստ դպրոցում վեհ կատարելութեան հասար, որի ա-
 ռաջ մենք ծոնը ենք դալիս և պաշտում՝ բռնիք մեր ձեռ-
 քից, խթան տուր մեր ծոյլ մտքին ու զգացմունքին, զօ-
 րացուր մեր ոյժերը, որ ընդունակ լինենք կատարելու քո
 պատուէրը «եղերուք կատարեալք որպէս և հայրն ձեր
 երկնաւոր կատարեալ է» որպէսզի կատարեալ դառնալով,
 հաճոյ լինենք Քեզ և յաւիտեան երջանիկ ապրենք. ամեն:



«Ոչ ամենայն որ ասէ ցիս՝ Տէր, Տէր
 մտցէ յարքայութիւն երկնից, այլ որ
 առնէ զկամս չօր իմոյ, որ յերկինս է»
 Մտթ. է 21:

Երկնքի արքայութիւնը ս. Գրքի հիմնական գաղա-
 փարներէ մէկն է. սակայն ես այսօր այդ գաղափարի պար-
 զաբանութեան չէ, որ պէտքէ նուիրեմ քարոզս, այլ ձեր
 ուշադրութիւնը պիտի հրաւիրեմ այն միջոցների վրայ,
 որոնք հարթում են մեր առաջ երկնքի արքայութեան ճա-
 նապարհը. այդ միջոցների վրայ է որ հրաւիրում է մեր
 ուշադրութիւնը նաև իմ ընտրած բնաբանը: Սօսքը չէ, որ
 առաջնորդում է մեզ Փրկչի արքայութեանը, այլ գործը:

Գիւղացին երբէք գոհ չի լինի իւր ծառայից, որ
 պատրաստ է միշտ զլիարկը հանել և խոնարհ դուրս տալ
 ու ասել՝ «տէր, տէր». նա պահանջում է, որ ծառան իւր
 կամքը կատարէ:

Պարտիզպանը երբէք գոհ չի լինի այն ծառից, որ
 միայն գեղեցիկ ու տերևախիտ ճիւղերով գեղողէջ կանգ-
 նած է իւր առաջ. նա պտուղ կպահանջէ և կասէ, որով-
 հետև պտուղ չես տալիս՝ կկտրեմ քեզ ու կրակը կնետեմ:

Մենք բոլորս էլ ընդհանրապէս խօսքը չէ, որ գնահա-
 հատում ենք, այլ գործ ենք պահանջում. ուստի և հա-
 ճութեամբ լսում ենք Տիրոջ խօսքը թէ՛ «նչ ամենայն որ
 ասէ ցիս՝ Տէր, Տէր մտցէ յարքայութիւն երկնից»: Տիե-
 ղերքի մէծ Արարիչը գործի մարդ է. վեց օրեայ արարչու-
 թիւնը նրա աշխատանքին վախճան չդրեց. տեսէ՛ք ինչպէս
 աշխատում է նա մինչև այսօր էլ: Ամեն գարնան գար-

Թեցնում է բնութիւնը, բուսցնում սերմեր, գիշեր ու ցերէկ յուզում ծովերը, որ չնեխեն. լեռների լանջերում, խոր ձորերում և բաց դաշտավայրերում թարմ ուժով նոր ազգեր ծնում. նա աշխատել է սիրում: Եւ որովհետեւ ինքը աշխատելը հաճոյք և կեանքի նպատակ է համարում՝ աշխատանքը ճանաչել է նաև ամենի և ամեն ժամանակի համար ազնիւ կոչում: Եւ յիրաւի, աշաշխատանքն է, որ նորանոր արժէքներ է ստեղծում. աշխատանքն է, որ մարդուն և աշխարհը կատարելութեան է մղում. աշխատանքն է, որ մահը կեանքի է փոխում:

Ե՛ւ մշակը, որ անկենդան հողը պարարտացնում ու պտղաբեր է դարձնում, եւ բանուորը, որ մեքենաներ է յօրինում, եւ ուսուցիչը՝ որ մանկան նիրհած հողին է զարթեցնում, և մայրը՝ որ նոր սերունդ է անուցանում և քարոզիչը, որ աւետարանի քարոզութեամբ սիրոյ, հաւասարութեան և արդարութեան հիմքն է կոփում. սրանք բոլորն էլ աստուածային աշխատանք են կատարում: Եւ ուրեմն՝ եթէ քրիստոնէութիւնը աստուածային կրօն է՝ պէտք է աշխատանքը քաջալերէ և նորանոր արժէքներ ստեղծէ. եթէ քրիստոնէութիւնը աստուածային ճշմարտութիւն է՝ պէտք է որ վկայէ, թէ աստուած աշխատանքի մարդ է, և ուրեմն բեզ էլ քո աշխատանքի համաձայն պիտի դատէ: Ահա թէ ինչու ասուած է՝ «ոչ ամենայն որ ասէ ցիս՝ Տէր, Տէր, մտցէ յարքայութիւն երկնից...» Սակայն կան դուցէ և այնպիսիները, թուով, սակաւիկ, որոնք «Տէր, Տէր» ասելով էլ կվայելեն երկնային ուրախութիւն... Եթէ մի խեղճ, հիւանդ մարդ տարիներ զամուած է անկողնին և ցաւերից մաշուած ու հիւժուած՝ կարծեմ որ Ամենողորմածը բաւական կհամարէ, եթէ նա իւր տառապանքի մէջ գոչէ՝ «Տէր, օգնիր ինձ»: Կամ մի երեխայ, օրն ՚ի բուն խաղացած ու յոգնած՝ երեկոյեան իւր աղօթքի մէջ ասէ՝ Աստուած իմ, բարի ու մեծ մարդ դարձուր ինձ, որ . . . և առանց իւր աղօթքը աւարտե-

լու չոքած տեղն էլ քնի՝ դիտեմ հրեշտակներն էլ պիտի ծիծաղեն, որ հովանի են նրան անկողնում և Աստուած էլ գոհ պիտի մնայ: Սակայն մենք մեծերս, որ առողջ ենք և ընդունակ թէ բարի և թէ չար գործերու՝ լինի Աստուծոյ տաճարում կամ մի այլուր՝ «Տէր, Տէր» ասելով երկնքի արքայութեան մանելու յոյսը չպիտի ունենանք, այլ պիտի աշխատենք. աշխատանքն է մեր երջանկութեան աղբիւրը, մեր գործերն են մեզ դէպի կատարելութիւն մղողը, մեր գործերն են մեզ դէպի Աստուած առաջնորդողը:

Եթէ աշխատանքն է մեր կոչումը, մեր կեանքի նպատակը մեր արժէքը սրոշող չափը, ապա ուրեմն իւրաքանչիւրը մեզնից այսօր՝ ապաշխարութեան այս մեծ օրերին, թո՛ղ խոստովանի ինքն իրեն, թո՛ղ կանգնի իւր խղճի առաջ և հաշիւ տայ թէ, ինչ է արել իւր պարտքի հանդէպ:

Քննեցէք, եղբայրներ, ձեր անցած ճամբան և տեսէք ձեր աշխատասիրութեան չափն ու ձեր աշխատանքի պտուղները. տեսէք, թէ ինչ էք տուել աշխհարին, ի՞նչ բարոյական գործեր էք կատարել Աստուածային պատուիրանների հանդէպ:

Հարցրէք ձեզ թէ՛ ո՛ւր և ե՞րբ նեղութիւն էք կրել յանուն Աստուծոյ, յանուն ճշմարտութեան, ո՛ւր և ե՞րբ զըրկուել ու տանջուել էք ՚ի սեր Աստուծոյ և՛ ՚ի սէր ճշմարտութեան՝ և չարութեան յաղթելով բարին կատարել: Գալիս եմ էակամ պատուիրանին, սիրոյ պատուիրանին և հարցնում՝ դուք որ ամեն օր ձեր անձի համար շատ աշխատանք էք թափում, նոյնը անո՞ւմ էք արդեօք ձերայինների համար. բարի ցանկացել ու բարեկամ եղե՞լ էք ձեր քաղիններին, մեղանչած չէ՞ք արդեօք ձեր հօրն ու մօրը դէմ: Յոյց տուե՞լ էք ձեր կեանքի ընկերոջը՝ ձեր կիսին ոսկու նման մաքուր սէր ու հաւատարմութիւն: Մեղանչած չէ՞ք երբէք որդիներիդ հանդէպ. առաջնորդել

էք նոցա եկեղեցի՝ ճշմարտութեան, արգարութեան և սիրոյ տաճարը. մարդէլ էք նոցա աշխատանքի, գործով կրթել նրանց սիրտը ողորմած լինելու, դաստիարակել էք նրանց ազգային հոգով, սնուցել էք նրանց հոգին մանկական անմեղ գուարձութիւններով, որոնք մանկան մատգաշ հոգու էական պայմաններն են՝ թէ՛ նուիրել էք ձեզ ձեր անձի հաճոյքներին ու գուարձութիւններին՝ այդ ամենը հաւատարմով միայն օտար կանանց:

Եղել էք ձեր խեղճ դրացիների ճշմարիտ բարեկամն ու եղբայրը. զգացել էք նոցա հոգսերն ու կարիքները, և ամոքելով նոցա վշտերը՝ ուրախացել էք նոցա հետ, թէ՛ լոկ ականատես էք եղել և իսկոյն երես շրջել, որ չտանջուէք ու չը վշտանաք, եթէ միայն կարեկցելու ընդունակ էք: Ի՞նչ էք արել ձեր համայնքի կարիքների համար, ի՞նչ էք արել ձեր ազգի ցաւերը ամոքելու համար. աւելի հեռուն կերթամ, ի՞նչ էք արել աշխարհի բարոյական վերածնութեան համար. դուք, որ բողոքում էք աշխարհի բարոյական անկման դէմ, դուք, որ պարծենում էք, թէ ճշմարիտ քրիստոնեաներ էք, աւետարանի հարագաս դաւակներ:

Վախենամ եղբայրներ, որ մենք բոլորս և՛ հարուստ և՛ աղքատ, և՛ ուսեալ և՛ անուս դիտելով մեր կեանքն ու գործերը և զիւսակցելով մեր պարտքերը կարմրենք ու լռենք, եթէ մեր հոգու ապականուած թանձր մշուշի մէջ աստուածային խղճի ձայնը դեռ ընդունակ է արձագանք տալու:

Սակայն կարմրելը բաւական չէ, և ոչ էլ գիտակցելը, այլ պէտք է վերածնուել, փոխել մեր սիրտը, որից ծնունդ են առնում մեր և՛ բարի և՛ չար խորհուրդներն ու գործերը: Եկէք անցնենք պարտիզով և դիտենք ծաղիկներն ու պտուղները. ահա մի ծառ, ահա և միւսը. ի՞նչ ողորմելի ծաղիկներ են տուել և ի՞նչ մանր ու ցամաք պտուղ-

ներ: Հաւ զննում էք և տեսնում, որ ծառը հիւանդ է ու փտած, որի պատճառով էլ տուել է հիւանդ պտուղներ: Հիւանդ ու մանր պտուղները աճում են հիւանդ ծառերի վրայ, այնպէս էլ հիւանդ սրտից ծնունդ են առնում հիւանդ խորհուրդներ ու գործեր:

Կամենում էք բարի գործեր անել՝ փոխեցէք ձեր սիրտը. ուղղուելու այլ ճանապարհ չկայ: Սրտի հիւանդութիւնը չի կարելի արտաքին միջոցներով բուժել, ինչպէս նաև հիւանդ ծառը չի կարելի լաւ պտուղներով զարգարել ու հաւատալ, որ նա կառողջանայ. պտուղները շուտով կկծկուեն ու կչորնան և ծառը կստանայ իւր նախկին եղկելի պատկերը:

Սրտի հիւանդութիւնը կարելի է բուժել ներքին վեաճնութեամբ: Ապտուածավախ ժողովրդի նախկին առաջնորդները փրկութեան այլ ճանապարհներ չէին ճանաչում, բայց եթէ նոր սիրտ ունենալը: Թերթում ես ս. Գիրքը և հին ժամանակներից հնչում է ականջիդ մեղաւոր սրտից թռած աղաչական ձայն՝ «Սիրտ սուրբ հաստատեա յիս Աստուած»: Հետևելով նոցա ապաշխարութեան այս օրերին քեզ ենք դիմում «Պարգևիչդ բարեաց և առատ ողորմութեանց» և խնդրում, «Սիրտ սուրբ հաստատեա յիս Աստուած և հոգի ուղիղ նորոգեա ի փորի իմում». որովհետև այդ սուրբ սիրտն է բարի գործեր ծնողը և բարի գործերի հեղինակներին է որ աշխարհը յարգում ու պաշտում է, իսկ Փրկիչը խոստանում «երկնից արքայութիւն»: Դէպի գործ, եղբայրներ. գործ է սպասում մեր ազգը տառապեալ. մեր երկիրն աւերեալ: Գործ է սպասում մեզնից նաև մեր Փրկիչը իւր յաւիտենական հայրենիքը՝ երկնքի արքայութիւնը մեզ շնորհելու համար «Ո՛չ ամենայն որ ասէ ցիս Տէր, Տէր մտցէ յարքայութիւն եկնից, այլ որ առնէ զկամս Հօր իմոյ, որ յերկինս է»:

«Ամէն, ամէն ասեմ ձեզ. զի զսր ինչ խնդրիցէք 'ի հօրէ իմմէ յանուն իմ, տացէ ձեզ «(Յովհ.) ԺՁ. 23):

Այս օրուայ աւետարանը և իմ ընտրած բնաբանը պարտք են դնում վրաս խօսելու աղօթքի մասին:

Աղօթքը մարդու կեանքի ամենաթանգագին բոլէն է, երբ երկինքն ու երկիրը շօշափւում են միմեանց, երբ մարդն ու Աստուած մօտենում են իրար: Աղօթքը մարդու կեանքի ամենասուրբ բոլէն է, երբ ողորմելի երկրաւոր ուխտագնացը՝ իւր խաչի ծանրութեան տակ ճընշուած ու հիւծուած՝ կանգնում է տիեզերքի աննման էակի առաջ և խօսում նրա հետ ամենայն անկեղծութեամբ և սրտաբացութեամբ, ինչպէս զաւակը իւր հօր հետ, կամ ինչպէս բարեկամը բարեկամի հետ: Աղօթքը մարդու հոգու համբարձումն է մարմնի կենդանութեան ժամանակ, երբ մարդ կտրուում է երկրից, որ լի է վշտերով ու տառապանքներով, մեղքերով ու հոգսերով, և երկինք վերանում՝ մեզ համար Տիրոջ պատրաստած խաղաղ և երջանիկ օթեանները: Այդ այն բոլէն է, երբ մարդ խոնարհում է Աստուծոյ առաջ, խորասուզւում է երկիւղածութեամբ, ջանալով ընթանելու նրա խօսքը, նրա գործն ու ճանապարհը, և սուրբ եռանդով լցուած՝ պատրաստուում է աշխարհի և մեղքի դէմ կռիւ մղելու՝ թէ՛ խօսքով և թէ՛ գործով:

Աղօթողի սիրտը լցւում է հաւատով, յուսով և սիրով, և ով աղօթել գիտէ՝ երջանիկ է, որովհետև նա ունի իւր դժբախտութեան բոլէին մի անփոխարինելի բարեկամ,

որ լսում է իրեն աղօթքով, մխիթարում է աղօթքով և օգնում աղօթքով: Բայց աղօթքի այս վեհ ըմբռումը մատչելի է նրան՝ ով աղօթել գիտէ. աղօթքը երջանկութիւն է շնորհում նրան, ով իսկապէս աղօթում է: Ուրեմն աղօթքները բազմատեսակ են և կան աղօթքներ, որ աղօթք չեն, կհարցնէք դուք: Այո, և ես կաշխատեմ նոցա նկարագրել ու պարզաբանել:

Երբ նոյր տապանում կամենում էր իմանալ՝ թէ ջուրը իջել է և հնարաւոր է ցամաք ելնել՝ արձակեց մի ազուաւ, որ չվերադարձաւ, այլ տարածելով իւր թևերը դէս ու դէն սաւառնեց, մինչև ջուրը քաշուեցաւ: Ապա արձակեց մի աղաւնի, որ ոտք դնելու տեղ չգտնելով՝ դարձաւ իւր վանդակը, որովհետև երկիրը դեռ ջրով էր ծածկուած: Եթէ օրից յետոյ կրկին մի աղաւնի արձակեց, որ վերադարձաւ ձիթենու շիւղը բերնին, և երբ յաջորդ օրը կրկին արձակեց, այլևս չվերադարձաւ. որովհետև ջուրը քաշուել էր, երկիրը չորացել և գտել էր թէ հանգստեան և թէ բնակութեան համար հաստատուն վայր: (Մանդ. ր 4-13):

Թեևսուր պատգամաբերները, որոնց նոյր արձակեց ջրհեղեղի վախճանի մասին լուր բերելու՝ կարող են մեզ իբրև օրինակ ծառայել մեր թեաւորեալ պատգամատարներին՝ մեր աղօթքներին, զորս վերառաքում ենք առ Աստուած, երբ աղէտների ու փորձանքների ջրերի վրայ օրորւում ենք:

Կան աղօթքներ, որոնք նման են նոյի ազուաւին, նրանք թռչում գնում են առանց ուրախ աւետիք բերելու մեզ, տարածելով իրենց սև թևերը և երգելով կերկերացող ու խռպոտ ձայնով: Սոքա նիւթական բնաւորութիւն սւնեցող աղօթքներ են՝ մարդկային ընչասիրութեան և ազահուլթեան ծնունդ, որոնք անյազ տենչով հետամուտ են աշխարհի բարիքների և հաճոյքների. նրանք բարկու-

Թեան ու վրէժխնդրութեան աղօթքներ են, որոնք գիշարտիչ թռչունների նման պատրաստ են իրենց մերձաւորի սիրտը կտցահարելու և բզիկ-բզիկ անելու. նրանք փոքրոգութեան և անհաւատութեան աղօթքներ են, որոնք ծանր թռիչքով միշտ գետնաքարշ ճախրում են, և ոչ թէ հաւատի դէպի երկինք խոյացող թռիչքով սլանում, և որոնց նկատմամբ Յակոբոս առաքեալը ասել է՝ «Բայց խնդրեսցի հաւատովք, և մի՛ երկմտեսցէ. զի որ երկմտան է՝ նման է հողմակոծեալ և տատանեալ ալեաց ծովու. մի ակնկալցէ մարդն այն առնուլ ինչ յԱստուծոյ»։ (Յակ. Ա. 6-7։)

Կան աղօթքներ, որոնք նման են Նոյի աղաւնուն, համեստ ու անվստահ, բայց երկիւղած սրտի ծնունդ և թէև հաւատոյ ծանրաթռիչ շարշտմամբ սկսում են թռչել, բայց վեր են սլանում և մխիթարութեան ու օգնութեան աւետիք բերել խոստանում, բայց գալիս են առանց օգնութեան և մխիթարութեան և մտնում կրկին այն սիրտը, որտեղից ելել էին։ Գրիստոնեայ եղբայրներ և քոյրեր, եթէ ձեր հետ էլ նոյնը պատահի, վարուեցէք Նոյի պէս, որ ձեռքերը պարզեց և իւր աղաւնուն կրկին վանդակն առաւ. մի դժգոհէք, թէ ինչու ձեր աղօթքը լսելի եղած չէ. ձեր սիրտը մի գոցէք դաձող աղօթքների առաջ, այլ ներս առէք նրանց, որպէսզի վերստին արձակէք, երբ ներքին մղում դգաք։

Յիշելով առաքեալի յորդորը՝ հանապազ աղօթեցէք՝ մինչև որ ձեր աղօթքը Նոյի երկրորդ աղաւնու նման բերէ ձիթենու շիւղ՝ բերէ յուսոյ և մխիթարութեան աւետիք՝ նման երեկոյեան շառագունած երկնքի, որ աւետում է գեղեցիկ օրուայ գալուստը և մեր սիրտը ուրախութեամբ լեցնում։ Եւ երբ մենք անձանձիր համբերում ենք՝ գալիս է փրկութեան օրն և մեր աղօթքը թռչում գնում է Նոյի երորդ աղաւնու նման և այլ ևս չի դառ-

նում, որովհետև իւր նպատակին հասնում է, աղէտների տարափն անցնում է, սպառնացող ջրերը իջնում են և ծիրանի դօտին լուսաւոր կամարում է կրկին երկինքը՝ ի նշան աստուածային ողորմութեան և հաշտութեան։

Սիրելիք, եթէ մենք մեր աղօթքները քննենք՝ Նոյի պատգամաբերներից որի՞ն կնամանեցնենք արգեօք. շատերը առաջին, մի քանիսը երկրորդին և երրորդին և շատ քչերը չորրորդին։ Ճիշտ է մենք յաճախ աղօթել ենք, մեր ձեռքերը երկինք կարկառել, մեր շրթունքները շարժել, և մեր աղօթքը իսկական աղօթք է եղել։ Աղօթելը մի արուեստ է, որ պէտք է սովորել, ինչպէս ամեն արուեստ։ Եւ ինչպէս ամեն առաքինութիւնների, նոյնպէս և այս առաքինութեան ուսուցիչը Յիսուսն է. Նրան դիմենք և խնդրենք, որ ուսուցանէ մեզ աղօթել։

Սրբազան երեկոն էր, չարչարանքի նախօրեակին, երբ մեր Տէրը իւր աշակերտների հետ վերջին անգամ բազմել էր վերնատանը և այդ տօնական ժամին, հրաժեշտի քնքոյշ խօսքի ժամանակ, որ շնչում էր սրբազան կսկիծով և երկնային խաղաղութեամբ՝ դարձաւ Յիսուս իւր աշակերտներին հետևալ յորդորակական և խրատական խօսքերով. «Ամէն ամէն ասեմ՝ ձեզ. զի զոր ինչ խնդրիցէք ՚ի հօրէ իմմէ՛ յանուն իմ, տացէ՛ ձեզ։ Մինչև յայժմ՝ ոչինչ խնդրեցէք յանուն իմ. խնդրեցէք և առնուցուք»։ Ահա քրիստոնէի իսկական աղօթքը, որ սովորեցնում է մեզ Յիսուս։ Նա պիտի կատարուի յանուն Յիսուսի։

Բայց ինչ է նշանակում յանուն Յիսուսի աղօթել և մի՞թէ՛ նրա աշակերտներն էլ դեռևս չզխտէին աղօթել «յանուն Յիսուսի»։

Յանուն Յիսուսի աղօթել նշանակում է աղօթել Յիսուսի հոգով, Նրան հաւատալով և Նրա պատուէրներին հնազանդելով։ Չի կարելի ամեն խնդիր յանուն Յիսուսի դնել Աստուծոյ առաջ, այլ միայն այնպիսիները, որոնց

հետ Յիսուս համակարծիք է, որոնք բղխում են նրա հոգուց: Միթէ կարող է գողը յանուն Յիսուսի աղօթել խընդբելով Տիրոջ օգնութիւնն ու առաջնորդութիւնը, երբ պատրաստում է կողոպտել դրացուն. կամ մարդասպանը՝ երբ հրացանը ուղղում է թշնամու կրծքին՝ սպառնալով նրան մահացնել, ինչպէս պատմում են Իտալացի ելուզակները մասին, որոնք թալանի և աւագակութեան զնաբուց առաջ ամենայն լրջութեամբ դիմել են և աղօթել՝ հայցելով իրենց վրայ պահապան սրբերի օրհնութիւնը:

Բայց խօսքը չի վերաբերում միայն գողերին և աւագակներին, այլ և մեզ և մեր աղօթքներին, որ սովորենք աշխարհասիրական խնդիրներով լեցնել Տիրոջ ահանջը. զբաղեցնել նրան: Իրաւունք ունինք միթէ կարծելու, որ նա պիտի լսէ մեզ: Ինչպէ՞նչ: Երբ մենք աղօթում ենք շահատէր և եսամոլ հոգով՝ կարող ենք միթէ աղօթել յանուն Յիսուսի, որ պատուիրել է՝ «սիրեսցես զընկեր քո, իբրև զանձն քո»:

Երբ մեր աղօթքը շնչում է ասելութեամբ և վրէժխնդրութեամբ, իրաւունք ունինք յանուն Յիսուսի աղօթելու, որ միշտ իւր թշնամիների համար ներումն է հայցել՝ «հայր, թող դոցա, զի ոչ զիտեն զինչ գործեն»: Երբ մենք աղօթքով մեր կամքն ենք թելադրում Աստուծոյ, կարող ենք յանուն Յիսուսի աղօթել՝ որ միշտ որոնել է Աստուծոյ կամքը և նրան հպատակուել. «հայր եթէ հնար իցէ անցն՝ զբաժակս, բայց ոչ իմ կամք, այլ քոյդ լիցի»:

Այսպէս են զժբախտաբար մեր աղօթքները, որոնցից շատերի նկատմամբ մեր Փրկիչը պէտք է գլուխը թոթուէ և, ինչպէս երբեմն Զեբեդէոսի որդոցը, ասէ «ոչ զիտէք զինչ խնդրէք» (Մա. Ի 22):

Մինչև այժմ, ասում է Փրկիչը իւր աշակերտներին, յանուն իմ աղօթած չէք, բայց կգայ օրը, երբ կաղօթէք յանուն իմ: Եւ այդ օրը հասաւ. Հոգեգալստեան օրն է այն,

երբ յիրաւի նոքա ստացան Փրկչի հոգին, որ զօրացրեց նոցա հաւատը, արիացուց նոցա սիրտը, լուսաւորեց նոցա միտքը և յանուն Յիսուսի աղօթել կարողացան:

Համեմատեցէք նոցա աղօթքն ու խնդրուածք հոգեգալստից առաջ և յետոյ. յիշեցէք Գեննեսարէթի ալէկոծ ծովի վրայ առաքեալների թերահաւատութեամբ լի աղօթքը «Տէր, օգնեա մեզ, զի կորնչիմք»: այս հոգեգալստից առաջ էր, և համեմատեցէք Պետրոսի, Յովհաննէսի և Պօղոսի կապանքներով բանդի մէջ Տիրոջ ուղղած մեծ հաւատի ծնունդ փառաբանական աղօթքների հետ, որոնք հոգեգալստից յետոյ էին:

Յիշեցէք Զեբեդէոսի որդոց եսասէր խնդիրը. Տէր, նստեցուր մեզ քո աջ և ձախ կողմը. այս Հոգեգալստից առաջ էր, համեմատեցէք Պօղոսի, Պետրոսի և Յովհաննէսի առաքելական թղթերի հետ, ուր միայն խորհում են Փրկչի եկեղեցու մասին և ապրում նրա հաստատած համայնքի փրկութեան համար, որ հոգեգալստից յետոյ էր:

Յիշեցէք Որոտման Որդոց կատաղի գայրոյթը և նոցա խնդիրը՝ երկնքից կրակ թափել, որ սամարացոց քաղաքը այրէ ու լափէ. այս հոգեգալստից առաջ էր, և համեմատեցէք Ստեփաննոսի աղօթքի հետ, որ քարերի տարափի տակ խնդրում էր սպանիչների համար «հայր մի համարիր դոցա մեզս». որ Հոգեգալստից յետոյ էր:

Ձեզ եմ թողում դատել՝ թէ որոնք են յանուն Յիսուսի աղօթողները:

Պատկերացրէք երկու մայրեր նստած իրենց հիւանդ երեխայի անկողնի մօտ. երկուսն էլ լալիս են ու աղօթում: Մէկը ընկնում է իւր մանկան անկողնի վրայ և ջերմ արտասուք թափելով ազազակում է, կարծես փորձում է Տիրոջ ձեռքը հեռացնել, «Տէր, Դու իրաւունք չունիս զրկելու ինձ երեխայիցս, Դու պարտական ես նրան թողնել ինձ»: Միւսն էլ է լալիս խորապէս վշտացած և աղօ-

Թու՛մ «եթէ, հնար է, թո՛ղ անցնէ այս դառնութեան բաժակը, բայց քո կամքով»: Եւ եթէ հարցնեմ թէ երկուսից ո՞րը յանուն Յիսուսի է աղօթում՝ գիտեմ, կպատասխանէք երկրորդը:

Բայց ասացէք խնդրեմ, ի՛նչպէս էք դուք աղօթել մինչև այժմ. գիտեմ, աղօթել էք յաճախ, աղօթել էք շերմութեամբ և սիրով. բայց վստահ եմ, որ Տէրը՝ թէև քնքոյշ ձայնով, պէտք է մեղադրէ ասելով՝ «մինչև այժմ իմ հոգով շատ քիչ էք աղօթել»:

Եկէք ուրեմն, եղբայրներ և քոյրեր, հբաժարուենք մեր նիւթական աղօթքներից, հետամուտ լինենք հոգեկանին, դիմենք մեր Փրկչին և խնրենք, որ զօրացնէ մեզ Իւր անունով և հոգով աղօթել՝ հեղութեան, սիրոյ և հնազանդութեան հոգով, որպէս զի մեր աղօթքը թուչի, երթայ Սասունձոյ աթոռի առաջ և Նոյի երկրորդ աղաւնու նման բերէ մեզ խաղաղութեան ու մխիթարութեան ձիթենին. ամէն:



«Զողորմութիւն կամիմ և ոչ զգոհ»
(Մտթ. Թ. 13):

Յիսուս՝ որի հայեացքը միշտ թափանցել է մարդու հոգու խորքը՝ սրբութիւն սրբոցը, բացել է նրա հոգու խորանները, ուր պահուած են մեր սրտի հոգևոր գանձերը և փորձել մաքրել, գտել ու ազնուացնել՝ յիշեալ խօսքերով մօտենում է յատկապէս մարդկային հոգու պաշտամունքի խորանին՝ նրա հին արկղը նորոգելու և մէջը նոր բովանդակութիւն դնելու:

Ո՛ւր աւելի, քան եթէ Փրկչի ժամանակակից հրէից մէջ կարելի է տեսնել բարեպաշտութեան արտաքին հարուստ, բազմազան և ծայրաստիճան նրբութեան հասցրած ձևեր:

Ո՛ւր աւելի, քան եթէ Փրկչի ժամանակից հրէից մէջ կարելի է տեսնել ոսկու և հարստութեան մէջ թաթախուած Սողոմոնի հրաշագեղ տաճարում փառաւոր ծէսեր և արարողութիւններ, առանց ներքին բովանդակութեան՝ մարդու սրտին ոչինչ չասող արտաքին ձևեր: Սակայն և ո՞ւր աւելի, քան եթէ նոյն այդ հրէից մէջ կարելի էր տեսնել հոգու դատարկութիւն և ոչնչութիւն, որի դէմ է բողոքել միշտ հոգով ճշմարտութեան Տիրոջ պաշտող մեր Փրկիչը, որի դէմ բողոքում է Նա նաև այժմ «Զողորմութիւն կամիմ և ոչ զգոհ»:

Ո՛րք էին հին բարեպաշտները:

Հնում Իսրայէլացոց մէջ կային մարդիկ, որ ամեն մեծ տօնի Երուսաղէմ էին գնում, գիտէին տաճարի ամեն անկիւնը, մասնակցում էին ապաշխարութեան թափոր-

ներին և ամեն զոհի սեղանի մշտական անդամներն էին: Սակայն որոնց սիրտը դատարկ էր և սառը:

Կային և այնպիսիները, որոնք սիրում էին մարգարէների խօսքերը և միշտ հրամցնում ուրիշներին, ինչպէս մրգավաճառը իւր մրգերը անցորդներին, որոնք գեղեցիկ ճառում էին բոլոր սրբերի մասին, սակայն այդ բոլորը խօսքեր էին առանց գործի, կեղևներ էին առանց միջուկի:

Կային նաև գրպաններն ու ձեռքերը լայն բացողներ, որոնք կանգնում էին յայտնի հրապարակներում և շարժուն փողոցներում, շեփորում ու փողեր էին հնչեցնում և իրենց շուրջը խեղճ կանանց ժողովելով առատ ընծաներ բաշխում:

Կային և այնպիսիները, որոնք սաճարի կենտրոնում կանգնած թւում էին Աստուծոյ առաջ իրենց առաքինութիւնները, որ շաբաթը երկիցս պաս են պահում, ամեն ունեցածից տասանորդ տալիս կային, որոնց պատկերը տեսնում ենք մենք փարիսեցու և մաքսուորի առակի մէջ:

Ահա ձեզ հին բարեպաշտները, որոնք անմահացել են Փրկչի առակների մէջ, որոնց շրթունքների վրայ էր միշտ զոհ խօսքը. սակայն հոգի չունէին. հոգի, որ միայն ընդունակ է զոհ տալու: Ահա թէ որոնց է ուղղում Յիսուս «Չողորմութիւն կամիմ և ոչ զզոհ»:

Փրկչի ճշմարիտ գիտողութիւնը կեղծ բարեպաշտների զայրոյթը շարժեց, զժգոհութեան առիթ տուաւ.— Լսում էք այդ անաստուած խօսքերը, որ մեր հայրերի բարեպաշտութիւնը առ ոչինչ է համարում. միթէ Աստուած չէր Մովսէսի միջոցով զոհի պաշտամունք սահմանողը. միթէ ս. հայրերը չէին ողջակէզ և զոհից սեղան պահանջողը. միթէ ս. Գիորջը չէ ողորմութիւն և պաս պահանջողը: Հապա ո՞վ է այս նազարեթցի նոր վարդապետը, որ ժողովրդի աչքին վարկաբեկում է այս ամենը, և մի-

թէ կարելի է համբերել ու լուել. ելէք, դնացէք Երուսաղէմ և պատմեցէք Աստուծոյ տեղապահներին, որ չարը ՚ի միջոյ յառնան և մեր ս. հաւատը փրկեն:

Այս ամենատեսակ բարեպաշտների հանդէպ Յիսուս պահանջում է միայն ողորմած լինել, ինչպէս ինքը ողորմած էր: Նա բարձր սեղանների վրայ, ժողովրդի աչքի առաջ, ողջակէզ չէր անում որ երևնար, բայց զոհում էր ծածուկ և գիտէր իրեն մտնալ՝ ուրիշին ծառայելու համար: Նա թշուառին չէր մխիթարում միայն երկնքով, ինչպէս վարում էր իւր աշակերտների հետ, այլ աշխարհի վշտակիրներին ու թշուառներին օգնում էր աստիս: Ահա ընկած է նրա առաջ մի անդամալոյծ. նա զարթեցնում է նրա թմրած նեարդերը ու քայլել տալիս. ահա մի կոյր, որին տեսողութիւն է շնորհում, մի բորոտ՝ որին առողջացնում է: Յիսուս երբէք չէր համոզում թշուառին հնազանդել բախտին ու լուռ կրել իրեն վիճակուած փորձութիւնը, այլ իւր արժանապարզ ոյժը դնում էր կարօտեայների արամազրութեան տակ:

Յիսուս բժիշկ էր և՛ մարմնի և՛ հոգու. նա առաջնորդում էր այն գաղափարով թէ՛ «Զինչ օգուտ է մարդոյ, եթէ զաշխահրս ամենայն շահեսցի և զանձն իւր տուժեսցէ»: Նա զոհ չէր մնում, երբ խուլը լսէր, բայց հրաժարուէր Աստծուն լսել. կամ թէ աղքատը հաց գտնէր, բայց հրաժարուէր հոգևոր կերակրից:

Այսպէս էր առաջ. ինչպէս է այժմ: Մեր առաջ կայ երկու պատկեր՝ հրեայ ժողովուրդը իւր հին բարեպաշտութեամբ և Յիսուս իւր նոր վարդապետութեամբ: Եթէ վերլուծենք մեր կրօնական կեանքը՝ ճիշտ նոյն պատկերը կտեսնենք, որի գեղեցիկ պատկերացումը սուել է մեզ Յիսուս իւր անմոռանալի առակներով: Միթէ նոյն արտաքին բարեպաշտութիւնները չէ, որ զարգարում են բոլորիս, միթէ նոյն արտաքին արարողութիւնները չեն,

որոնցով հրապուրուում ենք բոլորս:

Ահա մէկը, որ բարեպաշտի անուն է վայելում: Ի՞նչ է անում. յաճախ ժամ է գալիս, սրբերի առաջ մեծ-մեծ մոմեր տնկում, շոգում ու երկար աղօթում, քահանային յիշելիք տալիս, երբեմն աղքատին էլ չի մոռանում՝ բուռը կոպէկ է խրում, պատարագ է անել տալիս, ծնողների դերեզմանը օրհնում կայն կայն:

Այս բոլորը լաւ, բայց մի՞թէ սա է ճշմարիտ բարեպաշտութիւնը, մի՞թէ սա է Փրկչի հոգով և ճշմարիտ երկրպագունը, մի՞թէ նոյնը չի կարող անել մի անհաւատ և կամ անտարբէր մէկը: Յիսուս շերմ հոգի է ուղում, որ հասկանայ օտարին և սիրէ նրան: Սական սէր որոնենք այդ հոգին: Ահա ձեզ հոգևոր դասը. ի՞նչ է այսօր նրա կապը իւր ժողովրդի հետ, եթէ ոչ լոկ արտաքին, արարողական. մեռնողին թաղել, ծնուածին մկրտել, ամուսնացողին պսակել, ահա նրա դերը այսօր: Բայց սէր է նրա հայրական հոգատարութիւնը, ազատ այցելութիւնը իւր հօտին՝ նրան հոգեպէս մխիթարելու, կեանքի ծանրութիւնը թեթևացնելու, վշտաբեկ սիրտը բուժելու համար:

Ահա ձեզ հարուստ դասակարգը. ինչպէս է հասկանում նա իւր պարտքը դէպի իւր աղքատ եղբայրը, ինչով է կապուած նրա հետ. մի արտաքին կապով, որ չի բըզխում կարեկցութիւնից և սիրուց, այլ անձնասիրութիւնից: Մի ցուցադրական շարժում է անում հարուստը իւր աւելորդը նուիրելով կարօտեալներին՝ և աբղէն կատարած է համարում իւր քրիստոնէական պարտքը դէպի բնկերը. բայց այս պարտաճանաչութիւն չէ, այլ լոկ մի շարժում իւր անունը յաւերժացնելու, արժան ժողովրդականութիւն վայելելու նպատակով կատարուած:

Սակայն սէր է ներքինը, որին այնքայն կարօտում է աղքատը՝ կեանքի ծանր խաչը թեթևացնելու, իւր թշուառութիւնը մոռնալու համար: Ո՞ւր է հարուստի քաղցր

խօսքը, բարեկամական վերաբերմունքը, եղբայրական հովանաւորութիւնը, որ սրտի կապ է հաստատում մարդոց մէջ և հոգևոր մխիթարութիւն պատճառում:

Այսպէս ուրեմն ճշմարիտ բարեպաշտները ներքնապէս կենդանի և Աստուծով բոցավառ հոգիներն են, որ ընդունակ են անձնուէր գործելու և եղբայրասէր ապրելու, որ միայն կարող է մարդուն երջանկացնել, դժոխքը դրախտ դարձնել, երկիրը երկնքի փոխել:

Տէր Յիսուս, օգնիր մեզ առաջնորդուելու «Զողորմութիւն կամիմ և սչ զգոհ» սկզբունքով, «Զի այն է բարի և ընդունելի առաջի Փրկչին մերոյ Աստուծոյ»: Ամէն:



Հայոց եկեղեցին՝ գնահատելով Գրիգոր Լուսաւորչի մատուցած մեծ ծառայութիւնը հայ ժողովրդին՝ դասել է նրան սրբոց կարգը և նրա անուամբ սահմանել է երեք տօն՝ «Մուան ՚ի վիրապն», «Ելն ՚ի վիրապէն» և «Գիւտ նշխարաց»։ Մուան ՚ի վիրապն է, որ տօնում է այսօր հայոց եկեղեցին ամենուրէք։ Սակայն ես այսօր չսկիտի խօսեմ յատկապէս այս տօնի մասին, այլ այն մեծ գործի մասին, որ կատարել է Լուսաւորիչը, այն հաստատութեան մասին, որ հիմնել և կազմակերպել է հայոց առաջին և մեծ հայրապետը, որով և՛ հոգեպէս և՛ ֆիզիքապէս դարեր ապրել է հայ ժողովուրդը և որի համար էլ նա դասուել է սրբոց կարգը։—Հայոց եկեղեցին է այդ հաստատութիւնը։ Գուցէ շատերդ մտածէք թէ՛ եկեղեցին հնցած հաստատութիւն է, ժամանակակից մարդու սրտից ու մտքից հեռու և օտար, մի՞թէ արժէ նրա մասին խօսել։

Այդ վիճակի մէջ ինձ կիմայ բանալ ձեր առաջ նրա պատկառելի անցեալը, ցուցադրել նրա կատարած մեծ և բարդ գործերը, նրա մաքառումները մեր կեանքի փոթորկալից անցեալի մէջ ու յաղթական ելքը։ Գուցէ այս պատկերը փոխէ մեր հայեացքը այդ մեծ հաստատութեան մասին և մղէ մեզ կրկին փարել նրան, կրկին մտնել նրա ապահով ու տաքուկ թևերի տակ։

Ընդհանուր և հայոց եկեղեցու կատարած դերը ազգերի կեանքի մէջ բազմատեսակ է, որոնցից մէկն է մարդկային հոգու բարոյական մաքրութիւնը՝ մտքի, զգացման և կամքի մաքրութիւնը։ Հեթանոս աշխարհում մարդու մտքի, զգացման և կամքի առաջնորդներն էին եսականու-

թիւնը և զգայական հաճոյքները, որի հակառակ քրիստոնէութիւնը բերաւ նոր իդեալ՝ սիրոյ, եղբայրութեան և հոգեկան կեանքի իդէալը, և քրիստոնէական եկեղեցին ազգերի կեանքի մէջ մարմնացրեց այդ իդէալը։ Նա մաքառել է և պիտի մաքառէ թէ՛ անհատական և թէ՛ համայնական անբարոյականութեան դէմ՝ վաշխառութեան, արբեցութեան, անառակութեան, բռնութեան և աղքատութեան թէմ։ Եկեղեցու կրօնական բարոյական դաստիարակութեան սրբազան կոչումն է հեռու պահել կեանքը բարոյական ապականութիւնից և մեղմել մարդկային եսականութիւնը, որ ամեն չարեաց մայրն է։

Եկեղեցու երկրորդ կոչումն է սիրոյ դործունէութիւնը, մի՞թէ կարծում էք, որ աւետարանի սիրոյ քարոզը անհետևանք է անցել. մի՞թէ կարծում էք, որ ողորմած սամարացու առակը հազարաւոր անգամներ իգուր է պատմուած. մի՞թէ կարծում էք, որ ՚ի գուր է նոր ՚ի նորոյ հաստատուում Փրկչի խաչը և քարոզուում Գողգոթայի սիրոյ հրաշքը, ո՛չ երբէք։ Այդ քարոզութեան ազդեցութեան տակ երևան են գալիս թէ՛ ընդհանուր և թէ՛ հայ եկեղեցու մէջ այլ և այլ հաստատութիւններ, որոնք մարմնացնում են սիրոյ գաղափարը կեանքի մէջ։

Նայեցէք Գ. դարու հայ եկեղեցուն, ինչպէս փայլում է նա իւր սիրոյ հաստատութիւններով շնորհիւ Մեծն Ներսէսի։ Այդ հաստատութիւնների պսակը ասպնջանոցն էր՝ պանդուխտների, աղքատների, հիւանդների, որբերի ու այրիների և ամեն տեսակ տառապեալների ո՛չ միայն օթեւանը, այլ և սիրոյ և խնամածութեան բաշխման վայրը։

Ահա վանքեր, ուր խնամում էին կոյրերն ու հոգեկան հիւանդները, և ուր ապաշխարում էին բարոյապէս ընկած կանայք։

Ահա ուրկանոցներ, ուր կարեկցութիւն էին գտնում

հասարակութիւնից քշուած և գգուանքի առարկայ դարձած բորոտները:

Եկեղեցին իւր նիւթական ու բարոյական ամբողջ կարողութիւնը նուիրել էր սիրոյ գործունէութեան. կտակներից. մասնաւոր նուիրատուութիւններուց ու կալուածներու եկամուտներուց ստացած արդիւնքը գործադրում էր այս և նման նպատակների համար: Եկեղեցին իւր պաշտօնէութեամբ բաց ճակատով կարող էր հօտին ասել. «և զքոյս ՚ի քոյոց քեզ մատուցանեմք»:

Եկեղեցու երրորդ կոչումն է կրթական և քաղաքակրթական գործունէութիւնը: Քրիստոնէական ճշմարտութիւնները հօտի մէջ հաստատելու համար ՚ի սկզբանէ անսով գործադրուում են կրթական երկու կարևոր գործոններ՝ գիրն ու կենդանի խօսքը: Կենդանի խօսքի և գրի արժէքը ըմբռնելու համար բաւական է յիշել առաքեալների քարոզն ու գրուածքները, Յիսուսի քարոզը, Նրա վարդապետութեան ու գործերի արձանագրութիւնները և եկեղեցական հայրերի գրուածքները, աւետարանական կեանքի հետ կապուած խնդիրների պարզաբանութեան համար:

Հայ եկեղեցին է, որ տուել է հայ ազգին գիր. հայ եկեղեցին է, որ տուել է հայ ազգին գրականութիւն. հայ եկեղեցու սպասաւորներն են, որ մշակել են հայ լեզուն և հայ պատմութիւնը, որով պահպանուել է ազգային հոգին:

Յիշեցէք ս. Մեսրոպին, որ գիր շնորհեց, յիշեցէք ս. Սահակին, որ ս. Գրքի հայերէն թարգմանութիւնը տուաւ. յիշեցէք Ե. դարու Թարգմանիչներին, որոնք հայ գրականութեան հիմքը դրին. յիշեցէք Նարեկացուն, Շնորհալուն, որոնք եկեղեցական բանաստեղծութիւն տուին:

Քաղաքակրթութեան հիմք համարուում գիտութիւնը և գեղարուեստը: Հայ եկեղեցին է, որ տալիս է գիտութիւն և գեղարուեստ: Հայ հոգևորականներն են, որ ուսումնասիր-

ելով յունական փիլիսոփայութիւնը և եկեղեցու հայրերի ուսումնասիրութիւնները մշակում են հայի գիտական միտքը և իրենց սակաւիկ գրուածքներով սկիզբն են դնում գիտական ուսումնասիրութեան:

Յիշեցէք Եգնիկին, որ աղանդների գիտական պատկերն է տալիս, յիշեցէք Շիրակացուն, որ թուաբանական գիտութեան ձեռնարկէ մշակել:

Հայ եկեղեցու բարերար ազդեցութիւնը ոչ պակաս երևում է նաև արուեստի զարգացման մէջ: Եթէ ընդհանուր քրիստոնէական եկեղեցին ճարտարապետական հրաշալիքներ է ստեղծել այլ և այլ ոճերով՝ ինչպէս Յուստինիանոսի Այա-Սոփեան, Վենետիկի ս. Մարկոսը, Քեօնի Դոմը, Վիեննայի ս. Ստեփանոսը, Փարիզի Նոտր-Դամը, Հռոմի՝ ս. Պետրոսը, Պետրոզբադի՝ Իսահակի տաճարը. ոչ պակաս հրաշալիքներ են նաև Հայոց Զուարթնոց տաճարը և Անիի մայր եկեղեցին:

Եթէ վերածնութեան շրջանի դասական նկարչութիւնը ՚ի գէմս Լէօնարդօ Դը-Վինչիի, Միքէլ Անջէլոյի, Ռափայէլի և այլոց ստեղծել է մաղոնանների բարոյական գեղեցկութիւնն ու քրիստոնէական մաքրութիւնը՝ ոչ պակաս հանձարեղ արձանացումներ են տուել նաև մեր հայ արևատագէտները մանրանկարչական արուեստի մէջ:

Եթէ երաժշտութիւնը ընդհանրապէս իւր ծագմամբ եկեղեցական է և տուել է Հէնդէլի «Մեսիան», Բախի «Մատթէոս պատիօնը» Մոցարաի «Ռէկուիումը»՝ հայ երաժշտութիւնն էլ իւր ծագմամբ նոյնպէս եկեղեցական է և տուել է կրօնական երաժշտութեան գեղեցիկ ստեղծագործութիւններ: Հայ եկեղեցին հայ ազգի համար ոչ միայն կրթական ու քաղաքակրթական գեր է խաղացել, այլ եղել է նաև նրա խնամակալն ու պաշտպանը հայի քաղաքական կեանքի դադարման միջոցներին, և միշտ վառ է պահել ազատ կեանքի յոյսը: Յիշեցէք հայոց հայ-

ըպեաների խաղացած դերը Արշակունեաց թագաւորութեան անկումից յետոյ յիշեցէք հայ եկեղեցու դերը արաբական և կիլիկեան շրջանում, յիշեցէք հայոց հայրապետներին աթուռի տեղափոխութիւնից մինչև Ռուսաց տիրապետութիւնն վերջապէս Ռուսաց տիրապետութեան շրջանում մինչև այսօր և դուք կհամոզուիք, որ աւելի անձնուէր ծառայութիւն կարելի չէր սպասել, քան եթէ մատուցէլ է հայ եկեղեցին ՚ի դէմս հայոց հայրապետների և հայ եկեղեցու: Հայ եկեղեցին հայ ազգի գոյութեան պահպանութեան հիմքն է եղել. հայ ազգի պատմական կեանքը նրան ստիպել է գաղթականութիւններ հանել զանազան երկրներ, հայ եկեղեցին է եղել, որ իւր բարոգով բուն երկրի աւանդական սովորութիւնները, ընտանիքի սրբութիւնը և մայրենի լեզուն պահել է, որով և պահպանել է հայ ազգին ձուլուելու և կորչելու վտանգից:

Այս թուրքիկ ակնարկներից պարզ երևում է, որ ինչպէս ընդհանուր քրիստոնէական եկեղեցին մարդկային զարգացման խոշոր գործոններից մէկն է եղել, նոյնը եղել է նաև հայկական կեանքի զարգացման համար հայ եկեղեցին: Իրական փաստ է, որ մեր ունեցած լաւագոյն մասը հայ եկեղեցուն ենք պարտական: Եւ այս բոլորից յետոյ անբացատրելի է, երբ շատերը այսօր երես են շրջում եկեղեցուց. այդ ո՛չ այլ ինչ է, եթէ ո՛չ սև ապերախութիւն կամ ծայրայեղ սոցիալութիւն իւր անցեալի: Սակայն յուսահատուել պէտք չէ. շատ անգամ է թուացել, թէ եկեղեցու երգը երգուած է, որ նա բիւրեղացել է. բայց յանկարծ նոր կեանք է ստացել մեռեալը, նոր մարդիկ են հրապարակ ելել, զօրեղ խօսք են հնչեցրել, նոր շարժում սկսել ժողովրդի մէջ: Այդ անողը այն հոգին է, որի համար ասուած է թէ «ուր կամի շնչէ...»:

Հայ եկեղեցին արծուի է նման, որ երբեմն կախում է իւր թևերը ու նստում, և շատերը կարծում են, թէ

պիտի մարի ու սկսում են վիճել, թէ արդեօք շուտով պիտի դայ վախճանը: Սակայն հէնց այդ վէճի ժամանակ արծիւը շարժում է իւր թևերը և ճախրում բարձր ու բարձր. նա միայն ժամանակաւոր հանգիստ էր առնում:

Այսօր էլ կարծես տաճկահայ կեանքում մարում է հայ եկեղեցին, սակայն նա ժամանակաւորապէս հանգիստ է առնում, որ նոր թափով հրապարակ դայ և կեանքի կրակը վառէ հայ օջախում: Հաւատանք եղբայրներ, Փըրկչի զօրութեան, հաւատանք մեր եկեղեցուն, մեր ժողովրդի ապագային և խնդրենք, որ ս. Լուսաւորիչը բարեխօս վինի Տիրոջ առաջ իւր հաստատած եկեղեցին յարատև պահելու. ամէն:



Մատթ. ԻՍ. 1-11.

Փրկչի յաղթական մուտքն է Երուսաղէմ, որի յիշատակը սօնուած է այսօր եկեղեցին: Երուսաղէմի փողոցները կենդանացել են. հազարաւոր մարդիկ բռնել են տաճարի սրահներն ու նրա ընդարձակ բակը. տասնեակ հազարներ լցուած են փողոցներում և զետեղուած քաղաքի շուրջը՝ վրանների տակ: Անթիւ անհամար եկուորներ կան Յունաստանից և Աֆրիկէի ծովեզրեայ քաղաքներից. ցեղակից ազգեր՝ Ասիայի տաք ու չոր երկրներից: Մի խօսքով Երուսաղէմը Բաբելոնի խառնակ լեզուների իրական պատկերն էր կրում այդ օրը: Նա դարձել էր ազգերի թանգարան, ուր ժողովուած էին բազմալեզու ազգեր գոյնզգոյն դէմքերով և բազմաձև տարազներով:

Խառնիճազանճ բազմութեան մէջ շտապով հե՛լի հե՛ւ անցնում են արագավազ պատանիներ, ինչ որ աղաղակելով: Նրանց խօսքերը ականջէ-ականջ անցնելով շուտով հազարաւորների շրթունքների վրայ հնչում է այլ և այլ լեզուներով. «հա գալիս է Նաղարէթցի Յիսուս մարգարէն»: Քչերն են, որ՝ իբրև անծանօթ, հարցնում են «նձ իցէ սա» և իմանալով, որ Նաղարէթի մարգարէն է՝ զարմացմամբ ասում. «Գալիլիայից մարգարէ կարողէ ելնել»: Իսկ մեծամասնութիւնը, որ վաղուց ճանաչում էր խօսքով ու գործով այդ զօրաւոր մարդուն և որի զարմանքի ու հիացման առարկան էր նա, երբ լսեց Նրա գալուստը՝ «ղրղրեցաւ քաղաքն ամենայն»:

Արևելցին կրօնացի չէ, որ իւր մտախոհ գլուխը փոքր ինչ բարձրացնէ համոզուելու թէ՛ արդեօք արժէ՛ նայել:

Նա եւրոպացու նման ուշ ոգևորուող չէ: Փրկչի գալուտեան լուրը առնելուն պէս՝ ծեր ու երիտասարդ փողոց ընկան, հեռաւոր վայրերից եկող ուխտաւորները ճամբին միացան ամբօխին և լսում էին ու պատմել տալիս հրաշագործ մարդու մասին:

Այսօր միայն Երուսաղէմը չէ Յիսուսին դիմաւորողը, այլ ամբողջ աշխարհը. Յիսուս այսօր աշխարհ է մտնում:

Սակայն արգելում են սեղացիք. ահա Երուսաղէմի առաջաւորներն ու բարեպաշտները թանգագին նազուստներով զուքուած-զարդարուած, երկար ու սև մուրուսներով, հպարտ, ու թթու դէմքերով: Սակայն ոչ ոք այդ բոպէին հաշիւ չի տեսնում նրանց հետ. ոչ ոք սովորական խոնարհ ողջոյնը չէ տալիս նրանց. նրանք էլ հասարակ մահկանացուների նման հրհրում ու փողոցի երկու պատերին են սեղմուած: Ժողովուրդը չի տածում նախկին յարգանքը դէպի հին մեծութիւնները: Նրանք կանգնած են լքուած ու դառնացած և նայում են յուզուած ամբօխին՝ ու միմեանց տկնարկելով խորհում՝ սահմանափակ ու տխմար ժողովուրդը մանկամիտ է դարձել. Գալիլիան ամբողջ Նրանն է, բայց Երուսաղէմին չպիտի տիրանայ. Նա Երուսաղէմում կմեռնի, եթէ Գալիլիայում ապրել չուզէ:

Ահա Գալիլիացիների մի խումբ, նրա բարեկամները. տեսէք ինչպէս հրճում են, որ իրենց պաշտածին այստեղ են տեսնում ս. քաղաքի կենտրոն դարձած: Նա՛ որ վերջին անգամ անապատում հինգ հազարին կերակրեց և սակայն թագաւոր հրատարակուելուց հրաժարուեց՝ այժմ գալիս է հին թագաւորանիստ քաղաքը՝ հին հրէական արքայական ընդունելութեան ձևերով ու կոչերով՝ «Ովսաննա Որդւոյ Դաւթի, ովսաննա՛ ի բարձունս»:

—Մէթէ թագաւոր է նա:

—Նա մի պարզ մարդ էր սիրող սրտով, բարի գէմքով, վշտոտ հոգով ու երկնային ցոլքը աչքերին. այսպէս էր նա

Գալիլիայում, երբ շրջում ու մխիթարում էր ժողովրդին, ուսուցանում և փոշու մէջ թաւալլուր հոգիները երկինք վերացնում: Ժողովուրդը դեռ նմանը տեսած չէր. դեռ ևս երկրի վրայ աւելի մաքուր ու ժողովրդասէր սիրտ ապրած չէր. ուստի և նրա նման ոչ ոք էլ սիրուած ու պաշտուած չէր: Այսպէս էր նա իւր հայրենիքում. սակայն այսօր նա մեծ աշխարհ է մտնում:

Աշխարհի աչքը դիտում է նրա դէմքը, աշխաշի ա- կանջը լսում նրա խօսքը: Զգուշացիր. սուրբդ Աստուածոյ աշխարհը չէ ճանաչում Բո բարութիւնը և ոչ էլ Բո մեծու- թիւնը. և անա պարիսպների ետևը կանգնած են Բո ուխ- տեալ թշնամիները: Կիտե՞ս ինչու. որովհետև Բո խլում ես նոցա վայելած պատիւը, ժողովրդի դէպի նրանց ունեցած հաւատը, որ դարեր շարունակ սերնդէ սերունդ վայելել են. Բո խլում ես նոցանից այն, որ կազմում է նրանց հպար- տութեան ու կեանքի էութիւնը: Զգուշացիր, սուրբդ Աս- տուածոյ, սակայն նա չի լսում և իւր երկնային պայծառ դէմքով շարունակում է ճանապարհը աշխարհի խորքը: Նա չի վախում աշխարհից, նա աշխարհ է մտնում. Դանից մինչև Գազա բոլոր հիւղերում և Յունաստանից մինչև արաբական անապատները, Ափրիկէում, Սպանիայում և Հռոմում՝ ամենուրեք պիտի պատմեն եկտոր ուխտաւոր- ները սուրբի մասին, նրա առ մարդիկ ունեցած սիրոյ և երկնքի անտեսանելի Աստուծոյ մասին, որին իւր հայրն էր անուանում: Նա այսօր աշխարհ է մտնում. փոքրերը խաղում ու ցնծում են և մեծերից արմաւենու ոստեր խընդ- րում, որ նրա առաջը փռեն: Նրա մասին պատմուածները ամբոխի տրամադրութիւնը աւելի ևս բարձրացնում են: Նրա բարեկամները խոնուում են նրա շուրջը, մայրերը բարձրացնում իրենց զաւակներին, որ ծերութեան հասա- կում մտաբերեն թէ՛ տեսել են աշխարհի մեծագունին: Հռովմի պահակները լուռ ու զարմանքով նայում են նրա


վրայ: Թշնամիները մի կողմն են քաշուած. Յիսուս ճա- նաչում է նոցա յորովայնէ մօր իւրեանց. նա գիտէ, որ կամենում են իւր մօնը և սակայն գնում է մահուան ընդատաջ:

Նրան հետևում են պարզագգեստ մարդիկ, նրա բա- րեկամները, որոնք վարդապետ են կոչում Յիսուսին և իրենց աշակերտ համարում: Տասներկուսին ճանաչում ենք, նրա մտերիմներն են, որոնք ընթանում են նրան կից. անա Յովհաննէսը, որ իւր հայեացքը՝ անթարթ ուղղած է նրան. Յակոբոսն ու Անդրէասը որոտանահայեաց, անվեհեր. Պետրոսը՝ հպարտ, Թովմասը՝ մտախոհ, Նաթանայէլը՝ հա- ւատացող բարւոյ յաղթանակին և Յուզան, որ դիտում է տեղի ունեցող անսովոր շուքն և զարմանում, որ աշխար- հում այդքան ոսկի ու փայլ է գոյութիւն ունեցել և ինքն իմացած չէ ցարդ: Այսպէս շարժւում է թափօրը:—

Սակայն շաբաթ չանցաւ և սուրբը խլուեցաւ, կար- ծես երկինքը կուլ տուաւ նրան. անհետացաւ նաև Յու- զան, կարծես խաւարի գոհ դարձաւ: Յիսուսի աշակերտ- ները ելան Նրուսաղէմի դռնով և աշխարհը նուաճելով գրին իրենց վարդապետի ոտի առաջ: Ալեքսանդր Մակե- դոնացին 50,000-ով և Նապոլէոնը 500,000-ով չկարո- դացան այն անել, որ արին 11 հոգին: Նրանք զէնք չունէին և ոչ էլ դիտութեամբ էին զինուած. նրանց միակ զէնքը Փրկիչն էր, նրանց միակ հաւատոյ առարկան Աս- տուծոյ Որդին էր՝ ռմենք ճանաչեցինք Աստուծոյ Որդուն, տեսանք նրա փառքը. նա մեռաւ մարդոց մեղքի և փր- կութեան համար. պողատում ենք ձեզ, որ զղշաք ու սրբուելով ձեր մեղքից մաքրուիք»:

Այսպէս գնացին քարոզեցին 11 ձկնորսներ ու հա- սարակ զիւղացիներ և միայն մի իմաստուն: Դարեր ան- ցան, նոքա էլ անցան գնացին, սակայն կենդանի է նրանց խօսքը, նրանց անթիւ հետևորդների մէջ, որոնք ապրում

են Փրկչին իրենց մէջ ունենալով և մեռնում Փրկչի համար։
 Աւարտելով խօսքս կբարեմաղթեմ, որ Փրկչի մուտքը
 Երուսաղէմ յիշեցնէ մեզ՝ թէ աշխարհի մէջ ոյժը աստի-
 ճանաբար տեղի պիտի տայ ճշմարտութեան, և թէ մենք,
 որ համարուում ենք Յիսուսի աշակերտ պարտականութիւն
 ունինք ճշմարտութեան յողթանակին նպաստելու։ Այս-
 թենք Փրկչին, որ զօրավիզ լինի մեզ իւր անցած ճամբով
 ընթանալու. ամէն։



«Լուսն ՚ի շարեաց գսիրտ քս Երուսաղէմ, զի ապրեսցիս» (Երեմ. 7. 14).

Այսպէս գոչեց Ասատած երբեմն Երեմիա մարգարէի բերանով սաստելով Իսրայէլի ժողովրդին։

Ճիշտ նոյն լուրջ և սթափեցուցիչ կոչը պէտք է նաև այսօր՝ աւելի մեծ թափով և զօրեղ շեշտով ուղղել Տիրոջ ժողովրդին, որ լողում է յանցանքների և անիրաւութեան ծովում։ Գուցէ նրա ներնոց խիզճը զարթնի և զղջացող սաղմոսերգուի հետ երկինք դառնայ՝ «Ողորմիա ինձ Աստուած....» (Սղմ. 51) և այս սրտանց դարձի փոխարէն Գաւթի նման աստուածային ներման արժանանայ։

Ինչպէս յարմար է գալիս ոտնլուայի խորհուրդը, որ ապաշխարութեան հրաւէր է, մեր ընտրած բնաբանին։ Նա՛ որ երբեմն իւր աշակերտների ոտները լուաց՝ և որ միայն կարող է մեր մեղքերը լուանալու, սիրով հրապարակ է գալիս այսօր մեր սրտերը լուանալու, եթէ միայն յօժարենք։

Ահա Յիսուս յիշատակաց արժանի և խորհրդաւոր երեկոյեան՝ խաղաղ հոգով և տօնական վեհութեամբ ելաւ ընթրեաց սեղանից, կապեց զենջակը և չոքեց ծառայի պաշտօն կատարելու, իւր հաւատարիմների ոտքի ցեխն ու փոշին լուանալու։ Նրանք զարմացած հայացքներ փոխանակեցին, բայց լուռ հնազանդուեցան։ Միայն Պետրոսն էր, որ երբէք չէր գսպւում՝ շտապեց իւր հերթին զարմացմամբ հարցնել՝ «Տէր, դո՛ւ զիմ գոտս լուանան», և իսկոյն էլ պատասխանել՝ «ոչ լուանցես գոտս իմ յաւիտեան»։

Պետրոսի այս վարմունքը ներելի մոլորութիւն էր,

մի բարեմիտ ընդդիմութիւն, որ ծնունդ էր նորա համեստութեան—ինչէս կարող էր ներել իրեն, որ Տէրը ծառայէ, ինչպէս կարող էր հաշտուել, որ իւր յարգած և սիրած վարդապետը խոնարհի իւր առաջ և ծառայի պաշտօն կատարէ:

Մեր մէջ էլ կգանուին շատերը, որոնք այսօրուայ ապաշխարութեան գանդերի հրաւերին և Տիրոջ կոչին՝ թէ «լուացարուք, սրբեցարուք, ընկեցէք զչարիս ձեր յանձանց ձերոց (Ն. Ա. 16) բազմատեսակ «ինչու» ներով հարցակոխ կանեն, բայց այդ հարցերը անմեղ Պետրոսի՝ համեստութեան սիրոյ ծնունդ, ներելի հարցին չեն նմանում, և ծնունդ են այլ զգացմունքների, բղխում են այլ շարժառիթներից:

Այսօրուայ մարգն էլ խուսափում է ապաշխարութիւնից, բայց ոչ թէ Պետրոսի նման՝ կարմրելով համեստութիւնից, այլ անպատկառ անհաւատութեամբ արհամարհելով և ծաղրելով: «Ի՞նչ է, կամենում ես քո ապաշխարութեան քարոզով իմ մեղքերը երեսովս տալ և ինձ նոր մարդ դարձնել. երբէք. քո ազդարարական և սպառնալից քարոզները ուղղիր թոյլ հոգիներին՝ կանանց և երեխայոց, ես նրանց կարիքը չեմ զգում»: Ահա մեր ժամանակի թերահաւատ սերնդի պատասխանը Փրկչի ապաշխարութեան հրաւերին: Խուսափում է փարիսեցի մեծամիտը վիրաւորուած՝ թէ ինչպէս իրեն ապաշխարութեան հրաւեր է կարգացում, որ մի ազնիւ մարդ է և բարի քրիստոնեայ՝ ու անթերի կատարում է իւր վերայ դրուած պարտականութիւնները: Նա առաջարկում է բաղխել այլ դո՛ւներ. անա մոլորեալ ոչխար, անա անարգուած մաքսաւոր, անա կորած հոգի, անա չարահամբաւ տուն. նրանց ուղղիր քո ապաշխարութեան հրաւերը, այնտեղ է կարիքը և ազգաբարելու և սպառնալու և պատժելու: Խուսափում է ծոյն ու մեղկը՝ այսօրուանը վաղուան յետաձգելով, ինչպէս Ֆէլիքս գատաւորը, որի նիրհած խիղճը՝ Պօղոս առաքեա-

լի արդարութեան, ողջախոհութիւն և վերջին դատաստանի մասին խօսած սթափեցուցիչ և կծու քարոզով զարթեց, բայց ծուլութեան ու մեղկութեան ազդեցութեամբ՝ նրա թուլացած կամքը խօսքից գործի անցնելը յետաձգեց, մոռանալով Տիրոջ զգուշացուցիչ խօսքը թը՝ «անմիտ՝ յայսմ գիշերի գնդիդ՝ ի քէն՝ ի բաց պահանջիցեն»:

Խուսափում է նաև փոքրոզին ու վատասիրտը, որ կասկածով ու թերահաւատութեամբ հարցնում է՝ Տէր, միթէ՞ դու պիտի լուանաս ոտս, միթէ՞ տիեզերքի արարիչը ինձ՝ ողորմելի արարածիս մասին կարող է հոգ տանել, միթէ՞ իմ ապականուած հոգին կարող է ուղղուել, միթէ՞ իմ հին մեղքերի շղթան, որ երկար տարիներ կրել եմ՝ պիտի խորտակուի. ոչ երբէք. շատ սուշ է:

Ահա այսպիսիներին է ուղղում Յիսուս իւր պատասխանը, որ ուղղել էր երբեմն Պետրոսին. «եթէ ոչ լուացից զքեզ, ոչ ունիս ընդ իս մասն»: Լսիր, ո՞վ մարդ, եթէ սիրտդ չմաքրես՝ Տիրոջ թագաւորութեան մէջ մաս չունիս: Լսիր, ով աշխարհասէր, երկրային հաճոյքների և անցաւոր գանձերի պրպտումները երջանկութիւն չեն շնորհի քեզ, եթէ սիրտդ չլուանաս: Լսիր, նաև դու՝ ո՞վ քրիստոնեայ, քո քրիստոնեայ անունդ, յաճախ եկեղեցի գնալդ և կատարած արտաքին արարողութիւններդ անօգուտ կանցնին, եթէ սիրտդ չլուանաս ու չսրբուես:

Եթէ այդպէս է, լաւ չէ՞ որ, ո՞վ մարդ, Պետրոսի նման գոչես «Տէր, մի միայն դոտս իմ, այլ և զձեռս և զգլուխս»: Այսպէս պիտի հնչէ ամեն մի քրիստոնեայի աղօթք. երկրի ցեխն ու փոշին ոչ միայն ոտքին է կպչում, այլ արատաւորում է մարդուն մինչև գլուխը. անա մեր ձեռքերը՝ անարդար, անա մեր աչքերը ցանկասէր, անա մեր լեզուն՝ ստախօս, անա մեր ճակատը՝ մեծամիտ, անա մեր սիրտը՝ չար հոգիներով լի: Ի սրտէ զղջումն ու ապաշխարութիւնն է բժիշկը մեր այս վէրքերի:

Արձանացիր մեր առաջ դու զղջման տիպար, ապաշխարութեան թագաւոր Դաւիթ արքայ. տուր մեզ քո ապաշխարող հոգին, որ աղօթենք Տիրոջը «սիրտ սուրբ հաստատեալ յիս Աստուած, և հոգի ուղիղ նորոգեալ ի փորի իմում», որ մեր աղօթքին էլ հետևի կատարեալ թողութիւն և ներքին վերածնութիւն:

Սիրելի եղբայրներ և քոյրեր, արդեօք լրջութեամբ խնդրել էք երկնաւորից մաքուր սիրտ, ստացել էք այդ հոգու երախայրիքը, ապրել ու զգացել էք կատարեալ ապաշխարութեան ըստէն: Ո՛վ կատարելապէս ապաշխարել է, ո՞վ դարձել է կորստեան ճանապարհից, ո՞վ ընմբռնել է խաղաղութեան ուղին, ո՞վ տօնել է իւր վերածնունդը՝ նա անշուշտ ճաշակել է զղջման քաղցրութիւնը, զգացել ներքին ազատութիւն, նա զիտակցել է, թէ այլ ևս աշխարհի զաւակ չէ՝ մեղքի, այլ Յիսուսի աշակերտ՝ Աստուծոյ որդեգիր: Իսկ ո՞վ այդ ապրումները ունեցած չէ, Տէր Յիսուս, այսօր, ապաշխարութեան այս ամենամեծ օրը շարժիր նրա խիղճը, որ արձագանք տայ նրա սրտում Տիրոջ կոչը՝ հաղորդակից լինելու քո շնորքին:

Ոտնալուայի արարողութիւնը կատարելուց յետոյ դառնում է Յիսուս իւր աշակերտներին հարցնելով «Գիտէք զի՞նչ արարիդ ձեզ»: Այսպէս հարցնում է նաև մեզ՝ որ ականատես ենք լինում տարէ ցտարի Փրկչի յիշատակը վերարժարժող ոտնալուայի յուզիչ և խորհրդաւոր արարողութեան:

Նա հարցնում է մեզ մեր ուրախ ժամին, երբ մեզ ոսկի յոյսեր է խոստանում՝ երջանկութիւն շնորհում: Նա հարցնում է մեզ մեր տխուր ժամին, երբ յուսահատութիւնն է մեզ տիրում, երբ մեզ ՚ի փորձ և ՚ի խրատ վերին տառապանքն է այցելում: Նա հարցնում է մեզ ամեն կիւրակէ, երբ մեզ Տիրոջ կենդանարար խօսքն է քարոզում. նա հարցնում է մեզ ամեն զղջան օր, երբ մեր

խիղճն է զարթեցնուս նրա ձայնը հնչեցնում: Նա հարցնում է ամեն հաղորդութեան օր, երբ իւր ողորմութեան սեղանին է սպասաւորում: Այսպէս հարցնում է նաև սիրելիք, այսօր՝ խորհրդաւոր ոտնալուայի երեկոյեան «Գիտէք զի՞նչ արարիդ ձեզ» կամենալով իմանալ՝ թէ ըմբռնել ենք մենք նրա խօսքն ու գործը՝ թէ պիտի թափուին ապաշխարութեան արտասուքներ մեր աչքերից և սրտերից. թէ այս տաճարից պիտի տանենք մեզ հետ մի յիշատակ, թէ նա անհետ պիտի ջնջուի մեր սրտից ու հոգուց ամբան վաղանցուկ անձրևի նման, որ առաւօտեան թափում է և ճաշին իսպառ ցամքում:

Նւ ինչպէս բաղր է նրա լուծը, ինչպէս թէթև նրա բեռը՝ «օրինակ մի ետու ձեզ, զի որպիս ձեզ արարի և դուք առնի՛ջիք»: Նա, որ իւր ամբողջ կեանքում ծառայել է մեզ՝ մխիթարելով, վշտակից լինելով, սիրելով և մեզ համար խաչ է բարձրացել ու մեզ իւր կեանքը փրկանք տալով, գնել միթէ իրաւունք չունի մեզնից պահանջելու, որ հետևենք իրեն:

Եկէք ուրեմն եղբայրներ ու քոյրեր նրա կեանքի վերջալոյսին՝ երբ իւր ամբողջ կեանքի ամփոփումն ու բնորոշումն է տալիս ոտնալուայի խորհուրդով՝ չոքենք նրա առաջ և նրանից սովորենք, որ մեր տէրն է ու վարդապետը՝ միմեանց ոտք լուանալ, միմեանց սիրել ոչ սին փառքի տենչացող սիրով, այլ որ գիտէ խոնարհել, սպասաւորել և ներել: Եկէք աղօթող եղբայրներ, ուխտենք վառ պահել մեր սրտում Փրկչի այս յիշատակը և հաւատարիմ մնալով ոտնալուայի խորհրդին՝ նրանից ընձիւղած ապաշխարութեան և սիրոյ ծաղիկները ամուր բռնած մեր ձեռքում՝ երնենք այս տաճարից և ցմահ առաջնորդ ունենանք մեզ՝ հաւատալով, որ միայն այդ ժամանակ կլինենք նրա իսկական աշակերտը և արժանի նրա պատրաստած օթևանը ժառանգելու. ամէն:

«Ես լուսացի գոտս ձեր՝ տէրս և վարդապետս, և դուք պարտիք գմիմեանց գոտս լուանալ: Զի օրինակ մի ետու ձեզ, զի որպէս ձեզ արարարի և դուք առնիջիք»: Յովհ. Ժ. Գ. 15:

Աւագ հինգշաբթի էր. Յիսուս իւր հաւատարիմ աշակերտների և հաւատացող կանանց հետ վերնատանն էր: Նրա ողջոյնը այսօր սովորականից աւելի սօնական ու լուրջ էր. նա յուզուած էր:

Աշակերտները տեսնում էին Յիսուսի հոգու յուզումը, բայց չէին ըմբռնում պատճառը. երևի չգիտէին, որ փոքր ինչ առաջ մայր մանող արևը իւր վերջին հրաժեշտը տուաւ իւրենց վարդապետին. սակայն գգում էին, որ խոշոր դէպքերի նախօրեակին են գտնուում, և յուզուած էին: Միայն Յուդան էր հազնիստ ու անվրդով:

Այսօր Յիսուսի բոլոր խօսքերն ու արարքները խաղաղ վշտով էին համակուած. նա լաւ գիտէր, որ վերջին անգամն է երկրի վրայ իւր սիրելիների հետ սեղան նրստում ուստի և կարծես առիթ էր որոնում վերջին անգամ նրանց իւր սէրը արտայայտելու: Եւ առիթը ներկայացաւ:

Զատկական սեղանը պատրաստ էր, սակայն հարց էր թէ՛ ո՞վ պիտի լինէր նախաթոռ. «եղև՝ և հակառակութիւն՝ ի մէջ նոցա, թէ ո՞վ ի նոցանէ համարիցի մեծ» ասում է Ղուկաս աւետարանիչը («ԻԲ 24»):

Երևի աշակերտների սրտում կրկին ծնունդ էր առել առաջնութեան համար մրցութիւնը. մի զգացում՝ որ Փրք-

կիչը մի անգամ առիթ էր ունեցել շատ քնքոյշ և նուրբ պարուակելու: Կարծես թէ սեղանի շուրջը տեղ բռնելու հարցը շատ մանր ու չնչին խնդիր էր մի այդպիսի խորհրդաւոր ընկալի համար, բայց խնջոյքի ժամանակ և առհասարակ նախաթոռ լինելու սէրը, որի համար Յիսուս յաճախ հարուածել էր փարիսեցոց, ոչ միայն հրէայ մարդու սրտին մօտիկ էր, այլ և առիթ էր ծառայում մինչև իսկ զարհուրելի ողբերգական դէպքերի:

Հրէայ ժողովրդի հոգեբանութիւնը Յիսուս լաւ էր հասկանում. սակայն այդ ժամին, երբ Փրկչի հոգին տարուած էր բարձր նպատակներով, երբ նա շնչում էր յաւիտենականութեան մաքուր օդ՝ այդպիսի վէճերը տանջական էին, քան երբէք: Նրանք պարզ ապացոյց էին՝ թէ իւր ընտրեալներն անգամ շատ հեռու էին Յիսուսի կեանքի նպատակը ըմբռնելուց: Նրանք կենդանի ապացոյց էին, որ մեծամտութեան ու ետականութեան չար ողին նրանց հոգու խորշերից դեռ վտարուած չէր: Նրանք ապացոյց էին, որ աշակերտները նոյն իսկ այժմ չէին ըմբռնում Յիսուսի թագաւորութեան գաղափարը և ոչ էլ հասկանում մօտիկ ապագայում նրա շարժարուեին ու մեռնելը. և կամ նայում էին հրէական ակնոցներով՝ կատարուելիք փաստը ընդունելով ժամանակաւոր կարիք, որին պիտի յաջորդէր փառաւոր յաղթանակ և երկրային մեսիական թագաւորութիւն:

Փրկչը լուռ ու արտում լսեց նրանց վէճը և ապա՝ փոխանակ խօսքով յանդիմանելու և ուսուցանելու՝ փորձեց մուայուն և յուզիչ արարողութեան թանգարժէք դաս տալ ինչպէս իւր աշակերտներին, նոյնպէս և իւր միւս բոլոր հետևորդներին:

Արևելքում ամեն տան սենեակների յատակի կենտրոնական մասը ծածկուած է գորգով և կամ նրբագործ խսիրով. ներս մտնողը՝ տան շէմքում հանում է մաշիկնե-

ըր, որ սպիտակ խսիրն ու գորգը փողոցի փողով չկեղտոտէ: Սեղան նստելուց առաջ աշակերտները երևի այդ մաքրութեան տեսակէտով ընդունուած խելօք սովորութիւնը կատարած էին, սակայն մոռացած միւս արժէքաւոր սովորութիւնը, որ Յիսուս միշտ էլ գնահատել է: Երևի աշակերտների ոտքերը փոշոտած պիտի լինէին փոշոտ ու քարքարոտ ճամբից (Բեթանեայից Երուսաղէմ) և խիստ էլ հաճելի պիտի լինէր լուանալ ու զովացնել: Սակայն ոտք լուանալու պարտականութիւնը ծառաների (սարուկների) վրայ էր ծանրանում. և որովհետև ոչ ոք կամք չյայտնեց այդ բարի գործը կատարել՝ Յիսուս սիրոյ և խոնարհութեան կատարեալ տիպարը, ինքն ելաւ, կապեց ղենջակը, կոնքը շուր ամեց և սկսեց աշակերտների ոտները լուանալ ու ղենջակով սրբել: Լուացման արարողութիւնը աւարտեց կտակով՝ «Ես լուացի զոտս ձեր՝ Տէրս և Վարդապետս, և դուք պարտիք զմիմեանց ոտս լանալ. զի օրինակ մի ետու ձեզ, զի որպէս ես ձեզ արարի և դուք առնիջիք» (Յովձ. ԺԳ 15):

Սոնարհութեան և սիրոյ աւելի յուզիչ և կրթիչ դաս չէր կարելի տալ, քան եթէ տուաւ Յիսուս կենդանի օրինակով. Յիսուսի սիրած աշակերտի տուած այս դէպքի մանրամասն նկարագրութիւնը ապացոյց է նրա թողած խոր տպաւորութեան:

Դուրսը մթնել էր. վերնատան դահլիճում լոյսերը վառուած էին, երբ նրանք ոտնլուայից յետոյ զատկական սեղան նստան: Մահուան ուրուականը կանգնած էր Յիսուսի առաջ՝ նրանց նախապատրաստելու նպատակով գալիք փորձանքների համար. «Սրտիս ցանկութիւնը կատարուեցաւ,—ասաց Նա—և ես ուրախեմ որ մինչև չարչարանքս մի անգամ էլ ձեզ հետ զատկական սեղան պիտի նստեմ»:

Յիսուս վաղուց ծրագրել էր իւր և իւր աշակերտներ

րի մէջ, իւր մահուան շնորհիւ, յաւիտենական կապ հաստատել, նոր ուխտ սահմանել: Այս դադափարը այնքան էր էական և նշանակալից, որ չկամեցաւ խօսքով միայն հաղորդել, այլ պատկերով արտայայտել: Ամենքը յուզուած էին, ամենքը մտատանջութեան մէջ էին. դահլիճը լուռ էր. և այդ խորին լուռութեան մէջ՝ Նա առաւ հացը, աղօթեց, մանրեց և ասաց՝ այսպէս պիտի մանրեն նաև իմ մարմինը. առէք ու կերէք այս հացը, որովհետև այսպէս պիտի վայելէք նաև իմ մարմնի բեկման պտուղը: Ուրիշ անգամ էլ ժողովուեցէք ու հաց մանրեցէք և յիշեցէք, որ ձեր վարդապետի մարմին էլ ձեզ համար է մանրուած: Ապա առաւ բաժակը՝ աղօթեց և օրհնեց ասելով՝ խմեցէք այս գինին իբրև իմ արիւնը, որ պիտի թափուի ձեր և շատերի համար. այդ ըրպէին պատկերացաւ Յիսուսի աչքին այն բազմութիւնը, որ դարերի ընթացքում պիտի յարէր այս փոքրիկ խմբակին:

Ապա դառնալով աշակերտներին ասաց՝ մինչև այժմ այս մեծ տօնին զատկական սեղանի գառան արիւն էր հոսում՝ հին ուխտի նշանակ. սակայն վաղուան հոսելիք արիւնը Յիսուսի արիւնն է՝ նոր ուխտի նշանակ: Այդ արիւնն ու սեղանը, որ ես հաստատում եմ փոխանակ հին ուխտի, հին զատկական սեղանի՝ յաւիտեան պահեցէք և միշտ սրբութեամբ կատարեցէք: Եւ երբ բաժակի գինին ըմպէք ու հացը ճաշակէք՝ յիշեցէք իմ մարմինն ու արիւնը, որ թափուում է ձեր և շատերի փրկութեան համար:

Քրիստոնեայ եկեղեցին այդ խորհրդաւոր երեկոյից սկսած դարէ ի դար կատարել է Փրկչի երկու աւանդ—պատուէրն էլ, սակայն ինչ օգուտ, երբ մենք ամեն տարի գալիս տեսնում ենք ոտնլուայի խորհուրդը՝ առանց յիշելու Փրկչի խոնարհութեան ու սիրոյ կենդանի օրինակը, և ելնում ենք այս տաճարից՝ առանց ուխտելու հետեւի նրան կենդանի գործով:

Ի՞նչ օգուտ, երբ մենք ամեն հանդիսաւոր տօնի գալիս ներկայ ենք լինում Փրկչի հաստատած նոր ուխտի սեղանին՝ իր մարմնի և արեան ս. պատարագին, առանց յիշելու Նրա անձնութիւնն ու սէրը դէպի մեզ, դէպի մարդիկ և թողնում ու հեռանում ենք տաճարից՝ առանց ուխտելու հետեւ Նրան կենդանի գործով:

Սթափուեցէք եղբայրներ և մերկացէք ձեր անտարբերութիւնը, թողէք այդ արտաքին ձևական աստուածաշատութիւնը և պատուեցէք Տիրոջը հոգով և ճշմարտութեամբ, որովհետև Տէրը գաղափարով է ապրել և գաղափարի համար մեռել և այդպիսի հետևորդների է կարօտում: Իսկ դո՞ւ՝ Փրկիչ, տուր մեզ կարողութիւն և գործութիւն, որ կարողանանք մեր ուխտին հաւատարիմ լինել և փառք տալ Քեզ յերկինս, ամէն:



«Ամենայն ինչ կատարեալ է»
(Յովհ. ԺԹ. 30):

Քրիստոնէական եկեղեցին աւելի խորհրդաւոր օրեր, քան աւագ շաբաթն է, չունի: Մեծի պահոց երգերն ու աւետարանները պատկերացնում են մեզ Յիսուսի կեանքը, որ ամբողջովին կոխ է մարդկային ստոր հակումների դէմ, որոնց ծնունդն է կեանքի անարդարութիւնները: Սակայն այդ կոխը իւր ամբողջ թափով պատկերացնում են մեզ աւագ շաբթու շարականներն ու աւետարանները, մանաւանդ հինգշաբթուայ, երբ Փրկչի կոխը յաղթական վախճան է ստանում, երբ նրա կեանքը Գողգոթայի բարձունքում մարում է խաչի վրայ՝ մարդկութեան համար նոր կեանքի շոգեր սփռելով իւր շուրջը և յուսահատ մարդկութեան սրտում նոր և լաւագոյն ապագայի յուսոյ կրակ վառում: Եւ ով ուզում է ապրել աշխարհի վրայ իբրև մարդ, իբրև Աստուծոյ պատկեր, ով կամենում է աշխարհի բարոյական հանձարների իդեալներով ապրել՝ պիտի ելնէ կառավարաւորին և կանգնի Գողգոթայի խաչի հովանու տակ:

Եթէ մէկն անցնի ծով ու ցամաք, շրջէ ամբողջ աշխարհը, ելնէ երկնաբերձ լեռների կատարները և իջնի ու հանգիստ առնէ երկրի դրախտաման դաշտերում ու ձորերում:

Եթէ մէկը ելնէ գիտութեան բարձունքները, ըմբռնէ բնութեան ու մարդկային կեանքի ամեն գաղանիքներ, ճաշակէ երկրային հաճոյքների կաթնանուշ ու մեղրածոր

բոր աղբիւրներէց, բայց Գողգոթա ելած, կառափնատեղին տեսած և Փրկչի խաչի հովանու տակ մաքուր հաւատով, երկուդած հոգով և անձնատուր մտքով կանգնած չլինի՝ թող երբէք չկարծէ, թէ տեսել է աշխարհի ամենագեղեցիկը կամ զգացել մարդկային հոգու վեհագոյն զգացմունքը, որով միայն ազնուանում է մարդը:

Երկրի այդ սրբազնագոյն վայրում, իմ սերելի համայնք, մտքով կանգնել ես այժմ խորին երկիւղածութեամբ. կըրցանկամ, որ դուն էլ այս ժամին զգաս այդ սրբավայրի ոյժը քն իսկ փրկութեան համար. կաղօթեմ, որ մեր համայնքի ամեն հոգի զգայ այս գիշեր փրկական խաչի դօրութիւնը և հեռանայ Գողգոթայից հոգով թեթևցած, հաւատով, յուսով և սիրով լցուած դէպի խաչեցեալն ու նրա սիրած մարդկութիւնը. հեռանալ այն համոզմունքով, որով հեռացաւ այս աշխարհից մեր Փրկիչը «Ամենայն ինչ կատարեալ է»: Ամեն ինչ կատարուած է աշխարհի փրկութեան համար, և ես հանգիստ հոգով կըթողնեմ այս աշխարհի փրկութեան համար, և ես հանգիստ հոգով կըթողնեմ այս աշխարհը:

Լսիր, քրիստոնէայ ժողովուրդ, մեռնող Յիսուսի մարդ շրթունքներից դուրս թուած հրաժեշտի խօսքն է:

Ի՞նչպիսի խորը համոզմունք, ի՞նչպիսի հաստատուն հաւատ կայ այդ խօսքերի մէջ. նա հնչում է որպէս մեծ մարտի յաղթական խօսք, որպէս գործի վերջին խօսք:

Վերջին և ծանրագոյն կռիւն է մեր Տիրոջ, որ մղում է նա այս աշխարհում, որի առաջ նսեմանում և աղօտանում են նախկինները:

Նայեցէք վշտակիր մարդուն, ի՞նչպէս քաշ է տալիս նա իւր խաչը դէպի կառափնատեղին հեռւէն ու ծալուել էն գելարանի ծանրութեան տակ: Տեսէք, ի՞նչպէս դամում են նրան խաչին «ի մէջ երկուց աւագակաց»:

Տեսէք, ի՞նչպէս անխիղճ են նրա թշնամիները և մաք-

մնի հետ խաչում են նաև նրա հոգին՝ իրենց հայնոյանքներով, դառն ծաղրող ու ծանակով, որոնք ծակում են նրա սիրտը աւելի, քան նրա մարմինը ծակող գամերը:

Ո՛չ միայն աշխարհն է երես դարձրել նրանից, այլ և երկինքը՝ մութ պատելով երկրին. տեսէք թէ ինչպէս մըթնում է նաև Նրա աստուածային հոգին, այն հոգին որ ատենում անյողգող կանգնած էր ամբողջ մեղանշական աշխարհի փոխարէն. էլ չգիմացաւ և ձայնեց՝ «Աստուած իմ, Աստուած իմ, ընդէ՛ր թողեր դիս»: Լսեցէ՛ք՝ թէ ի՞նչպէս նրա պապական լեղուն ու շրթունքները ձայնում են՝ «ծարաւի եմ», խնդրելով կազուերիչ ջրի կաթիլ այն աշխարհից, որ ցողել է իւր օրհնութեան յորդառատ հեղեղներով և ճշմարտութեան ու ոգորմութեան սփոփիչ քարոզներով:

Ծանր կռիւ էր մղում Նա և՛ մարմնով և հոգով՝ ումպ-ումպ խմելով աշխարհի դառնութեան բաժակը, կռիւ՝ որի լոկ պատկերն ու յիշողութիւնը այսօր անու սարսափ է ազդում մեր հոգուն. սակայն անպարտելի է մնում:

Ահա կրկին լոյս է շողում Նրա գլխին, փայլում է Նրա հոգին, խաւարն անցնում է և պայծառ արևը կրկին ողջունում մեռնող համբերատար հոգուն. մեծ քարը գլորւում է Նրա սրտից, երկնքի խաղաղութիւնը իշխում է Նրա հոգուն և Նրա շրթունքները մըմնջում են յաղթական վերջին խօսքը՝ «Ամենայն ինչ կատարեալ է»:

Սիրելիք, ով տեսել է հաւատով մեռնողի պայծառ ու ծիծաղ երեսը իւր մահուան մահճի մօտ խաղաղութեամբ հրեշտակի գալուստը ողջունել են. ով ջերմեռանդութեամբ հետևել է մեծ համբերատարի մարտիրոսական ուղին Գեթսեմանիից սկսած՝ մինչև Գողգոթայի խաչը՝ նա կզգայ անշուշտ նպատակին հասնողի յաղթական յափշտակութիւնը, նա կըմբռնէ մեծ կուռից յետոյ՝ հերոսի յաղթական բացականչութիւնը թէ «Ամենայն ինչ կատարեալ է»:

Այդ բացականչութիւնն է, որ լսում ենք աշխարհի յաղթողի բերնից. արդասիք չէ միայն Գեթսեմանի պարտիզում և Գողգոթայի բարձունքում տեղի ունեցած մաքառումները, այլ հետևանք՝ իւր կատարած երկրային եռամեայ մեծ գործի. նա տեսնում է իւր անցած ճամբան Բեթղեհէմի մտուրից մինչև Գողգոթայի խաչը և ուրախանում է աշխարհի փրկութեան համար:

Այժմ խաչի վրայ իւր կատարած մեծ գործի պսակն է հիւսում, ամփոփումը տալիս. նա պատկերանում է, որպէս Աստուծոյ հնազանդ ծառայ մեռնելու անգամ պատրաստ, որպէս բարի հովիւ՝ պատրաստ իւր կեանքը հօտին գոհելու: Մենք լսում ենք նրա անձնուրաց սիրոյ ձայնը, որ իւր խաչը մոռանում է աշխարհի թշուառութիւնը տեսնելով, և լացող կանանց դառնալով ասում՝ «դստերք Երուսաղէմի, մի լալք ի՛ վերայ իմ, այլ լացէք ՚ի վերայ անձանց և որդոց. ձերոց»:

Մենք լսում ենք նրա վեհանձնութեան և սիրով լի ազօթքը խաչի վրայ իւր թշնամիները համար, որոնք ասնջանքի խաչին էին դամուս նրան՝ «Հնար, թող դոցա, զի ոչ գիտեն գինչ գործեն»:

Այս բոլորի մէջ արտայայտում է Խաչեցեայի անձնուէր սէրը, որով յաղթում է աշխարհին, և այն զիտակցութիւնը՝ թէ այդ սիրոյ շնորհիւ մարդկութիւնը փրկւում է է և Աստուծոյ թագաւորութիւնը հաստատուում երկրի վրայ՝ բացազանչել է տալիս նրան, «Ամենայն ինչ կատարեալ է»:

Սիրելիք, երբ մի հերոս մարտի արիւնահեղ պատերազմում դոցում է իւր աչքը լսելով, որ իւր արեամբ գնուած է յաղթութիւնը, զիտէք՝ թէ ինչ գեղեցիկ մահ է հերոսի համար. կամ մի մայր, երբ ամբողջ օրը իւր փոքրիկները մասին աշխատում և երեկոյան նրանց մէկիկ—մէկիկ հանդիստ տալուց յետոյ վերջապէս իւր յոգնած

զլուխն ևս բարձին է գնում զիտակցելով, որ բոլորը պատուարուած են՝ գիտէք՝ թէ ինչ քաղցր նինջ է մօր համար: Սակայն ուր կմնայ հերոսի գեղեցիկ մահն ու հոգատար մօր քաղցր քունը Խաչեցեայի մահուան առաջ, որ մեռնում է զիտակցելով՝ թէ իւր մահը աշխարհին փրկութիւն է բերում: Եւ այդ համոզման ծնունդ է վերջին շունչի հետ նրա բերնից ելած վերջին յաղթական խօսքը՝ «Ամենայն ինչ կատարեալ է»:

Եւ յիրաւի. սրբան ճշմարիտ են այս խօսքերը. այն ամենը ինչ որ գուշակել է ս. Գիրքը, ինչ ակնկալութիւններ, որ ունեցել է Աստուծոյ ընարեալ ժողովուրդը, ինչ իղձեր, որ արտայայտել է հեթանոս աշխարհը, մի խօսքով այն ինչ որ Աստուած ՚ի յաւիտենից Աշխարհի փրկութեան համար նախասահմանել է և ինչի որ մարդկութիւնը կարօտ է եղել՝ այն ամենը Փրկիչը կատարել է:

Ելէք ձեր գերեզմաններից և եկէք շրջապատեցէք այս կառավանատեղին՝ դնէք հին ուխտի նահապետներ, առաջնորդներ, տեսանողներ ու մարգարէներ, տեսնելու՝ ինչ որ կկամենայիք տեսնել, լսելու՝ ինչ որ կկամենայիք լսել, իմանալու ինչ որ գուշակած են մարգարէները:

Այո, Գողգոթայի վրայ կատարուեցան Աստուածային բոլոր խոստումները, որ Տէրը սուել էր իւր ժողովրդին երբեկիցէ. այնտեղ կատարուեցան մարդկութեան բոլոր իղձերը, որին ձգակ էր հեթանոս աշխարհը, բայց հասած չէր:

Մօտեցէք խաչին դնէք ևս Յունաստանի իմաստուններ՝ Սոկրատէս, թոյնի բաժակը ձեռիդ, որ խմեցիր հեգնող ժպիտով, Պլատան, խորաթափանց խոհերովդ՝ ու գրէք ձեր դափնիները խաչեցեալ Յիսուսի խաչի պատուանդանի տակ ասելով՝ թէ գտանք մեր որոնածը՝ ճշմարտութիւնը, անմեղութիւնը, սէրը՝ մարդկութեան խաղաղութեան ու փրկութեան համար կարեօր առաքինութիւնը:

Այն՝ ինչ որ յայտնի չէր եզիպտական զիտութեան,

ինչ որ մատչելի չէր Յունական գեղաբուենաին, ինչ որ անկարող էր լուծել Հռովմի գորութիւնը, այն է մարդկութեան վերքերը բուժել, նրա մեղքերը սրբել, աշխարհին խաղաղութիւն պարգևել հաշտեցնելով Աստուծոյ հետ՝ կատարեց այս գունատ ու արիւնաքամ Նազովրեցին և անվիճելի իրաւունք ստացաւ գոչելու «Ամենայն ինչ կատարեալ է»:

Վերջացնելով խօսքս կհարցնեմ քեզ, սերելի ժողովուրդ, արդեօք Փրկչի վերջին խօսքը արձագանք պիտի գտնէ՞ մեր սրտերում, թէ՞ չարչարանաց երգերը, աւետարաններն ու քարոզները անհետ պիտի մարեն ու անցնեն Աստուծոյ տան պատերի մէջ: Արդեօք չարչարանաց օրերին պիտի լցուեն միայն մեր տաճարները և դատմրկ միան մեր սրտերը: Արդեօք այս մեծ յիշատակը պիտի տօնենք միայն արտաքին տօնական զգեստով, առանց սրտի մասնակցութեան և ներքին ուխտի:

Ո՛չ եղբայրներ, ես հաւատում եմ, որ Փրկչի հրատեղութի խօսքը ուժգին կհնչէ մեր սրտերի խորքերում և կհրաւիրէ մեզ ուխտելու այստեղ նրա խաչի և ս. սեղանի առաջ՝ ապրել նրա կամքով, որի մահը մեզ փրկութիւն է բերել:

Ես հաւատում եմ, որ մենք իբրև ազգ, երբ մեր խաչը ծանր լինի մեր շուրջի խաւարը թանձրանայ և մեր հոգին մխիթարութեան կարօտի՝ կյիշենք Խաչեցեալի հողեկան տանջանքներն ու երբեմն յուսահատ բացազանչութիւնները՝ «Աստուած իմ, Աստուած իմ, ընդէր թողեր զիս», բայց նաև տանջանքների յաղթական և ուրախ վերջաբանը՝ «Ամենայն ինչ կատարեալ է»:

Հայ ժողովուրդ, անբացատրելի զուգադիպումն Փրկչի վերջին և մեծագոյն կռուի յիշատակի օրերեն ընկնում է նաև քո վերջին ու վճռական կռիւը. լարիր ոյժերդ, համբերիր տանջանքներիդ, անցնւր յուսահատ ըուպէներդ, ցուցուր անձնուէր սէր՝ և հաւատան, որ կյաղթէ ճշմարտութիւնը. իսկ եթէ մեռնես՝ գոնէ իրաւունք կունենաս աւելու՝ թէ «Ամենայն ինչ կատարեալ է». Ամէն:

«Արի որ ննջես և կանգնես 'ի մեռելոց, և լուսաւորեսցէ զքեզ Քրիստոս» (Եփես. Ե. 14):

Չատկական տօներին և նախընթաց ապաշխարութեան օրերում՝ քանի՛—քանի՛ խորհրդաւոր պատկերներ եկան անցան մեր աչքի առջևից, որոնք մեր Փրկչի երկրաւոր կեանքի վերջին դէպքերը նկարագրելով՝ անբաւ խորհրդածութեան նիւթ են ընծայում մեզ, մարդկային կեանքի նուրբ խնդիրներ շօշափում և շատ գաղտնիքների վրայ պայծառ լոյս սփռում: Բայց մենք այդ պատկերներից մէկը միայն կառնենք: Փրկիչը գերեզմանի առաջ:

Այդպէս տեսնում ենք նրան երեք անգամ: Տեսնում ենք՝ թէ ինչպէս մօտենում է Նա իւր բարեկամ Ղազարոսի գերեզմանին՝ խռոված հոգով և արտասուքն աչքերին... «Եւ արտասուեաց Յիսուս» — ասում է աւետարանին ու անցնում. բայց որպիսի խոր զգացումներ և մրտաքեր են արտայայտուած այդ երկու բառի մէջ: Արդեօք նորա համար արտասուեց Փրկիչը, ինչպէս հրէաները բացատրում էին, որ իւր սիրած անձի գերեզմանին էր մօտենում. ո՛չ: Ճշմարիտէ, մեր մօտիկ ծանօթի, սրտակից բարեկամի կորուստը՝ մեզ, մահկանացուներին մեծ վիշտ է պատճառում և աւելի կենդանի կերպով զգալ է տալիս մահուան բռնութիւնը կեանքի վերայ: Սակայն երբ արտասուում է ո՛չ մեզ նման մի սոսկ մահկանացու, այլ նոյն ինքը՝ կեանքի առաջնորդը՝ նրա արցունքները շատ աւելի

մեծ զին պիտի ունենային և աւելի զօրեղ շարժառիթներէց բղխած լինէին, քան դէպի անձնական բարեկամը տածած մասնակի համակրութիւնը իւր մէջ ամփոփել կարող էր:

Նրա բարեկամը այն աղէտի զոհն էր, որ ծանրանում է Ադամի բոլոր որդիներէ վերայ. Ղազարոսի գերեզմանը ներկայանում ծ Նրա աչքին իբրև մի ահագին գերեզման, որ կլանել էր և շարունակում էր կլանել բարեկամ մարդկութեան կեանքը և այն քանի մի կաթիլ արտասուքը, որ փայլեցին Նրա արեգակնափայլ աչքերում՝ աւելի խոր վիշտ և աւելի մեծ սէր էին արտայայտում, քան այս ամենախուլ գերեզմանի շուրջը թափուած բոլոր արտասուքները միասին: Յիսուս արտասուում էր մարդոց վիշտն ու թուլութիւնը տեսնելով մահուան տուաջ, բայց Նորա արցունքը տկարութեան և վհատութեան արցունք չէր. մահը նրա համար անպարտելի բռնաւոր չէր, ինչպէս մեզ համար: Նա իւր հեռ բերել էր մի շղթայ՝ կապելու աշխարհի այդ հզօրին: Եւ անհա երկնաւոր Հօր անունով, որի լոկ խօսքը գոյութիւն տուեց տիեզերքին, կանչում գերեզմանից չորեքօրեայ մեռեալին. ել Ղազարոս, և մեռեալը կենդանանում է: Տեսարանը փոխուում է. Փրկիչը կանգնած է մի այլ գերեզմանի առաջ: Երուսաղեմում է այդ գերեզմանը, Գաւթի արքայանիստ և սրբազան քաղաքը, որտեղից օրէնք և ճշմարտութեան պատգամներ պէտք է ելնէին Աստուծոյ ընտրեալ ժողովրդի համար: Երուսաղէմը, ուր անչնփ անգամ Իսրայէլի Աստուծոյ փառքը երևացել էր, այսօր մի գերեզման էր և գերեզման պատրաստում նոյնիսկ Նորա համար, որ եկել էր իւր բոլոր իղձերին ու ակնկալութեան լրումն տալու: Այս կենդանի մեռեալին համար Տէրը օրեր ու շաբաթներ շարունակ իւր Աստուածային բառի բոլոր ճարտարութիւնն էր գործ դրել՝ Նրա խաւար հոգևոր Աշխարհը

թուփանցելու և այնտեղ լոյս ու կենդանութիւն արձու համար. բայց իրօր:

Եւ այժմ այս՝ անցեալ փառքով և ներկայ ճոխութեամբ պարծեցող բարեպաշտական քաղաքը աւերակների մի կոյտ էր Նրա աչքում, մի գերեզման, որի տեսքը անպատմելի կսկիծ էր պատճառում Նրան: Նա տեսնում էր՝ թէ ինչպէս կենդանի Աստուծոյ ժողովուրդը ձևապաշտութեան և մռայլ նախապաշարումներով կուրացած, սառել ու անկենդան մի դիակ էր դարձել ինչպէս Նրա լուսագոյն զաւակները ցիր ու ցան էին ելել, կոյր առաջնորդների ետևից ընկած մոլորուել և այդ դիակի, այդ անհովիւ հօտի, այդ անմայր ձագերի գլխին պտոյտ էր գալիս հուլմէական աստուածութեան, պատրաստ ամեն ըսպէ ջնջելու նրան երկրի երեսից:

Նա կամենում էր շունչ տալ դիակին, իբրև արթուն հովիւ՝ օրոնել, ՚ի մի ժողովել մոլորեալ ոչխարներին, իբրև գորովագութ մայր՝ իւր թիւերի տակ առնել անաիրական ձագուկներին. բայց դրա համար անհրաժեշտ էր, որ դիակն ինքը շարժուել կամենար, ոչխարներն ու ձագերը իւր ձայնը լսէին: Տիրոջ օժեալի ամենատես աչքը տեսնում էր, որ անեղ բարբառով կամ յորդորական խօսքերով նրան ճշմարտութեան հոգի և արդարութեան սէր ներշնչել չէր կարելի:

Նա գայրանում էր, բայց աւերը անխուսափելի էր. մնում էր, սակաւ ընտրեալներին միայն խլել նրա գրկից՝ թէև խիստ թանգ գնով. և երկնաւոր Հօր կամքը այդ էր և նրա հնազանդ որդին գնում էր այդ ճամբով:

Եւ անհա Նա՝ կատարելով Հօր կամքը, փրկանքը վճարելով և դժուարակոխ ճամբան և մահուան կամուրջ անցնելով՝ կանգնած է երրորդ գերեզմանի մօտ—իւր սեփական գերեզմանն է այդ, դատարկ գերեզման...

Մարիամ մագդաղենացին՝ մեղքերի ապականութեան

տղմից ելած և աստուածային սիրոյ կրակով տոչորուող մի կին, իբրև մարմնացում մեղաւոր և փրկութեան կարօտ մարդկութեան՝ խոնարհել է այնտեղ և իւր Փրկչին է սրունում: Բայց Փրկիչը գերեզմանի մէջ չէ: Դարձիր, Մարիամ, վերև նայիր. Նրա գլուխն արդէն ամպերի մէջ է. Նա իւր երկնաւոր Հօր մօտ է գնում և քեզ կանչում ու ձգում իւր ետևից: Արի, Մարիամ, քո Աստուծոյ մօտ արի... Այլևս փակ գերեզման չկայ, այս գերեզմանի հետ բոլոր մեռեալների գերեզմանները բացուած են. Յարուցեալը կենդանութիւն է բաշխում բոլորին:

Եւ ամէն անգամ, երբ եկեղեցու բեմից հնչում է լուսոյ և կեանքի մեծ աւետիքը՝ Քրիստոս յարեալ... Երուսաղէմի դատարկ գերեզմանի մօտից դէպի աշխարհի չորս կողմը են սլանում Փրկչի առաքեալները՝ և կանգնում իւրաքանչիւր գերեզմանի առաջ՝ ամէն քրիստոնէի գլխի վերև և ձայն տալիս. «Արի որ ննջեալ և կանգնեաց ի մեռելոց և լուսաւորեսցէ զքեզ Քրիստոս»:

Այսպիսի մի գերնգման է այսօր նաև մեր դժբախտ երկիրը և մեր թշուառ ժողովրդը—մեռել է նրա ստեղծող հոգին: Չունենք մենք ո՛չ գիտութիւն և ո՛չ գեղարուեստի սպասաւորներ և ոչ անգամ սէր դէպի նրանց: Ննջում է մեր միտքը, ննջում է մեր հոգին, ննջում է նաև մեր սիրտը, բարոյական կեանքի աղբիւրը. սիրտը՝ որի սպասաւորներն ենք մենք՝ հոգևորականներս: Ո՛ւր է մեր պապերի անձնագիր հովուութիւնը, ո՞ւր է նրանց անձուէր ինքնամոռացութեան զգացումը, ո՞ւր է նրանց գաղափարի ծառայող ոգին, ո՞ւր է նրանց հասարակական սեղանի սպասաւորութիւնը: Ո՛ւր է Վարդանի հերոսական ոգին. ո՞ւր է Լուսաւորչի լոյս որոնող և Սահակի ու Մեսրոպի ստեղծող ոգին. ո՞ւր է Ներսէս Աշտարակեցու հայրենասէր ոգին, ո՞ւր են մեր նահատակների յանուն ճշմարտութեան նահատակող ոգին:

Նոքա բոլորը թաղուած են անցեալի փլտաակների տակ, բայց մեռած չեն, և երբ գեանի տակից ու փոշու մեջից հանուում են՝ վերստին յարութիւն է առնում մեր հին կեանքը և քաղաքակիրթ աշխարհին հիացում պատճառում և նորութիւն հաղորդում: Մեռել է նաև մեր երկիրը, և ինչ կարող է ներկայացնել տարիներ շարունակ աւերակի ենթարկուած, կրակի մատնուած, ծուխի ու մուխի մէջ եղող մի երկիր. ի՞նչ կարող է ներկայացնել 1878 թուականից կոտորածների ենթակայ, մարդկային սպանդանոց դարձած մի երկիր, եթէ ոչ գերեզման:

Թո՛ղ Փրկչի յարութեան աւետարներ առաքեալները մեզ մօտ էլ գան, մեր գերեզմանն էլ այցելեն և բանան մեր աչքերը՝ նայելու Գողգոթայի վրայ ծագած անձնագիր սիրոյ և կենդանութեան արեգակին, որ նրա լուսոյ շողերը ընկնին հայ մարդու նիրհած մտքի և սրտի վերայ ու կենդանացնին, որ նա էլ Յարուցեալի հետ յարութիւն առնէ և փառք տայ իւր Արարչին: Այսպիսի ցանկութեամբ թո՛յլ տուէք եղբայրներ, շնորհաւորել Փրկչի յարութիւնը և դառնալ շարունակել նրա կենարար մարմին սպասաւորութիւնը: Ամէն:



«Մի երկնչիք՝ զՅիսուս խնդրէք զՆա-
զովրեցի զՍաշեցեալն, յարեալ՝ չէ
աստ» (Մարկ. ԺԶ. 6):

Ականջ դրէք եկեղեցու այսօրուայ շարականներին՝
ինչպէս վեհ ու յաղթական են հնչում նոքա: համեմատե-
ցէք աւագ շարթի երգերի հետ՝ ինչպէս մելամաղձոտ ու
վշտոտ էին նոքա: Ի՞նչ է պատճառը. երէկ, միւս օր շար-
շարեցին, խաչեցին ու թաղեցին Նրան, որի յարութեան
աւետիքն են տալիս այսօր հրեշտակներն ու մարդիկ: Խա-
չին դամուած ու մեռելոց շարքը դասուած խղճուկ Նա-
զովրեցին փշրեց գերեզմանի կնիքն ու յարութիւն առաւ.
և ահա մարդիկ ցնծութեամբ տօնում են Նրա յաղթական
յարութիւնը:

Յարութեան տօնը գործածական լեզուով կոչւում է
նաև գատիկ: Զատիկ տօնը հին տօն է և նախաքրիստոնէ-
կան ծագումն ունի, ինչպէս վկայում է հեթանոս ազգերի
պատմութիւնը: Երբ անցնում էր մահաշունչ ձմեռն ու
փչում գարնան կենդանարար շունչը՝ յարութիւն տալով
մեռած բնութեան, երբ կանաչում էին ծառերի չոր ճիւ-
ղերը հազարաւոր ծիւեր ու ընձիւղներ արձակելով, երբ
կենդանանում էին դաշտերը կանաչով և երկններանգ ծա-
ղիկներով՝ զարդարելով մարդկութիւնը ողջունում էր գար-
նան գալուստը՝ նրան նուիրելով գատիկ տօնը:

Նոյնը հաստատում են նաև շատ հանձարամիտ գատ-
կական հեթանոսական հին սովորութիւններ, ինչպէս նրա

գատկական ձուն ու գառը, որոնք ծագող կեանքի խորհր-
դանշաններն են. կամ գատկական կրակը, որ կենդանա-
րար արևի պատկերացումն է, և որ իբրև կենսունակ ոյժ
հոսելով երկրի թմրած երակներով՝ վերակենդանացնում
է նրան: Զատիկը ուրեմն գարթող և յարութիւն առնող
բնութեան տօն է հին ազգերի համար:

Այս ամենը և՛ ճշմարիտ է և՛ գեղեցիկ, բայց այն
բոլորը չէ, ինչ որ կարելի է և պէտք է ստել գատկի տօ-
նի մասին: Զէ՛ որ մենք շատ բաներում մեր հեթանոս
նախնիքներից անցել ենք և առաջել, միթէ՞ չենք կարող
աւելի բարձր և նշանակալից բան ստել նաև գատկի մասին:

Քրիստոնէայ աշխարհի համար գատիկը գարնան տօն
չէ, և ո՛չ էլ բնութեան, այլ հաւատի տօն: Այս այն օրն
է, երբ մենք չենք կամենում միայն կանաչ տերևների
մասին լսել, այլ անցեալ մեծ եղելութեան՝ Քրիստոսի
յարութեան մասին: Մարկոս աւետարանիչը պատմում է՝
թէ երբ երբօրք օրը իւղաբեր կանայք զնացին Սաշեցեալի
գերեզմանը, որպէսզի իրենց վերջին յարգանքը մատու-
ցանեն նրան և նրա թանկագին մարմինը անուշահոտ իւղե-
րով և խնկերով օծելով՝ ըստ կարելւոյն երկար պահպանեն՝
հրեշտակից իմացան, որ յարութիւն է աւել. «Մի երկնչիք-
զՅիսուս խնդրէք զՆազովրացին զՍաշեցեալն, յարեալ՝ չէ
աստ»: Մտան գերեզմանը և հաւաստիացան, որ ճշմարիտ
է: Ահա այն աւետիքը, որ 1900 տարի առաջ տեղի ունե-
ցաւ և նոր շարժման ու նոր կեանքի սկիզբը դրաւ: 19 դար
առաջ Յովսէփ արիմաթացու խաղաղ պարտիզից սկիզբ
առաւ այդ շարժումը, որ գործել է մինչև այժմ և պիտի
գործէ յաւիտեան: Այն ժամանակուայ ծերացած և գե-
րեզմանի գուռը հասած աշխարհի մէջ հնչեց մարդու ա-
կանջին Քրիստոսի յարութեան աւետիքը, որ իւր գօրա-
բաւոր ու կենսունակ ոյժով վերանորոգեց աշխարհը, որ
անկարող էին եղել կատարել մեծամեծ պատերազմներ,

աշխարհահուշակ թագաւորներ և ազգերի մեծ գաղթականութիւններ:

Այն աշխարհը ծերացել էր ոչ մտքով կամ ճաշակով, այլ բարոյապէս. նա չէր կարօտում գիտութեան, գեղարուեստի, այլ բարոյական գաղափարների. աշխարհը բարոյապէս փտած էր՝ ճիշտ այնպէս, ինչպէս և այսօր, և կարօտում էր բարոյական վերածնութեան: Բարոյական վերածնութեան սկիզբն է, որ գրաւ այդ շարժումը, և որի առաջին ազգեցութիւնը մենք տեսնում ենք հէնց Յիսուսի աշակերտների վերայ:

Հրէական յոյսերով ու ակնկալութիւններով դաստիարակուած աշակերտները իրենց վարդապետի մանուամբ յուսախաբուած դգացին իրենց և նրա հետ գերեզման իջեցին իրենց բոլոր յանգուզն երազներն ու մեսիական սին յոյսերը՝ նրա միջոցով խորայելի երկրային թագաւորութիւն հիմնելու: Այդ յուսախաբութեան արդասիքն է Յիսուսի ձերբակալութիւնից յետոյ աշակերտների ցիր ու ցան լինելը անհովիւ հօտի նման, Պետրոսի ուրացութիւնը քահանայապետի ազախնի առաջ և խմբի կազմալուծութիւնը: Մակայն Յիսուսի յարութեան աւետիքը կերպարանափոխ արաւ նրանց: Յիսուս կրկին կանգնած է նրանց առաջ աւելի վեհ ու մեծ. նրանք լսում են նրա վեհ խօսքերը, տեսնում են նրա սիրոյ գործերը: Եւ այսպէս Յիսուսի յարութեան շնորհիւ յարութիւն է առնում նրանց մեռած հոգին, դառնում են արիասիրտ ու համարձակ, կրակոտ լեզու են ձեռք բերում, քարոզում են համարձակ, արհամարհում են մահը՝ պատրաստ լինելով իրենց դաւանած և քարոզած ճշմարտութեան համար մարտիրոսական պսակ առնել: Եւ այդպէս Յիսուսի յարութեան աւետիքով վերակենդանացած մարդիկը կենդանացրին իրենց ժամանակակից աշխարհը, բարոյապէս մեռած աշխարհին կեանք տուին, բարոյական իդէալներից գուրկ աշխարհին իդէալ-

ներ պարգևեցին և կեանքը արժէք ստացաւ մարդու համար:

Սակայն սով պիտի նորոգէ ներկայ աշխարհը, որ նոյնպէս չի կարօտում ոչ գիտութեան, ոչ գեղարուեստի, այլ միայն բարոյական գաղափարների: Սուտը և եսականութիւնը իշխում է բոլորիս հոգուն. սով պիտի հաստատէ մեր սրտում ճշմարտութեան ու հանրային շահի գաղափարները, սով պիտի վառէ մեր սրտում սիրոյ հանգած կրակը գէպի մարդը:

Ստում են անհատներ, ստում են համայնքներ, ստում են ազգեր և պետութիւններ. ստում է աշխարհականը, ստում է հոգեւորականը, ստում են բոլորը:

Անհատական ազատութիւնը, որպէս սկզբունք, բոլորս դովում ենք, բայց սով է պաշտպանողը պահանջուած ժամանակ. ոչ ոք: Ինչո՞ւ. որովհետեւ մեր անձի շահը չի ներում այդ անել. պէտք է անձնագոհութիւն, որի համար պէտք է հաւատ: Ազգերի ազատութիւնը փառաբանում են զրքերի մէջ և դիւանագէտների բերաններում. բայց սով է պաշտպանողը տեղն եկած ժամանակ. ոչ ոք: Ինչո՞ւ. որովհետեւ այս կամ պետութեան շահը չի թոյլ տալիս. հապա սուր մնաց Քրիստոսի քարոզած ճշմարտութիւնը: Կեանքի յարմարութիւնները լաւ բաներ են՝ ստում ենք, բայց սով է մտածողը նրանց ընդհանրացման համար. ոչ ոք: Ինչո՞ւ. որովհետեւ ուրիշի յարմարութիւնը անձնական անյարմարութիւն է պատճառում: Պարզ է ուրեմն որ եսի շահն է մեր Աստուածը և ոչ յարուցեալ Յիսուս և նրա դաւանած մարդասիրութիւնն ու անձնուրացութիւնը:

Մեր ամբողջ կանքը ստերի մի շարան է. ես կառնեմ միայն կրօնական կեանքը. ամեն տարի խոստովանում ենք, նոյն իսկ յաճախ տարին քանի անգամ. սակայն ինչո՞ւ է պէտք այդ խոստովանութիւնը, քանի որ նա դարձել է լոկ անբովանդակ ծէս, արարողութիւն: Ծշմարիտ խոստովանութիւնը այն է, որ մարդ ճանաչում է իւր վատ

արարքը, որոշում է չանել և չի էլ անում. բայց սրա համար պէտք է որ մեր խիղճը կենդանի լինի, պէտք է որ մենք հաւատանք յարուցեալ Յիսուսին:

Ամեն տարի հաղորդում ենք, գուցէ և տարին քանի մի անգամ. բայց կոյ արդեօք մէկը, որ հաղորդուելիս յիշէ Յիսուսին, յիշէ նրա մահը և ուխտէ անձնագործ լինել ընկերոջ համար: Չէ որ այլապէս հաղորդուելը լոկ ծէս է և՛ առաքեալի ասելով՝ մեր կորստեան պատճառ:


Ամենքը պարտք են համարում ամուսնանալ եկեղեցական ծիսով և խորհրդով, բայց ո՞վ է խորհում այդ խորհրդի սրբութեան ու վեհութեան մասին, ո՞վ է պահում այն խոստումները, որ տալիս է ամուսնացողը ս. սեղանի և աւետարանի առաջ, թէ՛ դէպի միմեանց հաւատարիմ լինելու նկատմամբ, թէ՛ երեխաներին քրիստոնէական դաստիարակութիւն տալու նկատմամբ և թէ՛ կատարեալ սիրով կապուած քրիստոնէական ընտանիք կազմելու համար: Եւ ո՞չ ոք: Ինչո՞ւ. որովհետև մեր եսը, մեր հաճոյքը աւելի բարձր ենք դասում, քան ուրիշի շահը, քան ճշմարտութիւնն ու արդարութիւնը:

Եւ այս բոլորը կատարում ենք նրա համար, որ ո՞չ հաւատում ենք Յիսուսին և ո՞չ նրա յարութեան. մենք աշխարհի թագաւորներից շատ աւելի ենք վախենում, քան երկնաւորից, որովհետև սոցա տեսնում ենք, իսկ նրան՝ ոչ:

Այս բոլորը հետևանք է յարութեան հաւատի բացակայութեան. մի հաւատ, որի մեծ արժէքը աշխարհի մեծ մտածողներն ու զգացողները ըմբռնել են. այսպէս Գեթթէն՝ իւր Փառուտի մէջ, պատկերացնում է յարութեան հաւատի ոյժը կասկածանքներով արեկոծ մարդկային հոգու հանդէպ: Փառուտը կեանքի բեռը չի կամենում այլևս տանել և մօտեցնում թոյնի բաժակը իւր շրթունքներին. բայց անա հնչում է վանքի եկեղեցու երգի ձայնը՝ Քրիս-

տոսի յարութիւնը փառաբանող, և Փառուտը յետ է կապնում իւր մտադրութիւնից: Յարութիւնը աւելի զօրեղ է, քան մարդկային հոգու ամեն տատանում: Յարութեան ձայնը յողթական է:

Այս իսկ պատճառով՝ իմ ջերմ փափագն է, և իմ լաւագոյն ցանկութիւնը արտայայտած կլինիմ, եթէ բարեմազթեմ, որ Յիսուս մեզ համար էլ յարութիւն առնէ, ինչպէս իւր աշակերտների համար: Թող նա յարութիւն առնէ մեր սիրելի և թանկագին ազգի ու հայրենիքի համար: Պէտք է չոքել Փրկչի խաչի առաջ, ուխտել խաչ ելնել, որ մեր տանջանքը ուրիշների փրկութեան ծառայէ: Պէտք է ուխտել և նոյնը պահանջել միմեանցից, այն ժամանակ յարութիւն կառնէ մեր հոգին և կապրի Փրկիչը մեր և բոլորի սրտում՝ խաղաղութիւն և երջանկութիւն բերելով իւր հետ. Ամէն:



Ամառ է. գարթել ու զարդարուել է բնութիւնը՝ գարթել է նաև մարդկային կեանքը: Ամբան դեղեցիկ է հաճելի օրերի հետ սկիզբ է առնում գիւղերում միաժամանակ նաև եկեղեցական և ժողովրդական տօները շրջանը. միմեանց յաշորդում են անդադար երգերի ու պարերի ուրախ օրեր՝ և բնութեան հրճուանքը ամբողջանում ու լրանում է մարդկային ուրախութեամբ: Գիւղի փողոցներում և հրապարակներում խոնուում են հազարաւոր նորագգեստ և ուրախ մարդիկ՝ գիւղական ժողովրդի բոլոր խաւերից:

Ինչ պիտի լինի եկեղեցու դերը. արդեօք անք խփել կատարւող իրողութեան առաջ և անցնել անտարբեր, առանց հետաքրքրուելու թէ՛ ինչ է կատարւում դուրսը: Բայց ինչ կլինի հետևանքը, եթէ ոչ այն, որ ժողովրդական կեանքի մի մասը աստուածային խօսքի ազդեցութիւնից դուրս կմնայ: Սխալ կլինէր, եթէ եկեղեցին այդպէս վարուէր: Այն՝ ինչ որ մեր ժողովրդի կանքում գեր է խաղում, պէտք է արծարծուի նաև այստեղ՝ Տիրոջ տան մէջ և լուսաբանուի աւետարանական լուսով: Այս է պատճառը, որ այսօր պիտի խօսեմ ժողովրդական տօների և նրանց նշանակութեան մասին՝ մեզ՝ քրիստոնեաներիս համար:

Ինչ էք կարծում. կարծում էք, որ եկեղեցու բեմից պիտի պախարակեմ ժողովրդական տօներն ու հանդէսները. ոչ երբէք: Գիտեմ, թէ ինչպիսի տղեղ ու անցանկալի տեսարաններ են տեղի ունենում այստեղ, բայց և այնպէս՝

հետու եմ ժողովրդական այդ տօները պախարակելու գազափարից: Ես սիրում եմ այդ տօները, հաճոյքով նայում եմ այն խմբուած մարդոց վրայ, որոնք վայելել զխաեն աստուածային մեծ պարգէր՝ կեանքը: Ինձ մի վատաբանէք, ես առաջնորդում եմ Փրկչի օրինակով. Յիսուս իւր հրապարակային գործունէութեան հէնց սկզբում, մասնակցում է հարսանեաց հանդէսի, և չի էլ մտածում լրջութեամբ ու մթաղնաց դէմքով ուրիշների ուրախ տրամադրութիւնը խախտել, այլ ընդհակառակը, ամեն ջանք գործ է դնում, նրանց ուրախ տրամադրութիւնը պահպանելու:

Մենք տեսնում ենք նրան յաճախ մասնակցելիս ուրախ սեղանների և ընտանեկան ու ժողովրդական հանդէսների: Նա իւր կեանքով նման չէր իւր նախորդին. Յովհաննէս Մկրտիչը խոյս էր ապիս ախարհից և այնտեղ կատարուածները համարում էր մեղք, այնինչ Յիսուս հաճոյքով մասնակցում էր աշխարհի թէ՛ վշտերին և թէ՛ ուրախութիւններին: Նա ծիծաղով պատմում էր, որ մարդիկ իրեն համարում էին՝ «այդ կերող և արբեցող, բարեկամ մաքսաւորաց և մեղաւորաց»:

Շատ հետու եմ ժողովրդական տօները մերժելու և պախարակելու մտքից. ընդհակառակը մեծ նշանակութիւն եմ տալիս նրանց: Ես կարծում եմ, որ իւրաքանչիւր շինարար ընտանիք չի թողնի, որ տօները աննշմարելի անցնեն ընտանիքի անդամների համար: Չէ՞ որ նրանք տալիս են ընտանեկան կեանքին առանձին փայլ. չէ՞ որ նրանք ընտանիքի անդամների մէջ մտցնում են մտերմական յարաբերութիւն և ուրախ տրամադրութիւն ստեղծում այնտեղ. չէ՞ որ նրանք փոխադարձաբար կապում են ծնողաց և որդոց սրտերը: Ահա այն հոգին, որ պիտի իշխէ քրիստոնեայ ընտանիքի մէջ:

Այն՝ ինչ որ լաւ է ընտանիքի համար, ցանկալի է նաև համայնքի համար: Տօները՝ եթէ նրանք լաւ կազմա-

կերպուած են, անգնահատելի են նաև համայնական կեանքի համար: Նրանք ընդհատում են մեր ամենօրեայ կեանքի միակերպութիւնը, մի ուրախ ժամ, մի ուրախ օր խիստ պատշաճում է մեր տանջանքներին և նեղութիւններին, որ կեանքը անխուսափելիօրէն պատրաստում է մեզ համար. նա ներզաշնակութիւն է մայնում կեանքի մէջ:

Չնչին ու կարճատև ուրախութիւնը բազասան է շատ շատ վերքերի, դոնէ մի կարճ ժամանակ մեր հոգսերը, որոնք ծանրանում են մեր սրտի վրայ, դէն ենք ձգում: Այն հակառակութիւնները, որոնք բաժանում են մարդոց՝ մոռացութեան են արւում. գոյութեան կուսի հարցը լուծւում է առժամանակ. մարդկային շահերը, որոնք միշտ մարդոց գինում են միմեանց դէմ, կորցնում են իրենց ոյժը, և մարդիկ հաշտութեան ձեռք են մեկնում միմեանց ու ամենքը աշխատում են ընդհանուր ուրախութիւնը բարձրացնել ու զօրացնել: Ո՛չ, ժողովրդական աօները թանգարժէք են և մենք կամենում ենք, որ նրանք տեական լինին, որովհետև ճանաչում ենք նրանց գոյութեան իրաւունքը: Նրանք դեռ ևս հնացած չեն մեր կեանքի համար, դեռ ևս ժամանակը չէ նրանց զգրոց նետելու:

Բայց դուք կարող էք ժողովրդական աօները մասին ձեր յիշողութիւնից հազարաւոր պատմութիւններ պատմել, որ լսելն անգամ դուցէ ամօթ լինի ինձ, կամ տեսարաններ նկարագրել՝ որոնցից ամեն մի մաքուր հոգի երես պիտի շրջէ: Տեսած չես երբէք, կարող էք հարցնել ինձ, թէ ինչպէս այս աօներին տեղի են ունենում ամեն շափ ու սահման անցած տեսարաններ, որոնք մոլորեցնում են ամեն թուլկամ և թեթևամիտ երիտասարդի. ինչպիսի մեծամեծ ծախսեր են լինում ուրախութեան և խրախճանքի վրայ, ինչպիսի ըարի անուաններ յաւիտեան ոչնչանում են այստեղ. ինչպէս մատաղ սրտերի մէջ թոյնի կաթիլներ են թափւում: Հասկանալի է նրանց հետեանքները. հետեանք-

ներ, որոնց մասին շատ բան կարող են մեզ պատմել գրաւատներն ու աղքատանոցները, գատաստանատներն ու բանդերը:

Մի կարճատև խրախճանք, բայց երկարատև թշուառութիւններ—անա յաճախ վախճանը մեր խրախճանքների, մեր ուրախ երգերի և ապերի: Ո՛րքան մարդիկ զբաւ են դնում իրենց տան ամենակարեւոր իրեղէնները աօներ կատարելու համար. սրբան մարդիկ իրենց վերջին լուծման ծախսում են այնտեղ և ապա քաղցի ճանկն ընկնում՝ թէ իրենք և թէ իրենց զաւակները:

Այդ բոլորը մեծ չարիք է, որ տեղի ունենալու չէ. ինչպէս կարող է քրիստոնէական ժողովրդական աօներին այսպիսի երեւոյթներ տեղի ունենալ: Բայց մի մոռանաք, որ այդ խեղճերը իրենց ամբողջ կեանքում նստում են մութ և խոնաւ ծակերի մէջ, որոնք արժանի չեն մարդկային բնակարան կոչուելու. մի մոռանաք, որ նրանց ամբողջ կեանքը ազիպորմ արտասուքների մի ծով է, որոնց օրերը անցնում են գատարկ ու տխուր. աւելի ազնիւ և մաքուր՝ գուարճութիւնների նուիրելու և հաճոյք ստանալու ընդունակ չեն: Եւ երբ գալիս են աօնի օրերը. նրանք տեսնում են ամբոխի շփնդն ու բազմատեսակ ազազակազ գուարճութիւնները, խելակորոյս անձնատուր են լինում և նետում են գուարճութեանց յորձանքի մէջ՝ գոնէ քանի մի ժամ իրենց թշուառ վիճակը մոռնալու համար: Ո՛չ որ ձեզնից դուցէ ընդունակ չէ այս չարիքը ողբալու, ինչպէս ևս, բայց ոչ նրանց արածը, այլ որ նրանք այդպէս մեծցել ու դաստիարակուել են, որ այլապէս գործել անկարող են, «միթէ՞ հնար ինչ իցէ՞ ՚ի փշոց խաղող և ՚ի տատասկէ թուզ քաղել» հարցնում է Տէրը: Հարցնում եմ ձեզ, պատասխանեցէք, ո՞վ է մեղաւորը, որ նրանք այդպէս են մեծցել. մենք, մենք ենք մեղաւորը, որ քրիստոնէայ անուն ենք կրում, բայց քրիստոնէական

հոգու հիւլէն անգամ պակասում է մեջերս. մենք՝ որ ամենօր տեսնում ենք՝ թէ ինչպէս մեր աչքերի առաջ երեսխաներ են մեծանում ամենաթշուառ անփութութեան մասնուած. և անսխալ հանդիսատես լինում. մենք՝ քրիստոնէաներս պէտք է մեզ մեղադրենք, որ քրիստոնէավայել կեանք չենք վարում, սպէս զի մեզ նայողները յարգանք զգան, ակնածեն և հեռանան մեզ:

Մենք որ կոչուած ենք երկրի ազը, աշխարհի լոյսը լինելու, է՞նք իրօք. եթէ մեր համայնական կեանքում մեր տիրոջ հոգին, ճշմարտութեան հոգին կենդանի լինէր՝ չէին կարող տեղի ունենալ այնպիսի դէպքեր, որոնց համար ստիպուած լինէինք մինչև ականջներս կարմրել: Այլ այդ տօները կլինէին մեր խեղճ և ընկճուած ժողովրդի համար զուարթարար և կենդանացուցիչ միջոցներ. նրանք կաղնուացնէին ժողովրդի բարքն ու վարքը, կարծարծէին ու կզարգացնէին բարու, գեղեցկի և ընկերականութեան գաղափարը. նրանք կըլինէին ճշմարիտ եզբայրական զգացմունքների մակարդ, որով մեծ ու փոքր, հարուստ և աղքատ միմեանց ձեռք կմեկնէին, կըսովորէին իբրև ամբողջութեան մասեր և ցեղակիցներ ճանաչել միմեանց և փոխադարձաբար միմեանց հասկանալ, յարգել և սիրել: Նրանք պիտի լինին ճշմարիտ ժողովրդական տօներ, որին պարտական են մասնակցել ամենքը, բայց առանց զեղխութեան ու շռայլութեան:

Ինչո՞ւ չենք գործ գնում ամեն հար մեր ժողովրդական տօներն ու հանգէսները դարձնել այն՝ ինչ պիտի լինին իրապէս. ինչո՞ւ չենք խորհում այն մասին՝ թէ ինչպէ՞ս տօները և կազմակերպենք, որ նպատակաշարմար լինին. ինչո՞ւ մեզնից իւրաքանչիւրը չի նպաստում իւր ուխտան նրա բարձրացման և լուսացմանը: Իսկական տօները, պարի և երգի օրերը հանգիստ պիտի տան մեր աշխատաւոր մարմին. հանգիստ, որ ընդունակ է դարձ-

նում նոր աշխատանքի, որ մեզ նոր ոյժ է տալիս, նոր եռանդ և նոր կենսաւերաթուփիւն ներշնչում:

Ահա տօների բուն նպատակը: Այս է նաև տիրոջ կամքը. նա ստիպում է մեզ ամեն օր աշխատանքը թողնել՝ զիշեր ու քուն բերելով մեր արտևանունքներին. նա տուել է նաև մեզ կիրակի, որ շաբաթուայ մէջ մի օր աշխատանքի բեռից և տանջանքից մարդիկ ազատ լինին: Ուստի որպէս Աստուածային պարգև պիտի ընդունենք տօները, որից օգտուելու եղանակի նկատմամբ պատասխանատու ենք Բարձրեայի առաջ: Սահմանի մէջ և չափով օգտուել. անա շնորքը—անսահման և անչափ զուարճութիւնները քայքայում են մեր նեարդերը, թուլացնում են մեր ոյժերը, մեռցնում ու թաղում են մեր եռանդը, և յաջորդ օրուայ առաւօտեան արևը կտեսնէ մեզ աշխատանքի ուշացած և թալկացած, փոխանակ մեզ կրկնակի ուրախ և զուարթ աշխատելիս տեսնելու:

Ուխտաւոր եղբայրներ, ձեր ուշադրութիւնը հրաւիրում եմ Տիրոջ վերայ, որ միշտ իւր սրտում կրում էր իւր հօր կամքը. և այդ էր պատճառը, ուր որ էլ լինէր՝ նա չէր իջնում, այլ բարձրացնում էր ընկածին: Ուխտենք կրել նրա սիրտը մեր կրծքում և Յիսուսի ճշմարիտ հոգին կառաջնորդէ մեզ կազմակերպել մեր տօները յանուն գեղեցկի, բարւոյ և ճշմարտի: Այն ժամանակ մեր ժողովրդական հանդէսները չեն առաջնորդի մեզ դէպի կորուստ, դէպի անդունդ, այլ դէպի փրկութիւն, դէպի յաւիտենականութիւն և «շնորք Տեառն մերոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի եղիցի ընդ մեզ. ամէն»:



«Ելանեմ ես առ հայրն իմ՝ և առ հայր ձեր և Աստուածն իմ և Աստուած ձեր» (Յոզհ. Ի 17):

Մեր հոգու տեսութեան առաջ կենդանացնում են այս խօսքերը Փրկչի համբարձման յափշտակիչ պատկերը: Որքան շնորհալի նկարիչներ յափշտակուել են նրանով, որքան Աստուածապարզ և շնորքի տէր գեղարուեստագետների ձեռքեր կտաւի վերայ նկարել են Յիսուսի համբարձման խորհրդաւոր պատկերը և դիւթել գիտողներին:

Յիսուս կանգնած է ձիթենեաց սարի կատարին աշակերաններով շրջապատուած, որի ստորոտում՝ փոքր ինչ առաջ, հոգեկան ծանր մաքառման մէջ էր. այժմ մաքառումը անցել է, տանջանքների կնճիռները սրբուել են նրա պայծառակերպեալ դէմքից: Մի անգամ ես, և այս վերջին անգամ, տարածում է նա իւր ձեռները՝ օրհնելով աշակերտներին. և ապա սպասաւոր հրեշտակներ խմբերով, ամպերի հովանու տակ՝ վեր է սլանում իւր փառքի գահը բազմելու և կատարեալ երջանկութեան վայրում հանգիստ առնելու, ընդ միշտ բաժանուելով աշխարհի հոգսերից, վշտերից ու մաքառումներից:

Նա, որ՝ իբրև անգոր էակ, իւր թշնամիների կրքին գոհ դարձաւ, որի կեանքն ու գործերը ծաղրի ենթարկուեցան՝ նա է այժմ աշխարհի հօրապոյնը, որի առաջ աշխարհի բոլոր հօրները խոնարհոււմ են և երկրպագում:

Նա որ երբեմն աշխարհի վշտակիցների և բեռնաւոր-

ների հետ երկրի դառնութիւններն էր ճաշակում, նա այժմ վայելում է երկնային խաղաղութեան ու երջանկութեան քաղցրութիւնը, և՛ իբրև անսպառ բախտի ու երջանկութեան աղբիւր, ընդունակ է մեր վէրքերն ու ցաւերը բուժելու, մեր ալէկոծ հոգուն, դժբախտ կեանքին՝ խաղաղութիւն ու երջանկութիւն շնորհելու:

Փրկչի համբարձման պատկերը ծնում է մեր մէջ նոր պահանջ. մենք զգում ենք, որ նոր երկնքի ենք կարօտ, վերանորոգիչ և սղատարար երկնքի, որ երկիրը մաքրէ, սրբէ ու աղնուացնէ, և այս դժուար երկիրը դրախտ դարձնէ:

— Ինչպէս. միթէ երկիրը մեզ չի գոհացնում. միթէ նա ընդունակ չէ՞ մեր սիրտը շէնցնելու, մեզ երջանիկ դարձնելու. միթէ նա մեր բոլոր ոյժերը չի՞ բանեցնում և մեր միտքն ու զգայարանքները չի՞ զբաղեցնում. միթէ նա զուրկ է այն հրաշալի ոյժերից և թանկագին գոհարներից, որոնք երկիրը դրախտ են դարձնում. և միթէ յանցանք չէ՞ բողոքել այն գեղեցիկ ու նորակենդան երկրի դէմ և երես շրջելով նրանից հայեացքներս ուղղել երկրնքին:

Իհարկէ ոչ. ինչպէս կարող է սահմանափակ երկիրը իւր ունեցածով՝ գոհացնել մարդկային խորթափանց, լայնաթուիչ և պահանջլիտ հոգուն: Ինչպէս կարող է անցաւոր երկիրը, ուր հաստատուն ոչինչ չկայ, ուր ամեն ինչ ենթակայ է փոփոխականութեան, ուր ամեն ինչ թաչում գնում է, որի հետ մեր հոգին կապուած է, որ թանգ է մեր սրտին՝ բաւարարել մեր հոգուն, որ յաւիտենական ապաստան է որոնում. այդ մնայուն ապաստանը կարող է մեզ շնորհել միայն յաւիտենական երկրնքը:

Մենք կարօտ ենք երկնքի, մանաւանդ մեր վշտերի և ցաւերի ժամանակ, որոնցով լի է աշխարհը. նոքա մեզ

դրդում են որոնել խաղաղութեան վայրեր, ուր մեր ար-
ցունքները ցամքէին, մեր վէրքերը բուժուէին, մեր սըր-
տերը բախտի խնդումով լցուէին:

Երբ սպառնալից սև ամպերը ցրում են և կրկին
երևում է պայծառ ու կապուտակ երկինքը՝ երկիրն էլ է
ժպտում իւր բոլոր արարածներով: Կայ արդեօք մի այդ-
պիսի երկինք՝ նաև մարդկային հոգու համար. երկինք, որ
լոյս է բերում խաւար սրտերին, յոյս ներշնչում թուլա-
ցած հոգիներին, վշտի փոխարէն ուրախութիւն շնորհում,
մահուան ու սուգի փոխարէն՝ կեանք և օրհնութիւն: Ահա
այդ երկինքն է բերում Յիսուս: Եւ ո՞վ աւելի, քան նա
կուտել է բախտի անյաջողութիւնների դէմ. ո՞վ աւելի,
քան նա համբերել ու տանջուել է երկրի վերայ. սա-
կայն միշտ կապուած է եղել վերին ոյժի հետ և նորա
կեանքն ու մահը ապացուցել են աշխարհին՝ թէ կայ մի
ոյժ, որ մաքառում է շարի դէմ և թոյլ չի տալիս որ
բարին ոչնչանայ երկրի վերայ. և նորա կեանքը ապացու-
ցել է աշխարհին՝ թէ ով ապրում է առաջնորդ ունենալով
իրաւունք ու արդարութիւն, ո՞վ ընթանում է սիրոյ վար-
դապետի շաւղով՝ նա գգում է որ այդ ոյժը անբաժան է
նաև իրենից. նա համոզում է, որ արդարութիւնը, իրա-
ւունքն ու բարութիւնը վերին աշխարհի դաշնակիցներն
են և երկրի յաղթողները:

Մենք կարօտում ենք մի այնպիսի երկինքի, ուր ապ-
րում է Յիսուս, որ սովորեցրեց մեզ՝ թէ սրն է ճշմարիտ
երկինքը, որ մեզ համար երկինքը պահանջ դարձրեց,
առանց որի ապրել դժուարանում ենք: Նա դարձրեց եր-
կինքը լոյսի և սիրոյ աղբիւր, որ յորդառատ թափուում է
մեր կեանքի մէջ. նրանով ճանաչեցինք՝ թէ երկինքն է
մեր խաղաղութեան և երջանկութեան աղբիւրը և մեր
յոյսերի ապաւէնը՝ և՛ կեանքի ընթացքում, և՛ մահու
ժամին:

Երկինքը մի այլ և աւելի բարձր աշխարհ է, քան
երկիրը, բայց ո՞չ օտար աշխարհ. նորա բաժանուած չեն
անդունդով. մենք կարօտում ենք երկինքի՝ ոչ թէ երկրային
երջանկութիւնն ու հոգսերը որպէս ցնցոտի մի կողմ նե-
տելու համար, այլ մեր պարտքը երկրի վերայ կատարած
լինելու և լսելու տիրոջից թէ ազնիւ, բարի և հաւատա-
քիմ ծառայ, դու որ քչի մէջ հաւատարիմ ես, շատի վե-
րայ կկարգեմ քեզ:

Երկինք և երկիր. ահա այն աշխարհը, ուր մարդ
պիտի ապրի. երկիրը առանց երկինքի կդառնայ մի վայր,
որ մարդ՝ օգի պակասութեան պատճառով՝ կդժուարանայ
շնչել. ուր մարդ կզգայ գերեզմանային պաղութիւն, ան-
մրխիթար դատարկութիւն և ողորմելի վիճակ:


Ով աւելի քան դու, հայ ժողովուրդ, այսօր կարօ-
տում ես նոր երկինքի, որ ներշնչէ քեզ յոյս քո փայլուն
ապագայի համար. դու որ իբրև վաճառական գնել ես ու-
զում ազատութիւնդ փողով և ո՞չ առաքինութեամբ:

Ով աւելի քան դուք, հայ եղբայրներ, կարօտում էք
նոր երկինքի, որ ներշնչէ ձեզ սէր՝ սիրելու ոչ քո անձը
միայն, ոչ քո եսը, այլ և քո ընկերին, քո եղբորը, քո
ազգին, որպէս զի աւետարանի անմիա հարստի նման չե-
րազես՝ թէ քո հարստութիւնը քո երջանկութեան աղբիւր
կարող է լինել, որպէս զի անմիա հարստի նման չասես
անձիդ՝ «կեր, արբ և ուրախ լեր» և ստիպուած չլինես լսե-
լու «անմիա, այս զիչեր հոգիդ կառնուի՝ ժողովածդ ինչ
պիտի անես»:

Ո՞վ աւելի քան դու, հայ ժողովուրդ, կարօտում ես
այսօր նոր երկինքի, որ զարթեցնէ քո անձնուիրութեան
հոգին և առաջնորդէ քեզ անձնուիրութեան ու գոհողու-
թեան, որ դատաստանիդ օրը ստիպուած չլինես արգա-
ջանալու ասելով՝ Տէր, ե՞րբ տեսանք քեզ քաղցած և կե-
րակուր չտուինք . . . այլ արժանի լինիս լսելու տիրոջ

խրախուսիչ խօսքը՝ թէ ժառանգիր հօրս պատրաստած
օթևանները, որովհետև քաղցած էի՝ կերակրեցիր, ծարաւ
էի՝ արբուցիր . . .

Հայ մարդ, սիւ աւելի՛ քան դու կարօտում ես նոր
երկնքի, որ մտրակէ քո քար անասրբերութիւնն ու քար-
սրբութիւնը այսօրուայ մեր եղբայրների վիճակի առաջ:
Աշխարհ թնդաց Վասպուրականի աւերի, կրակի, կոտո-
րածի գոյժից. Վանի զեղեցիկ այգեստանները մօխիր
դարձան, շրջակայ գիւղերը գեանին հաւասարուեցան,
խեղճ կանայք և երեսայք կրակի մէջ խորովեցան, երի-
տասարդների արեամբ երկիրը յաղեցաւ և արիւնը լճա-
ցաւ: Այդ վայրերում ծաղիկներ կբուսնեն, որոնք կբողո-
քեն արարչին՝ կատարուած անարգարութեան դէմ, բայց
աւելի շատ մեր՝ իրենց հարազատների դէմ՝ մեր անտար-
բերութեան ու քարսրտութեան համար: Նրա արեան
ձայնը Աբէլի արեան ձայնի նման կբողոքէ Ամենակալին
և մեր պատասխանը՝ Կայէնի պատասխանի նման՝ չի գո-
հացնի տիրոջը: Այդ երկիրը անէծքի վայր կգառնայ
օտարի համար, նա մեզ է պատկանում և մեզ էլ կպատ-
կանի, եթէ մենք մեր անձնուիրութեամբ և աշխատանքով
մեր պապերի ժառանգութիւնը պաշտպանենք: Համբար-
ձեալ Յիսուս, մեզ էլ խոստացիր միսիթարիչ հողիդ ու-
ղարկել, որ փարատէ մեր սրտի կասկածները, որ լուսա-
ւորէ մեր միտքը, որ տաքացնէ մեր սիրտը՝ ըմբռնելու
հայի ներկայ ճակատագիրը, սիրելու մեր հայրենիքն ու
ժողովուրդը, զոհելու նրան մեր արիւնը, աշխատանքը
և ամեն ինչ, որպէս զի հայի երկիրն էլ հայի երկնքի հետ
մի ներգաշնակ միութիւն կազմէ և գառնայ մշտական
խաղաղութեան ու երջանկութեան վայր. ամէն:



«Ամբարձեալ գձեոս իւր օրհնեաց
գնոսս . . . և վերանայր յերկինս: Եւ
նոցա երկիր պագեալ նմա՝ դարձաւ
յերուսաղէմ ուրախութեամբ մեծաւ»
(Ղուկ. ԻԳ. 50):

Ամեն անգամ, երբ կանգնում ենք Աստուծոյ տաճա-
րում և ուշի ուշով ականջ դնում կարգացուած զրքերին
ու աւետարաններին, արտասանուած աղօթքներին և եր-
գուած գողտրիկ երգերին՝ մեր առաջ պատկերանում է
նա, որին ուխտել ենք ծննդեան տւագանից աշակերտել:
Եւ ամեն անգամ ծառանում է մեր առաջ իւրատեսակ
փայլով և զբաւշութեամբ:

Վերևը յիշատակուած քանի մի խօսքը, որ նուիրել
է Ղուկաս աւետարանիչը Փրկչին, տալիս է մեզ Նրա
համբարձման պատկերը: Քանի մի խօսք միայն, բայց
սրբան խորիմաստ, սրբան պատկերաւոր և սրբան հա-
րուստ զգացմունքներով:

«Ամբարձեալ գձեոս իւր օրհնեաց գնոսս»: Փրկիչը
օրհնելով բաժանուեցաւ իւրայիններից. Նա տարաւ նոցա
Բեթանիա, ձեռները երկինք պարզեց, օրհնեց նոցա և
լուսեղէն ամպով երկինք համբարձաւ. և այսպէս օրհնու-
թեամբ կնքեց Նա իւր երկրային առաքելութիւնը:

Օրհնութիւնը նրա ամբողջ երկրային կեանքի նպա-
տակն է եղել. Ձիթենեաց սարի շուրջը, սրտեղից երկինք
համբարձաւ, որբան վայրեր կան՝ Փրկչի օրհնութեան

կենդանի վիաներ. որքան յուշարձաններ կան կանգնած՝ Նորա օրհնութեան և սիրոյ կենդանի քարոզիչներ: Ահա Բեթանիան, ուր նա որպէս կեանքի իշխան և տէր մտաւ իւր բարեկամ Ղազարոսի տունը՝ արտասուքը ժպտի և մահը կեանքի փոխեց: Ահա Երուսաղէմը, որի տաճարում ու փողոցներում Նորա օրհնութեան խօսքերն են հնչել միշտ: Ահա Գեթսեմանին և Գողգոթան, մէկը՝ Նորա մահուան սառը քրտինքով, միւսը՝ Նորա տաք արեամբ օրհնուած վայրեր: Տէր իմ, ի՜նչ խորհրդաւոր և ի՜նչ ծանր բողբէ էր Յիսուսի և Նորա աշակերտների բաժանման րոպէն, քանի որ ամենուրեք նոցա հայեացքը պիտի ընկնէր այդ օրհնուած վայրերի վերայ, որոնք անցեալի քաղցր յուշեր պիտի յուզէին նոցա մէջ. վայրեր՝ որոնք Նորա հողու միութեան օգակներն էին դարձել:

Ահա այս օրհնուած վայրերն էին, որ Նորա անշաման բողբէին՝ վերջին օրհնութեան կնքով զբոշմուեցան, և մեր խղճուկ ու անիծուած երկիրը, որի վերայ դարերով ծանրացել էր մեր նախապապի մեղքի հետեանք՝ անէծքը, Փրկչի օրհնութեամբ ազատուեցաւ, նորա թափած արեամբ սրբուեցաւ մեզբից:

Ձիթենեաց սարի օրհնութեամբ կնքեց Յիսուս իւր եկրային առաքելութիւնը, բայց և սկիզբ դրաւ երկնային օրհնութեան և երկինք համբարձաւ:

Իսկ աշակերտները.

— «Գարձան յերուսաղէմ ուրախութեամբ մեծաւ՝ ասում է աւետարանիչը: Միթէ հաճելի չէր նոցա իրենց վարդապետի հետ մտնել երկնային մշտնջենաւոր հայրենիքը, կամ թէ հիւզեր կանգնել Ձիթենեաց սարի վերայ, ինչպէս երբեմն ցանկացել էր Պետրոս պայծառակերպութեան օրը Թաբորի վերայ՝ շերմեռանդ երկիւղածութեամբ ցմահ սպասաւորելու նրան: Գուցէ, բայց ոչ, զիտակցութիւնը այլ պատուէր էր տալիս. նորա Երուսաղէմ են դառնում,

ապականութեամբ և մեղքերով լի մի քաղաք, որ իրենց վարդապետին խաչին գամեց. կորստեան շէմքին կանգնած մի քաղաք, որի վերայ գալիք դատաստանի որոտալից ամպերը կուտակուել և զուշակում են նորա կորուստը:

Նորա դառնում են Ձիթենեաց սարից Երուսաղէմ, երկնքի շէմքից՝ դժոխքի բերանը, և այն՝ ոչ ահամայ, այլ «ուրախութեամբ մեծաւ»: Գիտէ՞ք ինչու—իրենց վարդապետի վերջին պատուէրը կատարելով՝ «և դուք նստաւոր է թաղաքիս յերուսաղէմ, մինչև զգենուցուք գորութիւն ի բարձանց»: Ըմբռնել էին նորա իրենց առաքելական կոչումը, որ պարտք էր դնում նոցա վերայ շարունակել մեծ վարդապետի սկսած գործը՝ բանին քարոզիչ լինել և արքայութեան տարածողը Երուսաղէմից մինչև ի սիւրուս աշխարհի: Նորա ըմբռնել էին, որ երկնքի համար դեռ պատրաստ չէին, յողթական պսակը կրելու դեռ արժանի չէին. նորա կարօտում էին երկնային գօրութեան՝ հողով սրբուելու, աշխարհի տանջանքներով կատարելագործուելու և ապա թէ Տիրոջ կոչին արժանանալու: Գարձան Երուսաղէմ, ի՜նչան աշխատանքի դաշտը և կանգնեցին իրենց պաշտօնավայրերում:

Միջելիք, յաճախ մեզ հետ էլ է նոյնը պատահում, յաճախ մենք էլ դժուարանում ենք Ձիթենեաց սարից Երուսաղէմ դառնալ, Թաբորից ազմկայտյոյզ աշխարհը ի՜նչու Բայց Էրբ. երբ մենք սիրով և հաւատով նայում ենք համբարձեալ Փրկչին, երբ մենք յամիշտակում ենք մեր մտքերով և մեր շուրջը եղած ամբողջ աշխարհը ազմի մէջ թաղուած ենք պատկերացնում. երբ մենք նկատում ենք աշխարհի շարութիւնը, մարդու բմբոստ և անասուած հողին, որ գնալով իշխում է երկրին. կամ երբ մենք նկատում ենք մրրկաբեր հողմեր, սպառնալից մութամպեր, որոնք կախում են մեր հորիզոնի, մեր ժողովրդի վերայ՝ այն ժամանակ սաղմոսերգուի նման աղանու

թևեր ենք խնդրում, որ քարաժայռի ծերպի մէջ մի առ ժամանակ կձկուենք, մինչև որ փոթորիկն անցնի:

Ճիշդ այդ ժամանակ, սիրելիք, համբարձեալ Փիրկիչը նոյն խօսքերը մեզ է ուղղում. «Ի դուք նստարուք . . .»: Եւ յիրաւի, եթէ դիտենք մեզ և նայենք մեր կեանքի առաջնորդին՝ կիսաստովանենք, որ դեռ շատ բան է պակասում մեզ վերին սրբավայրը մտնելու: Մենք կհամոզուենք, եղբայրներ, որ պէտք է մեզ իջնել կարծեցեալ բարձունքից նստել Երուսաղէմում և գոհանալ Ասածուն, որ մեզ օրեր է տալիս աշխատելու՝ մեր հոգին մաքրելու և յաւիտենական հայրենիքի համար պատրաստուելու: Ուստի, սիրելիք, ձեռքերդ արօրին աշխատեցէք օրն ի բուն՝ մինչև Տէրը կոչէ:

Երկիրը գուարճուկեան պարտէզ չէ, որ միայն հաճոյքով անցընենք մեր օրերը. և ոչ էլ անապատ, որ յուսահատութեան դերի գառնանք և մահուան դիրկը նետուենք, այլ աշխատավայր, ուր սերմեր պիտի ցանենք ապագայ ուրախ հունձի յուսով: Եւ ուր մեր մեծ վարդապետը՝ մեր կեանքի կարապետը մեզ համար դժուարագոյն աշխատանքը կատարել է, ուր նորա առաքեալները հաւատարմութեամբ աշխատել են և մահ ժառանգել, ուր շատ ազնիւ հոգիներ կեանքի ծանր աշխատանքն ու տապը տարել են: Այնտեղ, մենք էլ, եղբայրներ, արօրից ձեռք չքաշենք և մեր վերայ զրուած աշխատանքը կատարենք, որ առանց ամօթի տիրոջ երեսը նայել կարողանանք:

Երկիրը վերին սրբավայրի նախագաւիթն է: Առաքեալները դարձան Երուսաղէմ, բայց ոչ իբրև քաղաքացիներ, այլ իբրև հիւրեր և օտարականներ: Մեծազօրդ քաղաքի փարթամութիւնն ու փառքը չէր կարող նոցա գրաւել, նա մեռած էր և դատարկ, որովհետև տէրը չըկար. նա եղեռնատեղի էր, որովհետև սուրբի արեան հոսելու պատճառ էր դարձել: Եւ այդ էր պատճառը, որ

աւետարանիչը ասում է՝ թէ՛ «էին հանապաղ ի տաճարին, գովէին և օրհնէին զԱստուած»: Միայն Աստուծոյ տունն էր նոցա մխիթարութեան վայրը. միայն այնտեղ, հեռու աշխարհի աղմուկից, հոգով միանում էին իրենց համբարձեալ վարդապետի հետ, միայն այնտեղ ճաշակում էին վերին սրբավայրի քաղցրութիւնը, զի այն նախագաւիթն էր սրբավայրի:

Այսպէս էլ ամեն մէկը մեզնից հանդիստ չունի այս աշխարհում, եթէ Յիսուսի աշակերտ է: Այս աշխարհը մեր մնայուն հայրենիքը չէ. այստեղ մենք զգում ենք մեր իսկական հայրենիքի կարօտն ու վիշտը:

Ո՛չ միայն ձեզ եմ հարցնում՝ աշխարհի վշտերով ծանրաբեռնուածներ, սևազգեստ վիրաւորներ, աղի արցունք թափող կարմրաչեայ լալկաններ, թէ արդեօք չէք փափաքում արտասուքի այս հովտից լաւագոյն տեղ գնալ: Ո՛չ, ես հարցնում եմ ձեզ՝ աշխարհի երջանիկներդ, արդեօք հանգիստ էք զգում ձեզ այստեղ, արդեօք ձեր դերագոյն երջանկութեան ժամին ձեր հոգին վիշտ չի՞ զգում և չի՞ խոստովանում սորա ունայնութիւնը. արդեօք ձեր գերագոյն ուրախութեան ժամին, մի բաց տեղ չի՞ մնում ձեր սրտում, և ձեր հոգին չի՞ որոնում մի այլ բախտ, որ այս աշխարհը տալ չի կարող:


Ո՛չ միայն ձեզ եմ կոչում իբրև վկայ, որ կրում էք ձեր մէջ աստուածային հոգու մի փոքրիկ հիւլէ, որին չի կարող զոհացում տալ և յագեցնել աշխարհը իւր աշխարհի բարիքներով և հաճոյքներով. այլ և ձեզ եմ դիմում, մտեղէն էակներ, որ միայն մարմնով էք ապրում, մի՞թէ չէք խոստովանի, որ աշխարհի բոլոր գուարճութիւնները չեն զոհացնում ձեզ կատարելապէս, և որ ձեր սրտում մնում է զժգոն մի անկիւն, որ խաղաղութեան և ներքին ամփոփման ըոպէներին բացում է ձեր քօղարկուած վիշտը, ձեր հոգու ներքին աղքատութիւնը լրացնում է ու հրապարա-

կում: Հաշիւ տուէք և կխոստովանիք, որ մնայուն քաղաք
չունենք մենք այստեղ, այլ երկնաքաղաքացիներ ենք՝ նա-
խագաւթում կանգնած:

Երանի՛ նոցա, որոնք զգում են հայրենիքի վիշտն ու
կարօտը, նորա կտեսնեն հայրենիք. կայ մի հայրենիք՝ հո-
գիների հայրենիք, ուր ամեն մի սուրբ փափաք՝ կյազե-
նայ, կեանքի իւրաքանչիւր առեղծուած՝ կլուծուի և երկրի
ամեն վիշտ՝ կբուժուի: Թող բանականութիւնը կասկածէ
և հետախուզէ՝ սակայն աստուածային յաւիտենական
խոստումները կմնան. թող թերահաւատութիւնը ծաղրէ,
նա ծաղրում է երկու հազար տարիէ ի վեր՝ բայց և
այնպէս մարդկային սրտից յաւիտենական հայրենիքի
վիշտն ու փափաքը վտարուած չէ և երբէք էլ չի վը-
տարուի: Թէ ո՛ւր է նա՝ ես չգիտեմ. ի՛նչ տեսք ունի՛ ես
չգիտեմ. երբ պիտի երթամ այնտեղ՝ ես չգիտեմ, բայց
որ նա կայ՝ այդ ես գիտեմ:

Խոստումը կայ՝ Աստուծոյ խօսքն է. կնիքը կայ՝
աստուածային հողին է մեր հողու մէջ. առաջնորդը կայ՝
համբարձեալ Փրկիչն է. «ուր ենն եմ, անդ և պաշտօ-
նեայն իմ եղիցի»:

Այն, սիրելիք, ամուր պահենք Փրկչի համբարձման
խոստումները. մեր պանդխտութեան վշտերի և ուրախու-
թեան ժամանակ՝ միշտ վառ պահենք մեր մէջ երկնային
հայրենիքի գաղափարը և շմուռնանք, որ նա նախագաւթի
է յաւիտենական սրբավայրի: Իսկ զու համբարձեալ Յիսուս,
հանիր մեր կրծքից մտեղէն սրտերը և դիր այնտեղ հո-
գեղէնը, որ քեզ ճանաչեն, քեզ առաջնորդ ունենան, և
այս աշխարհում հանգիստ հոգով ապրեն ու արժանանան
յաւիտենական հայրենիքի. Ամէն:



«Ես աղաչեցից զհայր, և այլ մխի-
թարիչ տացէ ձեզ. զի ընդ ձեզ բնա-
կեացէ ի յաւիտեան» (Յովհ. ԺԴ. 16):

Ի՛նչ քաղցր և մխիթարական խօսք է, որ լսում ենք
տիրոջ բերնից. մխիթարական մանաւանդ մեր ժամանակի
համար: Մենք կարօտում ենք մխիթարչի, որ լինի նեցուկ
մեր մաքառումներին, օգնական մեր կարիքներին, ամօրիչ
մեր ցաւերին: Սակայն ո՞վ է լինելու այդ մխիթարիչը:

Իարերից ի վեր շատ մխիթարիչներ է տեսել աշ-
խարհը, որոնք խոստացել են փրկութիւն և օգնութիւն.
ոմանք խորհրդով և դործով, ոմանք էլ հրով և սրով: Բայց
այդ բոլոր մխիթարիչներն էլ մինչև այսօր շատ քիչ բան
են կատարել, և աշխարհը մնացել է անմխիթար: Ո՛ւր է
ճշմարիտ մխիթարիչը: «Աղաչեցից զհայր, և այլ մխիթա-
րիչ տացէ ձեզ. զի ընդ ձեզ բնակեացէ ի յաւիտեան»
ասում է Փրկիչը: Նայիր, ո՞վ աշխարհ, անա ճշմարիտ
մխիթարիչը. ս. Հոգին է այդ մխիթարիչը, որ մարգկու-
թեան բարեկամը 1900 տարի առաջ խոստացել էր իւ-
րայիններին ուղարկել. և որ այսօր էլ Հոգեգալստեան
օրը խոստանում է տալ: Ահա մեր ժամանակի ճշմարիտ
մխիթարիչը: Բայց ի՛նչ է կամ ո՞վ է ս. Հոգին:

Ս. Հոգին ճշմարտութեան հոգին է, որի համար
ասում է Փրկիչը՝ թէ աշխարհը չի կարող նրան ընդու-
նել, որովհետև անընդունակ է ըմբռնելու: Նա մեր մաքի

համար շատ բարձր է և շատ լուսաւոր, նա աստուածային է:

Փաստերով խօսենք.

Երբ Յիսուս՝ երկրի վերայ ապրելիս քարոզում և գործում էր աստուածային հոգով՝ այն է ճշմարտութեան հոգով, աշխարհը ասում էր սատանայ կայ մէջը: Երբ առաքեաները հոգեգալստեան օրը՝ ս. Հոգով լցուած, աշխարհին նոր ճշմարտութիւն աւետեցին նոր լեզուներով՝ աշխարհը ծաղրեց նոցա ասելով՝ հարբած են:

Երբ Պօղոսը՝ աստուածային հոգով լցուած, ճշմարտութիւն քարոզեց՝ աշխարհը աղաղակեց՝ թէ Պօղոսը մոլեգնել է: Եւ ո՞վ այսօր աշխարհին ճշմարտութիւն քարոզէ՝ թո՞ղ հաստատ իմանայ, որ աշխարհը կամ չպիտի ըմբռնէ և կամ չարակամութեամբ խեղաթիւրէ, որովհետեւ նա ճշմարտութեան հոգին չի տեսնում: Աշխարհը ըմբռնում է այն՝ ինչ որ աչքով է տեսնում կամ ձեռքով շօշափում. նորա համար զգայարանական ըմբռնումներից դուրս ամեն ինչ «ի չարէն» է:

Աշխարհի այս թշնամութիւնը ճշմարտութեան թագաւորութեան դէմ ունի նաև մի այլ խոր պատճառ. նա ոչ միայն չի տեսնում, այլ նաև չի կամենում ճանաչել ճշմարտութեան հոգին, որպէս զի չպատժուի. նա երկընչում է նրանից ինչպէս գիշերային թևաւորները լուսաւոր ջահից, կամ ինչպէս հիւանդ մանուկը դառնահամ դեղից:

Եթէ այսօր՝ հոգեգալստեան օրը, ճշմարտութեան հոգին բերանը բանայ՝ ամեն տեղ թէ եկեղեցիներում և թէ ժողովարաններում, թէ աղքատիկ խրճիթներում և թէ փարթամ պալատներում և խօսէ մարդկային բոլոր դասակարգերի հետ վերլուծելով նոցա արարքները՝ պատիժը անխուսափելի կլինի նոցա համար. որովհետեւ ամբողջ աշխարհը ծիւում է անարդարութեան ծովում:

Եթէ այսօր ճշմարտութեան հոգին բերանը բանայ՝

ինչ կարող է ասել աշխարհին, եթէ ոչ դառն ճշմարտութիւններ, ճիշտ այնպէս, ինչպէս Պետրոսը քարոզեց Հոգեգալստեան օրը վերնատան առաջ համախմբուած ուսուսուոր ժողովրդին ասելով՝ «գիտացէ ամենայն տունդ խարայէլի, զի և տէր զնա՝ և օծեալ Աստուած արար, զայն Յիսուս՝ զոր դուքն խաչեցէք»:

Յանդիմանող ճշմարտութիւններ աշխարհը սիրով չի լսում և նոցա քարոզիչներին հաճութեամբ հալածում է: Նա աւելի սիրով ահանջ կղնէ կեղծ մխիթարիչներին, որոնք՝ փոխանակ պատժելու, փաղաքշում են, փոխանակ կշտամբելու՝ խոստումներ են շուայում, որոնք՝ պարտականութիւնների փոխարէն, իրաւունքների մասին են ճառում: Ա. խ, որքան շատ են այսպիսի կեղծ մխիթարիչներ, որոնք սպիտակը սև և սևը սպիտակ են ներկայացրել ու խաբել աշխարհին:

Այսօր էլ մեր ժամանակի շատ ժողովներում փոխանակ առաքելական ճշմարտախօս հոգու, իշխում է միայն աշխարհի խաբեբայ հոգին, որին խեղճ և մոլորուած ժողովուրդը «կեցցէներով» է դիմաւորում: Ողորմելի աշխարհ, բաւ է կերակրուես այդպիսի անարժէք կերակրով, բաւ է մխիթարուես կոյր առաջնորդներով. սիրող ու ահանջդ նուիրիր այլ մխիթարիչներին, ճշմարտութեան հոգուն, որ՝ ինչպէս վիրաւորում է, նոյնպէս և բժշկում, որ՝ ինչպէս յուսահատեցնում է, նոյնպէս և յուսադրում: Նա գալիս է վերևից և ապրում միայն երկիւղած սրտերում. նա կլինի աշխարհի ատելութեան և կեղծիքի հանդէպ ընդդիմադիր ոյժ, ժամանակի հոգուն հակադիր մի մնայուն ոյժ. նա Յիսուսի հոգին է, որ անփոփոխ է մնացել 1900 ձիգ տարիների ընթացքում, որ այսօր էլ նոյնն է, ինչ որ էր Հոգեգալստեան առաջին առաւօտը: Նա նման չէ ժամանակի հոգուն, որ այնպէս յաճախ և՛ գոյնն է փոխում և՛ խորիւր ձգում: Աշխարհի հոգին՝ ոյժերը լարեց,

դաւեր սարքեց Աստուծոյ հոգու գէմ՝ և խօսքով և գրչով և սրբով. բայց ի գուր: Միայն մարմինը խաչեց, իսկ աստուածային հոգին՝ ճշմարտութեան հոգին անկարող եղաւ շղթայելու և խաչին գամելու:

Ստեփանոսից սկսած՝ ճշմարտութեան շատ ազնիւ վկաներ մեռան դնացին, և կարծես Փրկչի եկեղեցին որբացած թողին. բայց ոչ. ճշմարտութեան հոգին չմեռաւ. նա՛ որ Պետրոսի, Յովնանէսի և Պողոսի սրտերը բորբոքել էր՝ վառեց նաև նոր սրտեր, կրակեց նոր լեզուներ, որոնք ապրեցին, ուսուցին և մխիթարեցին. եկեղեցու հաւատարիմ հաճատակների գերեզմանները՝ հաւատոյ ջերմ արտասուքներով ցօղուած՝ բուսուցին նոր ծաղիկներ. որոնց բոյրով և անուշահոտութեամբ լեցուեցաւ երկիրը:

Եթէ կուզենք, որ աշխարհի հոգին՝ կեղծն ու սուտը, յաղթանակ չտանէ ճշմարտութեան հոգու գէմ, պէտք է մեր սրտի խորքում կենդանի պահենք Փրկչի հոգին: Գրքերում չէ՛ որ պիտի կարդանք միայն նորա մասին, բեմից չէ՛ որ պիտի լսենք նրան, այլ պիտի կրենք նրան մեր սեփական սրտերում, որպէս զի իբրև մեր ներքին համոզմունքը՝ Պետրոսի նման վկայել կարողանայ՝ թէ «Նա է Քրիստոսն որդի Աստուծոյ կենդանուոյ»:

«Ո՛չ թողից գձեզ որբս» ասաց Յիսուս առաքեալներին և հաւատացեալներին: Նոյն խօսքերը ամենայն իրաւամբ կարող էր մեզ ասել. Յիսուսի հոգին՝ ճշմարտութեան հոգին մեր ժողովրդի մէջ էլ է վառել ճշմարտութեան լուսոյ ջահը առաքեալների միջոցով. նորա էլ թողել են մխիթարիչ ս. հոգի՝ ճշմարտութեան հոգի, որի մարմնացումն է Հայոց եկեղեցին: Այդ հաստատութիւնն է, որ շարունակ հոգևոր պատերազմ է մղել հայ ժողովրդի թշնամիների գէմ. ինչ կլինէր հայ ժողովրդի վիճակը, եթէ չլինէր ճշմարտութեան հոգու մարմնացեալ մխիթարիչը՝ Հայոց եկեղեցին հինգերորդ դարում, երբ հայ ժո-

ղովրդի ինքնուրոյնութեան և խղճի ազատութեան գէմ՝ մարտնչում էր աշխարհի հոգին:

Ի՞նչ տուած կլինէր այսօր հայ մարդը աշխարհին որպէս ստեղծագործող տարր, եթէ չլինէր հայ եկեղեցին, որ ոչ միայն մատակարարել է ստեղծագործող ոյժեր, այլ և հովանաւորել և խնամել է այդ ոյժերը, որի հովանու տակ պահուած են և մեզ իբրև աւանդ հասած նոցա թանգարժէք ստեղծագործութիւնները:

Ի՞նչ մնացած կլինէր հայ ժողովրդից, եթէ ոչ անձանաչելի բեկորներ գեղեցիկ ամբողջութեան, որի պատկերը աչքերիս առաջն է այսօր, եթէ հայ եկեղեցու խնամածու ձեռքը, նորա հովանի թիւր և անձնուէր ոգին չլինէր պահապան մեր ազգի: Այսօր էլ սիրելիք, երբ աշխարհը այլ ևս մեզ համար չունի մխիթարիչ խօսք՝ ճշմարտ մխիթարիչն է կանգնել մեր առաջ, բացել իւր թանգագին գանձերը ու տալիս իւր ամենաթանգագին բալասանը այս հաստատութեան մէջ: Այստեղ միայն աշխարհի բոլոր փոթորիկները խաղաղում են և այս նաւանման հաստատութիւնը՝ հայոց եկեղեցին տանում է մեզ խաղաղ նաւահանգիստ:

Հոգեգալստեան օրը, Տէր Յիսուս, ուրիշ բան չեմ խնդրում քեզնից հայ տառապեալ ժողովրդի համար, եթէ ոչ այն՝ որ իջնես մեր եկեղեցիները և վառես այնտեղ նոր կեանքի, նոր յոյսի և նոր ոգու հաւատի ճրագներ. այցելես դարեր շարունակ ճնշուած ու կեղեքուած խաչից հաւատարիմ մի բուռն ժողովրդից և նորա մէջ զարթած արդարութեան ձայնին յաղթութիւն շնորհես. իջնես մեր սրտերը՝ կազդուրես, մխիթարես և լուսաւորես և այնտեղ նոր զարթող կեանքի ծիլերը օրհնես, որ նա զօրանայ աճի և ընդունակ դառնայ նորա կեանքին սպառնացող շրջապատի փուշի ու տատակի գէմ մաքառելու. իսկ մենք՝ այդ բոլորի փոխարէն՝ բերում ենք Քեզ նուէր մեր սիրան ու հոգին իւր նորածիլ հաւատով, յուսով և սիրով. Ամէն:

«Տէր բարևոք է մեզ աստ լինել. և եթէ կամիս արասցուք երես տաղաւարս, մի՛ քեզ, և մի՛ Մովսիսի, և մի՛ Եղիայի»։ (Մատթ. Ժ. 4).

Ամբան տաք ամիսներից մէկն էր. առաւ Յիսուս իւր երեք աշակերտներին և ելաւ սարը աղօթելու։ Եւ անա սարի կատարին են. դաշտի խեղդուկ օդին փոխարինել է սարի թարմ և զով օդը, դաշտի նեղ հորիզոնի փոխարէն բացուել է նոցա առաջ լայն հորիզոն, որտեղից կարելի է դիտել սուրբ երկրի իւրաքանչիւր անկիւնը, որ ընդունակ է բանալու մեր մէջ նոր ոգևորութեան անսպառ աղբիւրներ։

Աչքի հետ մարդու միտքն էլ է ազատուում դաշտի նեղ հորիզոնից՝ երկրային հոգսերից, և թռչում դէպի վեր, դէպի երկինք՝ հոգևոր աշխարհի հոգսերով զբաղուելու։ Մտքից յետ չի մնում նաև սիրտը. նա չի զբաղուում այստեղ երկնային մանրիկ կրքերով, որոնք նսեմացնում են մարդուն, սպանում նորա հոգու մեծութիւնը. այլ այստեղ լայնանում է այդ նեղ մտեղէն անօթը և՛ սովորական աշխարհիկ կրքերի փոխարէն, լեցում երկնային սուրբ ոգևորութեամբ՝ սիրոյ և անձնուիրութեան զգացմունքով։

Սակայն երկար ճանապարհից յոգնած, թալկացած ու հանգստեան կարօտ աշակերտները դեռ ընդունակ չէին այդ փոփոխութիւնը զգալու։

Ով կարգացել է ճամբորդների նկարագրութիւններ

դէպի Թաբոր և Հերմոն, և կամ ինքը երբ և իցէ առիթ է ունեցել սարն ի վեր մագլցել ամբան կիզիչ արևի ճառագայթների տակ՝ գիտէ թէ ի՞նչ հաճոյք է յոգնած ճամբորդի համար իւր թալկացած մարմինը ստուերաշատ մի վայրում հանգստացնելն ու անուշ նիրհելը։ Բնութեան պահանջը յազթեց, և նոքա նիրհեցին։ Միայն Յիսուս էր, որ արթուն մնաց. զի նա Ֆիզիքապէս էլ նոյնքան զօրեղ էր, որքան և հոգեպէս։

Մարի ազատ բարձունքը տրամադրում էր նրան աղօթել. նա շնա բան ունէր խօսելու իւր Հօր հետ, և անա սարի խաղաղ առանձնութիւնը յարմար առիթ էր շնորհում նրան։

Նրան չէր հրապուրում բնութեան ընդարձակ ու սիրուն տեսարանը. որ տարածւում էր Թաբորից մինչև Մեռեսալ ծովը, այլ նա փորձում էր մտաւոր կամուրջ ձգել Թաբորից մինչև աստուածային բարձունքը՝ կենդանի յարաբերութեան մէջ մտնելու համար իւր Հօր հետ՝ իւր «ես»-ի միւս կիսի հետ։

Նա պահանջ էր զգում իւր վշտոտ սիրտը բանալ իւր Հօր առաջ, յայտնել՝ որ դեռ ևս իւր աշակերտները անկարող են ըմբռնելու այն գաղափարը՝ թէ իւր փառքի ճանապարհը տանջանքի ճանապարհն է։ Նա տեսնում էր իւր առաջ հոգևոր յաղթանակ՝ աշխարհի փրկութիւնն ու վերածնութիւնը, սակայն տեսնում էր նաև իւր տկար հոգևոր մարտիկներին, որոնք կոչուել էին աշխարհին կենսունակ ոյժ հաղորդելու, բայց դեռ անընդունակ էին աստուածային մտքերն ու ծրագրերն ըմբռնելու՝ և իւր շուրջը նիրհում էին։

Եւ անձ այս տանջական վիճակի մէջ՝ հոգեպէս թեթևութիւն գտնելու նպատակով՝ նա ապաւինեց մարդկութեան միակ անկեղծ բարեկամին ու հովանաւորին՝ իւր Հօր աստուածային խորհրդին ու սիրուն։ Նրա աղօթքը

լսուեցաւ. նրա հոգու մէջ ծնունդ առած գաղափարներն ու մտապատկերները մարմին առին, նա տեսաւ իւր ներքին հոգեկան աշխարհը իրականի փոխուած. և ահա նրա ոտի տակ գտնուող, մեղքերի գերի գարձած աշխարհը վերածնուած, Փրկչի երկնային շողով լուսաւորուած և պայծառացած: Երևացին նաև այլ երկու դէմքեր՝ հին ուխտի մեծագոյն անձինք՝ Մովսէսն ու Եղիան, որոնք նոյնպէս կանգնած էին լուսաւոր ու պայծառ՝ մարդկութեան կենտրոնական արևի՝ պայծառակերպեալ Յիսուսի ճաճանչներով լուսաւորուած:

Եւ ահա զարթեցան աշակերտներն ու տեսան մի պատկեր, որ երբեք տեսած չէին. իրենց վարդապետը այլակերպուել էր, նրա դէմքը արևից աւելի պայծառ էր շողողում. սա երեկոյեան մայր մանող արեգի վերջալոյսը չէր՝ ընկած նրա դէմքին, այլ մի գերբնական լոյս՝ ընդունակ լուսաւորելու ամբողջ տիեզերքը:

Ահա և երկնային ձայնը՝ «Դա է որդի իմ սիրելի ընդ որ հաճեցայ, դմա լուարուք». սա աստուածային կոչ էր, որ հրաւիրում էր հետևելու իրենց վարդապետին, ընթանալու նրա փշոտ ճանապարհով, խաչերը ուսերին Գողգոթա ելնելու, որովհետև այդ է յաւիտենական փառքի ճամբան:

Այս ձայնը, որ թունդ հանեց նոցա հոգին ու սարսուռ բերաւ նոցա մարմինն, վերջին և գերագոյն ակտն էր նոցա աչքի առաջ տեղի ունեցող երևոյթի, որ ծածկուած էր խորհրդաւորութեան շղարշով: Քոյն անուուեցաւ, և զարմացած ու ապշած աշակերտները շարունակեցին նայել դէպի այն վայրը, ուր բոպէ առաջ երեք մարդ էին տեսել. սակայն այժմ միայն Յիսուս էր կանգնած:

Նա ընդ միշտ չմնաց նոցա հետ սարի վերայ, ինչպէս Պետրոսն էր կամենում, այլ միայն զիշերեց. հասաւ երեկոն, արևը մայր մտաւ հեռաւոր սարերի ետև՝ իւր վերջին

ճառագայթների փունջը նետելով ծովի մէջ: Թէ ինչ խօսեցին աշակերտները միմեանց հետ, չգիտենք, բայց դիտենք, որ Թաբորի վրայ տօնական ժամեր անցուցին, ժամեր՝ որոնք անշինջ մնացին նոցա յիշողութեան մէջ իրենց երկրաւոր ամբողջ կեանքում:

Խորհրդաւոր և երջանիկ ժամ էր այն ժամը, որ երեք աշակերտները իրենց Վարդապետի հետ անցուցին այլակերպութեան սարի վերայ. գերբնական-ոգևորութեան բացազանչութիւն էր, որ թուա Պետրոսի շրթունքներից թէ՛ «Տէր, բարւոք է աստ լինել. և եթէ կամիս արասցուք երիս տաղաւարս մի՛ քեզ, և մի՛ Մովսիսի, և մի՛ Եղիայի», և ինչպէս կարող էր չյափշտակուել Պետրոսի նման դիւրագոյաց և տպաւորուող մի անձն՝ տեսնելով իւր ոտքի տակ աշխարհը՝ լի թշուառութեամբ և աղէտներով, իւր առաջը՝ պայծառակերպեալ Տիրոջը և իւր շուրջը՝ սրբոց միաբանութիւնը:

Բայց աւանդ, երանութեան այս ժամերը թուեցիկ ու անցական էին. դեռ ևս հասած չէր Թաբորի վերայ հիւզեր շինելու ժամը. դեռ ևս պահանջում էր պայծառակերպութեան սարի լուսաւոր բարձունքից իջնել վայր՝ երկրի տանջալից ու աղէտալից վայրերը, երթալ ու հոգեմաշ ժամեր անցընել Չիթենեաց սարի վերայ, Գողգոթա ելնել ու մարտիրոսական փշէ պսակ կրել, և ապէ թէ երկինք վերանալ՝ ու փառաց պսակ առնել:

Սիրելիք, այսօր էլ մեր երկրային պանդխտութեան ընթացքում պատահում են Թաբորի բարձունքներ և պայծառակերպութեան ժամեր, երբ մենք երկնքին աւելի ենք մօտենում, քան սովորաբար. երբ մենք՝ գոնէ ըսպէսպէս, այս աշխարհի վշտերից կտրուում ու փոխադրուում ենք մի այլ աշխարհ, ուր այս ստոր աշխարհը՝ մեր ոտքի տակ, Փրկիչը՝ մեր առաջ, և արդարների բանակը՝ մեր շուրջն ենք տեսնում:

Բայց երբ.

— Թաբորի պայծառակերպեալ դէմքը կարտացոլանայ նաև մեր մէջ, պայծառակերպեալ Փրկիչը կարձանանայ նաև մեր առաջ, և նաև մեր շրթունքներից ինքնարբերաբեր կըթռչի՝ «բարևոք է մեզ սատ լինել», երբ մենք էլ խորասուզուենք և ուսումնասիրենք մեր Փրկչի անձնաւորութիւնը, որ այնքան հարուստ է գրաւիչ պատկերներով: Երբ մենք էլ չարութեամբ, կեղծիքով, թշնամութեամբ և այլ բազմատեսակ մեղքերով լի այս աշխարհի կեանքը ճաշակելուց յետոյ՝ ուղղենք մեր հայեացքը դէպի նա, դէպի մարդկութեան միակ հաւատարիմ բարեկամը: Երբ մենք էլ՝ դիտելով մեր սրտի թուլութիւնը, մեր հոգու աղքատութիւնը և մեր մարմնի անկումը՝ դառնանք դէպի մեր կատարելատիպը, նրանով մխիթարուելու և սրբազան հաճոյք ստանալու համար:

Երբ մեր սէրը սառում է դէպի Տէրը, կամ մեր բարի գործելու եռանդը թուլանում է աշխարհի հոգսերի և հաճոյքների ճնշման տակ՝ միթէ սրբազան հաճոյք չէ նայել խաչեցեալին և՛ յիշելով՝ Նրա սէրը դէպի մեզ, ջերմացնել մեր սիրտը դէպի Նա ու զարթեցնել մեր նիրհած հոգեկան ոյժերը:

Երբ խաչի ծանրութիւնը և հոգսերի բեռը ճնշում է մեզ և այս երկիրը որպէս անհիւրընկալ, օտար երկիր, կամ որպէս անսպաս հրաժարում է մեզ համար ուրախութեան ծաղիկ հասցնել՝ միթէ մխիթարական չէ հաւատով նայել դէպի երկինք և զգալ, որ այնտեղ է մեր բարեկամը, որ միշտ հոգում է մեր մասին, և որ երբեմն նոյնպէս շրջել է այս վշտերի վայրում՝ որ այժմ էլ նոյն հաւատարիմ աչքերը սիրով նայում են մեզ երկնքից, խկ շրթունքները մրմնջում՝ «ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս մինչև ի կատարած աշխարհի»:

Պատուական եղբայրներ և քոյրեր, վառ պահենք մեր

առաջ Փրկչի լուսեղէն պատկերը, ինչպէս երբեմն առաքեալները Թաբորի վերայ. Նա կլինի մեր մխիթարիչ ընկերը այս ազմկայոյզ աշխարհում, Նա կլինի մեր լաստափայտը այս արեկոծ ծովում:

Այսօր, երբ հայ եկեղեցին՝ Փրկչի պայծառակերպութեան տօնի օրը, առանձին գուգաղիպութեամբ տօնում է նաև Հայոց Հայրապետի օծման տարեգարձը՝ պարտք եմ համարում յիշեցնել քեզ՝ հայ ժողովուրդ, որ հայ ազգը ունի նաև իւր սեփական պայծառակերպութեան վայրը՝ իւր Թաբորը, իւր պայծառակերպեալ Փրկիչը, դէպի որը դարձել է միշտ հայ ժողովրդի աչքը, մանաւանդ տառապանքի օրերում, որ եղել է միշտ հայ մտքի ու սրտի մագնիսը— դա սուրբ էջմիածինն է:

Այնտեղ էլ, ինչպէս երբեմն Թաբորի վերայ, Փրկիչը երևեցաւ արեգակնաճաճանչ դէմքով և ոսկէ ուռամբ բաղխեց այն վայրը, ուր այժմ կանգնած է Լուսաւորչանիմն Մայր Աթոռը՝ ս. էջմիածին:

Այնտեղ էլ, ինչպէս երբեմն Թաբորի վերայ, կանգնել են միշտ լուսաւոր հայ դէմքեր՝ Հայոց հայրապետներ, որոնք միշտ հայ մարդու մտքի աշխարհիկ սին ձգտումները փոխարինել են երկնային վեհ գաղափարներով:

Այնտեղ էլ, ինչպէս երբեմն Թաբորի վերայ, հայ ընտրեալները հիացած ու հոգով վերացած՝ կտրել են իրենց աշխարհի հոգսերից և տարուելով այլ աշխարհի կարգերով ու նուիրուելով վերին աշխարհի ձգտումների՝ փորձել են վերածնել հայ աշխարհը:

Այնտեղից էլ, ինչպէս երբեմն Թաբորի վերայից, յանցանքների գերի դարձած Հայաստան աշխարհը վերածնուած է, լուսաւորուած ու պայծառացած մեր լուսամիտ հայրապետների շնորհիւ:

Այսօր էլ՝ հայի արեան, հրդեհների, աւերի և այլ անհուն տառապանքների օրերին բազմած է այնտեղ՝ հայ-

կական թաբորում, Հայոց հայրապետը, որ անքուն գիշերներ է անցնում, արտասուլաթոր աչքերով աղօթում հայի գոյութեան և նորա երջանիկ ապագայի համար:

Այժմ էլ եկել է այս աշխարհի հզորների դռները բաղխելու, հայ ժողովուրդ, քո աննկարագրելի վշտերն ու տառապանքները մեղմելու և քո անհուն վերքերը բուժելու համար:

Սակայն այսօր հայ ժողովուրդը կարծես մոռացել է իւր ազգային պայծառակերպութեան վայրը, ինչպէս մարդկութիւնը Փրկչական թաբորը, բայց սխալուում է: Այն օրից, երբ հայը կորցրեց իւր հայրենիքը՝ իւր ոտքի տակի հողը, կանգնեց հայրենիքի գաղափարի արձանը՝ ս. էջմիածինը. նա շինուած չէ քարից կամ այլ նութից, այլ մեր հայրենասիրական զգացմունքներից ձուլուած. և ամեն անգամ, երբ թուլանում են մեր զգացմունքները՝ փոքրանում է նաև այդ հաստատութիւնն ի վստահայութեան գոյութեան և յուրախութիւն «մեր բարեկամների»:

Բաց հոգուդ աչքը, հայ ազգ, Հայոց թաբորի սարն ի վեր գնա, որ ապրես և չկորչես խաւարի ու չարութեան գրկում:

Պայծառակերպեալ Յիսուս, քեզ եմ դիմում. դու՛ որ երբեմն երկնային լուսովդ լուսաւորեցիր աշակերտներիդ միտքը՝ ըմբռնելու աստուածային ճշմարտութիւնները՝ լուսաւորիր և մեր միտքը այս փոքրիկ ճշմարտութիւնը հասկանալու: Անսասան պահէ մեր թաբորը՝ ս. էջմիածին, երկար կեանք պարգևէ թաբորի լուսով ոգևորուած ու քեզ զէպի այդ լոյսը հրաւիրող մեր Վեհափառ Հայրապետին, և ցաք ու ցրիւ ընկած հալածեալ ու տառապեալ հայ ժողովրդի բեկորները ի մի ժողովէ և կենդանացուր. զի քո է կարողութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս. Ամէն:

«Ոչ ուրեք առաքեցայ՝ եթէ ոչ առ ոչխարս կորուսեալս տանն իսրայէլի» (Մատթ. ԺԵ. 24):

Նեղ հայեացք է, այնպէս չէ. ազգայնական հովեր են փչում: Ո՛ւր է համամարդկայինը, համաշխարհայինը:

Փրկչի համամարդկային սիրով լցուած սիրան անգամ մարդկային բնական զգացմունքից՝ հայրենասիրութիւնից զերծ չէ. Նա որ գիտէր՝ թէ աշխարհի Փրկիչ է, թէ իւր աւետարանը բոլոր ազգերին պիտի քարոզուի, այնուամենայնիւ քանի որ ապրեց երկրի վերայ՝ հայրենի երկրի սահմաններից չելաւ, և քանանացի կնոջը պատասխանեց թէ՛ ուղարկուած եմ իսրայէլի տան կորուսեալ ոչխարների համար. որովհետև իսրայէլի ժողովրդի ծնունդ էր, նրան էր պատկանում իւր կեանքը. այդ ժողովրդի համար մաշուեցաւ, նրան զոհուեցաւ:

Ինչի՞ մասին կարող էի խօսել մի ժողովրդի հետ, որ հայրենի հողից կտրուած, օտար երկնքի տակ, օտար հողի և ջրի ապաւինած՝ ձուլարել է հայրենիքի կարօտը սըրտում, եթէ ոչ հայրենիքի մասին:

Ներկայ վէճերի և կռիւների շրջանում, որոնք բաժան-բաժան են անում հայ ժողովուրդը, դառնացնում նոցա զգացմունքները զէպի միմեանց յանուն կուսակցական պայքարի, ես խաղութեան խօսք պիտի ասեմ այսօր, հայրենիքի մասին պիտի խօսեմ, որ ամեն կուսակցու-

թիւնները քարձը է և պիտի լինի, և որին պիտի ծառայեն բոլոր կուսակցութիւնները:

Երկու հայրենիք ունի հայը աշխարհի մէջ՝ մէկը Մայր Ռուսիան, որ 1828 թուից իւր յաղթական զէնքի ոյժով նուաճեց Արարատեան դաշտը և մեզ ազատելով պարսից կամայական կառավարութիւնից որի իշխանութեան ներքոյ օր օրի վերայ հիւժուում, նուազում և գերեզմանին էինք մօտենում, առաւ նոր շունչ, նոր կենսունակ նիւթ, այն է իւր գիտութեան լոյսը և ազատ դարգացում, որի շնորհիւ երեկոյեան թարշամած ծաղիկը՝ ինչպէս առաւօտեան ցօղով և արևով կրկին կեանք է առնում՝ կեանք առաւ նաև հայն ու զուարթացաւ: Երկրորդը՝ մեր մայր հայրենիքն է, մեր ծնողը:

Հայրենիք. ինչ քաղցր է հնչում մեր ականջին. այս այն գազափարն է, որ մեր ազգի բոլոր անհատներին և բազմատեսակ տոհմերին միացրել է՝ դարձնելով նոցա մի ժողովուրդ՝ մի բազմանդամ ընտանիք, որոնց երակներում միևնոյն արիւնն է հոսում, որոնց բերնում միևնոյն մայրենի բարբառն է հնչում և որոնց՝ ոչ կարիքը և ոչ վտանգը կարող է բաժանել:

Հայրենիք. նա մեզ յիշեցնում է, որ մեր ազգի բախտն ու պատմութիւնը սերտ կապուած է այն երկրի հետ ուր ապրել և ապրում է նա. որ ուղղուած է մեր պապերի արիւնով անցեալ պատերազմների, մարտիրոսութիւնների և ներկայ հալածանքների շնորհիւ. որ պահում է անթիւ ու անհամար շէն զիւղերի և փարթամ քաղաքների փլատակներ ու աւերակներ. ուր թափուել են վշտի ու ծանակի ազի արցունքներ, ուր հնչել են երբեմն նաև խրախճանաց և յաղթութեանց ուրախ երգեր: Նա մեր կեանքի որրանն է, ուր օրօրուել է մեր օրօցը, ուր հիմնուել է մեր սեփական օջախը, որ ամփոփել է իւր ծնցում մեր սիրելիներին՝ մեզ համար ամենաթանգագին

էակներնին, և որ պիտի լինի նաև մեր վերջին հանգստեան վայրը: Ո՛վ է այն հայ մարդը, որ գիտակցէ այս բոլորը և իւր սիրտը նրան չնուիրէ, ո՞վ է այն հայ դժբաղդ ուսուցիչը որ այս բոլորը գիտակցէ և համարձակուի իւր սաներին մաքուր կաթի փոխարէն՝ քար տալ; ո՞վ է այն տպերախոտ հողևորականը, որ համարձակուի իւր խնկելի նախորդներին՝ ս. Ղևոնդեանց քահանայից յիշատակը ոտնահարել և արհամարհել:

Հայրենիք. Մեր ազգի կեանքը երէկ չէ սկսուած, նա հետաքրքրական պատմութիւն ունի իւր յետևում. 2—3 հազար տարի է գոյութիւն ունենք, և մեր ազգի բախտը այդ երկար շրջանում միշտ փոփոխական է եղել, երբեմն դէպի առաջ և երբեմն դէպի յետ: Բայց միշտ ունեցել է միևնոյն ճակատագիրը, միևնոյն վիշտն ու ուրախութիւնն է, որ բաժին է ընկել ամբողջութեան: Նորա երկու-երեք հազար տարուայ պատմութիւնը ազագակում է, որ մենք և՛ բախտի և՛ անբախտութեան օրերին միասին ենք եղել. պէտք է ուրեմն այժմ էլ միասին լինենք. միասին խորհենք, միասին գործենք, միասին քննենք զժգոհութեան շարժառիթները և միասին խորհենք համայնական երջանկութեան մասին:

Մեր ազգի գոյութեան, նորա մեծութեան, նորա փառքի և նորա բարեկեցութեան համար շատ սերունդներ են մաքառել և տանջուել: Մենք ժառանգներն ենք այն բուրբի, որ մեր պապերի ջանասիրութիւնը, անձնուիրութիւնը, նոցա հերոսական ոգին ձեռք է բերել. ես հաւատում եմ, որ կուով ու վէճով մենք չենք ոչնչացնի այն, ինչ որ մեր հայրերը մեզ աւանդ են թողել, այլ մենք նոյն հիմքի վերայ կշարունակենք շէնքի կառուցումը: Այս բարոյական պարտականութիւնը կախուած պիտի լինի բոլորիս վերայ իբրև դամոկլեան սուր:

Հայրենիք. Ինչ խոր ազդեցութիւն ունես դու զգացող

սրտերի վերայ. այն, զու բնութեամբ հարուստ ես և գեղեցիկ, բայց եթէ լինէիր դաժան և անհիւրընկալ՝ այն ժամանակ էլ քեզ փոխարինող չէր լինի մեզ համար, որովհետև անքակտելի կապերով կապուած են մեր սրտերը քեզ հետ և մի ներքին զգացում, հայրենի կարօտը, ստիպում է մեզ ձգել ամեն ինչ՝ և՛ փառք և՛ բախտ օտարութեան մէջ և դառնալ երկիր:

Դու հասցրել ես մի ժողովուրդ, հայ ժողովուրդ, որ իւր պատմական բախտի հետեանք՝ բոլոր պահասութիւններով հանդերձ կրթութեան ենթարկուելով՝ ցոյց է տալիս առաքինութիւններ, որոնք վկայում են թէ մեծ ժողովրդի զաւակ է եղել, և եթէ հանգամանքները փոխուեն՝ ընդունակ դառնալու իւր նախատիպին:

Այսօր այլ ևս չկայ հայրենիքը, որպէս ֆիզիքական ոյժ, կայ միայն գաղափարը իբրև բարոյական ոյժ, որ վառ պահում է մեր մէջ Հայոց եկեղեցին: Այսօր նրան փոխարինողը Հայոց եկեղեցին է, որի գօրաւոր թևերի տակ ձուարել է հայութիւնը անխռով:

Հայոց պատմութիւնը տառապանքների և նեղութիւնների, կոտորածների և գերեզմարութեան անվերջ շղթայ է, կենդանի նահատակութեան աննման մի երևոյթ ազգերի կեանքում. ամեն ինչ նիւթական մեռել է նորա կեանքում և միայն հայոց եկեղեցին է, որ առկայծեալ պատրոյզի նման անշէջ է մնացել, որպէս հայ ժողովրդի միակ յուսոյ և միխթարութեան ապաւէն: Նա թէև աստանդական, փառքից և շքեղութիւնից զրկուած, բայց կատարել է իւր պարտքը՝ խնամածու և գորովագութ մայր հանդիսանալով իւր հօտին: Եւ այս է պատճառը, որ երախտազէտ ժողովուրդը այնպիսի հրաշալի աւանդութիւններ է հիւսել նրա նշանակութեան մասին և իւր երգիչների բերանով սրտառուջ մարթանք ուղղել առ Աստուած «Միշտ անշարժ պահեա զաթոռ Հայկազնեայց»:

Հայ եկեղեցու միութեան արտայայտութիւնն է Հայոց հայրապետութիւնը, որի նշանակութիւնը այժմ ոչնչով նուազ չէ անցեալից: Իւրաքանչիւր ազգ պէտք է մի կենրոտն, մի սրբափայլ ունենայ, ուր ուղղել կարողանայ իւր աչքերը իբր ամբողջութիւն: Այդ կենտրոնն ու սրբափայլը հայ ժողովրդի համար ս. Էջմիածինն է, Հայաստանեայց եկեղեցու ծագման և հաստատութեան որրանը, որի աօնը կատարելու ենք ժողովել սրբափայլիս մէջ:

Մի ազգի ինքնուրոյն կեանքի պահպանութեան համար շատ գործօններ կան, բայց ամենից գօրեղը ազգային եկեղեցին է այժմ մեզ համար: Հայութեան մի ստուար մասը գաղթել է իւր պատմական հայրենիքից և ցրուել օտար ազգերի մէջ. նա կորցրել է շատ տեղերում իւր մայրենի լեզուն, ազգային բնորոշ սովորութիւնները ու տեղական աւանդութիւնները. ազգային գրականութիւնն ու պատմութիւնը մեռած տառ է նորա համար, բայց հաւատարիմ է մնացել իւր եկեղեցուն: Հնդկաստանի, Պարսկաստանի խուլ անկիւնների, Ռումինիայի, Աւստրիայի հայութիւնը իւր եկեղեցիով է անբաժան մնացել ազգութիւնից. նա հայերէն չի խօսում, բայց իրեն հայ քրիստոնեայ է համարում և ջերմ սիրով կապուած ս. Էջմիածնի Հայրապետական աթոռի հետ: Հայոց հայրապետական աթոռը աստուածային պարզ և մեզ համար, դարերի պատմութեամբ սրբագործուած և խոր արմատներ ձգած հայ ժողովրդի կեանքի մէջ: Չլատել նրա բարոյական ոյժն ու հեղինակութիւնը, սառնութիւն քարոզել նրա դէմ և ժողովրդին մոլորեցնել՝ երեխայական անմտութիւն է և ազգամիլաս գործողութիւն: Մենք յոյս ունենք, որ այս ժամանակաւոր մոլորութիւնները կչքանան, ինչպէս առաւօտեան մէղը արևի ճառագայթների առաջ՝ և ներկայ հայր՝ իւր պապերի նման՝ կազօթէ «Միշտ անշարժ պահեա զաթոռ Հայկազնեայց». Ամէն:

«Միշտ անշարժ պահան դաթու
Հայկազնեայց»:

Բնութիւնը տալիս է մեզ անվերջ փոփոխուող երևոյթ-
ների պատկերներ. մերթ տեսնում ես նա կատաղում է՝
կուտակում են սև ամպեր, մթնում է երկինքը, որոտում,
փայլատակում, շանթեր արձակում և անձրևի հեղեղներ
թափելով՝ ամեն ինչ աւերում ու քարուքանդ է անում:
Մերթ տեսնում ես բնութիւնը մեղմանում է՝ ջրում են
ամպերը, երևում է արևի պայծառ երեսը և ամբողջ
բնութիւնը զովացած ու թարմացած՝ ապրելու և աճելու
տենչով է բռնում:

Ճիշդ այդպէս է նաև մեր կեանքը. մէկ տեսնում ես
կարաւանի պէս անցնում են առջևէդ վշտի ու նեղութեան
աննկարագրելի պատկերներ՝ մեռնում է կեանքիդ թան-
կագին ընկերը և սիրասուն գաւազներդ, զրկում ես
հարստութիւնից, տնից ու տեղից, և այդ հոգսերը դրոշ-
մում են իրենց կնիքը դէմքիդ վերայ՝ մազերդ սպիտա-
կում, ճակատդ խորշումում, երեսդ թնթռում է. և այս-
պէս դեռ չբացուած թառամում ես, հրապոյրդ կորցնում,
էլ ո՞վ է վրադ նայողը. երէկուայ երջանիկը այսօր թշուառ-
ների թշուառն է դառնում:

Վարագոյրը իջնում է և պատկերը փոխում. անա
անցնում են շարան-շարան առջևէդ ուրխութեան ու
երջանկութեան զրաւիչ պատկերներ. երիտասարդ ես՝

առողջ, առոյգ և գեղեցիկ. ամուսնանում ես սրտիդ սի-
րածի վերայ, սիրասուն ու գողտրիկ գաւազներ շահում,
նոքա մեծանում են, գիտութեամբ ու գեղարուեստով
մարզում, շէն տունդ ևս առաւել շէնցնում, նոր երջան-
կութեան աղբիւր դարձնում:

Ահա պատկերներ, որոնք հազարաւոր տարիներ
կրկնուել են և պիտի կրկնուին՝ դարձնելով մարդու հա-
մար կեանքը ձանձրալի ու աննպատակ, և ստիպելով
նրան կամ յուսահատութեան և յոռետեսութեան գիրկն
ընկնել՝ և կամ՝ իւր հանճարեղ ներկայացուցիչների մի-
ջոցով՝ նոր գաղափարներ ստեղծել, կեանքին նոր բովան-
դակութիւն շնորհել՝ դարձնելով այն նպատակայարմար
և հաճելի:

Մինչև Յիսուս՝ Յունա-հռովմէական կեանքը, որ ժա-
մանակակից բարձր քուլթուրայի համաձայն էր սար-
քուած՝ չգոհացրեց մարդուն: Կեանքը իւր բոլոր գեղեցկու-
թեամբ, նիւթական վայելքների նրբութեամբ ու բազմա-
զանութեամբ աննպատակ էր թւում նրան և ստիպում նոր
որոնումների ելնել: Մարդիկ համոզուեցին, որ նիւթական
կեանքը՝ ուտելը, խմելն ու զուարճանալը իւր բոլոր ճա-
շակաւորութեամբ տաղտկալի է և մարդու կեանքի նպա-
տակ չի կարող լինել, այլ կստիպէ նրան Սողոմոնի և
յոյն փիլիսոփաների հետ կրկնել՝ «ունայնութիւն ունայ-
նութեանց, ամենայն ինչ ընդունայն է»:

Կեանքի դատարկութիւնը լցուեցաւ, երբ Յիսուս
հրապարակ եկաւ և նոր իդէալներ տուաւ կեանքին՝ սիրոյ
և անձնուիրութեան գաղափարներ, որով մեր փտած
կեանքը ընդ միշտ պիտի նորոգուէր:

Քրիստոսի իդէալները՝ սիրոյ և անձուիրութեան մեծ
գաղափարները մարմին առին հոգեգալստեան օրը, երբ
վառուեցաւ սիրոյ կրակը մարդոց սրտում և հաստատուե-
ցաւ առաջին քրիստոնեայ համայնքը՝ առաջին եկեղեցին:

Նոյն այդ սիրոյ կրակը և լուսոյ ճրագը վառուեցաւ նաև մեր երկրում ս. Լուսաւորչի շնորհիւ, որով ծնունդ առաւ ազգային քրիստոնէական եկեղեցին, որ հիմքը դրաւ բոլոր հայ եկեղեցիների մայր՝ ս. Էջմիածնի, որի 1616-րդ տարեգարձն ենք տօնում այսօր: Թող ներուի ինձ ուրեմն խօսել այսօր մեր եկեղեցու մասին. բայց վախ. չէ եկեղեցու մասին խօսել. չէ՞ որ այդ յետագէմ քայլ է. չէ՞ որ եկեղեցին շատերի կարծիքով վաղուց հնացած հաստատութիւն է, որ կորցրել է իւր այժմէականութիւնը:

Ճիշդ հէնց այդ պատճառով էլ պիտի խօսեմ, որ բանամ ձեր առաջ նրա պատուաբեր անցեալը և ցոյց տամ՝ թէ ինչ մեծ գործեր է կատարել նա հայ կեանքի զոյուլթեան երկար դարերի ընթացքում, ինչ փոթորիկներ է տեսել՝ և սակայն մեր ազգային նաւը խաղաղ նաւահանգիստ տարել:

Հայ եկեղեցու շոշափելի արտայայտութիւնը ս. Էջմիածինն է, որ՝ ըստ աւանդութեան, աստուածային ծագում ունի. Յիսուս իջնում է երկնքից երկիր, լոյս սրփռում շուրջը և ոսկէ ուռամբ բաղխում երկիրը, ուր հիմնուում է Լուսաւորչի ձեռքով այս տաճարը՝ ս. Էջմիածինը իւր հայրապետական ակօրով:

Ս. Էջմիածնի և Հայոց Հայրապետութեան պատմական արժէքը ուղիղ գնահատելու համար՝ պէտք է մեր հոգու առաջ կենդանացնել հայ եկեղեցու կրօնական, քաղաքակրթական և հոգևական ամբողջ գործունէութիւնը իւր բոլոր կողմերով:

Եթէ մի թուուցիկ յետադարձ ակնարկ ձգենք մեր անցեալի վերայ՝ կրմբունենք Հայրապետութեան կատարած դերը և կպարզուի հայի ոգևորութեան գաղտնիքը:

Հայոց Հայրապետութիւնը հայի զգայուն սիրան է եղել, որ դարեր շարունակ ապրել է նրա անհուն ցաւե-

րով և սակաւ ուրախութիւններով: Հայոց Հայրապետութիւնը հայի ստեղծող միաքն է եղել, որ՝ լուսաւորուած քրիստոնէական երկնային լուսով՝ ստեղծել է դրականութիւն և գեղարուեստ՝ ներկայ հայի փառքն ու պարծանքը:

Հայոց Հայրապետութիւնը հայի ազնիւ և տոկուն կամքի արտայայտիչն է եղել՝ ապրով առաքինութեան հերոսներ, անտուածային կամքի ճշմարիտ աշակերտներ:

Հայոց Հայրապետութիւնը վե՛հ գաղափարների մի փունջ է, որ հիւսուել է հայոց մեծ հայրապետների ձեռքով. եթէ յիշենք հայոց հայրապետների շարքը՝ ճրպիսի պատկառելի դէմքեր կանսնենք, որոնց առաջ յակամայից կրխոնարհի մեր գլուխը՝ որքան էլ մեր սրտի մէջ երախտադիտութեան զգացմունքը ցամքած և մեր մտքի մէջ ճշմարտութեան շողը մարած լինի:

Ո՞վ չի ճանաչում Հայաստանի առաքելանման լուսաւորչին, որ տուել է մեզ հայ եկեղեցի՝ մեր կեանքի լուսատու լապտերը, աւետարանի լուսով հայ կեանքը լուսաւորող ու պայծառացնող մի հաստատութիւն. կամ Ներսէս մեծին, որ աստուածահաճոյ հաստատութիւններով զարգարել է մեր երկիրը և առաքինութեան սերմեր սերմանել, որոնց միջոցով մարմնացել է Քրիստոսի սիրոյ և անձնուիրութեան մեծ գաղափարները:

Ո՞վ չի յիշում երախտագէտ սրտով ս. Սահակին ու Մեսրոպին՝ հայի մտաւոր անդաստանի երկու ամոլներին, որոնք զիր ու գրադիտութիւն տուին և փրկեցին մեր հոգևոր կեանքը կորուստից, կամ Ղևոնդին՝ իւր հօտի կենդանի նահատակին:

Ո՞վ իրաւունք ունի մոռանալու հայ եկեղեցու ինքնուրոյնութեան համար մաքառող, ներքին կռիւների ժամանակ համերաշխութեան կապ հանդիսացող, արտաքին բռնակալների բարկութիւնը մեղմող, հայրենի երկիրը կորստից փրկող և յուսահատ հայ ժողովրդին յոյս ներ-

շընչող անձնուէր հայրապետներին:

Հայ եկեղեցու պատմութիւնը հայ ազգի տառապանքների և վշտերի մի անվերջ շղթայ է, իսկ հայ երկիրը՝ օտար, վայրագ ու անխիղճ ազգերի մրցութեան ասպարէզ: Այդ աւերածութիւնների մէջ Հայոց Հայրապետութիւնն է, որ մոխրի տակ թաքնուած կայծի նման անշէջ մնացել է և եղել հայ ժողովրդի յուսոյ և մխիթարութեան միակ ապաւէնը: Ահա թէ ուր է գաղտնիքը այն դիւթիչ զօրութեան և հրապոյրի, որ ունեցել է ս. Էջմիածինն ու Հայոց Հայրապետութիւնը դարեր շարունակ հայի աչքում:

Ասում են անդարձ անցել են այն ժամանակները, փոխուել են կեանքի պայմանները, ինչպէս կարող է այսօր մի հնացած ու կիսամեռ հաստատութիւն հայի գոյութեան հիմքը լինել:

Ո՛րպիսի անգիտութիւն. միթէ կարծում էք եկեղեցին այս շէնքն է, ուր հաւաքուել ենք այսօր և կամ նման շէնքեր աւելի շքեղ և փարթամ, ուր կատարոււմ են եկեղեցու խորհուրդներն ու արարողութիւնները: Միթէ կարծում էք թէ եկեղեցին հոգևոր դասն է՝ մի խումբ ատէրներ, վարդապետներ և եպիսկոպոսներ. ոչ երբէք:

Եկեղեցին ժողովուրդն է, ս. Հոգով մկրտուած ժողովուրդը, որ ուխտել է հետևել մեծ վարդապետին, ընթանալ նրա շաւղով, ապրել նրա քարոզով: Ուրեմն իրաւունք ունենք հնացած կամ մեռած համարելու եկեղեցին. միթէ այդ չի՞ նշանակում ուրանալ մեր գոյութիւնը և կամ խաչ դնել մեզ վերայ:

Ի՞նչ կունենայինք և ի՞նչ կլինէինք, եթէ եկեղեցին չլինէր մեր դաստիարակը անցեալում, եթէ նա ներշնչած չլինէր այն ոգին, որով ստեղծել ենք գեղարուեստ, գրականութիւն և ունինք պատմութիւն, որոնք հիացում են օտարներին: Եւ ի՞նչ գրաւական ունենք պնդելու թէ՛ եթէ

մեր դաստիարակը եկեղեցին չլինէր՝ աւելի մեծ ստեղծագործութիւն ցոյց տուած կլինէինք և աւելի կենսունակութիւն կունենայինք, քան այժմ: Եւ միթէ յանցանք և չոր ապերախտութիւն չէ՞ երես շրջել այն հաստատութիւնից, որ դարեր շարունակ պահել ու պահպանել է մեզ:

Ճշմարիտ է, եկեղեցին ժամանակի ընթացքում որոշ սովորութիւններով ու աւանդութիւններով քարանուծ է. սակայն այն աւետարանը, որ հիմքն է եկեղեցու՝ միշտ ընդունակ է ժամանակի կապանքները խորտակելու, եթէ ջանք թափուի:

Այն, եկեղեցին կենդանի քարոզ չէ մեր մէջ այժմ, և ո՛չ էլ կեանք, այլ լուի ծէս. սակայն հաւատում եմ, որ կրկին կորոտայ ու կրփոթորկի մեր երկիրքը և հրանման լեզուներ կիջնին մեզ վերայ, մեր հոգու մէջ թաքնուած էրակը կվառուի, աւետարանի ձայնը մեր ականջում զօրեղ կհնչէ և նրա սիրով կկապուին մեր սրտերը՝ նոր կեանքի և նոր ստեղծագործութեան համար. որի համար սակայն մեզ նման մեռած սպասաւորների փոխարէն՝ կենդանիները պէտք է դնել, որպէս զի ձեր նիրհած հաւատն ու թմրած հոգին զարթեցնել կարողանան:

Ս. Էջմիածնի տօնի և Հայրապետական աթոռի տարեգարծի օրը խորին ակնածանօք Քեզ եմ դիմում Հայոց Հայրապետ, որ ս. աղօթքներդ վերառաքես Մայր Աթոռի հաստատութեան ու յարատևութեան համար, որպէս զի նրա հովանու տակ հանդիստ ձուարէ քո տառապեալ ու տարագիր ժողովուրդը: Հայրապետական օրհնութիւնդ շնորհիր նրան, որ դառնայ ու շէնցնէ իւր երկիրը, ապրի ս. Էջմիածնի հովանու տակ և դարգանայ ու լուսաւորուի նրանից ճառագայթած երկնային լուսով:

Ի՞նչ էլ, հայ ժողովուրդ, մի մտնար քո բարերարին, քո հովանաւորին, քո ծնողին և մաքուր սրտովդ աղօթիր՝ «Միշտ անշարժ պահես դաթոռ Հայկազնեայց». Ամէն:

Ո՛վ ձեզնից, սիրելի ծնողներ, ունի միշտ իւր սեղանակից բազմաթիւ այսպիսի քաղցած հիւրեր՝ նրան հասկանալի է այս պատկերը, և թէև ամեն օր նոյն գործը կատարելը կասուած է հոգսերի ու նեղութեան հետ՝ սակայն հաճութեամբ է կատարուում, քանի որ հէնց այդ հոգսերն ու նեղութիւններն են ուրախութեան ու երջանկութեան անսպառ աղբիւր դառնում ծնողների համար:

Ի.

Ճիշդ նոյն հոգսն է որ ծանրանում է մեր երկնաւոր հօր վերայ, և նոյն ուրախութիւնն է՝ որ զգում է նաև մեր երկնաւոր Հայրը. ամեն կենդանի շունչ կարօտում է նրա խնամող ձեռին. այնտեղ ուր շնչում են քամիները և սահում-գնում ամպերը՝ աստուածային սեղան է պատրաստուած, որի շուրջը հաւաքուում են անթիւ անհամար բազմականներ:

Նա հոգում է ամենափոքր մտղուկների մասին, որոնք արևի լոյսի մէջ պարում ու ցնծում են. նա ականջ է գնում ագռաւների աղբրսական խռպոտ ձայնին. նա լսում է քաղցած առիւծի հուժկու մուռնչը. ինչպէս կարող է ուրեմն իւր սրդիների աղօթքը չլսել, որ միշտ աղերսում են՝ «զհաց մեր հանապազօրդ տօւր մեզ այսօր»:

Ինչպէս միշտ, նոյնպէս և այս տարի. նա հոգացել է մեր տարեկան պաշարը՝ տալով առատ անձրև, կենդանաբար արև և սոցա հետևանք առատ հունձ՝ ու մեր սիրտը լցրել ուրախութեամբ: Եւ այդ է պատճառը, որ այսօր բոլորս ուրախ ու զուարթ կանգնել ենք նորա առաջ և մեր զոհութիւնը յայտնում իւր հայրական խնամքի և դէպի մեզ ունեցած անփոփոխ հաւատարմութեան համար: Սակայն մենք ևս միշտ հաւատարիմ ենք նրան:

26

«Աչք ամենեցուն ի քեզ յուսան, և զու տաս կերակուր նոցա ի ժամու» (Սղմ. ՃնԴ 15):

I.

ա.

Ի՞նչ գեղեցիկ և հաճելի պատկեր է դարձեցնում մեր մէջ այս սաղմոսը: Մեր յիշողութեան մէջ վերակենդանանում են մեր մանկութեան քաղցր օրերը, երբ մենք փոքրիկներս մեծերի հետ միևնոյն սեղանի շուրջն էինք բազմում: Սեղանի գլխին բազմած էր լինում ընտանիքի հայրը, միւս ծայրին ընտանիքի մայրը, որ բաշխում էր մեզ՝ սեղանի շուրջը խմբուած փոքրիկներին՝ անուշահամ կերակուրներ:

Հարուած ուշադրութեամբ աչքերս յառած նայում էինք նրան և հետևում նրա շարժումներին՝ փոքրիկ ձեռներին բռնած պատառաքաղ կամ դգալ: Բաշխումը սկըւում էր փոքրիկներից—մեծերը պարտաւոր էին համբերութեան օրինակ տալ—և կարգով ստանում էր իւրաքանչիւրը իւր բաժինը ժամանակին ու սկսում ուրախ ճաշը:

Պատահում էր որ մանուկներից ոմանց ազան աչքերը դժգոհ էին մնում մօր արդարադատութիւնից, սակայն ի վերջոյ իւրաքանչիւրն էլ գոհ և կուշտ ելնում էր սեղանից՝ փառք տալով արարչին:

Գ.

Եղբէլ են տարիներ, երբ մեզ թուացել է, թէ Աստուած պիտի զլանայ իւր հայրական խնամքը. տաք և չոր ամառ, հարաւի սլարգիկայ-ամպագուրկ երկիրնք՝ և եթէ երբեմն ամպի կտոր երևացել է երկնակամարի վերայ՝ ցրուել ու անցել է առանց յագեցնելու մեր դաշտերի անյագ ծարաւը: Ինչպիսի տխուր զգացմունքներով և խոհերով անցել ենք մենք յաճախ այդ դաշտերի մօտով՝ զգալով նոցա մօտալուտ մահը և պատկերացնելով աշնան ու ձմրան գալիք թանգութեան, սովի ու թշուառութեան հեռանկարը: Սակայն Աստուած ամաչեցնելով մեզ մեր թերահաւատութեան համար՝ փոխել է մեր երկիրն ու հոգսը ուրախութեան՝ մեր կարիքների չափով հունձ տալով մեզ. բայց նորա փոխարէն մեծ առատութիւն է շնորհել մեր պարտէզներին ու այգիներին՝ զարդարելով նոցա կարմրաթուշ խնձորներով, քաղցրահամ տանձերով և խնկահոտ ու անոյշ խաղողով:

Այսպէս ուրեմն երբէք չպէտք է յուսահատուել՝ հաւատալով որ Աստուծոյ հովանաւոր աջը միշտ մեզ հետ է:

Պատահում են յիրաւի անպտուղ տարիներ, սովի տարիներ. Ինչպէս վշտով ու սարսափով ենք լսում մենք այդ մասին: Բայց չէ՞ որ Աստուած մարդուն քարոզել է իւր սիրոյ աւետարանը՝ թէ դուք բոլորդ եղբայրներ էք և երկնաւոր հօր որդիք. ապա ուրեմն պէտք է միմեանց լուծ կրենք և աստուածային պարզւները ծառայացնենք ընդհանուր պէտքերի: Երանի թէ աստուածային այս ձայնը մարդիկ լսէին, երանի թէ աստուածային այս կոչը բաց ականջների և զգայուն սրտերի հանդիպէին, այն ժամանակ եղանակների կամայական խաղերը, բնութեան ցաւկոտ ու կատաղի արտայայտութիւնները՝ փոթորիկ, կարկուտ ևն մեզ համար այլ ևս անաբեկիչ չէին լինի:

Ամէն անգամ հունձը մեզ պիտի յիշեցնէ թէ մենք բոլորս եղբայրներ ենք և մեր բախտը կապուած է միմեանցից: Եւ թէ Աստուած կամենում է որ միասին լինինք, միասին տանենք մեր լուծը, միասին կռուենք մեր կարիքների և թշուառութեան դէմ ու միասին վայելենք աստուածային բարիքներն ու պարգևները. և այն ժամանակ իրաւունք կունենանք Աստուծոյ որդի կոչուելու և ասելու թէ՛ «աչք ամենեցուն ի քեզ յուսան, և դու տաս կերակուր նոցա ի ժամու»:

II.

Սակայն մեր մարմնի հոգսը չէ միայն, որ պիտի զբաղեցնէ մեզ. մենք աւելի հեռուն պիտի գնանք. ևս լսում եմ այն մարդու խօսքը, որ չէր ցանուծ և հնձում, բայց հազարաւոր մարդոց կերակրել էր կարողանում անապատում:

Ես լսում եմ Նորա ձայնը, որ ասում էր՝ «նչ միայն հացիւ կեցցէ մարդ, այլ ամեանայն բանիւ, որ ելանէ ի բերանոյ Աստուծոյ»: Պէտք է ուրեմն Տիրոջ հոգին իշխէ մեզ վերայ, այն հոգին որ աւելի բարձր ձգտումներ ունի և որոնումներ, քան մեր մարմնի հոգսերը, մեր ստամոքսի պահանջները: Այն հոգին՝ որ իւր մասին չի հոգում, այլ եղբօր. այն հոգին որ սիրոյ պահանջը կատարելու համար ոչ մի գոհի և դժուարութեան առաջ չի կանգնում և անկարելիութիւն չի ճանաչում: Իսկ այդ հոգին ճանաչելու առաջնորդում է մեզ այսօրուայ միւս տօնը:

Այսօր հայ եկեղեցին տօնում է երկու տօն՝ Աստուածամօր վերափոխման և խաղողի օրհնութեան կամ որ նոյնն է հունձի տօն:

Ըստ երևութին սօքա տարբեր տօներ են, տարբեր իմաստով, բայց եթէ փոքր ինչ խորասուզուել փորձենք՝

կգտնենք նոցա մէջ ներքին կապ՝ գաղափարի միութիւն, որով հնարաւոր է գարձել այդ երկու տօները ներգաշնակօրէն միացնել և միասին տօնել:

Նոցա միացնող գաղափարը գոհութեան գաղափարն է, որ մենք յաճախ ապերախտութեամբ անգիտանում ենք կամ անտարբերութեամբ մոռացութեան տալիս:

Թերթեցէք Աստուածածնի վերափոխման տօնի երեքօրեայ պատկերը, դուք կտեսնէք Ներսէս Շնորհալու խորաթափանց մտքի և երկիւղած հոգու ծնունդ՝ գեղեցիկ հիւսուած շարահանները մէջ լառաբանութիւն ս. Կոյսի վերափոխման առթիւ՝ ի տրիտուր այն լոյսի, որ տուել է նա աշխարհին, և որի համար աշխարհը ծունր է իջնուիլ երախտագէտ սրտով տիրամօր և նորա որովայնի պտուղ՝ Յիսուս մանկան առաջ:

Կարգացէք մեր մեծ վարդապետի՝ նոյն Շնորհալու խաղողի օրհնութեան առթիւ յօրինած հոգեբուխ աղօթքը՝ և կտեսնէք անհուն երախտագիտութիւն և գոհութիւն Աստուծոյ՝ նորա առատ նիւթական պարզկենքի համար, որ արել է աշխարհին:

Եկեղեցու զարգացման պատմութիւնը վկայում է, որ կանայք մեծ դեր են խաղացել քրիստոնէութեան տարածման գործում. նոքա եղել են Քրիստոսի աւետարանի առաջին ռահվիրաները ու տուել են հաւատոյ բազմաթիւ նահատակներ՝ և իրաւամբ սրբոց դասը գասուել: Սակայն և ոչ մէկը նոցանից կարող է նմանել ս. Կոյս Մարիամին, որ ունի եզակի դիրք:

Ս. Գիրքը քիչ է խօսում նորա մասին, բայց շատ բան է ասում. հետևենք նրան:

Աղքատ ծնողների զաւակ, բայց հարուստ հոգով. գաշտում բուսած անպաճոյճ շուշան, որ չի վախում բնութեան խստութիւններից, բայց ընդունակ մրցելու հարստի թանգարժէք ջերմոցներում խնամուած քնքոյշ ծաղիկների

հետ, որոնք անընդունակ են դիմանալու բնութեան ջնջին ջնջին:

Յիշենք աւետման պատմութիւնը և մենք կտեսնենք տիրամօր հոգու հարստութիւնը, նորա կենդանի հաւատը, անմեղութիւնն ու հեղուցիւնը. ահա նորա հոգու զարգեքը, ահա այն առաքինութիւնները, որոնք իբրև գեղեցիկ մարգարիտներ զարգարում են նրան և որոնց համար յիշուի արժանացել է նա տիրամայր լինելու պատուին:

Յիշենք Յիսուս մանկան ծննդեան պատմութիւնը և Աստուածածինը կպատկերանայ մեր առաջ իւր նիւթական աղքատութեան մէջ հոգևոր հարստութեամբ. ահա տիրամայրը, որ աղքատիկ մտւրքի մէջ պարուրում է իւր մանկանը, սակայն աշխարհի հարուստներից հարուստն է, որովհետև զրկում ունի աննման մի գանձ, որին երկրպագելու եկել էին այն ժամանակուայ յայտնի արեւելցի մոգերը՝ աշխարհի հարուստներն ու իմաստունները, և որին պաշտում է այսօր ամբողջ քաղաքակիրթ աշխարհը:

Նա զրկել է մարդկային էակներից կատարելագունին, որ լուսոյ անսպառ աղբիւր է և որ իւր լուսոյ շողերը սփռել ու սփռում է ամբողջ աշխարհի վերայ, նորա մտքի խաւարը լուսաւորելու համար:

Նա զրկել է սիրոյ հնոցը, որ իւր ջերմութիւնն է շնորհել ու շնորհում մարդկութեան, որին այնքան կարօտում է մարդկութիւնը իւր թշուառ կեանքը սփոփելու համար:

Նա զրկել է գեղեցկութեան արարչին, որ կամենում է մարդկային աններդաշնակ կեանքի մէջ՝ ներգաշնակութիւն մտցնել:


Նա զրկել է մարդու կատարելատիւր, որին հետևելը ամենքիս բարոյական պարտքն է և որ միայն ընդունակ է առաջնորդելու մեզ դէպի մեր իդէալը:

Յիշենք վերջապէս տիրամօրը՝ խաչափայտին փարած և նորա որդուն՝ խաչի վերայ տաքածուած. որպիսի մայրական սիրոյ և յանուն մարդկութեան կատարուած անձնագոհութեան կատարեալ պատկերներ, որոնց նմանը մարդկութիւնը չի տեսել և չի էլ տեսնելու:

Ահա թէ՛ եղբայրներ և քոյրեր, սրպիսի արժանիքների և բարիքների համար է որ մարդկութիւնը տիրամօրը այնքան յարգանք է մատուցել, պաշտամունքի առարկայ դարձրել և հիւսել նորա անուան շուրջը աննման պատմութիւններ: Եւ բնական է, որ լուսոյ հարազատ գաւազը արժանի պիտի լինէր լուսոյ որդիների հետ երկնային օթևաններում իւր հանգիստը վայելել, ուստի և յետ ննջման փոխադրուած է նա վերին աշխարհ և որի վերափոխման յիշատակն է, որ տօնում է այսօր հայ քրիստոնեայ եկեղեցին:

Այսպէս ուրեմն գոհութեան դադափարն է, որ միացնում է երկու տօները. վերափոխման տօն, որ յառաջ է բերում մեր մէջ երախտագիտութեան զգացմունք դէպի աստուածածինը՝ հոգևոր մեծ շնորհի համար. հունձի կամ խաղողի օրհնութեան տօն, որ յառաջ է բերում մեր մէջ գոհութեան զգացում՝ աստուածային նիւթական պարգևների համար:

Աւարտելով խօսքս՝ կառաջարկեմ աղօթել երկնաւորին, որ մեր միտքը, սիրտն ու կամքը իւր հոգու հովանու ներքոյ պահէ, որպէս զի մենք ապրենք հաւատով, յուսով և սիրով և լինենք Աստուծոյ որդիք ու իրաւունք ունենանք ասելով՝ «աչք ամենեցուն ի քեզ յուսան, և դու տաս կերակուր նոցա ի ժամու»: Ամէն:



« Զի այնպէս սիրեաց Աստուած զաշխարհ, մինչև զՈրդին իւր միածին ետ » (Յովհ. Գ 6):

Կայուն չէ այն շէնքը, որ հաստատուն հիմք չունի. դժբախտ է այն մարդը, որ հաստատուն համոզմունք չունի. թշուառ է այն ազգը, որ առաջնորդող իդէալ չունի:

Քրիստոնեայ եղբայրներ, Փրկիչը տուել է մեզ կեանքի իդէալ, որով եթէ ընթանանք՝ երջանիկ կլինինք և՛ այժմ և՛ յաւիտեան: Այդ իդէալն է, որ Փրկիչի սիրելին, սիրոյ աւետարանիչ Յովհաննէսը այսպէս է բանաձևել. «զի այնպէս սիրեաց Աստուած զաշխարհ, մինչև զՈրդին իւր միածին ետ»:

Աւետարանի այս խօսքը և այսօրուայ խաչի տօնը առաջնորդում են մեզ դէպի կառափնատեղին՝ զլիստման վայրը, դէպի Գողգոթան՝ դէպի այն բարձրութիւնը, որ և՛ վշտի և՛ ուրախութեան անսպառ աղբիւր է: Այդ այն վայրն է, որի լոկ յիշողութիւնը սարսափ է ազդում և սարսուռ բերում մարդու վերայ. այդ այն վայրն է, ուր մարդկային մարմնի լիազօր տէր՝ հոռոմայեցի իշխանաւորի լոկ մատի շարժմամբ անկած էին երեք խաչ՝ մարդկային կեանքի խաղաղութիւնը վրդովող երեք աւազակներ խաչելու համար:

Երեք խաչ, որոնք դժբախտ մարդու որդիների արիւնջով պիտի ներկուէին, որոնք վկայ պիտի լինէին մեզ նման երեք արարածների աննկարագրելի տանջանքների

և մահուան: Բայց այդ խաչերից միջինը կրում էր մի կարծեցեալ աւագակ, որի համար՝ ճշմարտութիւնը խաչող հոովմայեցի գատաւորն անդամ՝ ստիպուած եղաւ խոստովանել՝ թէ մեղապարտ չէ, և ամբոխի «խաչեացի» աղաղակին պատասխանել՝ «քաւեալ եմ յարենէ արգարոյդ այդորիկ» (Մատթ. Իկ. 24):

Բանաստեղծի խօսքն է թէ՛ սրբւում է այն տեղը, ուր ոտք է դնում մի բարի մարդ. հետևելով բանաստեղծին կասենք՝ կրկնակի սրբւում է այն տեղը, ուր մի ազնիւ սիրտ դադարում է բարախել, ուր մի ազնիւ մարդու կեանքի թելն է կտրւում:

Եւ բանաստեղծը չի սխալւում:

Այն օրից Գողգոթան՝ այն ան ու սարսափի բլուրը սրբութիւն սրբոց է դարձել, ուր միայն խորին ակնածանքով կարելի է ոտք դնել: Եւ միթէ այդ նուիրական զգացմունքը չէ՞, որ մեր հայրերին և մեզ էլ այսօր մղում է դէպի այդ սրբավայրը, որ դարձել է ուխտատեղի՝ հաւատոյ մի վճիտ աղբիւր, որից խմողը երբէք չի ծարաւում: Այդ զգացմունքն է, որ աճում և դառնում է ճշմարիտ աստուապաշտութիւն: Եւ ինչպէս չպաշտել այն տեղը, ուր մարդկութեան բարերարը իւր վերջին շունչն է փչել, ուր մարդկանցից ամենաազնիւր թափել է իւր արիւնը: Ինչպէս ծունկ չչոքել Նորա առաջ, որ մարդու երջանկութեան համար է միայն ապրել և գործել, որ բոլոր մարդկանց եղբայր է համարել. բայց աւանդ, հէնց այդ եղբայրներից էլ խաչին դամուել:

Եղէլ է արդեօք աշխարհիս մէջ աւելի սոսկալի, բայց և աւելի թանկագին մահ, քան այս մահը . . . և ո՛ւր է գաղանիքը:

Առաքեալը բնորոշում է այս մահուան առանձնայատուկ բնոյթը ասելով՝ «Քրիստոս վասն մեր մեռաւ» (Հռովմ. Ե 9): Նա մեռնում է մեզ համար. անա թէ

ո՛ւր է գաղանիքը, անա թէ ինչո՞ւ է խաչը մեզ համար մեծ սրբութիւն և խաչեցեալը՝ պաշտամունքի առարկայ:

Մեր հայրերը ւմբռնել են այդ մահուան վեհութիւնը, սահմանելով խաչի տօն, խաչի պաշտամունք և յօրինել սրտաբուղիս երգեր՝ նոցա ճշմարիտ բարեպաշտ ոգու ծնունդ: Բայց մենք՝ նախնեաց հարազատ գաւակներս, շատ հեռու ենք մեր պապերից. ո՛ւր է նոցա բարեպաշտ ոգին: Ա՛խ, ինչ երանի կլինէր, եթէ՝ Փրկիչը մի անգամ էլ խաչ ելնէր մեր առաջ, որ հրաշքի ենք կարօտ, որպէս զի այդ անաւոր և խորհրդաւոր տեսարանը բանար մեր աչքն ու մեր սիրտը՝ տեսնելու և զգալու նորա մահուան վեհութիւնը և խաչի փառքը:

Առաջ գնանք, բանանք Փրկչի սիրտը իմանալու՝ թէ ինչն է դրդել Նրան՝ աշխարհին և մարդուն կեանք պարգևելու համար մեռնել. ներքին ինչ շարժառիթներ զրդել են Նրան այս մեծ անձնագոհութիւնը կատարելու:

Մի գաղափար միայն, աւելի ճիշտը, մի էակ, որին Աստուած ենք կոչում, որ իւր էութեամբ և կեանքով սէր էր և որ նրա երջանկութեան և ներքին ոյժի անսպառ աղբիւրն էր: Նա տեսաւ, որ աշխարհը չի ճանաչում այդ էակին, որով ինքը ապրում ու շնչում էր: Աշխարհը առանց այդ էակի երևաց Նրան առանց գաղափարի, ոգորմելի և թշուառ: Եւ անա ներքին մղում զգաց հրապարակ գալու և քարոզելու Աստուծոյ աւետարանը, սիրոյ աւետարանը, որին կարօտում էր աշխարհը իւր փրկութեան համար:

Նորա խօսքը գորաւոր էր և ազդու և՛ աւետարանի վկայութեամբ՝ հիացման ու սքանչացման առարկայ (Մտթ. Է 25). որովհետև նա շնչում ու ապրում էր այդ գաղափարներով: Եւ յիրաւի, ո՞վ էր մինչև Յիսուս՝ մանուկներին այնպէս քնքոյշ սիրով զգուսողն ու իւր բաղուկների վերայ առած օրհնողը. ո՞վ էր այն ժամանակուայ սրբի

անունն վաստակողներին՝ նեղեալներին, կարօտեալներին, կեանքի հոգսերով ընկճուածներին, հիւանդներին և թշուառներին հովանաւորողն ու ցաւակիցը, կամ անարգուած մաքսաւորների ու մեղաւորների հետ նստող-եղնողն ու նոցա հոգուն թեթեւութիւն պարգևողը:

Եւ ահա այսպէս Նա իւր նոր քարոզով և նոր կեանքով աչք ծակող հակապատկեր էր իւր ժամանակակից սուրբ համարուած հայրերին և հակառակ դարերի ընթացքում խնամքով պահպանուած և անուցած՝ հրէական նախապաշարունակներին ու սրբայրած աւանդութիւններին:

Պատմութեան մէջ միշտ տեղի ունեցող հնի և նորի կռիւր անխուսափելի էր և այստեղ իւր բոլոր հետևանքներով: Հնաւանդները ճանաչեցին Յիսուսին որպէս խոսվարար, սրբութիւններ արհամարհող, աստուած հայհոյող, որի հետևանքն եղաւ հեղհեակ աճող ստեղծութիւնը դէպի Յիսուս, որ պիտի լուծուէր նորա մահուամբ:

Ելք կ'ըր ազատուելու այս ճակատագրից, միջոց կ'ըր Յիսուսի զլխին կուտակուած ահարկու սև ամպերը ցրելու:

—Մի ելք կար. կրկին դառնալ իւր հայրենի քաղաքը, ապրել հայրենի յարկի տակ և կացինը ձեռին աշխատել հօր աշխատանոցում. և նորա կեանքը սպանով կլինէր:

Սակայն այս ելք չէր Յիսուսի համար. միթէ կարող էր նա ուրանալ ճշմարտութիւնը, հրաժարուել իւր իղէալից, որին նուիրել էր իւր սրտի իւրաքանչիւր նեարդը, կամ խաբել ամբողջ աշխարհին, որին փրկութիւն էր խոստացել: Ոչ. այս ելք է միայն մեզ՝ մահկանացուներին համար, որ պատրաստ ենք զլուխ ճկել ամեն ստորութեան առաջ մեր անձին յարմարութիւններ տալու նպատակով. իսկ Փրկչի համար դիւրին էր իւր կեանքից, քան իւր գաղափարներից, դաւանած ճշմարտութիւններից հրաժարուել: Եւ յիշաւ Յիսուս հաւատարիմ մնաց իւր կոչմանը ու իբրև հերոս ընկաւ մաքառման գաշտում, որի

ցայտուն նկարագիրը տալիս է մեզ աւետարանիչը: Ահա Պիղատոսի դատաստանատունը. նրա առաջ ծովացած է ամբոխը, որի ձեռքումն է Յիսուս, իբրև մի անպաշտպան զոհ: Նրա վերայ է ուղղուած ամբոխի կատաղի հայեացքը, նրա վերայ են բարձրացած սպառնական բռունցքներ, նրա զլխին է թափոււմ բոլորի անէծքն ու նզովքը:

Եւ ինչո՞ւ. որովհետև Նա սիրում է այդ մոլեռանդ ամբոխին, այդ կոյր ժողովրդին, որ կատաղած գազանի նման, փրփուրը բերնին, արեան ծարաւի՝ սպասում է իւր որսին. որովհետև նրա փրկութեան գաղափարով է ապրում և ձեռք չի քաշում այդ փտած աշխարհից, որ միայն տանջանք ու զրկանք է պատճառել, չար ապերախութիւն և նեռ ստեղծութիւն հրամցուցել իրան:

Ահա, եղբայրներ, վարձը, ահա վախճանը մարդկային անձնուէր կեանքի, անձնագոհ սիրոյ: Ժողովրդի ապերախութիւնից աւելի ծանր ու հողեմաշ էր իւր հարագատների անհաւատարմութիւնը, որոնք փոքրագութեամբ թողին ու փախան իրենց թանկագին վարդապետին: Ըմբռնում էք Յիսուսի հոգեկան այս վիճակը, զգո՞ւմ էք նրա հոգու վերայ լեռնացած ծանրութեան ճնշումը, որ մի ակնթարթում ամեն ինչ ձմլելու ընդունակ է: Բայց Յիսուս, մինչև ի մահ ուժասպառ եղած այդ մարդը վերջին սարսափելի ժամերին տեսածներից ու կրածներից՝ ինչ հերոսական կամք պիտի ունենար, որ զիմանար և իւր թալկացած մարմնով ու խոցուած սրտով խաչ բարձրանալուց յետոյ իսկ՝ մարգասպանների համար ներում խնդրէր ասելով՝ «Հայր, թող դոցա, զի ոչ գիտեն զորձեն»:

Ըմբռնում էք արգետք մեծութիւնը մի մարդու, որ մոռանում է իւր անձի տանջանքն ու կսկիծը, երբ կայ մէկը, որ կարօտում է իւր օգնութեան ու սիրոյն: Յիշեցէք նրա կողքին խաչուած զղջացող աւագակին և Յիսուսի

մխիթարական խօսքերը. յիշեցէք խաչի տակ վշտահար ու արտաբուռախեղ հարազատ մօրը և Յիսուսի մխիթարութիւնը, և ճանաչեցէք սիրելիք՝ թէ Ինչ խաչ է ձեր յարգածը և ով՝ ձեր պաշտածը:

Սակայն յարգում ենք մենք խաչը խօսքով. և պաշտում խաչեցեալին լոկ շրթամբ. ահա հայ ժողովուրդը՝ քաղցած ու ծարաւ. ուր է քո սէրը՝ հայ հարուստ. ահա հայ ժողովուրդը՝ հիւանդ ու ախտաւոր, ուր է քո խնամքը հայ բժիշկ. ահա հայ ժողովուրդը՝ թշուառ ու անմխիթար, ուր է քո սէրը հայ հոգևորական. ահա հայ ժողովուրդը իրաւագուրկ և անօգնական, ուր է քո անձնուէր սէրը հայ փաստաբան. ահա հայ ժողովուրդը սրի և կրակի ձարակ, ուր է քո սէրը հայ երիտասարդ: Միթէ ամենիս սրտում ցամքել է սէրը, սէր՝ որ գերազանցում է մարդկային սրտի ամենագնիւ զգացմունքը և ամենահանձարեղ մտքի ստեղծագործութիւնը:

Շրջապատեցէք այս խաչը՝ հայ եղբայրներ ու քոյրեր, որին փարել են ձեր պապերը, ծունր իջէք այս խաչափայտի առաջ, որ սիրոյ խորհրդանշան է, և աղօթարար ակնածութեամբ վեր նայեցէք գէպի խաչեցեալը, որ կատարողն է ձեր խնդիրների, և յայնժամ «ողորմութիւն և խաղաղութիւն Տեառն մերոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի եղիցի ընդ ձեզ և ընդ ամենեսեանդ». Ամէն:



«Ես եմ հովիւն քաջ. հովիւ քաջ զանձն իւր զնէ ի վերայ ոչխարաց» (Յով. Ժ 27):

I.

Այսօր ամենուրեք, ուր հայ կայ և եկեղեցի, զանգակների տօնական ղօղանջը աւետում է հայ մարդուն մեծ օրուայ գալուստը:

Հայոց Հայրապետի տօնն է:

Հայ մարդու մտաւոր տեսութեան առաջ պատկերանում է Հայոց Հայրապետը Լուսաւորչի հինաւուրց գահի վերայ բազմած՝ հովուական ցուպը ձեռին և մխիթարիչ խօսքը բերնին՝ «ես եմ հովիւն քաջ. հովիւ քաջ զանձն իւր զնէ ի վերայ ոչխարաց»:

Նա չի խօսում որպէս անհատ, այլ որպէս ներկայացուցիչ մեծ հաստատութեան՝ հայոց հայրապետութեան: Հայոց հայրապետը անձն չէ, այլ հայրապետական գաղափարի մարմնացում. հայրապետի տօնը անձի տօն չէ, այլ հաստատութեան:

Այն օրից, երբ մէկը հայ ազգի սէրն ու վստահութիւնը վայելելով արժանի է համարուել Լուսաւորչի գահը բարձրանալու, հէնց այն օրից նա դադրել է անհատ լինելուց, այլ՝ հայրապետութեան գաղափարի ամբողջական երկար շղթայի վերայ մի նոր օղակ ևս աւելացնելով՝ ձուլուել է հայրապետութեան գաղափարի մէջ: Եւ երբ այսօր հայոց եկեղեցին և հայ ժողովուրդը տօնում է իւր

ներկայ գահակալի՝ իւր հայրապետի տօնը, նա տօնում է ոչ թէ անհատի տօն, այլ հաստատութեան, որի անունն է Հայոց Հայրապետութիւն:

Սակայն ինչո՞ւ է տօնում: Եթէ մենք մի թուցիկ յետադարձ ակնարկ ձգենք մեր պատմական անցեալի վերայ՝ ի դէպ ասեմ, հայր շատ էլ չի սիրում իւր անցեալով զբաղուել—կրմբոնենք Հայոց հայրապետութեան կատարած գերը և մեզ համար կարգուի մեր ոգևորութեան գաղանիքը:

Հայոց հայրապետութիւնը հայի համար սրտի պաշտօն է կատարել՝ դարեր շարունակ ապրել է նա հայի անհուն ցաւերով և սակաւ ուրախութիւններով և նորա երակներին կենդանարար արիւն մատակարարելով՝ հոգևոր կեանք պարզել նրան:

Հայոց հայրապետութիւնը հայի համար ստեղծող մտքի դեր է կատարել. լուսաւորուած քրիստոնէական լուսով՝ նա ստեղծել է գրականութիւն և գեղարուեստ՝ ներկայ հայի փառքն ու պարծանքը:

Հայոց հայրապետութիւնը հայի բարձր կամքի արտայայտիչն է եղել՝ տալով առաքինութեան հերոսներ, աստուածային կամքի ճշմարիտ կամակատարներ:

Հայրապետութիւնը վեհ գաղափարների մի փունջ է, որոնք մարմնացել են կեանքի մէջ շնորհիւ հայոց հայրապետների. և եթէ 1600 տարուայ ընթացքում հայոց հայրապետների յաջորդական շարքը գիտենք՝ սրբիսի պատկառելի դէմքեր կտեսնենք, որոնց առջ յակամայից մեր գլուխը կրխոնարհի՝ որքան էլ մեր սրտի մէջ երախտագիտութեան զգացմունքը ցամքած լինի և մեր մտքի մէջ՝ ճշմարտութեան շողը մարած:

Ո՞վ չի ճանաչում Հայաստանի առաքելանման Լուսաւորչին, որ տուել է մեզ հայ եկեղեցի՝ աւետարանի լուսոյ գաղափարներով հայ կեանքի մուրթ անկիւնները

լուսաւորող մի հաստատութիւն, կամ մեծն Ներսէսին, որ զթութեան ու կրթական հաստատութիւններով է զարգարել մեր երկիրը, կամ եկեղեցու երկու ամուսներին՝ ս. Սահակին ու Մեսրոպին, որոնք հային դիր ու դպրութիւն են տուել, կամ Ղեոնդ երէցին, որ կենդանի նահատակ է հանդիսացել իւր հօտի համար պատերազմի դաշտում:

Ո՞վ իրաւունք ունի մոռանալու ազգի և ազգային եկեղեցու ինքնուրոյնութեան համար մաքառող, ներքին կռիւների ժամանակ համերաշխութեան կապ հանդիսացող, արտաքին բռնակալների բարկութիւնը մեղմելով՝ հայրենի երկիրը կորստից ազատող և կամ հայրենի երկիրը բարբարոսների աւերածների և թալանի ասպարէզ դառնալուց յետոյ՝ յուսահատ հայ ժողովրդին յոյս ներշնչող և մխիթարութիւն պարգևող հայրապետներին:

Հայ ազգի և եկեղեցու պատմութիւնը հայ տառապանքների և նեղութիւնների մի անվերջ շղթայ է և հայ երկիրը՝ օտար վայրագ ու անխիղճ ազգերի իբրև մրցութեան ասպարէզ՝ աւերակների թանգարան. ճիշդ այնպէս, ինչպէս այսօր քաղաքակրթութեան փառք և մարդկային արուեստի ու հանճարի ներկայացուցիչ մեծ Ֆրանսիան: Այդ աւերածութիւնների մէջ հայոց հայրապետութիւնն է, որ առկայծեալ պատրոյգի նման անշէջ մնացել է և դարձել հայ ժողովրդի յուսոյ և մխիթարութեան միակ ապաւէնը: Ահա, սիրելիք, թէ ո՞ւր է գաղանիքը այն համակրանքի և թովիչ ոյժի, որ նա ունեցել է դարեր շարունակ հայի աչքում:

II.

Ի՞նչ, անցել են կասէք հին ժամանակները, փոխուել են կեանքի պայմաններն ու կարիքները, պէտք է փոխուեն նաև նորա ղեկավար հաստատութիւնները. սակայն սխալուում էք: Այսօր էլ նա նոյնքան նշանակութիւն ունի որ-

քան և անցեալում, սակայն պակասել է հայի գիտակցութիւնը ըմբռնելու նորա նշանակութիւնը: Հայոց Հայրապետն է հայ ժողովրդի ամբողջութեան ներկայացուցիչը օրէնքի առաջ, մեզ վերայ իշխող պետութիւնների աչքում. նա միայն կարող է իւր ամբողջ հօտի ցաւերի և կարիքների թարգմանը հանդիսանալ և նորա դարաւոր իրաւունքների և արտօնութիւնների պաշտպանը, ինչպէս և այդ իրաւունքների կորստեան պատասխանատուն:

Սակայն ինչո՞վ պաշտպանէ:

Պետական ազգերը իրենց իրաւունքները պաշտպանում են զէնքով. Հայոց Հայրապետը իւր ազգային իրաւունքների պաշտպանութեան համար զուրկ է ֆիզիքական ոյժից: Սակայն նա ունի աւելի բարձր զէնք՝ բարոյական ոյժ, որ միշտ էլ զօրաւոր է եղել և է ֆիզիքականից: Հայոց Հայրապետութեան ոյժը հայ ազգի և իւր պետի սերտ միութեան մէջ է. նորա ոյժը այն գիտակցութեան մէջ է՝ թէ Հայրապետի իրաւունքները ազգի իրաւունքներն են, և թէ այդ իրաւունքները հայ ազգի ամբողջութեան կռած ու կոփած կամքի արտայայտութիւններն են և ոչ այս կամ այն հայրապետի սեփական կամքի պատահական թելադրութիւնները: Եթէ այսպէս մտածենք՝ Հայոց Հայրապետութիւնը հայի համար կղանայ ճշմարիտ կուռք, կստանայ գիտակցական հեղինակութիւն, որով կլինի նա պատկառելի ոյժ և հեղինակութիւն նաև օտարների համար:

Սակայն եթէ մեր հայրապետը այսօր, այս ժամին մտնէ այս տաճարը և կանգնէ մեր մէջ ու զննէ մեզ, ինչպէս երբեմն սրտազէտ հովիւը Սողոմոնի սրահում հրէայ ժողովրդին՝ վստահութիւն կունենայ արդեօք ասելու՝ «ոչխարք իմ ձայնի իմում լսեն», թէ՛ նորա նման ստիպուած կլինի բացազանչելու՝ թէ «չէք յոչխարաց անտի իմոց»:

Հոգևոր հայրեր և հայ ուսուցիչներ, դուք՝ որ կոչուած էք հայի հոգևոր անդաստանի մշակը լինելու՝ ձեզ վերայ է ծանրանում պարտականութիւն հայ ժողովրդի մէջ զարթեցնելու և վառ պահելու Հայրապետի և ազգի միութեան գաղափարի գիտակցութիւնը, որպէս զի այդ զարթած գիտակցութիւնը կենդանի պահէ մեզ իբրև հայ ազգ, մինչև որ նոր արև ծագէ մեր աշխարհին և նոր արեւ՝ նոր կեանք ու նոր կարգեր պարգևէ մեր երկրին:

Իսկ դու, հայ ժողովուրդ, եթէ իբրև հայ մարդ և հայ ազգ ասրել կուզես՝ դիր քո ձգտումներն ու յոյսերը և այն բոլորը, ինչ որ քեզ համար թանգ է՝ Հայրապետի Աթոռի առաջ, հաւատարմով՝ որ նա է քո սրտի սրբութիւնները և իղձերի պահպանն ու կատարողը:

Ուխտիր նորա հաւատարիմ աջակիցը լինելու՝ կանգնելով հայ ազգի փառքի ու երջանկութեան և մեր գաղափարական եկեղեցու պայծառութեան գաղափարների դրօշակի տակ, և այդպիսի հաւատով դիմիր Երկնաւորին ու խնդրիր երկար և բարեբախտ օրեր մեր Հայրապետին, որպէս զի անձնուէր և անվեհեր պաշտպան հովիւ ունենանք՝ միշտ պատրաստ խրախուսելու «Ես եմ հովիւն քաջ, հովիւ քաջ զանձն իւր զնէ ի վերայ ոչխարաց»: Ամէն:



«Վասն Սիօնի ոչ լռեցից և վասն Երուսաղէմի ոչ ներեցից» (Ես. ԿԻ 1):

Փոփոխական է բնութիւնը. փոփոխական է և մարդու վիճակը: Ահա ծովը, երէկ առաւօտեան արշալոյսի շողն երեսին՝ ժպտերես, արևին էր սպասում. յանկարծ ելաւ մըրիկ, սև ամպերը եկան ծածկեցին երկինքը, անդունդից ալիքները արծազանք տուին որոտացող ամպերին և ծովը՝ դէպի ամպերը վազելով՝ իւր յուսահատ գլուխը ժայռերի վերայ փշրեց:

Դեռ երէկ՝ կապուտակ երկնքի տակ բարձրավիզ դալար ծառերը կարմրաթուշ պտուղներով ս. Գրքի անմահական եղեմն էին յիշեցնում: Յանկարծ եկաւ կարկուտ, թափուեցան պտուղները և այն դարգարուն դալար ծառերը՝ ցամքած և կորագլուխ ալևոր դարձան:

Նոյնն է և մարդու վիճակը:

Տեսնում էք ալևոր բանուորին, որի փափուկ անկողինը՝ սառը գետինն է, որի հանգիստը՝ ծանր բեռն է, որի մխիթարիչը՝ մահն է: Սա այն մեծատունն է, որի սեղանի ճոխ փշրանքով իւր նման հազարաւորներ էին կերակրում:

Տեսնում էք այն սգւոր կնոջը, իւր թաղն ու պսակը կորցրած այրուն, իւր զաւակների թարմ շիրիմները ողբացող մօրը: Նա այն կինն է, որին ամենքը երանի էին տալիս, որի գեղեցկութեանը խունկ էին ծխում, որին միակ երջանիկն էին համարում Եւայի դուստրների մէջ:

Աղատութիւն տուէք ձեր մտքին, թուէք գնացէք այն հովիտները, ուր երէկ հայ երկրագործը ուրախ երգով հերկում, ցանում և հնձում էր. ուր հայ հովիւը սառնորակ աղբիւրների մօտ, կանաչագարդ դաշտերում և ծաղկաւէտ լեռների լանջերին իւր հօտն էր արածում: Իսկ այսօր. այսօր այդ երկիրը ամայի է և այրիացած, նորա հարագատ փեսան՝ տառապեալ ու աղքատիկ հայ ժողովուրդը իւր հարագատ հողից կտրուած, օտար հողի վերայ, օտար և անհիւրընկալ երկնքի տակ թափառում է իւր ոսկորները այնտեղ թողնելու սպառնալիքի ենթակայ՝ նման անապատում մահուան դատապարտուած հրեայ ժողովրդին: Այսպէս փոփոխական է բնութիւնը, փոփոխական է և մարդու և՛ ազգերի վիճակը:

Այսպիսի նեղութիւնների և տառապանքների օրերում թէ՛ անհասանքի և թէ՛ ազգերի վերայ յուսահատութեան խորշակն է շնչում. մարդ կորցնում է սէրն ու հաւատը դէպի Աստուած և դէպի մարդ: Եւ հէնց այդ վայրկեանին է, որ կարօտում է նա մարգարէի յուսատու ձայնին՝ «Վասն Սիօնի ոչ լռեցից և վասն Երուսաղէմի ոչ ներեցից»:

Ո՛րքան խորհրդաւոր խօսք, հոգու որպիսի արիութիւն. մինչդեռ հասարակ մահկանացուն ու թուլամորթ ազգը տառապանքների առաջ կորցնում է իւր սէրը դէպի նուիրական սրբութիւնը՝ դէպի Սիօնը, ուր ամփոփուած են փառաւոր անցեալի յիշատակները, ուր երևել է Աստուծոյ փառքը, մարգարէն բորբոքում է իւր սէրը ասելով՝ «ինչ կուզէ թող գայ գլխիս, ես՝ Սիօնն ու Երուսաղէմը՝ իմ հայրենի տաճարն ու քաղաքը մոռնալ չեմ կարող»:

Եւ այս անհուն սէրը յուսոյ լապտեր է վառում մարգարէի առաջ, նա յուսոյ թևերով դէպի հաւատոյ ժայռն է թռչում, ուր կարդում է քարեղէն տախտակների վերայ

Թէ՛ «տիրոջ արգարութիւնը լոյսի պէս պիտի ծագի, տիրոջ փրկութիւնը փայլակի պէս պիտի երևայ»:

Հայ եղբայրներ, մարգարէի առաջնորդող ձայնը մեզ էլ է կանչում այսօր. մեր տառապանքի օրերում չմոռանանք սիրելի հայրենի տաճարը՝ ս. էջմիածինը, որ դարեր շարունակ հայ ժողովրդին իւր թևերի տակ առած պահել ու մեծացրել է, յուսահատութեան օրերին՝ յոյս է տուել, տառապանքների օրերին՝ սէր արտայայտել. չմոռանանք մեր հայրենի երկիրը՝ մեր Մայր Հայաստանը, ուր միայն կարող ենք ապրել ու աճել թեթև պատահարներից մեռնելու վտանգից ազատ:


Սիրենք, և հաւատանք, որ այդ սիրոյ մէջ է վառուելու Աստուծոյ արգարութեան և նորա փրկութեան լապտերը:

Հայ ազգը թէ՛ իւր պատմական անցեալում և թէ՛ ներկայումս անընդհատ նեղութեան և հալածանքի մէջ է եղել. պէտք էր մի հայ սաղմոսերգու Գաւրթ, մի աստուածային երգիչ, որ կարողանար դարէ ի դար հայ մարդուն երսում կուտակուած, նորա հոգին մաշող և լափող ցաւերի զեղեցիկ արտայայտող լինել:

Եթէ մենք մեր վիշտը երգող, մեր լացը լացող երգիչ չենք ունեցել, ունեցել ենք սակայն անձինք, որոնք սէր վառող, յոյս տուող և հաւատ ներշնչող մարգարէի ձայնն են հնչեցրել մեր ականջին. կապել են մեր սիրտը մեր սրբութիւնների հետ, մեր հայրենի հողի հետ՝ ազատ պահելով մեզ յաւիտենական կորստից: Դրանք մեր հայրապետներն են. այսօր էլ հայոց Սիօնից հնչում է մեր ականջին ներկայ հայրապետի բերնով նոյն սէրը, յոյսն ու հաւատը՝ հայ վշտակոծ ազգի փրկութեան միակ ճանապարհը: Եկէք ուրեմն, եղբայրներ, փարենք այդ տաճարին, դնենք նորա աթոռի առաջ մեր իրգները, մեր յոյսերը և այն բոլորը, որ մեզ համար թանկ է, հաւատա-

լով, որ նա մեր սրտի սրբութիւնների պահապանն է և մեր ուխտի կատարողը:

Աղօթենք անմահ խաչեցեալին, որ զօրացնէ իւր օծեալին հայ ազգի փառքին ծառայելու համար և մեզ արժանացնէ բարեբախտ օրերում տօնելու մեր հայրապետի անուանակոչութեան ապագայ տարեդարձները և զօրացնէ մեր հաւատը սաղմոսերգուի հետ ձայնելու՝ «Աստուած փրկէ զՍիոնը և շինեսցին քաղաքը Հայաստանի» (Սղմ. ԿՐ. 36):



«Քաջալերեցարուք, ես եմ, մի երկունչիք» (Մտթ. ԺԴ 27—Մրկ. 9. 50):

Ուղիղ 24 տարի սրանից առաջ, 20 տարեկան մի երիտասարդ, գաղափարական մթնոլորտում սնուած ու մեծցած, տարուած ապագայի յոյսերով, ապագայ՝ որ այնքան գրաւիչ գոյներով է պատկերանում երիտասարդական վառ երևակայութեան մէջ, կեանքի բարին ու չարը չճաշակած՝ առի ոտքս գիտութեան տաճարի շէմքից և փորձեցի կոխել սրբութեան տաճարի շէմքը:

Նոր կոչմանս պարտքի գիտակցութիւնը և բեռի ծանրութիւնը ընկճեցին հողիս, ծնկներս թուլացան և ես կանգ առի՝ կարօտ յուսադրող մի ձայնի: Ես յիշեցի աւետարանական խորհրդաւոր և հրաշալի պատկերը—Յիսուս ջրերի վերայ . . .

Մոայլ գիշեր, մրրկածուի կատաղի ծով, փրփրազէզ ալիքներին խաղալիկ դարձած մի խեղճ նաւ և մէջը յուսահատութեան ծայրը հասած Պետրոս առաքեալին իւր ընկերներով: Իսկ անդին՝ Մարդոյ որդին, որ անվրդով քայլում էր անդունդի վերայ, նա նոր էր իջել սրբութեան սարից, ուր ժամեր շարունակ աղօթքի և առանձնութեան մէջ էր անցրել իւր Հօր հետ: Նորա երկնակիս մաքուր ոտքերին մեղաւոր տարրը նայել չէր համարձակւում, երկնքի և երկրի մէջ տեղն էր շրջում նա և իւր յուսադրող ձայնով վերակենդանութիւն ներշնչում ընկրդ-

մելու մօտ հողիներին. «Քաջալերեցարուք, ես եմ, մի երկունչիք»: Ահա այդ ձայնը, այդ քաջալերիչ, յուսադրող և հաւատ ներշնչող ձայնն էր պէտք նաև ինձ:

Անցան 24 երկար տարիներ, կեանքի ծովի կատաղի ալիքները կոհակ-կոհակ բարձրացան, լեռնացան և փորձեցին խեղդել իմ ներքին բարոյական կենդանութեան սաղմերը, բայց դեռ հնչում էր ականջումս մանկութեան օրերից աւանդ մնացած հայ եկեղեցու հիմնադրի՝ ս. Լուսաւորչի դարթուցիչ ձայնը՝ «եկայք շինեսցուք սուրբ զխորաննն լուսոյ . . .», ինչպէս նաև արարչական յուսատու ձայնը, որին և՛ ծովը և՛ հողմը հնազանդ են և առիւծաբար մոնչող կատաղի ալիքները լուռ և խօնարհ գառնուկների նման նորա ոտքերին են փարում՝ նեցուկ դարձան ինձ, և իմ «Տէր, փրկեա՛ զիս» բացազանչութեանն ի սրտասխան՝ մեկնեց Տէրը իւր ազատարար ձեռքը և փրկելով՝ կեանքի ծովի ալիքների վերայ շրջել սովորեցրեց, և ահա այս մարգանքների շնորհիւ՝ մաքառման մէջ գիմացկուն և չյուսահատող դարձրեց:

Եւ երբ այժմ կրկին բացուեցան առաջս սրբութեան տաճարի դռները, կրկին առիթ ներկայացաւ կոխելու նորա շէմքը, այլ ևս հողիս չթուլացաւ, ծնկներս չծալուեցին, որովհետև ձիգ տարիների ընթացքում կեանքի փորձն ու մաքառումը, Փրկչի յուսատու ձայնը և ձեռնադրութեան շնորհիւ աւանդուած շնորհաբաշխ ս. Հողին վստահութիւն ներշնչեցին ինձ գէպի իմ ոյժերը և համարձակութիւն տուին առանց երկչոտութեան աշխատելու հողևոր ասպարիզում՝ հաւատալով ապագայ յաջողութեան:

Եւ երբ այսօր Հայոց Հայրապետը, Ժողովրդի ընտրեալն ու սիրելին վստահութեամբ հրաւիրում է ինձ միխթարիչ լինել հայ դաղթական Ժողովրդին, ստանձնել աւետարանի քարոզչի վեհ և վսեմ կոչումը՝ ես չտա-

տանուեցայ, այլ վստահ պատրաստակամութիւն ցոյց տուի՝ հաւատարմով որ Փրկչի լուծը քաղցր և բեռը փոքրոգի է, և որ Նա իրեն ապաւինողներին անօղնական չի թողնի:

Ո՛րքան յուշեր վերարծարծեց իմ մէջ այդ հրաւէրը, որքան ջերմութիւն յառաջ բերաւ իմ մէջ այդ կոչը— Տարիներ շարունակ պանդխտութեան մէջ՝ մայր հայրենիքի կարօտը սրտումս՝ վերջապէս եկայ և արժանացայ կրկին տեսնելու և համբուրելու հայրենի հողն և ըմպելու նորա կենդանարար ջուրը: Իզուր չէ, որ հայ բանաստեղծների զգայուն սրտերը միշտ յուզուել և ոգևորուել են հայրենի բնութեան գեղեցկութեամբ. և մի՞թէ կարելի է չհիանալ տեսնելով Հայաստանի գեղեցկատեսիլ հովիտները, դէպի երկինք ձգող գոյնզգոյն ծաղիկներով նախշուն սարերը. հապտ բազմաթիւ գետերը արեգակի ձաձանջների հետ խաղացող արծաթափայլ ջրերով, հապա թռչունների անուշ երգը. այս բոլորը միանում և տալիս են մեզ եղեմական դրախտի պատկերը:

Բայց աւելի խորհրդաւոր և ազդու են կարօտակէզ հայ ուխտաւորի համար աստուածային և մարդկային արարչական ձեռքի անփոփոխ, յարատե և մնայուն գործերը, որոնք յիշեցնում են մեզ մեր անցեալ կեանքի, երբեմնի հեքոսական շրջանը, հայ ժողովրդի փառապանծ անցեալը, որոնք լուռ վկաներն են նորա արիութեան և հոգեկան առաքինութիւնների, բայց և նորա անհուն տառապանքների ու վշտերի մնայուն վշտակիցն ու ցաւակիցը: Ահա Մասիսը, որ ցցուած է Հայաստանի սրտում և անխօս վկայ հայոց պատմութեան՝ մինչև երկինք բարձրացող զլիսով բողոքում է հայի վշտերի և տառապանքների համար, բողոքում է քրիստոնեայ մարդկութեան ձեռքով կատարուած և կատարող անարդարութեան դէմ: Ահա Երասխը, որ լալիս է հայի ցաւը և որ այնքան սի-

րուն պատկերացրել է մեր անմահ բանաստեղծ Ռափայէլ Պատկանեսանը: Ահա և մեր պապերի ձեռքով Արարատեան դաշտի կենտրոնում հաստատուն կանգնած ձերուկ մենաստանը. որքան խորհրդաւոր է նորա տեսքը— նա և՛ յիշեցնում է մեզ հայի կրած անցեալ վշտերը, որոնց ահանատես վկան է եղել, և՛ կարծես մխիթիրում ու հոգի է ներշնչում տսելով՝ «քաջալերեցարուք, ես եմ, մի երկնչիք» ձեր վաղեմի պաշտպանը, ձեր մշտական հովանաւորը, որ միշտ իւր թևերի տակ է առել հայ մարդուն, ջերմացրել ու կեանք պարգևել նրան:

Որպէս ուխտաւոր մտայ ներս, չորքեցի իջման սեղանի առաջ, ուր Միածինը ոսկէ սևամբ բաղխել է երկիրը, ուր հիմնել է ս. Գրիգորը իւր սեղանը, որտեղից միշտ հնչել է հայի ականջին երկնային ձայնը, ճշմարտութեան ձայնը: Սա այն հաստատութիւնն է, որի հետ կապուած են մեր ինկելի հայրապետների անունները՝ ս. Լուսաւորչի, ս. Մանակի և ս. Մեսրոպի, որոնք մեր կեանքի սիւները անկեցին և մեր գոյութիւնը աշխարհիս երեսին ապահովեցին՝ հաստատելով Հայոց եկեղեցին, տալով հայ զիր ու գրականութիւն, և այսպէս դրին հայի հոգևոր և մտաւոր վերածնութեան սկիզբը: Համբուրեցի նորա քարերը իմ և ձեր կողմից, որոնք միշտ հայ տաքազիր ժողովրդի համար պաշտամունքի աւարկայ են եղել և կապելով նորա սիրտը իրեն հետ՝ ծնել են նոյն խոհերը և նոյն զգացմունքը՝ յաւէտ վե՛ն ու վսեմ և միշտ բարձր ու երկնային:

Մեծ է այս հաստատութեան բարոյական ոյժը. ես աչքովս տեսայ այն մեծ ոգևորութիւնը, հայ զգացմունքների ուռձացումը, որ տեղի ունեցաւ համազգային մեծ տօնի օրերին. մեր պապերի մնայուն յուշարձանները ընդհանուր ոգևորութիւն յառաջ բերին և՛ հայ ազատամտի և՛ հայ պահպանողականի, և՛ հայ հոգևորականի և՛ հայ

ժողովրդի մէջ հաւասարապէս, որ ծնաւ մի զազափար, լսելի միայն մեր սրտերում:

«Նկայք շինեսցուք սուրբ զխորանն լուսոյ . . .»: Այս այն ձայնն էր, որ 16 դար մեզնից առաջ հնչեցրեց Արարատեան դաշտում հայի մեծ լուսաւորիչը ի դործ և ի շինութիւն հրաւիրելով հայ մարդուն: Այս ձայնին արձագանք տւողը մի հսկայ արքայ էր. անձամբ փորեց նա հիմքը, իւր յաղթական ուսերի վերայ Մասիսից քարեր բերաւ այս շինուածքի համար, որ լուսոյ խորան պիտի շինէր և անսպառ լոյս սփռէր Հայաստան աշխարհին:

Սակայն այս շինուածքը, որի վերայ մեր հայրերը աշխատել են՝ նիւթական դորութեան վերայ չէ հիմնուած, Տրդատի բերած քարերը չեն նորա բուն հաստատութիւնը կազմում, այլ այն ոգին, որ երբեմն Արարատի լեռները դաշտացրեց, ձորերը հարթեց. նոյն այն ոգին այսօր էլ կարող է թզուկներից հերոսներ պատրաստել, աւերակը շէն դարձնել: Կենդանի բարբառ դարձած խօսում է նա մեր սրտի, մեր հոգու հետ ամեն մի անկիւնից, ամեն մի բլուրի վերայից. զեար, որ խորշովում է, տերևը՝ որ սօսափում է՝ նոյն հին երգն է միշտ երգում—«հայ մարդ, քո կորուստը մօտ է», սթափուիր, ել, ազգովին համերաշխ գործունէութեամբ անցեայի թողածը պահելու, աւերակը շէնցնելու, ընդհանուր ուժով հասարակաց փրկութեան նոր շէնք կառուցանելու բուն ձգտումը միայն քո կեանքը ապահովել կարող է:

Եւ անա Մայր Սիօնի գագաթից Հայաստանի մեծ լուսաւորչի յաջորդը՝ ներկայ Հայրապետը ի սփիւռս աշխարհի ցրուած իւր գաւակներին «Նկայք շինեսցուք...» հրաւերն է կարգում: Շինելու շատ բան կայ, բայց մէկն է ամենից կարևորը. սիրան է կենդանութեան գործարանը, կենտրոնից պիտի սկսենք վերանորոգութեան գործը: Հայութեան սիրտը՝ հայ կեանքի կենտրոնը ս. Էջմի-

ածինն է. իւրաքանչիւր այցելու՝ տեսնելով Էջմիածինը՝ յիշում է թէ հոգևոր կեանքի մի կենտրոն ունի, թէ այդ կենտրոնի կենդանութիւնը և նրա հետ կենդանի կապ պահելը նոյնչափ անհրաժեշտ է, որչափ հայի ինքնուրոյն ազգային-եկեղեցական կեանքի պահպանութիւնը: Հայ ժողովուրդը՝ դարեր շարունակ ապրելով միևնոյն կեանքով, միևնոյն սկզբունքներով և միևնոյն պատմական բախտով՝ ստեղծել է միութեան մի ներքին հոգևոր կապ: Ահա այդ հանգոյցն է ս. Էջմիածինը, և Ամենայն Հայոց Հայրապետը՝ կենդանի ներկայացուցիչը այդ նուիրական դադափարի: Ով բաժանուի այդ կենտրոնից՝ կըկորցնէ գոյութեան իրաւունքը և կեանքի նպատակը, ինչպէս բնից պոկուած մի ոստ, որ չորանում և կորչում է անհետ: Ուխտեցէք ուրեմն սիրելիք ձեր կեանքում գոնէ մի անգամ տեսնելու այդ հաստատութիւնը՝ հանուր հայութեան զգացմունքով ապրելու և միութեան մէջ մնալու համար:

Եւ գալիս եմ այդ հաստատութիւնից բերելով Հայոց Հայրապետի օրհնութիւնն ու գոհունակութիւնը Նոր-Նախիջևանի և Ռոստովի հայ համայնքին այն հասուն ազգային ինքնագիտակցութեան համար, որ ցոյց տալիք լուսոյ տաճարների բարոյական շինութեան գործում, դառնալով արձագանքը «Նկայք շինեսցուք սուրբ զխորանն լուսոյ» խօսքերի:

Գալիս եմ մայր երկրից և բերում նրա ողջոյնն ու պատուէրը՝ միշտ վառ պահելու հայ ոգին:

Աւարտելով խօսքս կիսնդրեմ, որ աղօթէք, սիրելիք, Ձեր Հայրապետի համար, սահմանի այն կողմը գտնուող ձեր հարազատների համար, որ ջերմ արև փայլէ հայրենի տան վերայ, որ անցնի ցրտաշունչ ձմեռը, դադրեն տառապելոյց ողբերն ու տրտունջները և դառնան գոհութեան խաղաղ մաղթանքներ: Աղօթեցէք նաև ինձ համար, որ անսպառ հոգով՝ ճշմարտութեամբ և արդարութեամբ

զինուած՝ նուիրեմ իմ թոյլ ոյժերը իմ հարազատների բարօրութեանը: Իսկ ես իմ անդրանիկ պաղատանքս կըմատուցանեմ Բարձրեալին, որ ձեզ և ձեր զաւակներին հովանի լինի և օրհնէ՝ ու ձեր բարի գործերին յաջողութիւն պարգևէ. Ամէն:



«Սաղազութիւն թողում ձեզ, զխաղազութիւն զիմ տամ ձեզ, ոչ որպէս աշխարհս տայ՝ տամ ես ձեզ»:
(Յովհ. ԺԴ 27):

Ալեկոծ ծովի նման ազմկել է աշխարհը, նաւի վերայ յուսահատ ճամբորդի պէս կորցրել է մարդկութիւնը իւր հաւասարակշռութիւնը: Աշխարհի ցաւին դարման անողը չկայ, յուսահատ մարդկութեան յոյս տուողը չկայ: Եկ, Տէր Յիսուս, հնչիր քո խաղազութեան ողջոյնը մեր ախանջին, որ մեր ընկճուած ու յուսահատ հոգին կենդանանայ ու զաւարթանայ, ինչպէս յարութեանդ կիրակի իրկունը մտար աշակերտներիդ դռնփակ ժողովարանը՝ խաղազութեան ողջոյն տուիր և նոցա ալեկոծ հոգուն խաղազութիւն շնորհեցիր, նոցա յուսահատ ու ընկճուած սրտին հաւատ ու յոյս ներշնչեցիր:

Որին զիմենք, եթէ ոչ Քեզ՝ խաղազութեան իշխան, որի ծնունդը հրեշտակների բերնով աւետուել է մարդկութեան, որպէս խաղազութեան իշխանի, որի երկրային կեանքը զարգարուել է խաղազութեան գործերով, որի քարոզը եղել է խաղազութեան աւետիք կտորուած սըրտերի, ընկճուած հոգիների, աշխարհի թշուառների ու անտէրների համար. որի տունը, ուր այժմ ժողովել ենք՝ խաղազութեան միակ վայրն է այս խռովեալ աշխարհում, ուր աշխարհագորդ փոթորիկները անցնում-գնում են,

կուսակցական պայքարները՝ վախճան ստանում և կրքերի յորձանքները՝ թուլանում քո սրբազան ներկայութեամբ:

Յիսուս է միայն ճշմարիտ խաղաղութեան պարզեւիչը. այն, աշխարհն էլ է տալիս խաղաղութիւն, սակայն կեղծ և խաբուսիկ. նա մի ձեռքով խաղաղութեան ձիթենին է մեկնում քեզ, իսկ միւսով՝ սուրը խրում սիրտդ. նա այսօր ժպտում է երեսիդ, իսկ վաղը՝ ատամները կրճատացնում վրադ յետեւիցդ:

Ով աշխարհի պատրանքը ճաշակել է, սուտ ընկերոջ անհաւատարմութեան վկայ եղել՝ նա անշուշտ համոզուել է, որ գնւր է որոնել աշխարհում ճշմարիտ և տեւական խաղաղութիւն, այլ պէտք է դիմել միայն մեզ համար խաչ ելած և յարութիւն առած Յիսուսին, որ խաչից իջաւ, գերեզմանից յաղթական ելաւ և իւր մտերիմներին խաղաղութեան ողջոյն բերաւ, նոցա դառնացած ու ընկճուած հոգիները ուրախութեամբ լցուց:

Յարուցեալը չերեցաւ ոչ իւր ուխտեալ թշնամիներին և ոչ էլ իսրայէլի կոյր ժողովրդին, այլ իւր աշակերտների փոքրիկ խաղաղ խմբակին, զի երկիւզած հոգիներն էին ծարաւի նորա տեսութեան, ինչպէս Մարիամը՝ առաւօտեան Գեթսեմանի պարտիզում, Պետրոսը՝ ցերեկը, Էմամուս գնացող աշակերտները՝ երեկոյեան և համախմբուած աշակերտները՝ գիշերը:

Նոքա համախմբուել էին տրամած հոգով և՛ դայլից խրանած ոչխարների նման՝ երկիւղը սրտերում գուցէ նոյն սրահում, ուր քանի մի օր առաջ Տէրը վերջին անգամ նոցա հետ սեղան էր նստել: Սա մի փոքրիկ համայնք էր՝ միասիրտ, միախորհուրդ, որի գլուխը թէև խլուած, բայց հոգով դեռ նոցա հետ էր՝ կապուած կենդանի և հարուստ յիշողութիւններով, վառ սիրով և խորին վշտով: Ահա այս շրջանն է մանում Փրկիչը խաղաղութեան ողջունով. այսպիսի շրջաններ է որոնում նա՝ այսօր

էլ շնորհելու իւր խաղաղութեան ձիթենին:

Ի սրտէ ցանկանում եմ բոլորիդ տալ Փրկչի խաղաղութեան ողջոյնը, որ տանէք ձեզ հետ այստեղից և երբէք չկորցնէք. բայց մտածում եմ՝ թէ արդեօք սին խօսք չի լինի այս, և սուտ մարգարէ չեմ լինի ես, որ աղաղակում է խաղաղութիւն, առանց խաղաղութիւն բերել կրնալու: Փրկիչը ինքը, որ բերել էր իւր խաղաղութիւնը ամբողջ աշխարհին՝ չկարողացաւ բոլորին բաշխել, այլ միայն ընտրեալներին՝ իւր աշակերտներին, որոնց սիրտը ընդունակ էր խաղաղութեան վայր լինելու:

Դիտեցէք տասնևմէկին՝ որոնք որպէս ծարաւի ճըշմարտութեան, երեք տարի շարունակ անյազ լսում էին Փրկչի բերնից ելած խօսքերը, և հլու ու հնազանդ անշեղ հետևում նրան, որով արժանացան նորա խաղաղութեան ողջունին: Դուն էլ իմ սիրելի համայնք, եթէ կամենում ես Փրկչի խաղաղութիւնը ճաշակել՝ ականջ դիր նորա խօսքին, պահիր նրա խբատը, գնա՛ նրա ճանապարհը, որ լինիս նրա հարազատ աշակերտը և արժանանաս նրա խաղաղութեան ողջունին:

Դիտեցէք նրա աշակերտներին՝ աշխարհից մեկուսացած, մարդկանցից անջատուած, գոցի տակ նստած, սակայն ոչ արհամարհելով աշխարհը կամ ատելով մարդկանց, այլ միայն սրտերը գոցելով անաստուած աշխարհի առաջ, հոգիները անբիծ պահելու համար աշխարհի անթիւ ունայն մոլորութիւններից, զի Փրկչի խաղաղութիւնը թագաւորում է հաւատացող սրտերում և անարատ հոգիներում:

Դիտեցէք նրա աշակերտներին՝ որոնք սիրով շաղկապուած, աշխարհի շարութեան հանդէպ հաւատով միացած պաշտպանւում էին. դուն էլ իմ սիրելի համայնք, եթէ կամենում ես Փրկչի խաղաղութիւնը ճաշակել՝ հետեւիր նրա համայնքին, պահիր նրա հոգին, զի ուր քա-

ըողուում է նրա աւետարանը, ուր բաշխուում են նրա խորհուրդները, ուր ճաշակուում է նրա սեղանը, ուր թագաւորուում է նրա սէրն ու հաւատը և ուր ի խորոց սրտից աղօթքներ են վերառաքուում դէպի նա՝ իմացիր, որ նա այնտեղ է, իշխուում է նրա հոգին և տիրուում է նրա խաղաղութիւնը:

Միայն իւր աշակերտներին է բերուում նա խաղաղութիւն. սակայն մի կարծէք՝ թէ պէտք է լինել սուրբ և կատարեալ. սրբերի ժողովարանուում և կատարեալների օթեաններուում Փրկիչը տեղ չունի, զի նա եկել է մեղաւորների՝ և ոչ արդարների, հիւանդների՝ և ոչ առողջների համար:

Միթէ սրբեր էին և կատարեալներ, որ նրա շուրջն էին խմբուել Երուսաղէմում. ոչ, այլ թոյլ և անկատար էակներ. յիշեցէք Պետրոսին՝ երբեմն վատասիրտ և երբեմն ուրացող, կամ Թովմասին՝ կասկածամտութեան հերոսին և կամ ապականութեան աղմի մէջ թաւալլոր Մարիամ Մագդաղենացուն: Սակայն Փրկիչը «ոչ կամի դմահ մեղաւորին, այլ դառնալն նրա և ապաշխարելն», ուստի՝ եթէ մեր մէջ կան Թովմասներ, սակայն հետամուտ իրենց հաւատը հաստատելու, ուրացող Պետրոսներ, սակայն դառնապէս լացող և ապաշխարող, բարոյապէս ընկած Մագդաղենացիներ, սակայն ընդունակ սեփական արտասուքով իրենց մեղքերը լուանալու՝ թող հաստատ իմանան, որ այդպիսիներին է որոնում Փրկիչը և նոցա է բաշխում իւր խաղաղութեան ողջոյնը, նոցա է շնորհում իւր ուրախութեան ժպիտը, ինչպէս երբեմն իւր աշակերտներին: Եթէ դուք էլ, սիրելի եղբայրներ և քոյրեր, կկամենաք Փրկչի խաղաղութիւնը ճաշակել և նրա ուրախ ու պայծառ երեսը տեսնել՝ նուիրեցէք ձեր սիրտը նրան, քայլեցէք նրա ճամբով, ապրեցէք նրա կեանքով և հաւատացէք, որ այսօր իսկ նա կայցելէ ձեր գիւղը, կմտնէ ձեր լացող բնակարանները մխիթարութեան և օգնութեան ողջունով:

կուգայ ձեր տունը՝ այր և կնոջ, քոյր և եղբօր, ծնողաց և որդոց բաժան սրտերին միութեան և սիրոյ ողջոյն բերելով. կայցելէ կասկածամիտ հոգիներին և մանկական հաւատ ներշնչելով՝ նոցա յաւիտենական մաքառումներին վերջ կդնէ. կմերձենայ մեղաւոր հոգիներին և՛ ապաշխարութեան զղացում զարթեցնելով՝ խաղաղութեան ողջոյն կբերէ. կկանգնի տանջող հիւանդի անկողնի մօտ և հեծող մեռնողի մահճի առաջ՝ և մխիթարութեան ողջոյն կուտայ:

Այսպէս եղբայրներ և քոյրեր, Փրկչի ողջոյնը առատ է երկնային խաղաղութեամբ, եկէք դառնանք նրա աշակերտ, որ հնչեցնէ մեր ականջին իւր խաղաղութեան ողջունի ձայնը, զարթեցնէ մեր սրտերում իւր խաղաղութեան ողջոյնը, որպէս զի մենք այս խաղաղութիւն ու հաւասարակշռութիւն կորցրած աշխարհում ապրենք նրա խաղաղութեամբ և յետ աստեացս լսենք նրա խաղաղութեան ողջոյնը. Ամէն:



ԴԱՄԲԱՆԱԿԱՆՆԵՐ

«Մի խոովեսցին սիրաք ձեր, այլ հաւատացէք յԱստուած. ի տան հօր իմոյ օթեանք բազում են» (Յովհ. ԺԴ 1):

Տէր, ինչպէս շխտովի իմ սիրաք. գարունը պիտի գայ և ես տեսնելու չեմ. մայիսի անուշ քամին պիտի հնչէ՞ և միայն ծառերի կարմիր ու ճերմակ ծաղիկները գերեզմանիս վերայ պիտի թափուին: Այս աննման երկիրը յաւիտեան պիտի մեռնի ինձ համար, և ո՞ւր պիտի լինի իմ հայրենիքը, հոգուս կայանը:

Ահա մարդկային կեանքի առեղծուածներէց մեծագոյնը, որ ամեն անգամ ծառանում է մեր առաջ, մեզ հարածող ստուերի նման հետևում է մեզ, երբ սառը դազաղի շուրջն ենք կանգնած, կամ մէկի մահուան բօթն առնում:

Ո՛վ մարդ, դու որ միշտ քո տենչերի և ձգտումների վախճանական յագեցումը երկրի վերայ ես որոնում՝ մոլորում ես. գեղեցիկ բնութիւնը հրաժարւում է քեզ պատասխանել: Հարցիդ պատասխան տուողը վերին աշխարհի մի ձայն է, մարդկութեան մեծ վարդապետի յուսատու ձայնը, որ հնչեց երբեմն հրաժեշտի ժամին՝ իւր յուսահատ և անմխիթար աշակերտներին յուսադրելով և մխիթարելով, և որ այժմ էլ գալիս է մեզ մխիթարելու և սփոփելու ասելով՝ «ի տան հօր իմոյ օթեանք բազում են»:

Լսիր ուրեմն, սով մարդ, Փրկչի ձայնը. երկիրը գեղեցիկ է, բայց աւելի գեղեցիկ է Տիրոջ տունը՝ մեր ամենիս ապագայ օթևանը: Աշխարհը, որ այնքան գեղեցիկ է մայիսի պայծառ արև օրերին, որ լի է աստուածային սիրով և իմաստութեամբ՝ ու հարուստ անշափ հրաշալիքներով, սակայն նա Աստուծոյ տունը չէ, քո ֆնայուն հայրենիքը չէ, այլ միայն քո պանդխտութեան վայրը, քո անհուն վշտերի աղբիւրը, որից օր ատաջ ազատուել ես փափարում:

Անհոգ եղիք, Աստուծոյ ծառայ, կայ մի այլ հայրենիք՝ Աստուծոյ տուն, որ Աստուծոյ սրբիների ժողովաբանն է, ուր իշխում է Նրա փառքը, ուր թագաւորում է Նրա կամքը, ուր դեկավարում է Նրա աջը, ուր խաւարը խոսող դագարում է մաքառել լոյսի դէմ: Սակայն եթէ կամենաք տեսնել Աստուծոյ տունը՝ անկարող եմ ցոյց տալ ձեզ երկրի և երկնքի քարտէզների վերայ: Նրա պատկերը չի կարող տալ ոչ մի նկարիչ և ոչ էլ նրա նկարագիրը որ և է բանաստեղծ, այլ նա ըմբռնելի է միայն հաւատով և հասանելի անգուլ աշխատանքով:

«Երանի մեռելոցն, որք ի Տէր ննջեցին, դայս ասէ Հոգին. քանզի հանգեան յաշխատութենէ իւրեանց. զի գործք իւրեանց չոգան դէտ նոցա» (Յայտ. ԺԳ. 13):

Հանգստութիւնը քաղցր է կատարած գործից յետոյ. երբ գործ չկայ, չկայ նաև հանգստութիւն: Աշխատութիւնը առաջին օրէնքն է, որ Աստուած հաստատեց Եդեմում և վերջին օրհնութիւնն է, որ լսում ենք նրանից ս. Գրքում: Մեր աշխատութեան ասպարէզը երկիրն է, մի մեծ այգի, որ մարդը պէտք է մշակէ. ով մարդ, աշխատիր մինչև որ մահը խլէ ազատութիւնդ. միայն այն ժամանակ կատարաստ հանգստութիւն. երկինքը ծոյլերի և անշահների տեղը չէ:

«Նոքա հանգեան յաշխատութենէ իւրեանց . . . »

Թնչ գործեր. ոչ այն գործերը, որ միշտ դիտում ենք մարդկային կեանքի մէջ—ոչ ոսկի և արծաթ դիզելու անյազ տենչ, որի համար անհուն աշխատանք է թափւում և որ յաճախ մահից յետոյ ծախսւում է ատած նպատակների համար և ատած մարդկանց ձեռքով: Ո՛չ սին գովեստներ, որոնց համար ստաած ականջը խուլ է. ոչ թանկագին գոհարներ, որոնք ուրիշների վերայ կփայլին գեանի տակ իրենց փառուց յետոյ, ոչ մեծագին հազուսաններ, որոնց փոխարէն պատանք կունենան, ոչ հոյակապ աներ, որոնցից ընդ միշտ կելնեն՝ նեղ ու խոնաւ գերեզմանի մէջ ամփոփուելու համար:

Ո՛չ, այս գործերը չեն մարդուն հետևողը, որոնք դատաւարտուած են մահուան ու ոչնչացման, այլ գործեր՝ որոնք ծնունդ են սիրոյ, արդարութեան, անձնուիրութեան և այլ առաքինութիւնների՝ կոչուած յաւիտեան տարելու համար:

Ահա այդ գործերն են եղբայրներ, որ զարդարում են նաև մեր ամենիս սիրած մարդու կեանքը. նոքա են որ բերել են մեզ այսպեղ՝ մեր մեծ աշխատաւորի և բարերարի որպէս կենդանի վկաներ:


Ահա տեսնում եմ քաղաքային խորհրդի ալեղարդ անդամներ, որոնց հետ 30 և աւելի տարիներ ծառայել ես մեզ յանուն արդարութեան և ճշմարտութեան, առանց կեղծիքի և ստի. ընդունիր նոցա ցաւը բաժանմանդ առթիւ:

Ահա տեսնում եմ խեղճերի և անօգնականների ստուար բազմութիւն, որոնց համար սիրով օր ու դիշեր տանջուել ես իբրև բարեպաշտ քրիստոնեայ, իբրև զգայուն սիրաունեցող մարդ, թող նոցա դառն արցունքի տաք կաթիլները լինին մխիթար քո թանկագին ընտանիքի: Ահա մեծ խումբ մտաւորականներ, քո հոգեոր ընկերներն ու բարեկամները, որոնց բոլորի սիրտը քաղցր բնաւորութեամբը

զրաւել ես դէպի քեզ՝ եկել են ուխտելու պարզած դրօշակդ բռնել: Ահա մանուկներ, դպրոցի աշակերտներ, որոնց կ' հոգևոր կ' մարմնաւոր բժիշկն ես եղել տասնեակ տարիներ՝ եկել են իրենց թոթով լեզուով քեզ երախտագիտական դգացմունք յայտնելու:

Ահա նաև քո սիրասուն գաւակները, կեանքիդ ընկերուհին և մերձաւորներդ եկել են իրենց սիրոյ վերջին համբոյրը դրոշմելու սառը ճակատիդ, քեզ որ եղել ես անփոխարինելի հայր, աննման ամուսին և հարագատ բարեկամ քոյիններին:

Մեր վիշտը մեծ է, որովհետև կորուստը մեծ է. մեր կեանքից մէկիկ-մէկիկ գնում են մեծութիւնները և նոցա տեղը բռնողներ չկան. սրբան քիչ են գաղափարի լոխկ մշակներ: Այս խոհերի առաջ մնում է մեզ ազօթել՝ «Նայեա ի մեզ և ողորմեա մեզ Քրիստոս, որ ունիս բազում գթութիւն» որ յարուցանէ մեզ նոր անհատներ հանգուցեալի տիպարով. այլ և յիշել Փրկչի խօսքը ի մխիթարութիւն նրա վշտացեալ ընտանիքին՝ «մի խռովեսցին սիրտք ձեր, այլ հաւատացէք յԱստուած. ի տան հօր իմոյ օթեանք բազում են»:



«Յաշխարհի աստ՝ նեղութիւն ունիցիք, այլ բաշալերեցարձք, զի ես յաղթեցի աշխարհի» (Յովհ. Ժ. 9 33).

Տօնական օրեր են դալիս. ահա նոր տարին դռան շէմքին, փոքր ինչ անգին՝ Փրկչի ծնունդը. օրեր, որոնք լեցնում են անխտիր ամենիս սիրտը ուրախութեամբ: Սակայն դ՛ն միայն, որի սիրտը ընդ միշտ դադարեց բաբախել՝ հրաժեշտի ողջոյն տուիր աշխարհի ուրախութեան. դ՛ն միայն՝ այս ուրախ օրերին՝ սև հագուցիք ընտանիքիդ. նրա խնդումը լացի փոխեցիր՝ արտասուքի հեղեղներ քամելով խեղճերի աչքերից:

Բայց դու ինչո՞վ ես մեղաւոր. յանցաւորը անագորոյն մահն է, որի անխուսափելի ճիրանից մահկանացուներից ոչ ոք պիտի կարողանայ ազատուել. միտքս լսւ է ըմբռնում, սակայն սիրտս չի հաշտուում:

Ողբացեալ ընտանիք, բարեկամներդ ու յարգողներդ ցանկացան վաղամեռիկ հանգուցեալի դադաղի առաջ մի քանի մխիթարական խօսք լսել ինձնից. սակայն ինչ ասեմ. նկարագրեմ՝ թէ ո՞վ է եղել հանգուցեալը ընդհանրապէս և ինչ՞ յատկապէս ձեզ՝ հարագատներիդ համար. այդ կլինէր միայն մի անկատար պատկեր, որի կատարելագոյնը դրոշմուած է ձեր սրտի և ձեր թարմ յիշողութեան մէջ:

Արդեօք հանգուցեալի դճվքը տամ հասարակութեան առաջ. բայց ահա իւր սիրած թերթի սև էջերում, իւր

խակ ընկերներն ու համակրողները արձանացրել են մնա-
յուն յիշատակ ապագայի համար երկու՝ բայց բազմաբու-
փանդակ խօսքով բնորոշելով նրան, որպէս գործի մարդ
և որպէս յարատև և անշեղ աշխատող մշակ:

Ես չեմ կամենում նոր ի նորոյ քրքրել ձեր ցաւերը
և բանալ ձեր խոցուած սրտի վէրքերը. ապարդիւն է
հանգուցեալի համար և անօգուտ մեզ համար: Բայց իրա-
ւունք ունիմ միթէ Չեզ, որ հանգուցեալի կեանքի ընկե-
րունիքն էք եղել, որի հետ ուրախ և օգտակար տարիներ
անցրել, սիրով կենակցել՝ արգելել որ տխրիք, վշտանաք
և լաք. ոչ երբէք. այդ բոլորը երախտագէտ ու հաւատա-
րիմ սրտի անխուսափելի արտայայտութիւններն են, շատ
բնական մարդու համար:

Սակայն իբրև հովիւ և Քրիստոսի աւետարանի քա-
րոզիչ կասեմ՝ աւելորդ կլինի, որ վիշտը մեզ յաղթէ և
ճնշէ, այլ մենք աշխատենք նրան յաղթել, մեզ երևեցող
դժբախտութիւնը կենսական ոյժ դարձնելով և աւօրեայ
նեղութիւնները բարձր նպատակների համար շահագործե-
լով: Թէ ինչպէ՞ս. թող բացատրէ մեզ Փրկիչը՝ «յաշխարհի
աստ՝ նեղութիւն ունիցիք, այլ քաջալերեցարձք, զի ես
յաղթեցի աշխարհի»:

Գիտէ՞ք ինչումն է Փրկչի յաղթութիւնը:

Յիշում էք խաչակիր Յիսուսին՝ ուժից վեր խաչա-
փայտը շարկած Գողգոթա տանելիս. եղև է արդեօք աւելի
մեծ ստորացում մարդկային արժանապատուութեան. և
արդեօք սոսկական մարդը կարո՞ղ է խոնարհութեամբ ու
հեզութեամբ համբերել: Տեսնում եմ, բոլորիդ շրթունք-
ները շարժում և պատրաստում են «ոչ» պատասխա-
նելու, որովհետև պարզ է թէ՛ խաչակիր Յիսուսի շարձա-
րանքները աննման, անօրինակ և բացառիկ են համեմա-
տելով այն տանջանքների և վշտերի հետ, որ մարդկու-
թիւնը երբ և իցէ զգացել է:

Գործադրուեցան այն բոլոր միջոցները, որ ընդու-
նակ էր մարդկային չարութիւնն ու ռիսակալութիւնը
ստեղծել՝ թուք, ծեծ, ծաղր, անարգանք, որ վերջացաւ
խաչի մահով: Ո՞վ էր ընդունակ տանելու այդ բոլորը,
եթէ ոչ նա՞ որ փշեայ պսակ կրեց զլիւին:

Այդ համբերութեան պսակը, որպէս բարձրագոյն
առաքինութիւնների ծաղիկներից հիւսած՝ միշտ պիտի
զարգարէ Մարդոյ Որդու ճակատը, որովհետև տանջանքը
կրում է ոչ միայն իւր երկնաւոր հօր կամքին նպատակե-
լով հեզութեամբ, և օրհնելով իւր թշնամիներին ու աղօ-
թելով նրա համար՝ «հայր, թող դոցա», այլ մեր փրկու-
թեան համար:

Փրկչի՛ իւր կեանքի վերջալոյսին աննկարագրելի տան-
ջանքների և նեղութիւնների ժամանակ, ցոյց տուած համ-
բերատար ոգու, անոխակալութեան և հեզութեան մէջ
թաքնուած է յաւիտենական և խորը խրատական դաս մեզ՝
մահկանացուներին համար: Նա մեզ ուսուցանում է մեր
անձնական վիշտն ու տանջանքը, որոնք մարդու երկրա-
յին կեանքի անբաժան ճամբորդակիցներն են՝ տանելու
համբերատար ոգով, լուս և առանց դժգոհութեան:

Անցնելով խաչի վշտա ճամբան՝ նա սրբագործեց
նեղութիւնների և տանջանքների ճանապարհը իւր հետե-
ւողների համար՝ մեզ համար, որ նրա անունով քրիստո-
նեայ ենք կոչւում, թէև անարժանաբար, և խաչը ուսին
Գողգոթա բարձրանալով՝ աւանդ թողեց մեզ ևս պատրաստ
լինել ելնելու մեր Գողգոթան, մեր ուսին բարձած մեր
վշտերի ու նեղութիւնների խաչը:

Այս աշխարհում մեր կատարած գործերից և մեր
ներքին ապրումներից նոքա են թանգ մեր երկրաւոր Հօր
համար և համարում արժէքաւոր զոհ, որոնք մեզ վիշտ
են պատճառում և՛ որպէս քարէ ծանր խաչ՝ ճնշում մեր
սիրտը: Նոքա են, որ մաքրում են մեր խոհերը, բուժում

մեր սիրտը, դարձեցնում մեր թմրած հոգին, կտրում մեզ այս աշխարհի յոյզերից և մեր հայեացքը ուղղում դէպի վեր, դէպի յաւիտենականը: Նոքա սովորեցնում են համբերել վշտերի, տրամադրում հաւատալու, բարի գործելու և ազօթելու. նոքա մարդուս ներքնապէս վերածընում և վերանորոգում են: Նոքա են ահա Փրկչի խաչի ճամբան, այն նեղ և անձուկ ճամբան, որ տանում է դէպի կեանք:

Այս համոզմունքով և հաւատով էին ապրում նախկին դարերի քրիստոնեաները, եթէ մենք հին քրիստոնէական շրջանից, որ հոգու և հաւատի յաղթանակի շրջան է մարմնի և թերահաւատութեան վերայ, անցնենք նոր ժամանակներին, որ լի է վշտերով և դժբաղդութիւններով՝ ստիպուած կլինենք ընդդէմ մեր հոգու թուլութիւնը և վկայել մեր փոքրոգութիւնը: Դեռ ևս գալիք անբաղդութեան ծանրութիւնը չզգացած, լսկ նրա ստուերի առաջ, թուլանում են մեր ձեռքերը, ձկւում մեր գլուխները և ապուշի արտայայտութիւն ստանում մեր դէմքերը: Դեռ ևս մեր խաչի ճանապարհը չտեսած, մեր վըշտերի գառնութիւնը չճաշակած՝ ծանր հոգոց ենք քաշում՝ համարելով մեր ոյժերը տկար՝ կրելու մեզ վիճակուած խաչը: Բայց երբ ինքը դժբախտութիւնն է լեռնացած արձանանում մեր առաջ, լսել պէտք է մեր տըրտունջները կարծեցեալ աստուածային անարդարութեան դէմ, տեսնել՝ մեր թերահաւատութիւնը ու փոքրոգութիւնը, որի հետևանքն է լինում մարդու կամայական վճիռները և խաղերը իւր և այլոց կեանքի հետ, որոնցով լի է դժբախտաբար մեր ներկայ, այսպէս կոչուած, ջղայնացած դարը:


Փորձութիւնները ու վշտերի համբերել չկարողանալ՝ մեր ներկայ դարու հիւանդութիւնն է, որոնց պատճառները շատ են. բայց գլխաւորը՝ Փրկչի աւանդի մոռացումն

է: Հանգուցեալի որբացեալ ընտանիք, քեզ է այս բուպէիս վիճակուած կեանքի վշտերի ու գառնութեան բաժակը լուրթեամբ ըմպել. պիտի կարողանան արդեօք Փրկչի աւանդին հաւատարիմ լինել և խաչդ Գողգոթա տանել, թէ՛ պիտի ընկճուես նրա ծանրութեան տակ:

Փորձութեանդ այս ծանր ժամին, եթէ յաղթող ես ուղում հանդիսանալ՝ առաջնորդ ունեցիր Փրկչին. նա է միակ բժիշկը ամենայն ցաւերի ու վշտերի:

Կորցրիր կեանքիդ ընկերոջն ու լալիս ես, թող Փրկչիչը լինի քո մխիթարիչը, ինչպէս Ղազարոսի գերեզմանի առաջ՝ Մարթայի ու Մարիամի: Եթէ ճնշուես անբախտութիւններից ու անյաջողութիւններից, որոնք յաճախ այցելում են մեզ երկրային կեանքում՝ ազօթիր Փրկչին, որ խաչերից ծանրագոյնն է կրել, նա երկնային բարձունքից իւր ձեռքը կմեկնէ և կօգնէ քեզ՝ խաչդ Գողգոթա հանելու:

Իսկ մենք՝ եղբայրներ, ազօթենք, որ այս որբացեալ ընտանիքը հաւատով գօրանայ և իւր խաչը Գողգոթա հանէ, առջնորդ ունենալով Փրկչի խօսքը՝ «Յաշխարհի աստ՝ նեղութիւն ունիցիք, այլ քաջալերեցարուք, զի ես յաղթեցի աշխարհի»:



«Եթէ ունիցիմ զամենայն հաւատաս՝
մինչև զլերինս փոփոխելոյ, և սէր ոչ
ունիցիմ, ոչինչ եմ» (Ա. Կորնթ. Ժ. Գ. 2):

Հասել էր ժամանակը և Աստուած կանչեց իւր ծառային ասելով՝ «հող էիր և ի հող դարձցիս»: Դադադր մէջ անշնչացած պառկել է նա, որ 15 ձիգ տարիներ ապրել է մեր մէջ և գործել մեզ համար: Կիտեմ, գուք սպասում էք, որ ես կենդանացնեմ ձեր առաջ հանգուցեալին՝ պատկերացնելով նրա անցեալն ու ներկան. սա կայն գիտէք թէ ինչպէս դժուար է տալ մէկի լրիւ ու ամբողջական ճշգրիտ նկարագիրը, որ ապրել և գործել է մեր առաջ: Ես հրաժարուեմ եմ, բայց կփորձեմ ընդգծել նրա կեանքի և գործունէութեան մի գիծը միայն, որ կազմում է ըստ իս նրա գործերի հիւստեամբի կարմիր թելը, բնաբան առնելով Պողոս առաքեալի Կորնթոսի համայնքին ուղղած խօսքերը՝ «Եթէ ունիցիմ զամենայն հաւատաս՝ մինչև զլերինս փոփոխելոյ, և սէր ոչ ունիցիմ, ոչինչ եմ»:

Առաքեալի քարոզած սէրը՝ այն սէրը չէ, որ մարդիկ սովորաբար հասկանում են. սա այն զգացմունքը չէ, որ սրտից է բղխում և զէպի սիրտը հոսում. սա այն զգացմունքը չէ, որ կապում է մեզ մեր ծնողների և մերձաւորների, մեր ամուսնու և մեր զաւակների հետ. ոչ: Առաքեալի քարոզած սէրը՝ մտքի ծնունդ է. նա մի

ոյժ է, որ ստիպում է մեզ անձնատուր լինել մեր ընտրած կոչմանը և մեր անձը մտանալու չափ անձնուիրաբար ծառայել նրան, առանց որի կոչումը կորցնում է իւր վեհութիւնը, իւր աստուածային ծագումը, իսկ այդ կոչման նուիրուած անձը՝ իջնում է հասարակական ամբիոնի բարձունքից՝ եսականութեան ստոր և դատասպարտելի սանդուղքի վարին աստիճանը:

Վերլուծենք մեզ յայտնի կոչումները.

Ի՞նչ է, օրինակ ուսուցիչը առանց այդ սիրոյ և անձնուիրութեան, եթէ ոչ մի վարձկան, որի համար մատող սերնդի դաստիարակչական սրբազան ու վսեմ կոչումը դառնում է լոկ ապրուստի մի միջոց:

Ի՞նչ է բժիշկը, եթէ նա չի սիրում իւր կոչումը, եթէ նա չի հետևում զիտութեան, եթէ նա բարեխիղճ հոգատարութիւն չի ցոյց տալիս զէպի հիւանդը, եթէ նա չի զիտակցում՝ թէ պատասխանատու է Աստուծոյ առաջ աստուածային գերագոյն պարզևի համար, որի անունն է կեանք՝ եթէ ոչ մի անբարեխիղճ մարդասպան, որ ապրում է իւր անձի համար՝ ազատ զգալով իրեն հասարակական դատաստանի պատասխանատուութիւնից:

Ի՞նչ է փաստաբանը առանց այդ սիրոյ և անձնուիրութեան, մարդկային իրաւունքի և արդարութեան պահպան հրեշտակը երկրի վերայ, եթէ ոչ անխիղճ աւազակ, որ օր ցերեկով թալանում է մեզ մեծ ճամբի վերայ՝ Աստուծոց չվախենալով և մարդկանցից չամաչելով:

Ի՞նչ է վաճառականը առանց այդ սիրոյ և անձնուիրութեան, եթէ ոչ մի անբարեխիղճ միջնորդ, մի հացկատակ ի հաշիւ այլոց ապրող:

Ի՞նչ է գիւղացին առանց այդ սիրոյ և անձնուիրութեան, եթէ ոչ մշտական ստրուկ իւր կարիքների, իւր շրջապատի և աշխարհի հօգրների:

Ի՞նչ է հոգևորականը առանց այդ սիրոյ և անձնուիր-

րութեան, եթէ ոչ մի ձևապաշտ պաշտօնեայ՝ կոչուած իւր որովայնին ծառայելու, փոխանակ մեր հոգու ազնուացման ճշմարիտ սպասաւորը լինելու, եթէ ոչ մի տգրուկ, որ ծծում է ուրիշի արիւնը և սպրում ի հաշիւ նրա:

Սէրն ու անձնուիրութիւնն է, եղբայրներ, որ ազնուացնում է կոչումը և սրբացնելով մարդուն՝ պաշտամունքի առարկայ դարձնում նրան:

Հանգիստ ու անխռով նիրհել է դազադի մէջ նա, որ իւր ամբողջ կեանքը սիրել է իւր կոչումը և անձնուիրաբար ծառայել նրան մինչև ի մահ:


Մենք տեսնում ենք նրան վաթսուհակա թուականներին իբրև ծխական դպրոցի ուսուցիչ, ըստ երևոյթին մի չնչին պաշտօն, սակայն իւր անձնուիրութեան և սիրոյ շնորհիւ՝ միշտ սիրուած իւր աշակերտներէից և մինչ օրս անմոռաց մնացած իւր շրջապատից:

Մենք տեսնում ենք նրան 80-ական թուականներին թեմական տեսչի պաշտօնում. կրկին նոյն սիրով և նոյն անձնուիրութեամբ ծառայելիս, երբ ձի նստած՝ սարերձորեր չափելով, գիւղից գիւղ շրջում այն հաւատով՝ թէ կատարում է մի մեծ գործ՝ խեղճ հայ ժողովրդի դատարարութեան սուրբ գործն է, որ տանում է իւր թոյլ ուսերին. և նրա անձնուիրութիւնը վարձատրւում է ժողովրդից «թեմական» անունը անջինջ դրոշմելով նրա ձակտին:

Մենք տեսնում ենք նրան 90-ական թուականներին Մ. Աթոռի կրօնաւորի սև սքեմի մէջ, կրկին նոյն սիրով և անձնուիրութեամբ ծառայելիս իւր կոչմանը այն զիտակցութեամբ՝ թէ ազգային կրօնական մեծ նաւի ղեկի շարժման մէջ փոքրիկ դեր է յատկացրած նաև իրեն: Այդ զիտակցութիւնն էր, որ պատճառ եղաւ նրա նաւի փոթորկի ենթարկուելուն և Գոնի ափը նետուելուն, որպէս

զի այնտեղ էլ մնալով հաւատարիմ և անձնուէր իւր կոչմանը՝ անապատի մէջ ստեղծէր վանական այս փոքրիկ օազիսը:

Այդ պարտաճանաչութեան զիտակցութիւնն է, որ իրաւունք է տալիս նրան խաղաղ խղճով հրաժեշտի ողջոյն տալու սուրբ եկեղեցուն, ուր տարիներ սպասաւորել է. սուրբ սեղանին, որի վերայ իւր աղօթքն է ընծայաբերել ձեր փրկութեան համար. քահանայական դասին, որի հետ Փրկչի լուծն է կրել. եկեղեցու մանկանց և ձեզ՝ հաւատացեալ եղբայրներ, որ խմբուել էք այսօր նրա դազադի շուրջը, նա ձեզ տալիս է իւր վերջին հրաժեշտի ողջոյնը՝ անձնուիրութեան և սիրոյ պարտականութիւնը դնելով ձեզ վերայ: Եւ ինչպէս ժամանակին է այդ պատուէրը, երբ աւելի քան այժմ պահանջւում է մեզնից՝ իբրև հայ ազգի զաւակներից, անձնուիրութիւն և սէր դէպի ընդհանուր գործը: Հրապարակ արի, հայ երիտասարդ, արիւնովդ դնելու պապերիդ թողած ժառանգութիւնը. հրապարակ արի, հայ մտաւորական՝ խելքովդ և գրչովդ սպասաւորելու հայ թշուառ ժողովրդին. հրապարակ արի, հայ հոգեւորական, կրակոտ խօսքովդ և կենդանի օրինակովդ մխիթարելու լքուած ժողովրդիդ և հոգի ներշնչելու՝ կրելու իւր ուսին դրած ծանր խաչը. հրապարակ արի, դու հայ հարուստ, անտուն անտէր հայ ժողովրդի ծով կարիքները հոգալու, նրա քանդուած օջախը շինելու, աւեր երկիրը շէնցնելու: Եւ այն ժամանակ հանգիստ կը ննջէ գերեզմանում մեր պատկառելի հանգուցեալը՝ տեսնելով մեր կոչման զիտակցութիւնը, որ ցմահ սպասաւոր է եղել իւր կոչման: «Եթէ ունիցիմ զամենայն հաւատս՝ մինչև զերբնս փոփոխելոյ, և սէր ոչ ունիցիմ, ոչինչ եմ»:



միայն համաքաղաքացիներին փառքի և բարօրութեան համար:

Երէկուայ վիճակը կեանք ենք կոչում, իսկ այսօրուանը՝ մահ. կեանքը մեզ միացնում էր, իսկ մահը բաժանում: Այդ է պատճառը, որ խորին վշտով համակուած՝ այս խուռն բազմութիւնը, որոնց սրտերը լուռ խօսում են այս ժամին այն մասին՝ թէ ինչ էր Չարիֆեան երէցը իրենց համար. խօսում են ոչ լեզուով, այլ զգացուած սրտով՝ աւելի գեղեցիկ և լսելի, քան հնչուած խօսքը. և եկել են իրենց հրաժեշտը տալու քեզ:

Ովքեր են դոքա, որ այնքան նուիրական յուշեր են արծարծում մեր մէջ, ովքեր են դոքա, որոնց սրտերի մէջ հանգուցեալի պայծառ դէմքն է նկատուած, որոնց մտքերի էկրանների վրայով շարան-շարան անցնում-զընում են քո գործերի ստուերները:

Եւ ինչ են ասում:

— Շատ հարուստ լեզու պէտք է ունենաս, որ խօսքերով նկարես և նկարդ դժգոյն շերտի իսկականի առաջ: Ի՞նչ անել, լու՞ր. բայց ինչպէս լուել՝ երբ իրանք զրկուած են խօսելու իրաւունքից և հրաւիրում են մեզ իրենց զգացմունքների թարգմանը հանդիսանալ:

Գովքդ չէ, պատուարժան Հայր, որ պիտի անեմ, զի շատ անգամ է արուել կենդանութեանդ ժամանակ, գեղեցկագոյնը՝ յոբելեանիդ օրը: Եւ ինչո՞ւ խօսել այն մասին, որ հրապարակի վերայ է և ամենքի սեփականութիւն:

Ես ներկաների վերջին ողջոյնը պիտի տամ քեզ, պատուական Հայր, այս մնաս բարևի ժամին՝ այն խօսքերով, որոնք քո խաղաղ քնի մէջ ընդ միշտ պիտի հնչեն. այդ մեր խոստովանանքն է. մենք քեզ սիրել էինք և այդ սէրը ուխտել ենք պահել մեր սրտերում՝ մինչև որ մեր ժամն էլ հասնի, մեր մահուան գոյժն էլ հաղորդուի համաքաղաքացիներին եկեղեցու զանգակների տխուր հնչիւնով:

«Մարդոյ որպէս խոսոյ են աւուրք իւր, շնչէ ի նմա հողմ և ոչ է, և ոչ երևի տեղի նորա» (Սղմ. ճԲ 16):

Մարդկային հոգու քնարի կրօնական լարերին քնքոյշ գարնող, կեանքի զաղանիքը խորապէս ըմբռնող և կեանքի փորձը լիապէս տեսած սաղմոսերգու Դաւիթը ինչ սիրուն պատկերացնում է մարդկային կեանքի ոչնչութիւնը: Յիրաւի, ինչ է կեանքը, եթէ ոչ խոտ, որ քամու շնչից թոշնում ու մեռնում է:

Դեռ երէկ բոլորուել էինք շուրջդ, բազմավաստակ և արթուն հովիւ, տօնելու յոբելեանդ՝ տալով կեանքիդ և գործունէութեանդ արժէն:

Դեռ երէկ դու մեզ հետ խօսում ու խորհում էիր. երէկ դու մեզ հետ ախրում և ուրախանում էիր, դու շրջում էիր, որպէս կենդանի էակ:

Իսկ այսօր . . . այսօր փոխադրում ես դու մեզ անծանօթ մի այլ աշխարհ, այսօր գոցուել են քո աչքերը յաւիտեան. աչքեր, որ զիտէր մարդկային հոգու խորերը թափանցել, ներքին զաղանիքն ըմբռնել, վշտերը հրապարակել և բուժել. այսօր թալկացած ընկած են քո գոյգ ձեռքերը անշնչացած դիակիդ վերայ, ձեռքեր՝ որ հսկայական գործերի արարիչ են եղել: Այսօր փայտացել են այն ճկուն և արագ քայլող ստքերը, որոնք ձիգ տարիներ չափել են քո սիրած քաղաքի փողոցները՝ միայն ու

Լսիր, ուրեմն, հայր պատուական.

— Եկել են իրենց հրաժեշտի ողջոյնը տալու քեզ՝ իրենց մեծ վարդապետին, հարիւրաւոր անմեղ պատանիներ, որոնց աղանջներում դու հնչեցրել ես աւետարանի ձայնը, որոնց սրտերում դու ցանել ես երկնաւոր վարդապետի սերմանած բարի սերմերը:

— Եկել են հրաժեշտի ողջոյն տալու քո երբեմնի ընկերները՝ հայ ուսուցչութիւնը, որի փայլուն անուանը քո անունը նոր փայլ է տուել, որ ուխտել է բարձր պահել այն զրօշակը, որ երկար տարիներ ջգուտ բազուկներդ պահել են պատուով:

— Եկել են քո ձեռքով անկած ու խնամած հոգևոր բուրաստանների՝ բարեսիրական հաստատութիւնների բազմաթիւ ներկայացուցիչներ՝ վերջին հրաժեշտի հետ վերջին անգամ իրենց երախտագիտական զգացմունքները թափելու քո առաջ:

— Եկել է քո հաւատացեալ ժողովուրդը, որի հաւատարիմ խոստովանահայրն ես եղել և բարի խորհրդատուն՝ իւր հրաժեշտի ողջոյնը տալու և իւր որբացած վիճակը ողբալու:

— Եկել են կոչնակիցներդ, քաղաքիս քահանայութիւնը, որոնցից շատերին ընկեր ես եղել և բարեկամ, որոնց նեղ բոլէներին յուսատու ես եղել և որոնց զրօշակը միշտ բարձր ես պահել՝ յարգանքով յիշելու քո անունը և հրաժեշտի համբոյր դրոշմելու քո օծուած ճակատին:

— Լսում են նաև հրաժեշտի ձայներ դրսից՝ հեռաւոր մայր երկրից— Հայոց Հայրապետից սկսած. մխիթարութեան ձայներ՝ ընտանիքիդ և ազգականներիդ, յորդորի ձայներ՝ քո համաքաղաքացիներիդ:

Եկել են նաև քո հարազատները՝ կենդանի ծաղիկներից հիւսուած մի պսակ, որ երբեմն քո կեանքի զարդն

է եղել, իսկ այժմ քո լզադադի: Նորա չեն կամենում բաժանուել քեզնից. նորա չեն կամենում տալ իրենց հրաժեշտը, այլ իրենց արտասուքով յետ բերել քո կեանքը:

Լացէք սիրելիք. լացը մարդկային է ու բնական, լացը վշտերի սպեղանին է. և ինչպէս կարող էք չարտասուել այն մարդու վերայ, որ ապրել է նաև ձեր փոքրիկ աշխարհի համար. այդ աշխարհին է նա կատարելապէս անձնատուր եղել, իւր սիրտը բացել և ի տես հանել: Լացէք, բայց մի մոռանաք, որ միայն լալու եկած չենք. մեզ առաջնորդ միայն մեր սիրտը չէ, այլ և մեր միտքը: Նա մեզ ասում է թէ մահ չկայ այն մարդու համար, որի հոգին զործում է մարմնի կենդանութեան ժամանակ, և թէ մահը հէնց նոր կեանքի սկիզբն է:

Եթէ Սաղմոսերգուն կեանքի կոչնակութիւնն է ցոյց տալիս՝ նա շեշտում է մարմնական կեանքի ոչնչութիւնը, որ անցական է և մեռնող:

Հապա հոգին, հապա նրա ստեղծագործութիւնը. նա մնայուն է, նա յաւիտենական է:

Այսպէս նայած, մեռել է Տ. Սաչատուրի լոկ մարմինը, հողու պատեանը. իսկ հոգին. նա կենդանի է: Այդ հոգին է որ մնայուն յուշարձաններ է կանգնեցրել հանդուցեալի համար, որոնք այսօր մեզ ստիպում են թանգ գնահատել հանդուցեալին, ցաւով բաժանուել նրա երկրայինից:

Մեր միտքը մեզ ասում է՝ մենք չենք բաժանուում մեր այն սիրելիներից, որոնք հոգով են ապրում. միթէ լոկ մարմինն է որ մեզ պատկանում է, ոչ. հապա նաև հոգին՝ նրա մտքերն ու զգացմունքները:

Ուխտենք ուրեմն, սիրելիք, հաւատարիմ լինել նրա զազափարներին ու զգացմունքներին, որպէս զի նա միշտ կենդանի մնայ մեր մէջ, այլապէս կեղծ է մեր ողբը ու

կոծը և լով ի ցոյցս մարդկան կատարուած. այն ժամանակ «մեռաւ» խօսքը գոյութիւն չի ունենայ և նրան կփոխարինէ «յարեալ»ը:

Իսկ դու, երկնաւոր Հայր, ընդունիր սրա հոգին քո պատրաստած օթեանում, և ուղարկիր մխիթարիչ ս. Հոգին, որ մխիթարէ հարազատներին, ամօրէ նոցա՝ վիշաք և իւր հովանի թևերը յարածէ մեր և մեր հաստատութիւնների վերայ. Ամէն:



Յ Ա Ն Կ

1. Նոր տարի—Մեր նշանարանը—Սաղմ. ԻԶ 1. 1915 I/1.	5
2. Նոր տարի—Յոյս—Եսայի Խ 4. 1916 I/1	10
3. Ծննդեան օրը—Յիսուս, որպէս բարոյական կեանքի յիղաշըջող—Ղուկ. Բ 14. 1914 I/5	15
4. Ծննդեան օրը—Խաղաղութեան աւետիքն ու արդի կեանքը—Ղուկ. Բ 14. 1915 I/5	21
5. Ծննդեան օրը—Հաւատ և սէր՝ մարդկային հոգու կատարելութեան հիմունքներ—Ղուկ. Բ 10. 1916 I/5	25
6. Ս. Վարդանանց օրը—Անցեալն ու ներկան—Յովհ. ԶԵԿ. 1914 II/13	30
7. Ս. Վարդանանց օրը—Մարդկային հոգու ելեջներ—Յովհ. ԻԱ 15. 1916 II/18	37
8. Մեծ պատի Ա. Եսայի օրը—Ներքին բարեպաշտութիւն և սէր արտաքին ձեռք—Մատթ. Ե 48 1915 II/27	41
9. Մեծ պատի Գ. Կիրակի—Կեանքի նպատակը—Մատթ. Է 21. 1914 III/2	47
10. Մեծ պատի Ե. Եսայի օրը—Եկեղեցու կոչումը—Յովհ. ԺԶ 23. 1916 III/27	52
11. Մեծ պատի Ե. Կիրակի—Խճաք՝ թէ գործ—Մատթ. ԹԶ 3. 1916 III/20	59
12. Մեծ պատի Զ. Կիրակի—Ինչպէս աղօթել—1914 III/23	64
13. Ծաղկազարդ—Ո՞յժ, թէ՞ ճշմարտութիւն—Մատթ. Ի 1—11. 1916 IV/3	70
14. Ոսերուայ—Ոտնուայի խորհուրդը ազաշխարութեան նշանակ—Երեմիա Դ 14. 1914 IV/3	75
15. Ոսերուայ—Ոտնուայի խորհուրդը ազաշխարութեան և սիրոյ նշանակ—Յովհ. ԺԳ 14—15. 1916 IV/7	80
16. Փրկչի չարչարանաց և խաչիւտեան յիշատակ—Տանջանքի ճամբան է յաղթութեան՝ ճամբան—Յովհ. ԺԹ 30. 1915 III/20	85

17. Զատիկ—Յարուցիայի՝ որպէս ստեղծող ոյժ—Եփես. Ե 14.
1914 IV/6 91

18. Զատիկ—Զատիկը՝ բարոյական վերածնութեան ամս է—
Մարկ. ԺԶ 6. 1915 III/22 96

19. Եղիա մարգարէի կիրակի—Ժողովրդական ամսերի նշա-
նակութիւնը—1914 VI 1 102

20. Ս. Հմարճման սօն—Յովհ. Ի 17. 1915 IV/30 108

21. Ս. Հմարճման սօն—Երկիրը նախադուռն է շէրկնքի—
Ղուկ. ԻԴ 50—52. 1914 V/15. 113

22. Հոգեգալստեան սօն—Ս. Հոգին ճշմարտութեան հոգի
է—Յովհ. ԺԴ 16. 1914 V/25 119

23. Վարդավառ—Մատթ. ԺԷ 4. 1916 VII/18 124

24. Ս. Էջմիածնի սօն—Հայրենիքի դազափարը—Մատ. ԺԵ 24
1914 VI/8 131

25. Ս. Էջմիածնի սօն—1915 V/24 136

26. Ս. Աստուածածնի վերափոխման սօն—Հոգևոր և նիւ-
թական շնորհ—Սղմ. ձեռ. 15. 1914 VIII/17 142

27. Ս. Խաչի սօն—Սէր ու ապերախտութիւն—Յովհ. Գ 16.
1915 IX/13 149

28. Ամենայն Հայոց Հայրապետի անուանակոչութեան սօն—
Յովհ. Ժ 11. 1914 IX/27 155

29. Ամենայն Հայոց Հայրապետի անուանակոչութեան սօն—
Սէր դէպի եկեղեցին և սէր դէպի՝ հայրենիք—Նսայի կԻ Դ
1915 IX/26 160

30. Փոխանորդ. պատճառի մեհելուս առքիւ—Մատթ. ԺԴ 27.
1913 XI/11 164

31. Համայնի յուզում մեհերը խողաղացնելու առքիւ
խօսում—Յովհ. ԺԴ 27. 1915 VI/7 171

Դ Ա Մ Բ Ա Ն Ա Կ Ա Ն Ն Ե Ր

32. Բժիշկ Աստուածատու Քեչեկեանի մահուան առքիւ—
Յովհ. ԺԴ 1. 1915 X/31 177

33. Մարտիրոս Ռեիզեանի դազաղի վերայ—Յովհ. ԺԶ 33.
1913 XII/5 181

34. Տ. Վահան վարդ. դազաղի վերայ—Ա. կորնթ. ԺԴ 2
1915 VII/19 186

35. Տ. Խաչատուր ա. Բահ. Զարիճեանի մահուան առքիւ—
Սղմ. ԺԲ 16. 1913 XI/20 190

Վ Ի Դ Ա Կ Ն Ե Ր

Վերելից ցերեկից	Էջ	տող	սխալ	ուղիղ
»	10	8	ձայնէ	ձայնը
»	12	5	խչի	խաչի
»	13	2	կայնին	կանցնին
»	28	11	խոստովանու- թիւնը՝ ու զըդ-	խոստովանու- թիւնն ու զըդ-
»	29	2	ջումն	ջումը.
»	31	2	կարօտեալ	կատարեալ
»	31	2	ինքնաքննու- թիւն	ինքնաքննու- թեան
»	31	6	զորձը	շուրջը
»	»	10	տանում ենք	տեսնում ենք
»	»	12	զիտութեան	զիտութեամբ
»	32	6	ձանը	ձայնը
»	»	11	չնկնի	չընկնի
»	33	4	քարսիրտ	քար սիրտ
»	»	7	նորից	նորեկ
»	34	4	ձեզ	մեզ
»	»	13	հիմունքներին	հիմունքներն
»	35	10	այտեղ	այստեղ
»	38	4	զնայ	զնա
»	»	8	ուխին	ուխտին
»	»	15	թափանցում էր	թափանցում էր նոցա սրտի խոր-
»	42	1	նախասահմա- նութեան	նախասահմա- նութեամբ



»	43	3	Արդ	Այդ
»	»	13	բղամատեսակ	բազմատեսակ
»	»	5	կատարելագործում է	կատարելագործում է
»	49	6	արքայութեան	արքայութիւն
»	»	8	էակամ	էական
»	53	2	լմոնումը	լմոնումը
»	54	11	դաձող	դարձող
»	55	10	շարժել...	բայց հարց է թէ՛ գիտէ՞նք աղօթիկ և մեր...
»	»	11	այժմ	ցայժմ
»	56	4	պատրաստում է	պատրաստում է
»	59	9	բան	քան
»	58	1	անցնէ	անցնի
»	59	7	հոյով	հոյով և
»	61	17	արժանապարգև	աստուածապարգև
»	»	2	չէ	չեն
»	62	10	ճշմարիտ երկրպագունը	ճշմարտութեամբ երկրպագութիւնը
»	68	9	եկեղեցու	եկեղեցականութեան
»	71	10	մուրումներով	մօրումներով
»	77	1	ողջախոհութիւն	ողջախոհութեան
»	»	2	հոգիներով լի	խորհուրդներով լի
»	79	10	թափում է	թափում է
»	»	19	տալով, գնել	տալով գնել՝
»	81	11	կարիք	չարիք
»	»	6	արարողութեան	արարողութեամբ
»	85	1	կաթնանուշ	կաթնանոս
»	87	2	ծաղրող	ծաղրով
»	»	7	խաղաղութեամբ	խաղաղութեան
»	»	6	ողջունել են	ողջունելիս
»	88	2	արգասիք չէ	և սակայն նա արգասիք չէ
»	90	7	զուգադիպումն	զուգադիպութեամբ

»	»	6	օրերին	օրերին
»	92	2	բառի	բարբառի
»	93	13	աստուածութեան	արծուին
»	94	13	ոչ գիտութիւն	ոչ գիտութեան
»	95	7	աւերակի	աւերածի
»	»	2	մարմին	մարմնի
»	114	15	նախապետի	նահապետի
»	130	13	նութից	նիւթից
»	191	13	նկատուած	նկարուած



10	10	10
11	11	11
12	12	12
13	13	13
14	14	14
15	15	15
16	16	16
17	17	17
18	18	18
19	19	19
20	20	20



«Ազգային գրադարան»



NL0160601

